

ԵՎԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՏԱՊՈՒՄԱՅԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԻՑ
ԾՈՅԻ ՏԱՐՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ
ԾՈՅԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԽՈՐՃՈՒՐԴԸ
(1981-2011 թթ.)**



1120252
32(520)

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԵՎԱ ՎԻԿՏՈՐԻ

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՐՄԻՑ ԾՈՑԻ ՏԱՐԱԾԱՇԽԱՆՈՒՄ
ԵՎ

**ԾՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
(1981-2011 թթ.)**

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2016



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

YEVA HARUTYUNYAN

JAPANESE POLICY IN THE REGIONA OF
PERSIAN GULF

AND

THE GULF COOPERATION COUNCIL

(1981-2011)

Editor

Nikolay Hovhannisyan

Doctor of History, Professor
Correspondent Member NAS Armenia

YEREVAN

"GITUTYUN" PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2016

アルメニア国立科学アカデミーの東洋学研究所

ハルチュンヤン イエヴァ

ペルシャ湾地域における日本の政策と、湾
岸協力会議

(1981年-2011)

編者

ニコライ ホヴァニッシヤン

歴史学博士、教授

アルメニア国立科学アカデミー準会員

イエレヴァン

2016年

ՀՏԴ93/94

ԳՄԴ 63.3

Հ 422

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյան

Հարությունյան Եվա Վիկտորի

Հ 422 Ճապոնիայի քաղաքականությունը Պարսից ծոցի
տարածաշրջանում և Ծոցի համագործակցության խոր-
հուրդը (1981-2011թթ.). - Եր.: «Գիտություն» հրատ., 2016թ.,
- 236 էջ:

Աշխատության թևնարկման առարկան է ճապոնիայի քաղա-
քատևական հարաբերությունները Պարսից ծոցի երկրների,
մասնավորապես՝ Ծոցի համագործակցության խորհրդի անդամ
երկրների հետ հարաբերությունների հաստատման օրվանից մինչև
2011թ.: Աշխատակրում լրացրածվում են նավթային ճգնաժամերի
(1973թ., 1979թ., 1985-1987թթ.) ազդեցությունը ճապոնիայի և Ծնն-ի
անդամ երկրների տևականության վրա. Ծնն-ի ստեղծման
աշխարհաքաղաքական նախադրյալները, դիտարկվում են մերձա-
վորարենցիան մի շարք քաղաքական խնդիրներ և ճապոնիայի ու
Ծնն-ի անդամ երկրների դիրքորոշումը դրանց նկատմամբ. ինչպես
նաև Ծոցի երկրների տեղն ու դերը ճապոնիայի արտաքին
քաղաքականության մեջ:

Աշխատանքը նախատեսված է արևելագիտների, միջազ-
գայնագետների, դիվանագետների և ընթերցող լայն շրջանակների
համար:

ISBN 978-5-8080-1232-5

© Ե. Վ. Հարությունյան

ԱՌԱՋԱԲԱՆ

Պարսից (Արաբական) ծոցը (այսուհետ՝ Ծոցը) քաղաքական, էներգետիկ, տրանսպորտային և առևտրային տեսանկյուններից կարևորագույն տարածաշրջաններից է աշխարհում: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում այն դարձել է ամենալարված աշխարհազրական գոտիներից մեկը: Քաղաքական խնդիրները, հակամարտությունները, բնական ռեսուրսներին տիրելու տերությունների կողմից իրականացվող ծրագրերը, արաբական միապետությունների ներքին և արտաքին քաղաքական կողմնորոշումները բազմիցս դարձել են աշխարհի տարբեր երկրների գիտնականների հետագոտության առարկան: Նման հետաքրքրությունը պայմանավորված է համաշխարհային տնտեսությունն էներգակիրներով ապահովելու Ծոցի ռազմավարական նշանակությամբ:

Քննարկվող ժամանակաշրջանում լինելով աշխարհի երկրորդ տնտեսական գերտերությունը^{*} և զուրկ լինելով բնական ռեսուրսներից՝ Ճապոնիան մեծ կախում ունի էներգակիրների ներկրությունը, մասնավորապես Ծոցի երկրներից: Տարածաշրջանում արդյունահանված նավթի 55%-ն արտահանվում է Ճապոնիա ապահովելով երկրի նավթային պահանջարկի 90%-ը: Այդ պատճառով Ճապոնիայի տնտեսության համար Ծոցը կենսական կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջան է:

Ճապոնիան համագործակցում է Ծոցի արաբական երկրների հետ ինչպես տարածաշրջանային կազմակերպության՝ Ծոցի համագործակցության խորհրդի (ԸՀԽ) շրջանակ-

* Մինչև 2010 թ. ըստ ՀՆԱ-ի տվյալների Ճապոնիան երկրորդ տեղում էր՝ զիջելով միայն ԱՄՆ-ին: Այժմ այս գրադելուս է երրորդ տեղը՝ ԱՄՆ-ից և Չինաստանից հետո:

ներում, այնպէս էլ յուրաքանչյուր պէտության հետ առանձին-առանձին:

ԾՃՆ-ն ստեղծվել է 1981 թ. մայիսի 25-ին Սոցի միապետական կարգեր ունեցող արարական վեց պէտությունների՝ Արարական Միացյալ Էմիրությունների, Բահրեյնի, Կատարի, Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի և Օմանի միջև տարածաշրջանային կազմակերպության ստեղծման վերաբերյալ միասնական պայմանագրի ստորագրման արդյունքում:

Աշխատությունն արդիական է ոչ միայն ճապոնիայի արտարին քաղաքականությունը Սոցի տարածաշրջանում ավելի խորը հասկանալու, այև թէ՝ ճապոնիայի, թէ՝ ԾՃՆ-ի անդամ երկրների մոտեցումները տարածաշրջանային և միջազգային խնդիրների շուրջ ավելի հստակ ընկալելու տեսանկյունից:

Գրքում տեղ է գտել նաև ճապոնիայի և ԾՃՆ-ի անդամ երկրների երկկողմ հարաբերությունների զարգացման դիւնամիկայի ուսումնասիրությունը ԾՃՆ-ի ստեղծումից մինչև 2011 թ. ընդունելով 30 տարվա ժամանակահատված:

Աշխատանքում ուսումնասիրվում է ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականության ձևավորման պատճառները և սաղը պատերազմի տարիներին ճապոնիայի արտարին քաղաքականությունը մերձավորարևելյան, մասնավորապես Սոցի տարածաշրջանում։ Դիտարկվում են աշխարհաքաղաքական այն նախադրյալները, որոնք խթանեցին ԾՃՆ-ի ստեղծումը։ Ցույց է տրվում Իրան-իրաքյան պատերազմի (1980-1988թթ.) արդյունքում առաջացած նավթային ճգնաժամի ազդեցությունը թէ՝ ԾՃՆ-ի երկրների, թէ՝ ճապոնիայի տևականության վրա ուսումնասիրելով ԾՃՆ-ի անդամ երկրների դերը նավթային ճգնաժամի, ինչպես նաև ճապոնիայի կիրառական գործերն Իրան-իրաքյան հակամարտության կարգավորման հարցերում։ Ուսումնասիրվում է ճապոնիայի և ԾՃՆ-ի անդամ երկրների դիրքորոշումն Իրաքի կողմից

Քուվեյթին բռնակցելու (1990թ.) խնդրի շուրջ, ինչպես նաև երկու կողմերի ջանքերը վերականգնելու Քուվեյթի ինքնիշխանությունն ու վեսաված տեստեսությունը: Հետազոտվում է Ծոցի նավթարդյունահանող երկրների քաղաքականությունն ՕՊԵԿ-ի շրջանակներում, և ՕՊԵԿ-ի դերը նավթային ճգնաժամերի և տարածաշրջանային խնդիրների լուծման հարցերում: Քննության են ենթարկվում այն պատճառները և նախադրյալները, որոնք ստիպեցին ձապոնիային ակտիվացնել իր մերձավորարևելյան քաղաքականությունը հետազողացներազմյան շրջանում, ինչպես նաև մեծացնել իր ռազմականությունը Ասերամասն ուսումնասիրվում են ձապոնիայի երկնորմ հարաբերությունները ԾՃն-ի անդամ երկրներից յուրաքանչյուրի հետ առանձին – առանձին հարաբերությունների հաստատման օրվանից մինչև 2011 թ.:

Սույն աշխատության գրման համար մեծ նշանակություն ունեցավ 2012 թվականին հեղինակի՝ ձապոնիա կատարած երկամյա գիտական գործուղումը, որի ժամանակ հետավորություն ընձեռնվեց աշխատության հիմնական դրույթները ներկայացնել ձապոնիայի մի շարք գիտական կենտրոններին և ինստիտուտներին ու կազմակերպել նրա քննարկումը, մասնավորապես ձապոնիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտում (Japan Institute of International Affairs), ձապոնիայի Էներգետիկ տնտեսության ինստիտուտում (The Institute of Energy Economics, Japan), Ժամանակակից իսլամական ուսումնասիրությունների կենտրոնում (Center for Contemporary Islamic Studies), Խաղաղության ու անվտանգության հետազոտական ինստիտուտում (Research Institute for Peace and Security), ինչպես նաև Կանայ ձապոներեն լեզվի ինստիտուտում (Japanese-Language Institute, Kansai):

Բավական օգտակար էին ձապոնական մի շարք մասնագետների, մասնավորապես ձապոնիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի գիտաշխատող Տեսուուր Կո-

տանիի, Ճապոնիայի էներգետիկ տնտեսության ինստիտուտի ավագ գիտաշխատող և տնօրենի խորհրդական Հոսակա Շուջիի, նույն ինստիտուտի ավագ տնտեսագետ և տնօրենի խորհրդական Յասուիիկո Նազատայի, Ժամանակակից իլաւմական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Օսամու Միյատայի, ինչպես նաև Խաղաղության ու անվտանգության հետազոտական ինստիտուտի տնօրեն Մասաշի Նիշիհարայի և այլոց հետ կայացած քննարկումները և նրանց դիտարկումները:

Անշուշտ, վերոնշյալ աշխատանքի գրման համար անգնահատելի արժեք են ներկայացնում նաև այն նյութերը և գիտական աշխատությունները, որոնք ձեռք են բերվել Կանսայ ինստիտուտի, Օսակայի և Տոկիոյի գրադարաններից:

Աշխատության փորձաքննության համար շատ կարևոր էր նաև հեղինակի մասնակցությունը 2013 թ. Սոսկվայի արևելագիտության ինստիտուտում կայացած «Ճապոնիան Ասիայում՝ տարածաշրջանային հարաբերությունների հետանկարները և իրադրություննը» գիտաժողովին, որտեղ հանդիս գալով «Ճապոնիայի նավթային ծովային ուղիներին սպառնացող անվտանգության խնդիրների շուրջ» թեմայով գեկուցմամբ՝ միաժամանակ քննարկման էր ներկայացվել ատենախոսության հիմնական հիմնադրույթները: Հեղինակը հնարավորություն է ունեցել նաև օգուվելու գիտական թեմայի վերաբերյալ Ռուսաստանում առկա հարուստ գրականությունից:

Աշխատությունը շարադրված է հայերեն, ռուսերեն, անգլերեն և ճապոներեն տարաբնույթ աղյուրների, գիտական ուսումնասիրությունների, մասնավորապես պաշտոնական փաստաթղթերի, պարբերականների, հայ և օտարազգի հետազոտողների խնդրո առարկա թեմային նվիրված աշխատությունների ու հողվածների քննական հետազոտության և վերլուծության հիման վրա:

Հատուկ շնորհակալություն եմ ցանկանում հայտնել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանին՝ աշխատության հրատարակչությանն աջակցելու համար:

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, սույն գիտական աշխատանքի դեկանը և գրքի խմբագիր Նիկոլայ Հովհաննիսյանին՝ ցուցաբերած գիտական աջակցության համար: Նրա մասնագիտական մեծ փորձը, գիտական վիճակարի ժառանգությունն անգենահատելի արժեք էն առաջին անգամ ճապոնագիտության ոլորտում նման աշխատություն գրելու հարցում:

Շնորհակալ եմ իմ բոլոր գործընկերներից, ովքեր իրենց անաշառ դիտարկումներով նպաստել են այս աշխատության որակի բարձրացմանը:

Անշուշտ, երախտապարտ եմ ծնողներիս և ամուսնուս, ովքեր միշտ եղել են իմ կողքին և աջակցել են:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՃԱՊՈՆԻԱՆ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ
ՎԵՐԱՇՈՒՄԸ ՄԵՐՉԱՎՈՐՄԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԻ
(1946-1980 թթ.)

1.1 ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՃԱՊՈՆԻԱՆ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱՇՈՒՄԸ
ԶԱՐԳԱՑԱՇ ՏԱՏԵՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ (1946-1970 թթ.)

Երկրորդ համաշխարհային պատերազմում պարտություն կրած ճապոնիան անձնատուր եղավ և խիստ կախման մեջ ընկավ ԱՄՆ-ից: Ճապոնիայում ԱՄՆ-ը ստանձեց գերակա դեր՝ վարչակարգի կառավարիչ նշանակելով ամերիկացի գեներալ Դուգլաս Մակարտուրին¹: Վերջինիս կառավարման աջակցելու նպատակով Տոկիոյում ստեղծվել էր խորհրդակցական մարմին՝ Միացյալ Խորհուրդ, որի կազմի մեջ ներառված էին ԱՄՆ-ի, Անգլիայի, Ավստրալիայի, ԽՍՀՄ-ի, Հնդկաստանի, Նոր Զելանդիայի և Չինաստանի ներկայացուցիչները: Վաշինգտոնը ճապոնիայի բռնազավթման և երկրի ներսում անցկացվող բոլոր բարեփոխումներն իրականացնում էր հիմնվելով ԱՄՆ-ի նախագահ Հարի Տրումանի 1945 թ. սեպտեմբերի 6-ին ընդունած «ԱՄՆ-ի քաղաքականության հիմնական սկզբունքները ճապոնիայի օկուպացման սկզբնական փուլում» փաստաթղթի վրա²: Գլխավոր նպատակը, որ հետապնդում էր Վաշինգտոնը, ճապոնիային ապառազմականացնելն էր, որպեսզի Տոկիոն

¹ Nishikawa T., The Future of the Japanese Constitution: From the "MacArthur Constitution" to What?, Ohio, p. 52, <http://www.surugadai.ac.jp/sogo/media/bulletin/Hikaku17/Hikaku17Nishikawa.pdf>

² Truman H., "Special Message to the Congress Presenting a 21-Point Program for the Reconversion Period", September 6, 1945, <http://www.presidency.ucsb.edu/ws/?pid=12359>

այլևս վտանգ չներկայացնի ԱՄՆ-ի հեռավորարևելյան շահերին, ինչպես նաև դառնա հարթակ՝ Խորհրդային Սիուրյան դիրքերն Ասիայում բուլացնելու համար: Այդ մասին 1947 թ. մայիսին ԱՄՆ-ի պետքարտուղար Դ. Աշետնը նշել է. «ԱՄՆ-ը Գերմանիային և Ճապոնիային դիտարկում է ԽՍՀՄ-ի դեմ պայքարում՝ որպես իր ապագա դաշնակիցներ»³:

Անձնատուր լինելու հենց առաջին օրից հարց բարձրացվեց Երկրի պետական կառուցվածքի մասին: Ճապոնական կայսերապետական ինստիտուտը որոշվեց պահպանել և կայսրին շխամարել թշնամի այն բանից հետո, եթե կայսրը հրաժարվեց իր «աստվածային» ծագումից: Երկրի պետական կառուցվածքն ամրագրվեց 1946 թ. նոյեմբերի 3-ին ընդունված նոր սահմանադրության մեջ, որն ուժի մեջ մտավ 1947 թ. մայիսի 3-ին⁴: Սահմանադրության մեջ հիմնական կետերից մեկը վերաբերում էր Ճապոնիայի պատերազմական գործողությունները վարելու իրավունքի հրաժարմանը՝ որպես միջազգային վեճերի լուծման միջոց: Սահմանափակվեցին նաև կայսրի գործառույթները՝ տալով վերջինիս ազգի միասնության և պետության խորհրդանիշի կարգավիճակ⁵: Սահմանադրությունը 1947 թ. փետրվարի 12-ին ստացավ գեներալ Մակարտուրի հավանությունը և արդեն փետրվարի 13-ին ներկայացվեց ճապոնական կառավարության ներկայացուցիչների, իսկ փետրվարի 22-ին՝ կայսրի քենարկմանը: Այն մարտի 6-ին պաշտոնապես ներկայացվեց ժողովրդին՝ որպես

³ 日本經濟 (‘ქիու կեհձայ’ ճապոնիայի տևականություն), Tokyo, 26.2.1972; Sigur J., Tha Asian Alliance, Japan and the United States Policy, N.Y., 1972, p. 54.

⁴ Ճապոնիայի սահմանադրությունը բաղկացած է 11 գլուխ և 103 հոդվածներից: Հատկանշական է, որ վերոնշյալ սահմանադրությունը գործում է միևնույն օրու և ընդունման օրվանից ոչ մի փոփոխության չի ենթարկվել: Այս մասին տե՛ս Togo K., Japan's Foreign Policy, 1945-2003, The Quest for a Proactive Policy, Boston, 2010, p. 35.

⁵ Նոյն տեղում, էջ 59:

ճապոնական կառավարության ինքնուրույն մշակված փաստաթուղթ։

Ակտած 1948 թ. ԱՄՆ-ի ասիական բաղարականության մեջ փոփոխություն նկատվեց։ Եթե մինչ այդ Վաշինգտոնը որոշել էր ապառազմականացնել Ճապոնիան, որպեսզի վերջինս հավակնություններ չունենա խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, ապա այժմ ստիպված էր վերանայել իր դիրքորոշումը, քանի որ թուլացնելով Ճապոնիային՝ նպաստում էր ասիական մյուս երկրների ուժեղացմանը⁶։ Դրա վառ ապացույցն էր Չինաստանում⁷ և Հյուսիսային Կորեյում⁸ սոցիալիստական կարգերի հաստատումը, Վիետնամում և Ֆիլիպիններում սկսված ազգային-ազատագրական շարժումները։

Արդեն 1948 թ. մարտին ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ներկայացուցիչ Զ. Կենանը, Ճապոնիա ժամանելուց և Մակարտուրի հետ զրուցելուց հետո նշեց, որ անհրաժեշտ է

⁶ Молодцов В., Молодцова Э., Маркарян С., История Японии, XX век, М., 2007, с. 245; Современная Япония, Справочник, М., 1973, с. 756-773.

⁷ Zhu Z., America's Military Presence in Northeast Asia after the Cold War: Winning without Fighting?, East Asian Review, Volume 12, Number 2, Summer, 2000, p. 88.

⁸ Չան Կայչի դեկավայրության ներքո գրծող գումարանական բանակի պարագույնը հնարավոր եղավ ի կատար ամեն ԽՍՀՄ-ի անմիջական օգնության շնորհիվ։ 1949 թ. հոկտեմբերի 1-ին Պեկինում հաստատվեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը։ Սառ Ֆզերուսի գլխավորությամբ Հաջորդ օրը Խորհրդային Սիությունն առաջին ճականեց ՉժՀ-ի անկախությունը և կերպ «Բարեկամության, միասնության և փոխադարձ օգնության» վերաբերյալ պայմանագիր։ Այս մասին տե՛ս Շլյուն Բ., Գրիգորյան Ա., Կոկոշկին Կ., Նիկիֆորով Յ., Խոհեման պատմություն 1917-1970 դր., Մ., 1972, с. 208.

⁹ 1948 թ. սեպտեմբերի 9-ին Հյուսիսային Կորեայում ստեղծվեց Կորեայի Ժողովրդական Հնմուրատական Հանրապետությունը (ԿԺՀ), որի դեկավառ դարձավ Կիմ Իր Սենը։ Այս մասին տե՛ս Տօրկոնով Ա., История Кореи, М., 2003, с. 338.

վերազինել երկիրը: Նա ընդգծեց. «Ճապոնիայի ներուժը շատ ուժեղ է Հնոավոր Արևելքում և պետք է կարևոր տեղ տրվի ԱՄՆ-ի քաղաքականության մեջ»՝ հավելելով, որ անհրաժեշտ է վերականգնել Ճապոնիայի ինքնիշխանությունը¹⁰:

Ճապոնիայի հետ հաշտության պայմանագրի ստորագրման նպատակով Սան Ֆրանցիսկոյում 1951 թ. սեպտեմբերի 4-8-ը հրավիրվեց միջազգային խորհրդաժողով, որին մասնակցում էին 51 երկրների ներկայացուցիչներ¹¹: Հարկ ենք համարում նշել, որ խորհրդաժողովին չեին հրավիրված Կորեայի Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետությունը (ԿԺԴՀ). Մոնղոլիայի Ազգային Հանրապետությունը, Վիետնամը և Չինաստանը: Փաստորեն այն երկրները, որոնք ամենից շատ տուժել էին Ճապոնիայի գործողություններից Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում:

Հաշտության պայմանագիրը ստորագրվեց 1951 թ. սեպտեմբերի 8-ին, որի ուժի մեջ մտավ 1952 թ. ապրիլի 28-ին¹²: ԱՄՆ-ը Ճապոնիայի հետ կըրեց նաև «Անվտանգության պայմանագիր», որը վերաբերում էր ամերիկյան ռազմական բազաների տեղակայմանը երկրում: «Պայմանագրում ամերիկյան բազաների ներկայության ժամկետները չեին հստակեցվում» նշելով. «Ամերիկյան զորքերը կհեռանան Ճապոնիայից այն ժամանակ, երբ կստեղծվի մի այնպիսի համակարգ, որը

¹⁰ "News Week", N. Y., 03.11.1975; Марков А., Послевоенная политика Японии в Азии и Китае (1945-1977), М., 1979, с. 39.

¹¹ Treaty of Peace with Japan, United Nations Treaty Series 1952 (reg. no. 1832), Volume 136, pp. 45-164.

¹² Հաշտության պայմանագիրը բաղկացած էր 27 հոդվածներից՝ զետեղված 7 գլուխներում: Հաշտության պայմանագրի տեքստը տե՛ս Իстория войн на Тихом океане, Т. V, М., 1958, с. 337-359.

կապահովի ծագող արևի երկրի անվտանգությունը տարածաշրջանում»¹³:

Հետազայում ավելի մասրամասն ԱՄՆ-ի գորքերի տեղակայմանը ճապոնիայում անդրադարձ եղավ «Աղմինիստրատիվ համաձայնագրում», որը կըսվեց 1952 թ. փետրվարի 28-ին¹⁴: Ըստ այդ համաձայնագրի՝ ԱՄՆ-ը ստացավ անսահմանափակ իրավունք՝ օգտագործելու ճապոնիայի բոլոր նավահանգիստները և օդանավակայանները: Փաստորեն այդ համաձայնագրի կնքմամբ ամերիկյան ռազմաբազաները ձեռք էին բերում «պետություն պետության ներսում» կարգավիճակ¹⁵, քանի որ վերջիններս ճապոնիայի կառավարության վերահսկողությունից դուրս էին գտնվելու¹⁶:

Այսպիսով՝ ԱՄՆ-ի և ճապոնիայի կառավարությունների միջև կըսված հաշտության պայմանագիրը, «Անվտանգության պայմանագիրը», «Աղմինիստրատիվ համաձայնագիրը», «հետազայում» 1954 թ. մարտին, նաև «Փոխպաշտպանության համաձայնագիրը», վերջնականացես ձևավորեցին Սան Ֆրանցիսկոյի պայմանագրերի համակարգը: Այն դարձավ իրավական հիմք ճապոնա-ամերիկյան ռազմաբազաքան դաշինքի համար:

Փաստորեն ԱՄՆ-ի քաղաքականությունը ճապոնիայի անձևատուր լինելուց հետո անցել է երկու փուլ, ինչը ձեռավոր

¹³ Петров Д., Внешняя политика Японии после Второй мировой войны, М., 1968, с. 65.

¹⁴ Պայմանագրի տերաւուց տես՝ История войны на Тихом океане, № 370-399:

¹⁵ Ըստ «Ճապան քայլս»-ի (*Japan Press*) հետազոտության տվյալների՝ ճապոնիայի Հոկայդո կղզում 37 ռազմական բազաների վոլոսաքննությանը մասնակի էր 49 ռազմական բազա, փաստորեն՝ 30%-ով ավելի, քան հայտարարվում էր պաշտոնապես: Այս մասին տես՝ *Japan Press*, Tokyo, 28.10.1961, p. 11.

¹⁶ 占領下日本の分析 («Աներյակա նիստներ բուժելի»՝ «Ճապոնիայի օկուպացման պայմաններին վերաբերող վերլուծություն»), Kyoto, 1955, p. 64.

Արևելքում միջազգային իրադրության և ամերիկյան արտաքին քաղաքականության դիրքորոշման փոփոխությունների արդյունք էր: Առաջին փուլն ընդգրկում էր 1945-1948 թթ., երբ ամերիկացիները ցանկանում էին վերացնել Հեռավոր Արևելքում իրենց շահերի համար վտանգ ներկայացնող հակառակորդին՝ Ճապոնիային, և երկրորդ փուլը՝ 1948-1952 թթ. երբ փորձում էին ճապոնիան վերածել «ենթակա» դաշնակցի՝ Ասիայում սկիզբ առած ազգային-ազատազրական շարժումները ճնշելու, ինչպես նաև Խորհրդային Միության ու Չինաստանին «զսպելու» նպատակով, որը կնպաստեր ԱՄՆ-ի ծավալապաշտական քաղաքականության հաստատմանն Ասիայում¹⁷:

Հաշտության պայմանագրի ստորագրումը հնարավորություն տվեց Ճապոնիային պատերազմից հետո հայտնվել միջազգային ասպարեզում՝ որպես ինքնուրույն երկիր, անկախ գործոն և դառնալ միջազգային հանրության քաղկացուցիչ մասը: Նրա այդ հնարավորություններն ավելի ամրապնդեցին, երբ նա 1956 թ. դարձավ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) անդամ:

Նաև Ֆրանցիսկոյի պայմանագրի ստորագրումից հետո ԱՄՆ-ը ձեռնամուխ եղավ Ճապոնիայի վերառազմականացման քաղաքականության իրականացմանը¹⁸. ինչն ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջև հակասությունների առաջացման պատճառ հանդիսացավ: Եթե ԱՄՆ-ը Ճապոնիայի հետ հարաբերություններում կարևորում էր ռազմարարական հարաբերությունները՝ տևուտսական հարաբերություններին տալով երկրորդական դեր, ապա Ճապոնիան, հակառակը, ցանկանում էր օգտագործել ԱՄՆ-ի տեխնոլոգիական ներուժը՝ իր երկրի

¹⁷ Livingston J., Moore J., Oldfeather F., Postwar Japan, 1945 to the Present, N. Y., 1974, p. 78.

¹⁸ Sakakibara E., Structural Reform in Japan: Breaking the Iron Triangle, Washington D.C., 2003, p. 89.

տնտեսությունը զարգացնելու համար¹⁹: Սակայն Վաշինգտոնն ամեն կերպ փորձում էր ստիպել Ճապոնիային ի կատար ածել վերառազմականացման իր բաղաքականությունը՝ կիրառելով Ճապոնիայի իշխող օդակների վրա տնտեսական զանազան ճնշամիջոցներ, որոնք տվեցին իրենց արդյունքը, և Ճապոնիան ստիպված էր գնալ մի շարք գիշումների: ԱՄՆ-ի պարտադրմամբ 1952 թ. Ճապոնիայի «Ռատիկանական պահուստային կորպորաց» ընդլայնվեց՝ 75 հազարից հասնելով 110 հազարի, իսկ 1953 թ.՝ 310 հազարի²⁰: Ըստ 1952 թ. տվյալների՝ Ճապոնիան պետական բյուջեից հատկացրել էր 180.2 մլրդ իեն, այսինքն՝ բյուջեի 21%-ը՝ ամերիկյան գորբերին իր տարածքում պահելու և այլ ռազմական ծախսեր հոգալու նպատակով²¹: Հետագայում Ճապոնիայի «Ռատիկանական պահուստային կորպորաց» վերանվանվեց «Ազգային անվտանգության կորպորաժ», որը բաղկացած էր 4 դիվիզիոնից, յուրաքանչյուրը՝ 15000 զինվոր, և հատուկ «Հյուսիսային կորպորաժ», որը տեղակայված էր Հոկայդոյում²²: 1954 թ. մարտի 8-ին Տոկիոյում կըրվեց համաձայնագիր ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջև, ըստ որի՝ Ճապոնիայի «Ազգային անվտանգության կորպորաց» վերանվանվեց «Ինքնապաշտպանական ուժեր» (自衛隊 (Զիեկուտայ))²³: Արդեն 1954 թ. Ճապո-

¹⁹ Игнатушкин С., Япония и США: Партийцы и конкуренты, М., 1970, с. 8.

²⁰ Պետական զանազանում էր «Ռատիկանական պահուստային կորպորաժ» զինվորների բվարանակն աստիճանաբար մեծացնելով՝ ստեղծել ճապոնական հզոր բանակ: Այս մասին տես՝ Էնիչ («Մահիսիայ»), Tokyo, 22.10.1952.

²¹ Петров Д., նշ. աշխ., էջ 80:

²² "Nippon Times", Tokyo, 31.12.1953.

²³ Петров Д., նշ. աշխ., էջ 116:

Նիայի ցամաքային գորբերի թիվը հասնում էր 30 հազարի, այսինքն՝ 25%-ով ավելին էր նախորդ տարվա համեմատ²⁴:

Ճապոնիան զիտակցում էր, որ անհրաժեշտ է ամեն կերպ դուրս գալ տնտեսական ճգնաժամից, այդ պատճառով ընտրեց իր երկրի տնտեսության զարգացման համար մի այնպիսի ճանապարհ, որի շնորհիվ շատ կարծ ժամանակահատվածում կարողացավ դառնալ զարգացած տնտեսություն ունեցող երկրորդ տերությունն աշխարհում: Ճապոնիայի երկու տասնամյակի ընթացքում տնտեսության արագ զարգացումը հետագայում ստացավ «Ճապոնական հրաշք» անվանումը²⁵:

Ճապոնիայի արդյունաբերության կարևորագույն ոլորտները հայտնվեցին ֆինանսամենտաշնորհային կլանի ձեռքբուժում, որոնց ճապոներենով անվանում էն «Ճափրացու» (財閥)²⁶: Այդ կլանի խոշոր ներկայացուցիչներն են «Միցուի», «Միցուբիշի», «Սոսիմումո», «Ֆույո», «Շայիտի Կանզին» և «Սանվան» ֆինանսարդյունաբերական խմբերը²⁷: Ամենախոշոր խոսմբը համարվում է «Միցուբիշի»-ն, որի ակտիվները 1973 թ. դրույթամբ կազմում էին 20 տրիլիոն իեն²⁸: Մենաշնորհի դիրքերի ամրապնդումը տնտեսությունում հանգեցրեց պետական մենաշնորհային կապիտալիզմի ձևավորմանը²⁹: Ենեկով այս

²⁴ Որոշ տվյալների համաձայն՝ հատկացրել է երկրի բյուջեի 17.6%-ը: Այս մասին տե՛ս Nakamura T., Economic Development of Modern Japan, Japan, 1985, p. 76.

²⁵ Thurow L., Head to Head: The Coming Economic Battle among Japan, Europe and America, N.Y., 1992, p. 247.

²⁶ Sakakibara E., Աշխատանք, էջ 59:

²⁷ Вербицкий С., Япония : Время сложных проблем, М., 1974, с. 7.

²⁸ Власов В., Монополистический капитал Японии на рубеже 60-70-х годов, М., 1977, с. 103.

²⁹ Հարկ է նշել, որ 3 մենաշնորհային կազմակերպություններ կենտրոնացրին իրենց ձեռքբուժում այսումիևս արդյունաբերությունը, 7 կազմակերպություններ՝ նայելի արդյունաբերությունը, 8 կազմակերպություններ՝ կեկտրամերենաների և կենտրոնացրավորումների արդյունաբերությունը և այլն:

հանգամանքից, որ երկրի տնտեսության հիմնական լծակները գտնվում էին կապիտալի մազնատների ձեռքբերում՝ նրանց շահերի ապահովման նպատակով ստեղծվեց Ճապոնական տնտեսական կազմակերպությունների դաշնություն (経団連 [Keizai Dantai Rengōkai])՝ «Կեյդանրեն»³⁰ կոչվող բաղաքական կառույցը, որի հիմնական գործառույթն է ներքին և արտաքին բաղաքականության հիմնական ուղղությունների տարրությունը: Հենց դաշնության առաջարկով էր 1955 թ. նոյեմբերի 15-ին Ճապոնիայի երկու հզոր պահպանողական գաղափարախոսություն ունեցող լիբերալ և դեմոկրատական կուսակցությունները միավորվեցին՝ կազմելով լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը (ЛДԿ) ³¹: Այն ամբողջովին իր արտաքին բաղաքականությանը վերաբերող հարցերում հիմնվում էր Տնտեսական կազմակերպությունների դաշնության առաջարկած բաղաքական լուծումների վրա³²: ԼԴԿ-ի ստեղծմամբ երկրում ձևավորվեց երկկուսակցական համակարգ, քանի որ մինչ այդ՝ 1955 թ. հոկտեմբերին, արդեն միավորվել էին Ճապոնիայի սոցիալիստական կուսակցության (ՃՍԿ) աջ և ձախ թերթ՝ ստեղծելով միանական սոցիալիստական կուսակցությունը³³: Այսպես՝ լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը 1955 թվականից սկսած մինչև 1993 թ. անընդմեջ կարողացավ իր ձեռքբերում պահել իշխանության

Այս մասին մակարդական տե՛ս Պևզнер Յ., Экономика Японии после Второй Мировой войны, М., 1955, с. 131; Ճինչևիչ Ա., Экономика послевоенной Японии (1945-1955 г.), М., 1958, с. 115.

³⁰ <http://www.keidanren.or.jp>. «Կեյդանրեն»-ը՝ որպես կազմակերպություն ստեղծվել է 1946 թ., սակայն ֆինանսամենտաշնորհային կանոնադրությամբ էին դեռևս Մեծամի ժամանակաշրջանում:

³¹ ֆ չ Ս («Ասահի»), Osaka, 10.12.1954.

³² Encyclopedia Britannica, <http://www.britannica.com/EBchecked/topic/314212/Keidanren>

³³ Молодяков В., Молодякова Э., Маркарьян С., Խշլ. աշխ., էջ 305-310:

դեկը³⁴, իսկ Ճապոնիայի սոցիալիստական կուսակցությունը հանդէս էր գալիս որպես ընդդիմություն³⁵:

Երկրում ձևավորված քաղաքական համակարգը զիտական գրականության մեջ անվանում էն «Ժողովրդավարական կարառկե», որը բացատրվում է նրանով, որ կարևոր չէ, թե երկրում ով է կանգնած իշխանության դեկին, քանի որ քաղաքականության ընտրությունը չեն կանխորոշում կառավարող մարմինները: Ճապոնիայի իշխանությունը համեմատվում է կարառկեի բեմահարթակի հետ, որտեղ միմյանց փոխարինում են թվայալ երգիչները (խոսքը վերաբերում է դեկավար մարմիններին), որոնք փորձում են «երգել» այն «երգը», որը նախապես ընտրվել է «երգացանկից»³⁶:

Այսպիսով՝ երկրի մենաշնորհատերերը, իրենց ձեռքբույս կենտրոնացնելով կառավարման լծակները, ձգուում էին Ճապոնիան վերածել տնտեսական զարգացած պետության: Արդեն 1955 թ. սկզբին կառավարությունն ընդունեց տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը (1956-1960 թթ.): Նրա գլխավոր նպատակն էր հասնել տնտեսական ինքնուրույնության և վերացնել գործազրկությունը: Ազգային տնտեսության, մասնավորապես արդյունաբերության զարգացումն իրականացվում էր արդյունաբերական քաղաքականության ռացիոնալիզացման շնորհիվ, որը պետականորեն հարկադրված քաղաքականություն էր: Այս իրենից ներկայացնում էր արդյունաբերության արդյունավետության մեծացում, արդյունաբերական կազմակերպությունների տեխնիկական մակարդակի բարձրացում, օգտագործվող հումքի և մատերիալի բարելավում, ողջ կառավարման համակարգի արդիականա-

³⁴ McKibbin W., The Macroeconomic Experience of Japan since 1990: An Empirical Investigation, Washington D.C., November, 1996, p. 18.

³⁵ Purnendra J., Inoguchi T., Japanese Politics Today: Beyond Karaoke Democracy, N.Y., 2011, p. 11.

³⁶ Նոյն տեղում, էջ 2:

ցում, արդի տեխնոլոգիաների ներմուծում, այդ թվում՝ կադրային քաղաքականության, աշխատանքի վճարման համակարգի բարելավման, արտադրանքի որակի վերահսկման, ինչպես նաև ընկերությունների միջև հարաբերությունների վերակազմավորման սկզբունքների իրականացում։ Այս ամենը իրագործելու համար պահանջվում էին լուրջ ներդրումներ և ջանքեր, հատկապես մասնավոր կազմակերպությունների կողմից, որոնց պետությունը մեծ աջակցություն էր ցուցաբերում³⁷։

Իրականացվող բարեփոխումների արդյունքները երկար սպասեցնել չուվեցին։ Արդեն 1956 թ. դրությամբ արձանագրվեց 59%-ի աճ մասնավոր ներդրումների ոլորտում, 13%-ով՝ աճեց համախառն ներքին արտադրանքը (ՀՆԱ), 22%-ով՝ արդյունաբերական արտադրությունը։ Ամենամեծ առաջընթացը գրանցվեց մերենաշինության, տեքստիլ, քիմիական և էներգետիկ ոլորտներում, որն աստիճանաբար կանխորոշեց արդյունաբերական ոլորտի ներակառուցվածքի փոփոխությունը։

Փաստորեն տևտեսության ոլորտում կոշտ քաղաքականության իրականացումը հիմք ծառայեց երկրի տևտեսության զարգացման համար, որը նպաստեց մեծարանակ կապիտալի կուտակմանը³⁸։ Վերջինս տեխնոլոգիական նորամուծությունների և աստիճանաբար կյանքի մակարդակի բարելավման պայմաններում ներքին շուկայի արտադրանքի կայուն պահանջարկի երաշխիք դարձավ։

1956 թ. դեկտեմբերին վարչապետ Խոհրո Հատոյամայի հրաժարականից հետո Ճապոնիայի վարչապետ ընտրվեց Կիսի Նոբուսոկին (1957 թ. փետրվար – 1960 թ. հուլիս)։ Նա մշակեց 1958–1962 թթ. համար նախատեսված «Նոր Երկարա-

³⁷ Лебедева И., Малый бизнес в Японии, Справочное издание, М., 2004, с. 30.

³⁸ Молодяков В., Молодякова Э., Маркарьян С., Աշվ. աշխ., էջ 296:

ժամկետ տնտեսական պլան»՝ որոշակի փոփոխությունների ենթարկելով նախորդ պլանը: Նոր պլանի հիմնական նպատակն էր ապահովել արդյունաբերության կայուն աճ, բարելավել վճարային հաշվեկշիռը, ինչպես նաև լուծել քնակչության գրաղվածության խնդիրը:

Ճապոնիայի տնտեսական զերտերություն դառնալու ճանապարհին մեծ դեր խաղաց նաև «Ազգային եկամտի կրկնապատկման նախագիծը», որը պատմության մեջ հայտնի է «Իկեդայի պլան» անվանումով: Այն լուրջ մշակումներից հետո ուժի մեջ մտավ 1960 թ. դեկտեմբերին: Վերոնշյալ պլանը մշակել էր նոր վարչապետ Իկեդա Հայատոն (10 տարի ժամկետով՝ ընդգրկելով 1961-1970 թթ.), որի հիմնական նպատակը տնտեսական աճի առավելացումն (մարսիմալիզացում) էր, ժողովրդի կյանքի մակարդակի բարելավումը, գրաղվածության խնդրի լուծումը, ազգային եկամտի կրկնապատկումը: Նախագիծը նախատեսում էր նաև զյուղատնտեսության, միջնի և մասր արդյունաբերության, տեղական արտադրանքի մրցունակության բարձրացում³⁹:

Մեծ տեմպերով զարգանում էր նաև արտաքին առևտուրը: 1960-1970 թթ. Ճապոնիայում արտահանումն աճեց 3.6%-ից մինչև 7.6%, ներկրումը՝ 3.8%-ից հասավ 6.1%-ի⁴⁰: Հատկանշական է այն փաստը, որ 1950-ականների վերջերին կապիտալիստական երկրներում ճապոնական «Սոնի» ընկերությունը ճանաչվեց որպես ուղիղընդունիչների լավագույն արտադրող: 1960 թ. հիմնվեց «Սոնի կորպորեյշն օֆ Ամերիկա» ("Sony Corporation of America") ընկերությունը, ինչն ազդարարեց արտադրանքի ելքը համաշխարհային շուկա⁴¹: Եթե 1960 թ. տվյալներով Ճապոնիան գրաղեցնում էր երկրորդ

³⁹ Nakamura T., ևշվ. աշխ., էջ 74:

⁴⁰ 現代日本經濟指標 («Գենդայ նիհոն կեխասի հյուս»՝ «Ժամանակակից Ճապոնիայի տնտեսական պատմություն»), Tokyo, 1975, p. 168.

⁴¹ Морита А., Сделано в Японии, М., 1990, с. 6.

տեղը հեռուստացույցների, ռադիոյի, իսկ չորրորդ տեղը՝ պոդ-պատի ու էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտներում⁴², ապա արդեն 60-ականների վերջերին արտահանման մեջ սկսեց գերիշխել ծանր արդյունաբերությունը:

1964 թ. Ճապոնիան արձանագրեց 13.8% տնտեսական աճ, իսկ ՀՆԱ-ի՝ 10.7%-ի աճ: Ճապոնիայի ներդրումը կապիտալիստական երկրների արդյունաբերության մեջ 1964 թ. դրությամբ կազմում էր 5,4%՝ զիջելով միայն ԱՄՆ-ին (44,2%), Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությանը (ԳՖՀ) (9%), Անգլիային (8,6%)՝ հետևում քողնելով Ֆրանսիային (4,1%) և Իտալիային (4,4%)⁴³:

1965 թ. Ճապոնիան արձանագրեց նոր տնտեսական աճ, որն անվանեցին «Ինասագիի թնդյուն»: Այդ շրջանում արդյունաբերական արտադրանքն աճեց 270%-ով, ինչն անսահանեալ արդյունք էր, քանի որ առավելագույն աճը, որ գրանցվել էր որսից երկրում մինչ այդ, կազմել էր ընդամենը 80%: Արդեն 1968 թ. Ճապոնիան առաջ անցավ տնտեսական աճի ցուցանիշով բոլոր երկրներից, բացի ԱՄՆ-ից, իսկ 1970-ականների սկզբին իր ՀՆԱ-ի տվյալներով դարձավ տնտեսական երկրորդ տերությունը կապիտալիստական աշխարհում⁴⁴:

Այսպիսով՝ 1970-ականների սկզբին Ճապոնիան դասվեց տնտեսական զարգացած երկրների շարքին: 1975 թ. նոյեմբերի 15-17-ը Ռամբույում Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, ԳՖՀ-ի, Իտալիայի և Ճապոնիայի դեկավարների միջև տեղի ունեցած հանդիպման ժամանակ որոշվեց ստեղծել «Մեծ վեց-

⁴² Հարկ է նշել, որ Ճապոնիայի ապրանքների իրացման հիմնական պատճառը բարձր մրցունակությունն էր: «Պատրաստված է Ճապոնիայում» բրենդը դարձավ բարձրորակ արտադրանքի խորհրդանշիքը: Այս մասին տես՝ Մորիտա Ա., նշվ. աշխ., էջ 22:

⁴³ Մеждународный ежегодник, 1965, М., 1965, с. 363-364.

⁴⁴ Nakamura T., նշվ. աշխ., էջ 73:

նյակ» միջազգային խումբը⁴, որի շրջանակներում զարգացած տնտեսությունը ունեցող պետությունները սկսեցին համագործակցել ընդհանուր միջազգային խնդիրների լուծման հարցում:

1.2 ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ճապոնիայի մերձավորարելյան քաղաքականության ձևավորումն ընդունված է համարել տարածաշրջանում նավթի հայտնաբերման ժամանակից սկսած, այսինքն՝ 1930-ականների կեսերից, երբ առաջին անգամ Շոցում նավթ հայտնաբերվեց⁵: Այն սկիզբ դրեց Ճապոնիայի և Շոցի երկրների միջև նավթային հարաբերությունների հաստատմանը: Այսպես՝ ճապոնական «Նիպպոն օյլ կորպորեյշն»-ը ("Nippon Oil Corporation"), որը ստեղծվել էր դեռևս 1888 թ.⁶, սկսեց նավթ ներկրել Բահրեյնից⁷, հետագայում նաև Սաուման Արաբիայից⁸: Սակայն դա երկար չունեց, քանի որ Երկրորդ աշխարհամարտի տարիներին Ճապոնիայի արևմտյան հակառակորդ-

* 1976 թ. «Մեծ վեցեյակ»-ին միացավ նաև Կանադան՝ վերածելով այս «Մեծ յոթեյակի»:

⁵ Առաջին անգամ նավթ հայտնաբերվեց Բահրեյնում 1932 թ., և արդեն 1936 թ. Բահրեյնի կղզում կառուցվեց նավթամշակող գործարան 1 տարում 3 մլն 500 հազար բարել հզրությամբ, իսկ 1955 թ. դրույթամբ՝ այս հասալ 84 մլն բարել հզրության: Այս մասին տե՛ս "Oil and Gas Journal", 26.12.1955, p. 142.

⁶ Ներկայում այս կազմակերպությունը կոչվում է «Նիպպոն օյլ ընդ էներգի կորպորեյշն» ("Nippon Oil & Energy Corporation"): Այս մասին տե՛ս Hosaka S., Japan and the Gulf: A Historical Perspective of Pre-Oil Relations, Kyoto Bulletin of Islamic Area Studies, 2011, p. 17.

⁷ Ֆ. Տ. Ա. («Սասիկ»), Osaka, July 6, 1934.

⁸ Առաջին անգամ նավթը Սաուման Արաբիայում արդյունահանվել է 1938 թ. մարտին Դամման կոչվող շրջանից: Այս մասին տե՛ս Բասկի Բ., Նեֆտյան մոնոպոլն ի Բլույնում և Սրբակության Վոստոկու, Մ., 1957, с. 161.

ները՝ ի դեմս ԱՄՆ-ի և Ասգլիայի, արգելեցին Սառույան Արարիային և Բահրեյնին նավք վաճառել Ճապոնիային, որի պատճառով ծագող արկի երկիրը որոշ ժամանակով հեռացավ Ծոցի տարածաշրջանից:

Ճապոնիայի ներկայությունը մերձավորաբեշյան տարածաշրջանում կրկին ակտիվացավ արդեն 1950-ականների կեսերից, երբ երկիրը սկսեց արձանագրել տնտեսական աճ և դրան զուգահեռ մեծացավ երկրի էներգիայի պահանջարկը: Բնական ռեսուրսները չունենալու պատճառով ճապոնիայի մենաշնորհային ընկերությունները, հաշվի առնելով նավթի զերի անհամեմատ եժան լինելու հանգամանքը (1 բարել նավթն արժեր 2 դոլար)⁴⁹, 1955 թ. «արդյունաբերության արդիականացման» կարգախոսի ներքո էներգետիկ և արդյունաբերական ընկերություններում բարածիսի փոխարեն որպես վառելանյութ սկսեցին օգտագործել նավթը⁵⁰: Եթե Ճապոնիան հետպատերազմյան շրջանում իր էներգետիկ պահանջարկն ապահովում էր 60%-ը բարածիսի և 7%-ը նավթի ներկրման միջոցով, ապա 1970-ականների սկզբին դառնալով զարգացած տնտեսություն ունեցող երկրորդ տերությունն աշխարհում⁵¹՝ այն ինքնին նպաստեց նավթային ներկրումների բանակի մեծացմանը: Այսպիսով, եթե Ծոցի տարածաշրջանից 1955 թ. դրությամբ Ճապոնիան ներկրում էր 56.6 մլն բարել նավք և զրադեցնում էր 7-րդ տեղն իր նավթային ներկրումների բանակով, ապա 1962 թ. Ճապոնիայում նավթային ներկրումները

⁴⁹ Վերbiцкий С., Խշվ. աշխ., էջ 29-30:

⁵⁰ Индрикшин Р., ОПЕК в мировом капиталистическом хозяйстве, М., 1983, с. 9.

⁵¹ 1960-1970-ականների ընթացքում ճապոնիայի տարեկան միջին տնտեսական աճը կազմում էր 9%, իսկ 1980-ականներին՝ 4%: Այս մասին տե՛ս The Boom and the Bust of the Japanese Economy: A Quantitative Look at the Period 1980–2000, Japan and the World Economy, Volume 21, Issue 1, January 2009, p. 116; Japan and the World Economy, Volume 21, Issue 1, January 2009, <http://www.state.gov/r/pa/ei/bgn/4142.htm>

կազմեցին 44%, իսկ 1972 թ. դրույյամբ՝ 73%-ը⁵²: Արդեն 1973 թ. Ճապոնիան ներկրեց 1 մլր 800 մլն բարել նավթ, որը կազմում էր իր նավթային պահանջարկի 90%-ը⁵³:

Հարկ է նշել, որ նավթի արդյունաբերությունն ամենամեծաշխտրհային ոլորտներից մեկն է: Նավթային շուկան առաջիններից էր, որ բաժանվեց նավթի առևտրի ոլորտում գործող խոշոր ընկերությունների միջև: Նրանցից 3-ը՝ ամերիկյան «Ստանդարտ օլի օֆ Նյու Ջերսի»-ն ("Standard Oil of New Jersey" ("Esso"), որը հետագայում վերանվանվեց «Էքսոն» ("Exxon")), անգլ-հոլանդական «Ռոյալ Դաշտ Շելլ»-ը ("Royal Dutch Shell") և անգլիական «Բրիթիշ պետրոլիում»-ը ("British Petroleum") հիմք դրեցին միջազգային նավթային կարտելի ստեղծմանը: Հետագայում նրանց միացան ևս 4 ամերիկյան նավթային ընկերություններ՝ «Տեքսակո»-ն (Texaco), «Սոլկալ»-ը ("Standard Oil of California" ("SoCal")), «Ստանդարտ օլի կորպորեյշն» օֆ Նյու Յորք»-ը ("Standard Oil Corporation of New York" ("Socony"), որը հետագայում վերանվանվեց «Մոբիլ» ("Mobil")) և «Գալֆ օլի»-ը ("Gulf oil")՝ ստեղծելով «Յոր Բույրեր» կոչվող միջազգային նավթային կարտելը, որն իր ձեռքում էր կենտրոնացրել Մերձավոր և Միջին Արևելյան նավթային պաշարների 99%-ը⁵⁴: Սկզբնական շրջանում կարտելի զիսավոր նպատակն էր արդյունահանվող նավթի ցածր գնի պահպանումը նավթային առաջարկի կարգավորման և կողմնակի մրցակիցների չեղորացման միջոցով, որոնց շարքերին էին դասվում «անկախ» ամերիկյան, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի պետական ու մասնավոր նավթային ընկերությունները, որոնց հաճախ անվանում էին «առթայդերներ»⁵⁵: 1950-

⁵² McNaugher T., Arms and Oil, Washington, 1985, p. 4.

⁵³ Nakamura T., նշվ. աշխ., էջ 73; Miyagi Y., Japan's Middle East Security Policy: Theory and Cases, London, 2008, pp. 1-2.

⁵⁴ Odell P., Oil and World Power, N.Y., 1986, p. 7.

⁵⁵ Ինձկուռք Բ., նշվ. աշխ., էջ 11:

1960-ականներին «առևտսայդերների» թիվը նավթի արդյունահանման գործընթացում աճեց՝ հասնելով 13%-ի, իսկ 1972 թ.՝ 29%-ի⁵⁶, որը մեծ մասամբ պայմանավորված էր Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի ձգտումով ստեղծել անզլո-ամերիկյան նավթային կարտելից համեմատաբար անկախ մեխանիզմ՝ վառելանյութի ձեռքբերման նպատակով։ 1950-ականների վերջերին նավթային խոշոր պաշարներ ունեցող երկրները սկսեցին նախապատվություն տալ «առևտսայդերների» հետ համագործակցությանը, քանի որ վերջիններս ավելի շահավետ պայմաններ էին առաջարկում⁵⁷։

Աստիճանաբար նավթարդյունահանող երկրների մոտ սկսեց զարգանալ քաղաքական անկախություն ձեռք բերելու ձգտումը։ Օտարերկրյա մենաշնորհային ընկերությունների ազդեցությունն իրենց երկրում բուլացնելու, ինչպես նաև երկրի բնական հարստություններն ինքնուրույն տնօրինելու նպատակով մերձավորաբնեյան երկրներում տեղի էին ունենում ազգային-ազատազրական շարժումներ։ Արդեն 1960 թ. նավթարդյունահանող երկրները՝ Վենեսուելան և Սաուլյան Արարիան, իրենց շահերը պաշտպանելու նպատակով միավորվեցին՝ ստեղծելով Նավթ արդյունահանող երկրների կազմակերպությունը (Organization of the Petroleum Exporting Countries (OPEC)) (ՕՊԵԿ)⁵⁸։ Իսկ 1968 թ. հունվարի 9-ին ստեղծվեց Նավթ արդյունահանող արարական երկրների կազմակերպությունը (Organization of Arab Petroleum Exporting Countries (OAPEC)) (ՕԱՊԵԿ)⁵⁹։ Վերջինիս հիմնադիրներն էին Քուվեյթը, Լիբիան, Սաուլյան Արարիան։ 1970 թ. այդ կազմա-

⁵⁶ Jacoby N., Multinational Oil, N.Y., 1974, p. 177.

⁵⁷ Андреасян Р., Казюков А., ОПЕК в мире нефти, М., 1978, с. 112.

⁵⁸ Citino N., From Arab Nationalism to OPEC: Eisenhower, King Saud, and the Making of U.S.-Saudi relations, Bloomington, 2010, p. 146.

⁵⁹ Былинник С., Экономическое сотрудничество и интеграция стран Востока, М., 1982, с. 139.

կերպության մեջ մտան նաև Արու Դաբին, Ալժիրը, Բահրեյնը և Կատարը. իսկ 1972 թ.՝ Եգիպտոսը, Իրաքը և Սիրիան⁶⁰. Մի շաբթ նավթարդյունահանող երկրներում 1970-ականներին սկսվեց նավթահանքերի ազգայնացման գործընթացը: Առաջին ելույթները տեղի ունեցան Լիբիայում (1970 թ.)⁶¹, Ալժիրում (1971 թ.)⁶², Իրաքում (1972 թ.)⁶³: Արդյունքում ՕՊԵԿ-ի երկրներին հաջողվեց իրենց ձեռքերում կենտրոնացնել նավթարդյունահանման գործընթացը և հետագայում նավթն օգտագործել որպես «քաղաքական գենք»՝ տերությունների վրա ազդելու համար:

Ճապոնիան մինչ 1973 թ. փորձում էր շմիջամտել մերձավորարևելյան քաղաքական խնդիրներին՝ տարածաշրջանի երկրների հետ պահպանելով գուտ տնտեսական հարաբերություններ: Սակայն իրավիճակը փոխվեց նավթային առաջին ճգնաժամի հետեակրով, ինչը ստիպեց Ճապոնիային քայլեր ձեռնարկել մերձավորարևելյան երկրների հետ քաղաքական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ:

⁶⁰ Al-Farsi F., Saudi Arabia: A Case Study in Development, London, 1978, pp. 53-54.

⁶¹ Кукушкин В., Нефть и развитие: Ливия, Алжир, М., 1985, с. 74.

⁶² Комлев Л., Становление национальной нефтяной промышленности Алжира, Бюллетень иностранной коммерческой информации (БИКИ), 1971, Прил. N 5, с. 86.

⁶³ Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке, М., 1977, с. 97.

1.3 ՀԱՊՈՆԻԱՅԻ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՎԹԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ (1973 թ.) ԵՎ ԵՐԿՐՈՐԴ (1979-1980 թթ.) ՃԳՆԱԺԱՄՄԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1973 թ. հոկտեմբերի 6-ին սկիզբ առավ հերթական արարի յարայելական պատերազմը: Պատերազմող կողմերի միջն հրադադարի հաստատման, ԱՄՆ-ի և արևմտյան պետությունների վրա ճնշում գործադրելու նպատակով ՕՍՊԵԿ-ը՝ ի դեմս Սաուդյան Արաբիայի քաջավոր Ֆեյսալի⁶⁴, 1973 թ. հոկտեմբերի 20-ին հայտարարեց նավթի գների 70%-ով բարձրացմանը⁶⁵ և 5%-ով նավթարդյունահանման կրամատման վերաբերյալ⁶⁶: ՕՍՊԵԿ-ն Խորայելի գլխավոր դաշնակիցներ համարվող Միացյալ Նահանգներին ու Նիդերլանդներին նավթի վաճառքի արգելման որոշմամբ սկիզբ դրեց նավթային եմբարգոյին: Նավթը՝ որպես քաղաքական և տնտեսական գենք օգ-

⁶⁴ 1973 թ. որոշակիորեն սրվեցին սառույա-ամերիկյան հարաբերությունները: ԱՄՆ-ը մի կողմից ձգուում էր լավ հարաբերություններ պահպանել Սաուդյան Արաբիայի և արաբական այլ պահպանադական երկների հետ, իսկ մյուս կողմից՝ վիրիսարի ռազմատեսական օգնություն էր ցույց տալիս Խորայելիս: Վերջին փաստը նպաստում էր Սաուդյան Արաբիայում հակախսրայելական տրամադրությունների ուժեղացմանը՝ վտանգի տակ դնելով նաև սառույա-ամերիկյան հարաբերությունները: Այս մասին տե՛ս Հովհաննեսյան Ն., Արաբական երկների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր IV, Երևան, 2007, էջ 363:

⁶⁵ Սոցի նավթ արդյունահանող 6 պետությունները՝ ԱՄԷ-ն, Իրանը, Իրաքը, Սաուդյան Արաբիան, Քուվեյթը և Կատարը, հոկտեմբերի 20-ին 3.01 դոլարից բարձրացրեցին նավթի գինը մինչև 5.11 դոլարի, իսկ արդեռ դեկտեմբերին նավթի գինը հասան մինչև 11.65 դոլարի 1 քարելի համար: Այս մասին տե՛ս Sheikh A., Oil and Power: Political Dynamics in the Middle East, London, 1987, p. 56.

⁶⁶ Նոյն տեղում, էջ 53:

տագործելու մասին ՕԱՊԵԿ-ի որոշումը, տնտեսական լուրջ ճգնաժամի պատճառ դարձավ արաբական նավթից կախում ունեցող երկրներում՝ ԱՄՆ-ում, Արևմտյան Եվրոպայի երկրներում և Ճապոնիայում⁶⁷: Փաստորեն ծագող արևի երկիրն արաբների կողմից անուղղակիորեն դասվեց «ոչ բարեկամական» երկրների շարքին, որի հետևաերով Ճապոնիա արտահանվող նավթի ծավալը կրաստվեց 10%-ով: Ավելին՝ զերի բարձրացման պատճառով Ճապոնիան վճարում էր մի քանի անգամ շատ գումար, քան նախորդ տարիներին⁶⁸: Այսպես, եթե 1972 թ. դրույյամբ ներկրվող նավթի համար Տոկիոն վճարում էր 4.3 մլրդ դոլար, ապա 1973 թ. վճարեց 10 մլրդ դոլար, որն իր բացասական ազդեցությունն ունեցավ Ճապոնիայի տնտեսության վրա և հանգեցրեց երկրում զնամի (ինֆլյացիա) առաջացմանը⁶⁹: Ըստ 1973 թ. տվյալների՝ Ճապոնիա է ներկրվել ընդհանուր առմամբ 11.4 մլրդ բարել նավթ⁷⁰, որից 43%-ը ներկրվել է արաբական երկրներից, ընդ որում՝ 10.7%-ը՝ Սաուման Արաբիայից, իսկ 6.9%-ը՝ Քուվայյից⁷¹: Միևնույն ժամանակ ներկրվում է մեծ ներդրումն ուներ Ճապոնիա ներկրվող նավթի հարցում՝ ապահովելով

⁶⁷ Ըստ «Ալ-Ախար» թերթի տվյալների՝ համաշխարհային կապիտալիստական շուկան չստացավ մոտ 245 – 350 մլն բարել նավթարական երկրներից: Այս մասին տե՛ս Օսипов А., Экономическая экспансия США в арабских странах, М., 1980, с. 76.

⁶⁸ Sugihara K., Allan J., Japan in the Contemporary Middle East, London, 1993, p. 1.

⁶⁹ Գնաճը երկրում 1974 թ. դրույյամբ կազմում էր 24%: Այս մասին տե՛ս Էнергетические последствия повышения цен на нефть, ТАСС, Атлас 1 (861), 4.01.1974, с. 34.

⁷⁰ О положении японской экономики, ТАСС, Атлас 20 (880), 17.05.1974, с. 52.

⁷¹ Wu Yuan – Li, Japan's Search for Oil: A Case Study on Economic Nationalism and International Security, Stanford, 1977, p. 72.

Ճապոնիա առաքվող նավթի 42%-ը⁷², որը կազմում է երկրի նավթային պահանջարկի 17%-ը⁷³: Սակայն 1973 թ. Էմբարգոյի կիրառումից հետո ԱՄՆ-ի կողմից իրանական նավթի մեծաքանակ ներկրման արդյունքում համապատասխանաբար կրճատվեց Ճապոնիա արտահանվող նավթի քանակը (1973 թ.՝ 31% նավթ)⁷⁴: Ստեղծված իրավիճակում երկիրն անհրաժեշտ վառելահումրով ապահովելու նախատակով Ճապոնիան հարկադրված էր վերանայել արարական երկրների նկատմամբ իր դիրքորոշումը՝ հատակ գիտակցելով, որ այսուհետ նավթ գնելու համար գուտ ֆինանսական միջոցներն անբավարար են⁷⁵: Այդ մասին անզամ հայտարարել է ԱՄՆ-ում Ճապոնիայի նախկին դեսպան Ֆուսիիկի Տոգոն՝ նշելով: «Մինչև 1973 թ. Ճապոնիան Սերձավոր Արևելքի երկրների հետ չէր վարում հավասարակշռված քաղաքականություն, քանի որ դրամի առկայության դեպքում մենք միշտ կարող ենք նավթ գնել»⁷⁶:

Ստեղծված իրավիճակը ստիպեց Ճապոնիային վերանայել իր հարաբերություններն արարական երկրների հետ: Վերջիններիս հետ քաղաքական հարաբերությունների հաստատման առարկլությամբ Սերձավոր Արևելք գործուղվեց Ճապոնիայի փոխվարչապետ Տակետո Միկին, որը 1973 թ. դեկտեմբերի 10-28-ն այցելեց Եզիատոս, Իրաք, Կատար, Քուվեյթ, Արարական Միացյալ Էմիրություններ (ԱՄԷ), Սաուդյան

⁷² Որոշ տվյալների համաձայն՝ 1973 թ. Իրանից Ճապոնիա ներմուծվող նավթը կազմել է 37,3%: Այս մասին տե՛ս Եօգատոր Ա., Японская дипломатия в борьбе за источники энергетического сырья (70-80-е годы), М., 1988, с. 108.

⁷³ Ուլյանիչև Ս., Энергетика Японии: Экономические проблемы развития, М., 1981, с. 110. Տարբեր տվյալներ գոյություն ունեն 1979 թ. դրույթամբ Իրանից Ճապոնիա արտահանվող նավթի քանակի վերաբերյալ, որոնք տատանվում են 11-17%-ի սահմաններում:

⁷⁴ Wu Yuan - Li, եշվ. աշխ., էջ 72:

⁷⁵ Վերներան Ս., եշվ. աշխ., էջ 47:

⁷⁶ Yositsu M., Caught in the Middle East, Toronto, 1984, p. 3.

Արաբիա և Սիրիա⁷⁷: Փոխվարչապետին հաջողվեց նավթարդյունահանող արարական երկրներին համոզել որպեսզի վերջիններս ճապոնիային դասեն «բարեկամական պետությունների» շարքին⁷⁸: Ճապոնիան ստիպված էր գնալ նաև որոշ քաղաքական գիշումների և վերանայել իր դիրքորոշումն արաբ-խրայելական հակամարտության մասնակից կողմերի նկատմամբ: Եթե մինչ այդ ճապոնիան պաշտպանում էր արաբ-խրայելական հակամարտության նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշումը, ապա այժմ դատապարտում էր Խրայելի քաղաքականությունն արաբների նկատմամբ: Այդ դիրքորոշումն ակնհայտ դարձավ, եթե 1973 թ. նոյեմբերի 22-ին ճապոնիան ընդունեց ՄԱԿ-ի ԱԽ-ի 1967 թ. նոյեմբերի 22-ին ընդունած N 242-րդ բանաձեռ, համաձայն որի՝ Խրայելը պարտավորվում է դուրս բերել իր գորքերն արաբական գրավյալ տարածքներից⁷⁹: Բացի այդ, 1975 թ. փետրվարի 6-ին փոխվարչապետ Տակեո Միկին խորհրդարանում հայտարարեց՝ Պաղեստինի ազատազրական կազմակերպության (ՊԱԿ) հետ Տոկիոյի կիսապաշտոնական հարաբերությունների հաստատման վերաբերյալ՝ ընդունելով Պաղեստինի արաբ ժողովոյի ինքնորոշման իրավունքը և պաշտպանելով մերձավորաբնեյյան հակամարտության խաղաղ բանակցային գործընթացում ՊԱԿ-ի մասնակցության անհրաժեշտությունը⁸⁰: Ավելին՝ ճապոնիան ոչ միայն իր անուղղակի միջնորդությունն էր առաջարկում արաբ-խրայելական հակամարտության կարգավորման գործընթացում⁸¹, այլև

⁷⁷ Wu Yuan-Li, եշվ. աշխ., էջ 72:

⁷⁸ Եօգատյոր Ա., եշվ. աշխ., էջ 107:

⁷⁹ Blaker M., Oil and the Atom: Issues in US-Japan Energy Relations, N.Y., 1980, p. 8.

⁸⁰ Ինդյուքք Բ., եշվ. աշխ., էջ 33:

⁸¹ Ճապոնիական միջնորդության եւրյունն այն էր, որ վերջինս փորձում էր ՕՍԴԿ-ին համոզել գնալ «փոխզիշումների»: ԱՄՆ-ի և Խրայելի հետ

ցանկանում էր դառնալ կապող օդակ նավթարդյունահանող և ներկրող երկրների միջև: Այս առնչությամբ հայտարարությամբ հանդիս էկավ նաև Ճապոնիայի Էներգետիկայի տնօրեն Ս. Իկուտան՝ նշելով. «Մենք պարտավոր ենք նպաստել նավթարդյունահանող և ներկրող երկրների միջև երկխոսության հաստատմանը: Ճապոնիան կարող է և պետք է դառնա միջնորդ Մերձավոր Արևելյան նավթարդյունահանող երկրների և Արևմուտքի միջև»⁴²:

Ճապոնական դիվանագիտությանը հաջողվեց հարաբերություններ հաստատել նաև Իրարի հետ և, օգտագործելով վերջինիս ներքին խնդիրները⁴³, 1974 թ. իրարյան նավթի ներկրման վերաբերյալ միջկառավարական պայմանագիր ստորագրեց: Իր հերթին Ճապոնիան պարտավորվում էր մոտ 2 մլրդ դոլարի վարկ և փոխառություն տրամադրել Իրարին⁴⁴: Դեռ ավելին՝ Իրարի (այդ թվում նաև Սառույան Արարիայի) նավթարիմիական համալիրներ գործուղվեցին ճապոնացի փորձագետներ, որոնք իրենց փորձով պետք է նպաստեին տեղի նավթարդյունաբերության զարգացման գործընթացին⁴⁵:

Ճապոնիայի կառավարությունը 1966-1974 թթ. ընթացքում ստեղծեց 45 ճապոնական նավթարդյունաբերող ընկերություններ, որոնք իրենց հետազոտական աշխատանքները ծավալեցին Աֆրիկայում, Հյուսիսային Ամերիկայում, Հարավային

հարաբերությունների վերականգնման հարցում: Սակայն հաշվի առնելով այս հանգամանքը, որ արաբական տարածքում են տեղակայված խրայելական գործերը, դա, փաստորեն նշանակում էր միակողմանի գիրումներ նավթարդյունահանող արաբական երկրների կողմից:

⁴² Եօլացոր Ա., Աշվ. աշխ., էջ 108:

⁴³ Իրարը, իր ընական պաշարների պահպանման նկատառումներից ելելով, երկրից դրաս էր մեծ օտարերկրյա կապիտալը, որի արդյունքում ակտրազգային ընկերությունները բռնորարկել էին Իրարի դեմ: Այս մասին տես՝ Գերասիմով Օ., Իրաքսկան նեftъ, Մ., 1969, с. 153-164.

⁴⁴ Եօլացոր Ա., Աշվ. աշխ., էջ 66:

⁴⁵ Նոյն տեղում, էջ 113-114:

Ամերիկայում, Արևելյան Ասիայում, Խղոնեզիայում, Չինաստանում և ԽՍՀՄ-ում⁸⁶, որպես Սերձավոր Արևելքի վառելանյութի այլընտրանքային ներկրման տարբերակ:

Նավթային առաջին ճգնաժամի ժամանակ Ճապոնիայի կառավարության և մասնավոր սեկտորի շանքերի շնորհիվ ստեղծվեց «Ճապոնիայի Մերձավորաքեյյան համագործակցության կենտրոնը» (JCCME - Japan Cooperation Centre for the Middle East): JCCME-ի ստեղծումից ի վեր Ճապոնիան դարձավ կապակցող օղակ Սերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրների միջև՝ համագործակցելով առևտության, ներդրումների, տնտեսության և տեխնոլոգիայի ոլորտներում⁸⁷:

1973-1974 թթ. տնտեսական ճգնաժամից հետո բոլոր զարգացած երկրներին, այդ թվում Ճապոնիային, հետճգնաժամյան տնտեսական մակարդակը վերականգնելու համար պահանջվեց մի քանի տարի: Ճապոնիայի տնտեսության համար էներգետիկ ճգնաժամի հասցրած հարվածն ավելի քան զգալի էր: 1974 թ. երկրում սկսեցին իրականացնել արդյունաբերության ռացիոնալիզացում, որը նախատեսում էր օգտագործվող ռեսուրսների նվազեցում: Ճապոնիան տնտեսական ճգնաժամից դուրս գալու նպատակով մշակեց էներգետիկ քաղաքականությունը⁸⁸, որն իր մեջ ներառում էր հետևյալ ուղղությունները՝ էներգետիկ աղբյուրների տարրուշում, նավթային պահուստարանների ստեղծում և նավթառարման այլընտրանքային աղբյուրների ապահովում⁸⁹: Սկսեցին օգտագործել նոր տեխնոլոգիաներ օգտակար գործողության գործակցի (ՕԳԳ) մեծացման նպատակով:

⁸⁶ Кучко В., Энергетические проблемы Японии, ТАСС, БПИ N 129, 05.07.1979, с. 31.

⁸⁷ Japan Cooperation Centre for the Middle East, <http://www.jccme.or.jp/>

⁸⁸ Սլաշնիչես Ը., Աշվ. աշխ., էջ 110:

⁸⁹ Նույն տեղում, էջ 103:

Ճապոնիայի Էներգետիկ քաղաքականության առաջին ուղղությունն էներգետիկ աղբյուրների տարորշումն է: 1974 թ. արտաքին առևտուրի և արդյունաբերության նախարարությունը սկսեց իրականացնել «Սանշայն» ("Sunshine") ծրագիրը, որը նախատեսում էր Էներգիա ստանալ արևից, երկրագերմային ջրերից, ջրածնից, քամուց, օվկիանոսյան հոսքերից և այլն: 1978 թ. մշակեց «Մոնլայթ» ("Moonlight") ծրագիրը, որը պետք է ստեղծեր նոր տեխնոլոգիա՝ վառելանյութից Էներգիա ստանալու համար:

Ծագող արևի երկրի Էներգետիկ քաղաքականության երկրորդ կարևորագույն ուղղությունը նավթային պահուստների ստեղծումն էր, որի վերաբերյալ 1975 թ. օրենքը ընդունվեց⁹⁰, համաձայն որի՝ հետաքառ տնտեսական ճգնաժամերից խուսափելու համար Ճապոնիան տարեկան 10 օրվա նավթային պաշար պետք է կուտակեր⁹¹:

Էներգետիկ քաղաքականության երրորդ ուղղությունը նավթից կախվածությունը թուլացնող վառելիքի այլնստրանաբային միջոցների զարգացումն էր⁹²: Վերոնշյալ ուղղության զարգացման ջատագովն էր Ճապոնիայի արտաքին առևտուրի և արդյունաբերության փոխնախարար Նաոհիրո Ամայը, որի կարծիքով օգտագործվող նավթի ծավալները քարածուխով և ատոմային Էներգիայով փոխարինելու դեպքում տարեկան 105 մլն բարելով կիրճատվի օգտագործվող նավթի քանակը:

⁹⁰ 石油のびらくのかくほなどにかんするほりつ, 27.12.1975. (Օրենք նավթային պահուստի ապահովման վերաբերյալ): Այս մասին տե՛ս <http://www.law.e-gov.go.jp/cgi-bin/idxsearch.cgi>

⁹¹ Այսօր Տոկիոն իր վերգետնյա և ստորգետնյա պահեստներում ունի մոտ 600 միև բարել նավթ, որը համարժեք է 172 օր սպառմանը: Այս քաղաքականությունն ուղղված էր բռնացնելու կախվածությունը համաշխարհային նավթային շուկայի գլուխին տառանումներից: Այս մասին տե՛ս Խօսօն Ի., Энергетическая дипломатия Японии, Ежегодник, Япония 2004-2005, М., 2005, с. 88.

⁹² Կոչկո Բ., Խշվ. աշխ., էջ 34:

1979թ. ճապոնական կառավարությունը 12 մլրդ դոլար հատկացրեց առոմային էներգիայի գարզացման նպատակով և ընդունեց օրենք էներգիայի խելամիտ օգտագործման վերաբերյալ⁹³:

Վառելանյութերից կախվածությունը բուլացնելու նպատակով կիրառված մի շարք միջոցառումների արդյունքում 1973-1984 թթ. արդյունաբերական արտադրանքն աճեց 43.8%-ով, իսկ վառելանյութի և օգտագործվող հումքի քանակը կրճատվեց 2.4%-ով:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ 1973-1974 թթ. նավթային ճգնաժամի հասցրած ահուելի վնասներն ունեցան նաև իրենց դրական ազդեցությունը ճապոնիայի արդյունաբերության մեջ կառուցվածքային փոփոխություններ մտցնելու և հետագա ճգնաժամային իրադրությունները հետագա հեշտ հայրահարելու հարցում: Եվ հենց այդ քաղաքականության շնորհիվ արդեն 1978 թ. ծագող արևի երկիրը վերականգնեց հետճգնաժամյան շրջանում ունեցած տևոտեսական աճը⁹⁴:

Սակայն դա երկար չունեց, քանի որ մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցան կտրուկ փոփոխություններ, որոնք փոխեցին ողջ իրադրությունը տարածաշրջանում՝ նպաստելով նոր ճգնաժամի առաջացմանը: Այսպես 1979 թ. փետրվարին Իրանում հայրանակեց խալամական հեղափոխությունը, որի արդյունքում Իրանի արտաքին քաղաքականությունը ստացավ հակաամերիկյան ուղղվածություն⁹⁵: Այն իր ազդեցությունն ունեցավ նաև Իրանի նավթային քաղաքականության վրա, քանի որ Թեհրանը կրճատեց նավթի արդյունահանումը⁹⁶ և 1979 թ. հունիսի 26-27-ի ՕՊԵԿ-ի գագար-

⁹³ Западная печать об энергетическом кризисе, ТАСС, БПИ N 160, 17.08.1979, с. 16.

⁹⁴ Nakamura T., եղան, էջ 93:

⁹⁵ Բայրության Վ. Իրանի պատմություն, Երևան, 2005, էջ 704-713:

⁹⁶ Togo K., եղան, էջ 294:

նաժողովի ժամանակ Իրանը և Իրաքը հայտարարեցին նավթի գնի բարձրացման վերաբերյալ: Միջազգային հանրությունը, այդ թվում նաև Ճապոնիան, արձագանքեցին ՕՊԵԿ-ի այս որոշմանը բավական բացասական: Արդեն 1979 թ. հուլիսին Տոկիոյում հրավիրված «Մեծ յոթյակի» գազաթեաժողովի ժամանակ քննարկվեցին եներգետիկ խնդիրների կարգավորման և Ծոցի տարածաշրջանում ստեղծված լարվածության թուլացման խնդիրները⁹⁷: Ճապոնիան քննադատեց ՕՊԵԿ-ի նավթի գների բարձրացման որոշումը և ի պատասխան դրան՝ առաջարկեց ստեղծել Նավթ սպառող պետությունների կազմակերպություն⁹⁸, որտեղ կահմանվի շափարաժիններ և ավելի երկրների համար՝ հաշվի առնելով վերջիններին սպառողական առանձնահատկությունները:

Իրանյան նավթի քանակի կրճատման հետևանքով առաջացած վակուումը փորձեցին լրացնել Սաումյան Արարիան⁹⁹, Իրաքը և Քուվեյթը ավելացնելով իրենց նավթի արդյունահանուման քանակը¹⁰⁰ անկանոն զեաճը կանխելու և նավթային հերթական ճգնաժամից խուսափելու նպատակով, սակայն ապարդյուն: Նրանց շհաջողվեց կանխել նավթային գնաճը: Այսպէս՝ 1979 թ. դեկտեմբերի դրությամբ նավթի գինը 1978 թ. համեմատ աճեց 2 անգամ՝ հասնելով 24 դոլարի 1 բարելի համար, իսկ 1980 թ.՝ 32 դոլարի¹⁰¹: Դա հանգեցրեց նավթային երկրորդ ճգնաժամի առաջացմանը, որը շատ հաճախ անվա-

⁹⁷ О Токийском совещании "Семерки", ТАСС, БПИ N 139, 19.07.1979, с. 13.

⁹⁸ Богомяленская Е., Япония на совещаниях "Большой семерки" (от Рамбуйе до Токио, 1975-1986 гг.), М., 1986, с. 36.

⁹⁹ Սաումյան Արարիան ավելացրեց նավթի արդյունահանուման քանակը՝ հասցեինը 1 օրում միայն 10.5 միլիոնի: Այս մասին տես՝ "Washington Star", Washington, 16.05.1979.

¹⁰⁰ Wilfrid K., After the Second Oil Crisis: Energy Policies in Europe, America and Japan, Canada, 1982, p. 17.

¹⁰¹ Вальевова Л., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М., 1987, с. 22.

նում են նաև «գնային ճգնաժամ»: Հատկանշական է, որ նավթի զնի աճը հարվածեց Ճապոնիայի առևտրական հաշվեկշռին և 1979 թ. գրանցվեց 7,64 մլրդ դոլարի պակասուրդ, որը 1980 թ. հասավ մինչև 10,72 մլրդ դոլարի¹⁰²:

ԱՄՆ-ի նախաձեռնությամբ Իրանի նկատմամբ սկսեց կիրառվել զանազան պատժամիջոցներ: Տարածաշրջանում իրավիճակն ավելի վատթարացավ «Կարտերի դոկտրինայի» ընդունման և Իրանի դեմ ԱՄՆ-ի պատժամիջոցների կիրառման հարցում իր դաշնակիցների միանալուն ուղղված Կաշինգտոնի կոչերի արդյունքում: ԱՄՆ-ը Սերձավոր Արևելյան հայտարարեց իր «կենսական շահերի» տարածաշրջան և կայունություն հաստատելու նպատակով ՆԱՏՕ-ի շրջանակներում շարժական հարվածային ուժեր տեղակայեց¹⁰³: Հատկանշական է այս փաստը, որ սկզբնական շրջանում ԱՄՆ-ի դաշնակիցների մեծ մասը չեղող դիրք էին գրադեցնում և չէին ցանկանում միանալ պատժամիջոցներին՝ վախենալով վատթարացնել իրենց հարաբերություններն Իրանի հետ, իսկ որոշ պետություններ էլ (մասնավորապես Սաույան Արաբիան, Քուվեյթը) մտավախություն ունեին, որ Միացյալ Նահանգների գործողությունները խրախուսելու դեպքում, վերջինս իր նավերը կուղարկի Ծոց, ինչն ավելի կարի հակառակիլյան տրամադրություններն իրենց երկրի ներսում և կեսպատի իալամական հեղափոխության տարածմանը¹⁰⁴:

Այս հարցի շուրջ Ճապոնիայի քաղաքականությունը՝ ի դեմս վարչապետ Սասայոսի Օհիրոյի, սկզբնական շրջանում ավելի հակված էր Միացյալ Նահանգների նկատմամբ

¹⁰² Togo K., Աշխ. աշխ., էջ 295:

¹⁰³ Մարքարդ Բ., Զона Персидского залива: Проблемы, перспективы, М., 1986, с. 16.

¹⁰⁴ Cleveland W., A History of the Modern Middle East, Boulder: Westview Press, 2010, p. 115; Ժурнал «Тайм» о конфликте между США и Ираном, ТАСС, БИПИ N 234, 03.12.1979, с. 9.

դաշնակցական պարտքի կատարմանը, որն արտահայտվեց ԱՄՆ-ի գիւղած ուժերը Սերձավոր Արևելքում տեղակայելու նախաձեռնությունը սատարելու պատրաստակամությամբ, սակայն դեմ արտահայտվեց Սպիտակ տան կողմից նավթարդյունահանող երկրների նկատմամբ պատժամիջոցների կիրառման հարցի շուրջ: Ճապոնիան աև-պատասխան էր բողոքում Իրանի դեմ պատժամիջոցներին միաևալուն ուղղված ամերիկյան կողմից հորդորները՝ հապաղելով պարզորոշ իր դիրքորոշումն արտահայտել Իրան-ամերիկյան հարաբերությունների շուրջ: Տոկիոյի հմտություններում իր առաջին պտուղը տվեց: Իրանից ԱՄՆ-ի նավթի գնումից հրաժարվելը¹⁰⁵ նպաստեց Իրանում նավթի ավելցուկի առաջացմանը, որն էլ վերջինս փորձեց իրացնել ազատ շուկայի միջոցով: Ճապոնիան ձեռք բերեց վաճառքի հանված նավթի կեսը՝ ավելի քան 21 մլն բարել նավթ՝¹⁰⁶ Դեռ ավելին՝ ձեռք բերված նավթի զգայի մասը՝ 194 հազար բարելը, Տոկիոն ճապոնական «Շել» (Shell) բաժնետիրական ընկերության միջնորդությամբ, որը միջազգային նավթային կարտելի մի մասն էր կազմում, վերավաճառեց արևմտաեվրոպական երկրներին¹⁰⁷: Ճապոնական կառավարության խուսանավման քաղաքականության արդյունքում ճապոնական տասներկու նավթային ընկերություններին հաջողվեց 1980 թ. հունվարին համաձայնագիր կնքել «Նեյշընալ իրանիան օյլ» ("National Iranian Oil") ընկերության հետ, համաձայն որի, նախատեսվում էր ճապոնիան արտահանել 500 հազար բարել

¹⁰⁵ Մինչ այդ ԱՄՆ-ը Իրանից գնում էր 1 օրում 900 հազար բարել նավթ, որը կազմում էր ԱՄՆ առաջվագ նավթի 9%-ը: Այս մասին տե՛ս Հովհաննիսյան Ն., Իրան, Այսրուղան Խոմեյինի դարաշրջանը, Երևան, 2004, էջ 49:

¹⁰⁶ Blaker M., նշվ. աշխ., էջ 27:

¹⁰⁷ Դա ճապոնիայի պատմության ընթացքում առաջին դեպքն էր, եթե ճապոնական կազմակերպությունը միջնորդ էր հանդիսանում նավթ վաճառելու հարցում: Այս մասին տե՛ս Բոգատրոս Ա., նշվ. աշխ., էջ 124:

նավք¹⁰⁸: Ավելին՝ Ճապոնիայի իշխող վերնախավը պատրաստակամություն հայտնեց շարունակել Բենդեր-Խոմեյնուն նավթահամալիրի կառուցումը: Փաստորեն հակառակ ձևավորված այն թյուր կարծիքին, որ Ճապոնիան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դարձել էր ԱՄՆ-ի կամակատարն արտաքին քաղաքականության հարցերում, ծագող արևի երկիրը ճգնաժամային իրավիճակներում միշտ առաջնորդվում էր իր երկրի տնտեսական շահերից ելեւով:

Բոլոր դեպքերում իրանական հարցի շուրջ ԱՄՆ-ի քաղաքականության ուղեծրից Ճապոնիայի շեղվելու փորձերը հանգեցրեցին ճապոնա-ամերիկյան հարաբերությունների սրմանը: Ճապոնիայի «ինքնուրույն» գործելակերպը մերձավորաբնեյյան տարածաշրջանում Զիմի Կարտերի վարչակազմը՝ ի դեմս Ս. Մենսֆիլդի, որակեց որպես դաշնակցային պարտքի ուրացում: Վաշինգտոնը Ճապոնիայից պահանջեց միանալ Իրանի դեմ կիրառվող տնտեսական պատժամիջոցներին և իրաժարվել իրանական նավթի գնումից: Տեղի տալով Վաշինգտոնի կիրառած ճնշումներին՝ ճապոնական կառավարությունը 1980 թ. մայիսի 18-ին Բրյուսելում անցկացվող խորհրդակցության ժամանակ ևս միացավ հակաիրանական տնտեսական պատժամիջոցին:

Հատկանշական է, որ ի տարբերություն 1973 թ. նավթի ճգնաժամի՝ Ճապոնիան համեմատարար հեշտ հաղթահարեց նավթային երկրորդ ճգնաժամի հետևանքները: Բանս այն է, որ Ճապոնիայի պահուստային էներգետիկ քաղաքականության կիրառման շնորհիվ, երկիրն ապահոված էր 88 օրվա համար նախատեսված նավթային պաշարներով, բացի այդ, գոյություն ուներ յոթօրյա կառավարական վարելիքի պա-

¹⁰⁸ Рождественская Д. Внешнеполитические связи Исламской Республики Иран с развитыми капиталистическими странами, Иран: История и современность, Сб. статей, М., 1983, с. 182.

հուստ: Ըստ փորձագետների՝ վերոնշյալ պահուստներում առկա նավթային պաշարների շնորհիվ ճապոնիան լիովին կարող էր մոտ 2 տարի Իրանից նավթ չներկրել¹⁰⁹:

Բացի դրանից, ճապոնական մոնոպոլիաները սկսեցին կարճաժամկետ պայմանագրեր կնքել նավթարդյունահանող այլ երկրների հետ, ինչպիսին են՝ Վենետուելան, Խորդուեզիան, Քուվեյթը, Կատարը և Օմանը¹¹⁰: Այսպես, ըստ 1980 թ. պայմանագրի ճապոնական նավթային ընկերությունները համաձայնություն ձեռք բերեցին Կատարից և Օմանից օրական համապատասխանաբար 125 հազար և 32 հազար բարել նավթ ներկրելու վերաբերյալ¹¹¹: Իսկ 1981 թ. հուլիսին ճապոնական «Զապան-Օման կոմպանի» ("Japan-Oman Company") ընկերությունը կոնցենտրացիան պայմանագիր ստորագրեց Օմանի հետ՝ տրամադրելով 45 մլն դոլար երկրում հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով: Մեկ այլ ճապոնական կոնսորցիոնը՝ «Օման օլ դիվելոփմենտ» ("Oman Oil Development" company) ընկերությունը, նույն թվականի հոկտեմբերին պայմանագիր կնքեց Օմանի կառավարության հետ Սահիրա կղզում նավթահետախուզական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ¹¹²: Ավելին ճապոնիան համաձայնության եկավ Սաուդյան Արաբիայի դեկավարության հետ նավթի արտահանման բանակի ավելացման շուրջ (600 հազարից մինչև 1 մինչ 400 հազար բարել նավթ 1 օրում):

Փաստորեն նավթային երկրորդ ճգնաժամը՝ ի տարբերություն իր նախորդի, չունեցավ այդքան ծանր հետևանքներ ճապոնիայի տնտեսության համար և տար-

¹⁰⁹ Խօսova Ի., նշվ. աշխ., էջ 88:

¹¹⁰ Շնորհանդր առմամբ նախատեսվում էր երկիր ներկրել մոտ 250 հազար բարել նավթ 1 օրում:

¹¹¹ Economic Situation in Qatar, "Financial times", London, 16.02.1981; Роль Омана в районе Персидского залива, ТАСС, БПИ N 241, 08.12.1981, с. 42.

¹¹² Situation in Oman, "Financial Times", London, 13.11.1981.

բերվում էր իր բնույթով հետևյալ առանձնահատկություններով:

➤Նավթային երկրորդ եմբարզոն միայն Իրանի նախաձեռնությունն էր, որը չիրախուսեց նավթարդյունահանող ոչ մի պետություն, ինչը թուլացրեց ճգնաժամի հասցրած վնասների չափը:

➤Իրանի նավթի արդյունահանման քանակի նվազեցման արդյունքում համաշխարհային շուկայում նավթի գինը կտրուկ աճեց, որն ունեցավ իր բացասական ազդեցությունը նավթ ներկրող երկրների տնտեսության վրա: Այսպես՝ 1980 թ. դրությամբ նավթի ձեռքբերման նպատակով ճապոնիան վճարեց օրական 5 մլն բարել նավթի համար ավելի քան 53 մլրդ դոլար¹¹³:

➤Եվ վերջապես 1973 թ. ճգնաժամից հետո զարգացած արդյունաբերական պետությունները, այդ թվում նաև Ճապոնիան, պահուստային եներգետիկ բաղարականության կիրառման շնորհիվ ավելի պատրաստված էին եներգետիկ ճգնաժամային ցեցումներին և կարողացան համեմատաբար հեշտ հաղթահարել նավթային ճգնաժամի հետևանքները:

¹¹³ Wilfrid K., Աշվ. աշխ., էջ 255:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՇՈՅԻ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՆ
(1981-1990 թթ.)

2.1 ՇՈՅԻ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՍԵՐԸ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒԹԱՅԸ

Սոցի համագործակցության խորհրդի (այսուհետ՝ ԾՀԽ) ստեղծման աշխարհաքաղաքական նախադրյալները կարելի է դասակարգել՝ ըստ միջազգային և տարածաշրջանային հարբուրյունների:

Միջազգային հարբուրյան վրա առկա կարևորագույն նախադրյալներից են՝ 1945թ. երկրորդ կեսից միջազգային հարաբերություններում ձևավորված ուսումնական և տարրածաշրջանային հարբուրյուններից՝ սառը պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև Սոցում իրենց գերիշխանությունը հաստատելու ուղղությամբ ծավալված պայքարը, տարածաշրջանի նավթային պաշարներին տիրանալու համար ամերիկյան և անգլիական մենաշնորհների միջև ընթացող մրցակցությունը. Արաբական թերակղզում հետզիեւե իր կորցրած քաղաքական և տնտեսական ազդեցությունը վերականգնել ցանկացող Մեծ Բրիտանիայի փորձերը և այլն:

Տարածաշրջանային հարբուրյան վրա առկա նախադրյալներից են՝ Սոցի երկրների միջև գերիշխանություն հաստատելու համար ընթացող մրցակցությունը. Իրանի իսլամական հեղափոխության արտահանման վտանգը, ինչպես նաև վերջինիս հետևածք հանդիսացած Իրան-իրաքյան պատերազմը, որոնք իրենց հերթին խրան հանդիսացան տարածաշրջանային խմբավորման ստեղծման համար:

Տարածաշրջանում անզիյական դիրքերի բուլացմանը նպաստեցին դեռևս 1933 թ. «Արաբիան-Ամերիկան օլ կոմպանի»-ի՝ ԱՐԱՄԿՕ-ի՝ ("Arabian-American Oil Company"- ARAMCO) ստեղծումը, որին հաջորդեց ԱՄՆ-ի կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Ծոցի երկրների օդային տարածքի օգտագործումը և Սաոււյան Արաբիայի Դհահրան քաղաքում ամերիկյան ռազմաբազայի տեղակայումը: ԱՄՆ-ը իր դիրքերն ամրապնդեց նաև Բահրեյնի և ավագահանգիստներում¹¹⁴: Ստեղծված իրավիճակից ելենով՝ 1968 թ. հունվարի 16-ին անզիյական կառավարությունը հայտարարեց իր զորքերը Սուեզի ջրանցքի գոտուց դեպի արևելյան ընկած բոլոր տարածքներից դուրս բերելու վերաբերյալ¹¹⁵: Անզիյայի նման դիրքորոշման դրդապատճառները կարելի է բացատրել հետևյալ գործոնների առկայությամբ:

Առաջին՝ Մեծ Բրիտանիան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դուրս եկավ բուլացած: Նա այլևս չուներ համապատասխան նյութական, ֆինանսական և ռազմական պահուատային ուժեր և ստիպված էր աստիճանաբար իր դիրքերը զիջել այլ պետություններին, մասնավորապես իր զիյավոր դաշնակից ԱՄՆ-ին:

Երկրորդ՝ 1940-1950-ականներին Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում նոր թափ առած ազգային-ազատագրական շարժումները հարցականի տակ դրեցին համաշխարհային գաղութային համակարգը: Օրակարգի

* Կազմակերպության պաշտոնական անվանումը՝ «Սաուդի Արաբիան օլ կոմպանի» ("Saudi Arabian Oil Company") է, հակիմը՝ «Սաուդի Արամկո» ("Saudi Aramco"):

¹¹⁴ Stivang N., Iran and the GCC States: Prospects for Long Term Regional Security in the Gulf, Gulf thesis, 2006, p. 14.

¹¹⁵ Faisal bin Salman al-Saud, Iran, Saudi Arabia and the Gulf Power Politics in Transition 1968-1971, London, 2003, p. 10.

հարց դարձավ նրա վերացման խնդիրը, որև իր իրավաբանական ձևակերպումը ստացավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1960 թ. միաձայն ընդունած որոշման մեջ՝ գաղութային համակարգի վերացման և զաղութային կախման մեջ գտնվող բոլոր երկրների անկախության և սուվերենության ճանաչման մասին։ Դրանով Մեծ Բրիտանիան պարտավորվում էր իրաժարվել նաև իր մի շարք զաղութներից և պրոտեկտորատներից, ինչը նա արդեն 1960-ականների վերջին։ Փաստորեն դա օրինաշափ արդյունք էր տասնամյակների այն համար պայքարի, որը մղում էին Անգլիայի պրոտեկտորատ համարվող մի շարք պետություններ, այդ թվում Բահրեյնը, Ադենը, Քուվեյթը, Կատարը, Օմանն ու Մասկատի և Պայմանագրային Օմանի ազգային-հայրենասիրական ուժերը՝ հանուն իրենց ազգային անկախության։

Երրորդ բրիտանական որոշումն ընդունվեց սառը պատերազմի ամենաքեծ պահին։ Աշխարհին արդեն բաժանված էր երկու միմյանց հակառակ ռազմարարական բլոկների, որոնցից մեկը զլիավորում էր Խորհրդային Սիուրյունը, իսկ մյուսը՝ ԱՄՆ-ը։ Անգլիան մտնում էր ԱՄՆ-ի զլիավորած խմբի մեջ և ամեն կերպ օգնում վերջինիս։

Ահա այս զործոններով էր պայմանավորված Մեծ Բրիտանիայի 1968 թ. հունվարի 16-ին ընդունած որոշումը՝ «կամովին» հեռանալ Սուեզի գոտուց արևելյա ընկած տարածքներից¹¹⁶։ Սակայն հարկ է նշել, որ պաշտոնապես տարածաշրջանից հեռանալու վերաբերյալ հայտարարությունը չէր նշանակում, որ Անգլիան պատրաստ էր իրաժարվելու Ծոցի երկրների նկատմամբ ունեցած իր հավակնություններից։ Անգլիան մտադիր էր իր հովանու ներքո ստեղծել դաշնային

¹¹⁶ Հովհաննեսյան Ն., Արարական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր III, Երևան, 2006, էջ 111-113։

պետություն, որի մեջ նախատեսում էր միավորել 9 Եմիրություններին Բահրեյնին, Կատարին և Պայմանագրային Օմանի մեջ մտնող յոթ Եմիրություններին՝ Աբու Դաֆիին, Ազմանին, Շուբային, Շարջային, Ռաս ալ-Խայմային, Ռիմ ալ-Քայվային և Ֆուջեյրային։ Դա հիմք տվեց այն տեսակետուն արտօհայտելու, որ «Անզիան հեռանում է մնալու նպատակով»¹¹⁷։

Երեք տարի տևած ըննարկումներից հետո պարզվեց, որ կան որոշ բարդություններ այդ բոլոր Եմիրությունները մեկ պետության, թեկուզ և դաշնային, միավորելու հարցում։ Դա առաջին հերթին կապված էր Բահրեյնի և Կատարի դիրքորոշման փոփոխության հետ, որը պայմանավորված էր մի շարք պետությունների՝ Եգիպտոսի, Իրանի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի և Սիրիայի ազգեցություններ տարածաշրջանում ընդլայնելու հավակնությունների հետ։

Իրանի շահ Սուլամման Ռեզա Պահլավին, որը շատ սերտ ռազմարադարձական հարաբերություններ ուներ ԱՄՆ-ի հետ և համարվում էր նրա հենարանը Շողի շրջանում, հույս ուներ, որ Մեծ Բրիտանիայի հեռանալուց հետո Իրանը կփոխարինի նրան այդ տարածաշրջանում և կդառնա տարածաշրջանային «գերտերություն»։ Շահը բավական բացասական արձագանքեց դաշնության ստեղծմանը և բացեիրաց ներկայացրեց իր հավակնությունները Բահրեյնի նկատմամբ փաստարկելով, որ Բահրեյնը պատմական տարբեր ժամանակներում գտնվել է Իրանի տիրապետության տակ, միևնույն նրա Եմիր ալ-Խայմայի ները Բահրեյն են եկել և դարձել նրա կառավարողները միայն XVIII դարում¹¹⁸։ Շահը շատ կոշտ կերպով հայտարարեց, որ Իրանը երբեք չի համաձայնվի, որ

¹¹⁷ Նույն տեղում, էջ 114։

¹¹⁸ Война в Персидском заливе и неустойчивость границ, ТАСС, БПИ N 37, 23.02.1981, с. 34.

Բահրեյնը նախատեսվող արարական պետությունների դաշնության մաս կազմի: Բահրեյնի նկատմամբ իրենց հավակնությունները փորձեցին ներկայացնել նաև տարածաշրջանի այլ պետություններ՝ Սաումյան Արաբիան և Իրաքը: Փաստորեն տարածաշրջանում, թեև ոչ ակնհայտորեն, սակայն պայքար էր գնում գերիշխանության հաստատման համար Սաումյան Արաբիայի և Իրանի, ինչպես նաև Իրաքի միջև: Վերջինս ցանկանում էր իր դիրքերը տարածաշրջանում ամրապնդել տարածքային հավակնություններ՝ ներկայացնելով թե՝ Սաումյան Արաբիային և թե՝ Իրանին: Նման լարված իրադրությունում Բահրեյնի հարցը ըննարկման դրվեց ՄԱԿ-ում, որտեղ որոշվեց Բահրեյնին հոչակել անկախ պետություն (1971 թ. օգոստոսի 15-ին): Հավանաբար դա իր ազդեցությունն ունեցավ նաև Կատարի դիրքորոշման վրա: Նա ևս գերադասեց դառնալ անկախ պետություն, քան թե մաս կազմել էմիրությունների ծրագրվող դաշնությանը: Կատարի անկախությունը հոչակվեց 1971 թ. սեպտեմբերի 3-ին: Ենթադրվում է, որ Կատարի որոշման մեջ իրենց դերը խաղացին երա բավական լավ հարաբերությունները Սաումյան Արաբիայի հետ, մասնավոր որ Կատարում զգալի էր վահարիների ազդեցությունը, իսկ վահարիական խլամը տիրապետող է հանդիսանում Սաումյան Արաբիայում: Բացի դրանից, Կատարը հույս ուներ օգովել Սաումյան Արաբիայի նավթից ստացվող եկամուտներից¹¹⁹:

Այսպիսով՝ մնացին Պայմանագրային Օմանի մեջ մտնող յոր էմիրությունները: Նրանք բազմաթիվ և հանգամանալի ընենքումներից հետո եկան այն եզրակացության, որ իրենք միմյանց հետ միացնող ավելի շատ քան ունեն, քան թե բաժանող: Տվյալ պահին նրանց համար շատ կարևոր էր

¹¹⁹ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր IV, էջ 115:

անվտանգության ապահովման, ինչպես նաև տնտեսության զարգացման խնդիրները, որոնք հնարավոր չեր լուծել առանց միավորվելու: Սակայն վերոնշյալ էմիրությունների միավորումը հարթ շրեթացավ: Դաշնության մեջ հրաժարվեց մտնել Ռաս ալ-Խայմայը, որտեղ, ինչպես և Շարջայում, կառավարում էր ալ-Կասիմիների ղինաստիան: Նրա էմիրը հավակնություններ ուներ Մեծ և Փոքր Թոմբեր կղզիների, ինչպես նաև նավթահանքերի նկատմամբ: Այդ կղզիների նկատմամբ հավակնություններ ուներ նաև Իրանը: Այդ պայմաններում Ռաս ալ-Խայմայի էմիրն ակենքարում էր ստանալ վեց էմիրությունների, մասնավորապես Արու Դարիի աջակցությունն իր պահանջների նկատմամբ: Սակայն չստանարով ակնկալվող օգնությունը էմիրը հայտարարեց, որ Ռաս ալ-Խայմայը չի միանա դաշնությանը¹²⁰: Օգտվելով ստեղծված նպաստավոր իրադրությունից՝ Իրանը 1971 թ. նոյեմբերի 30-ին բռնազավթեց Արու Մուսա, Մեծ և Փոքր Թոմբեր կղզիները՝ դրանով իսկ էմիրություններին կանգնեցնելով կատարված փաստի առջև: Ավելին՝ Իրանի վարչապետ Ա. Հովեյդը, խորհրդարանում իր ելույթի ժամանակ հայտարարեց, որ վերոնշյալ կղզիներում բարձրացվել է իրանական դրոշը, և նրանք այսուհետ համարվում են Իրանի տարածքային մասնիկ¹²¹:

Հատկանշական է, որ վերոնշյալ երեք կղզիներն ունեն շատ կարևոր ռազմավարական նշանակություն: Իրանը, որի իրավասության տակ են գտնվում Հորմուզի նեղուցում տեղակայված չորս կղզիները՝ Հորմուզը, Լարակը, Քեշըմը և Հենզամը, գրավելով Ծոցի այդ երեք կղզիները (Արու Մուսա, Մեծ և Փոքր Թոմբերը), իր գերիշխանությունը հաստատեց Ծոցում և Հորմուզի նեղուցում, որտեղով անցնում են

¹²⁰ Հովհաննեսիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր IV, էջ 116:

¹²¹ Օգանչյան Հ., Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985, с. 82.

միջազգային կարևորագույն ծովային ուղիները (տե՛ս Հավելված, Քարտեզ 1)¹²²:

1971 թ. դեկտեմբերի 2-ին վեց արաբական էմիրությունները (առանց Ռաս ալ-Խայմայի¹²³) միավորվեցին՝ ստեղծելով դաշնային պետություն Արաբական Միացյալ Էմիրություններ անվամբ: Իրանի գործողությունները որակելով որպես ազքսիա և տարածքային ամբողջականության խախտում՝ ԱՄԷ-ի հայտարարեց, որ իր կազմի մեջ մտնող Շարջայի էմիրության իրավասությունը տարածվում է Արու Մուսա կղզու վրա, իսկ Մեծ և Փոքր Թումբեր անմարդաբնակ կղզիները պատկանում են Ռաս ալ-Խայմայի էմիրությանը:

Հարկ է եղել, որ կղզիների ճակատագրի լուծման հարցում կա որոշակի տարբերություն Շարջայի և Ռաս ալ-Խայմայի դիրքորոշումների միջև: Շարջան համաձայնվեց Ասզլիայի և Իրանի միջև ձեռք բերված համաձայնագրին, ըստ որի Իրանն իրավունք էր ստանում կղզու հյուսիսային մասում պահել կայազոր, իսկ Շարջան՝ տնօրինելու այդ նույն հյուսիսային մասում բնակվող բնակչության առօրյա բոլոր հարցերը: Դա փոխզիջումային մի համաձայնագիր էր, որևէ ինչ-որ լուծում էր հանդիսանում, սակայն խնդրի վերջնական կարգավորման հարցը մնում էր բաց¹²⁴: Ինչ վերաբերում է մյուս երկու կղզիներին, ապա Ռաս ալ-Խայմայը դեմ է Իրանց նկատմամբ իրանական հավակնություններին: Համանման կոշտ դիրքորոշում է գրավել նաև Իրանը, որը շարունակում է

¹²² Faisal bin Salman al-Saud, եշվ. աշխ., էջ 83:

¹²³ Հարկ է եղել, որ Ռաս ալ-Խայմայը միայն 1972 թ. փետրվարին միացավ ԱՄԷ-ին զգալով, որ ինքն առանձին չի կարող գոյություն ունենալ, առավել ևս լուծել վիճելի տարածքային հարցեր Իրանի հետ: Այս մասին տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր III, էջ 117:

¹²⁴ "Memorandum of Understanding" between Iran and Sharjah, November, 1971, http://www.parstimes.com/history/iran_sharjah.html

պաշտպանել իր «իրավունքները»: Ստեղծված պայմաններում ԱՄԷ-ի կառավարությունը հարցը տեղափոխեց Հաազայի միջազգային դատարան, որը միևնույն օրու դեռևս վերջնական որոշում չի ընդունել¹²⁵:

Արաբական աշխարհը՝ ի դեմս Եզիապոսի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Սիրիայի և Քուվեյթի խիստ քննադատեց Իրանի ազրեսիան ԱՄԷ-ի նկատմամբ: Քուվեյթը հայտարեց, որ գրաված կղզիներն ունեն արաբական ծագում, իսկ Սաուդյան Արաբիան Իրանի ազրեսիան որակեց որպես Էր-Ռիյադի դիրքերը խարխլելու փորձ¹²⁶: Իրաքյան կառավարության դիրքորոշումը նույնական բավական կոշտ էր վերոնշյալ խնդրի շուրջ: Նա ոչ միայն դատապարտեց ԱՄԷ-ի նկատմամբ Իրանի ազրեսիան, այլև խօեց իր դիվանագիտական հարաբերություններն ինչպես Իրանի, այնպես էլ Անգլիայի հետ, քանի որ կասկածում էր, որ Լոնդոնն էր Թեհրանին «կանաչ լույս» տվել վերջինիս գործողություններում¹²⁷: Ավելին Իրաքը կատարվածի մեջ մեղադրեց նաև արաբական երկրներին, մասնակի վերջին, Սաուդյան Արաբիային և Շոջի մյուս արաբական շեյխություններին, որոնք չատարեցին 1970 թ. սկզբին Իրաքի առաջարկած տարածաշրջանային կազմակերպություն ստեղծելու գաղափարը: Այդ կազմակերպության զիսավոր նպատակը, ըստ Իրաքի դեկավարության, լինելու էր տարածաշրջանի պաշտպանությունը և ուղղված էր լինելու Շոջում Իրանի գերիշխանության հաստատման դեմ: Արաբական երկրների չեզոք դիրքորոշումն Իրաքի այս առաջարկի նկատմամբ պայմանավորված էր նախ և առաջ այն մտահոգությամբ, որ առաջարկված կազմա-

¹²⁵ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր III, էջ 140:

¹²⁶ Перспектива сотрудничества государств Персидского залива, ТАСС, БПИ N 122, 23.06.1981, с. 30.

¹²⁷ Оганесян Н., Աշվ. աշխ., էջ 83:

կերպության ստեղծմամբ կամրապնդվեր Բաղդադի դիրքերը տարածաշրջանում, որին դեմ էին Սոցի մյուս պետությունները: Ավելին՝ Քուվեյթը, որն իր անկախության հոչակման օրվանից պայքարում է իր տարածքի նկատմամբ Իրաքի ունեցած հավակնությունների դեմ¹²⁸, 1970 թ. բարեկավեց իր հարաբերություններն Իրաքի հետ: Կողմերը համաձայնության եկան տարածքային ջրերի սահմանագատման հարցում, որոնց նկատմամբ Իրաքն ուներ իր հավակնությունները¹²⁹: Այս համաձայնագիրը եպաստեց որոշ ժամանակով Իրաքի հավակնությունների սանձահարմանը Քուվեյթի Վարքան և Բուրյան կղզիների նկատմամբ, որոնց գրավումը կարող էր Իրաքին ելք ապահովել դեպի Սոց¹³⁰ (տե՛ս Հավելված, Քարտեզ 2):

Ճատկանշական է, որ Իրաք-իրաքյան հարաբերությունների լարվածության հիմքում ընկած էին ոչ միայն ԱՄԷ-ի և Քուվեյթի տարածքների նկատմամբ կողմերի ունեցած հավակնությունները, այլև ընդհանուր սահմանային խնդիրներ, մասնավորապես Շատ ալ Արաք գետի հետ կապված¹³¹, որի ռազմավարական նշանակությունն այն է, որ այսուղ են տեղակայված երկու կարևորագույն նավահանգիստները՝ «Արադան»-ը և «Բասրա»-ն, որտեղով անցնում են խոշոր նավթային տանկերները¹³²:

¹²⁸ Sifry M., Cerf Ch., *The Gulf War Reader, History, Documents, Opinions*, N.Y., 1991, p. 17.

¹²⁹ Ali A. Hakim, *The Middle Eastern States and the Law of the Sea*, Manchester, 1979, p. 112.

¹³⁰ Zahlan R., *The Making of the Modern Gulf States*, London, 1998, p. 126.

¹³¹ Մակրամասն Իրաք-իրաքյան տարածքային-սահմանային հակասությունների մասին տե՛ս Գ. Գևորգյան, Իրաք-իրաքյան տարածքային-սահմանային հակասությունների հարցի շուրջ, Աթրանով և Աթշին Արեւելի երկներ և ժարդարդեր, Հասոռ XIX, Երևան, 2005, էջ 88-100:

¹³² Williamson J., *In a Persian Oil Field*, N.Y., 1930, p. 190.

Իրանի դիրքերը նկատելիորեն ամրապնդվեցին նաև Սոցի այլ երկրներում, մասնավորապես Օմանում։ Դուֆար շրջանում սկսված ապստամբական շարժումը կասեցման նպատակով 1973 թ. զարնանը երկրում իրանյան գորքեր տեղակայեցին¹³³։ Դուֆարի ապստամբական շարժմանը մեծապես աջակցում էին Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը (ԵԺԴՀ), Իրաքը, իսկ Խորհրդային Միությունը գենք էր մատակարարում¹³⁴։

Անզիան, մտահոգվելով Օմանում ԽՍՀՄ-ի դիրքերի հնարավոր ամրապնդմամբ, ստեղծեց Հատուկ օդային ծառայություն՝ Օմանին լայնածավալ օգնություն ցույց տալու համար։ Դա հատուկ ավիացիոն ռազմական խմբավորում էր, որը ոմքակոծում էր ապստամբերի կենտրոնները։ Օմանին աջակցություն տրամադրեցին նաև Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը, Հորդանանը, որի շնորհիվ հաջողվեց ճնշել ապստամբությունը¹³⁵։ Արդեն 1977 թ. Իրանի և Օմանի միջև Հորմուզի ներուցի անվտանգության ապահովման նպատակով միասնական կոմյունիկե ստորագրվեց¹³⁶։

Տարածաշրջանում բավական մեծ իրարանցում առաջացրեց անզիացիների այս հայտարարությունը, որ մինչև 1977 թ. մարտ ամիսը դուրս կհանեն իրենց ռազմաբազան Օմանի Սասիրա կղզուց¹³⁷։ Աշխուժորեն սկսեց քննարկվել անզիական ռազմաբազաների դուրսերման արդյունքում առաջացած վակուումը մեկ այլ օտարերկրյա գորքերով փոխարինելու հարցը։ Միևնույն այդ 1972 թ. նմանօրինակ խնդրի հետ էր բախվել

¹³³ Զորքերը մեացին Օմանում մինչև Իրանի խամական հեղափոխությունը։ Այս մասին տե՛ս Բալեկոս Լ., Եղվ. աշխ., էջ 164։

¹³⁴ Հովհաննեսիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր IV, էջ 693։

¹³⁵ Նույն տեղում, էջ 694։

¹³⁶ "The Middle East", London, May, 1978.

¹³⁷ "The Middle East", London, January, 1977.

նաև Բահրեյնը, երբ անզիացիներն իրենց ուազմաբազան դուրս բերեցին Զուֆահիր քաղաքից, որտեղ անմիջապես իրենց դիրքերն ամրապնդեցին ամերիկյան զորքերը։ Սակայն Սաուդյան Արաբիայի ջանքերի շնորհիվ Բահրեյնում տեղակայված ամերիկյան ուազմաբազայի ժամկետը, որն ավարտվում էր 1977 թ. հունիսին, չերկարաձգվեց։ Արդյունքում վերոնշյալ ռազմաբազան, որը բաղկացած էր 40000-անոց անձնակազմից, տեղակայվեց Օմանում¹³⁸։ Ավելին՝ 1980 թ. Օմանի սովորական Կարուսը ռազմական համագործակցության պայմանագիր կնքեց ԱՄՆ-ի հետ՝ իրավունք տալով վերջինիս օգտագործել երկրի օդանավակայանները և նավահանգիստները, որի դիմաց Օմանը նրանից ստացավ տևոտսական և ռազմական օգնությունը¹³⁹։

ԱՄՆ-ը ցանկանում էր իր ազդեցությունը հաստատել նաև Սաուդյան Արաբիայի նավթահանքերի վրա։ Այդ նպատակով 1978 թ. ԱՄՆ-ի կոնգրեսը մշակեց ծրագիր՝ շահական Իրանի միջոցով Սաուդյան Արաբիայի դեմ ռազմական գործողություններ իրականացնելու վերաբերյալ։ Ամերիկյան այս նախագիծը «Միջի Խստ» անզիական ամսագրի քաղաքական մեկնաբան Զ. Պերոնը քննադատեց՝ նշելով, որ նման մոտեցումը հեգնաեր է Սաուդյան Արաբիայի նկատմամբ, քանզի վերջինիս պաշտպանությունն ամբողջովին կախված է ԱՄՆ-ից¹⁴⁰։ Սակայն Սաուդյան Արաբիայի նկատմամբ ԱՄՆ-ի այդ ծրագիրն այդպես էլ չիրականացավ 1979 թ. փետրվարին Իրանում իսլամական հեղափոխության հայթանակի պատճառով։ Իրանի արտաքին քաղաքականությունը ստացավ ոչ միայն հակամերիկյան ուղղվածություն չեղոքացնելով իր տարածքում տեղակայված ամերիկյան ռազմաբազան, չեղյալ

¹³⁸ "The Middle East", London, April, 1977.

¹³⁹ Հովհաննեսիս Ն., Արարական երկրերի պատմություն, Անեսախության և իսրաիլականության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր IV, էջ 705-706։

¹⁴⁰ "The Middle East", London, May, 1978.

հայտարարելով 1959 թ. կերպած Իրան-ամերիկյան ռազմական պայմանագիրը և զինամթերքի առարման վերաբերյալ միջարդավոր դոլարների համաձայնազրերը, այլև նպաստեց Սոցի տարածաշրջանում ուժային դասավորվածության փոփոխությանը¹⁴¹:

Իրանում միապետական կարգերի տապալումը Սոցի արարական երկրները որակեցին որպես տարածաշրջանում ԱՄՆ-ի քաղաքական պարտությունը¹⁴²: Զայած ԱՄՆ-ի նախագահ Ռ. Ռեյգանի տված բոլոր երաշխիքներին, համաձայն որի՝ Վաշինգտոնը բույլ չի տա, որպեսզի նմանատիպ իրավիճակ սպառնա արարական միապետներին¹⁴³, տարածաշրջանում հաճախակի դարձած իսլամական հեղափոխական շարժումներն իրենց շիական տարբերակով Սոցի երկրների մոտ հակառակ կարծիքն էին ձևավորում: Հատկապես վտանգն ավելի սուր արտահայտվեց 1979 թ. նոյեմբերի 20-ին՝ մի խոսք կրոնական ֆանատիկների կողմից Սաուդյան Արաբիայում գտնվող Մեքքայի Մեծ մզկիթի բռնազրավումից և դրա արդյունքում 255 հավատացյալների զոհվելուց հետո¹⁴⁴: Ավելին՝ Իրանի անուղղակի միջնորդությամբ Բահրեյնում հեղաշրջման իրականացման փորձ կատարվեց¹⁴⁵.

Իրանում տեղի ունեցած հեղափոխությունը ստիպեց ԱՄՆ-ին վերանայել տարածաշրջանում ունեցած իր դիրքորոշումը և փնտրել նոր դաշնակիցներ՝ իր շահերը տարածա-

¹⁴¹ Машин В., Яковлев А., Персидский залив в планах и политике запада, М., 1985, с. 61.

¹⁴² Նոյեմբերի, էջ 111:

¹⁴³ Mohr C., Senate Unit Votes, 9 to 8, To Oppose Saudi AWACS Sale, "New York Times", 17.10.1981.

¹⁴⁴ Quandt W., Saudi Arabia in the 1980s: Foreign Policy, Security and Oil, Washington D.C.: Brookings Institution, 1981, pp. 93-96.

¹⁴⁵ Кучик С., Международные экономические отношения, Совет Сотрудничества Арабских Государств Персидского залива (ССАПЗ), <http://readbookz.com/pbooks/book-42/ru/chapter-2090/>

շրջանում պաշտպանելու համար: Որպես հեարավոր դաշնակից դիտարկվում էր Եզիատոսը, որը դեռևս 1978 թ. սեպտեմբերի 17-ին միացել էր քեմպղեիլյան համաձայնագրին, իսկ 1979 թ. մարտի 26-ին հաշտության պայմանագիր էր ստորագրել Իրաքելի հետ¹⁴⁶: «Վաշինգտոն պոստը» այդ մասին նշել է. «Եզիատոսը դառնում է ամերիկյան քաղաքականության հիմնական գենքը Աֆրիկայի և Ծոցի երկրների վրա ճնշում գործադրելու հարցում»¹⁴⁷:

Եզիատոսի անջատողական քաղաքականությունն արաբական աշխարհում գնահատվեց խիստ բացասական, և Կահիրեն հայտնվեց մեկուսացման մեջ¹⁴⁸: Եզիատոսի քաղաքական մեկուսացումից հետո Սաուդյան Արաբիան փորձեց իր վրա վերցնել արաբական, ինչպես նաև մուսուլմանական աշխարհի առաջնորդի դերը: Վերջ դրվեց Եզիատոս - Սաուդյան Արաբիա - Իրան առանցքին՝ նապաստելով 1980-ականների սկզբին արաբական աշխարհում Իրաք - Սաուդյան Արաբիա - Հորդանան նոր առանցքի ստեղծմանը¹⁴⁹: Իրաքը և Սաուդյան Արաբիան, թեև ունեին տարածքային տարածայնություններ «Զեզոր գոտու» հետ կապված (տե՛ս Հավելված, Քարտեզ 3), սակայն 1981 թ. դեկտեմբերի 26-ին երկու կողմերի միջև համաձայնագրի ստորագրմամբ վերջնականապես լուծվեց այն¹⁵⁰:

¹⁴⁶ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր III, էջ 302-303:

¹⁴⁷ "The Washington Post", Washington, 30.03.1980.

¹⁴⁸ "The Economist", London, 12.08.1978.

¹⁴⁹ Բալյոօս Լ., Խաղ. աշխ., էջ 169:

¹⁵⁰ Հատկանշական է որ թեև երկողմանի պայմանագիրը հանրությանը չի ներկայացվել և չի հստակեցվել, թե պայմանագրի կերպով արդյունքում սահմանը երկու երկրների միջև, որ սահմանագծով է անցելու, այնուամեախիմ, ընդունված է համարել, որ սահմանային վեճ Սաուդյան Արաբիայի և Իրաքի միջև այլևս գոյնություն չունի: Այս մասին տե՛ս The Iraqi-Saudi Neutral Zone: A Diamond in the Sand, 06.12.2010,

Թեհրանում ԱՄՆ-ի դիրքերի թուլացումից շտապեց օգտըվել Խորհրդային Սիուրյունը: Վերջինս «ամրապնդեց» իր հարավային սահմաններն Անդրկովկասում (Կիրովաբադ), Թուրքմենստանում (Աշխաբադ) և Աֆղանստանում (Շինդանան)՝ կործանիչ MIG-23 և SU-24 տիպի ինքնարիոններ տեղակայելով, որը հնարավորություն էր տալիս համապատասխանաբար 525 և 970 մղոն տրամագծաշափով վերահսկողություն սահմանել օդային տարածքում¹⁵¹:

ԱՄՆ-ը իր հերքին ԽՍՀՄ-ի աֆղանական ներխուժումից և Իրանում իսլամական կարգեր հաստատվելուց հետո՝ 1979 թ. դեկտեմբերին, որդեզրեց ուժային քաղաքականություն, որը ձևակերպվեց «Կարտերի դոկտրինայում»¹⁵²: Նոր հայեցակարգի համաձայն՝ «Կաշինգտոնն իրեն «իրավունք» էր վերապահում ԱՄՆ-ի «կենսական կարևորության շահեր» ներկայացնող աշխարհի ցանկացած հատվածում, տվյալ դեպքում Սոցի տարածաշրջանում, կանխել սոցիալական կամ այլ բնույթի զարգացումներն ու արտաքին որևէ ուժի կողմից վերահսկողություն հաստատելու փորձերը: 1980 թ. զարնաել Սպիտակ տունը հանդես եկավ Սոցում մարտավարական միջուկային գենը կիրառելու ԱՄՆ-ի իրավասության մասին հայտարարությամբ¹⁵³: Ավելին՝ ԱՄՆ-ը ուազմաօդային բազաներ տեղակայեց մի շարք երկրներում՝ Թուրքիայում, Սաու-

<http://basementgeographer.com/the-iraqi-saudi-neutral-zone-a-diamond-in-the-sand/>

¹⁵¹ McNaugher T., Աշխ. աշխ., էջ 53-61:

¹⁵² Carter J., "The State of the Union", January, 1980, Weekly Compilation of Presidential Documents, Volume 16, 28.01.1980, p. 197; US Policy toward Iran: Hearings before the Committee on Foreign Relations, US Senate, 100th Congress, 1st session, January 14, 16, 23 and 27, 1987, Washington: Government Printing Office, 1987, p. 3.

¹⁵³ Keshishyan L., Middle East, London, 1979, p. 39.

ոյան Արաբիայում¹⁵⁴, Իսրայելում և Լիբանանում¹⁵⁵՝ սպառագինելով կործանիչ F-4E, A-10, F-3, A-7D/E, A6-E, F-15E, F-111 D/E տիպի օդանավերով:

Իրանում նոր կարգերի հաստատումը, թեև փոխեց իրադրությունը տարածաշրջանում, սակայն այն չնպաստեց Իրանի արտաքին քաղաքականության փոփոխմանը: Իրանը, ինչպես և նախկինում, ձգուում էր գերիշխանություն հաստատել տարածաշրջանում, սակայն այժմ նա որոշել էր այն իրականացնել «իսլամական հեղափոխության արտահանման» հայեցակարգի միջոցով¹⁵⁶: Հայեցակարգի իրականացման առաջին և ամենահարմար թեկնածուն դիտվում էր Իրանի անմիջական հարենան Իրաքը, որի բնակչության կեսից ավելին դավանում էր շիհում, և Իրանում հույս ունեին, որ շիաները կապատամբեն, կտապալեն Իրաքում կառավարող արաբական սոցիալիստական Բաաս կուսակցության վարչակարգը, և Իրաքը կվերածվի Իրանից հետո երկրորդ շիական խալամական աստվածապետության: Իրանի բացահայտ սպառնալիքներն Իրաքի նկատմամբ 1980 թ. սեպտեմբերի 22-ին սկիզբ դրեցին Իրան-իրաքյան պատերազմին:

Անկասկած, պատերազմը ձեռնոտու էր գերտերություններին, նույնիսկ, ըստ ամերիկյան հետազոտող Ռոբերտ Պերիի, ԱՄՆ-ը է հրահրել Իրաքին պատերազմ սկսել Իրանի դեմ¹⁵⁷: Ըստ որոշ աղբյուրների՝ ԱՄՆ-ի հատուկ ծառայության

¹⁵⁴ Սառլյան Արաբիան համաձայնեց տեղակայել ամերիկյան ռազմաօդային բազան իր տարածքում միայն որոշ ժամանակով, քանի որ դեմ էր որիցից գերտերության մշտական ներկայության իր երկուում: Այս մասին տե՛ս Վալյկովա Լ., Խշվ. աշխ., էջ 175:

¹⁵⁵ McNaugher T., Աշվ. աշխ., էջ 63:

¹⁵⁶ Арабаджян А., О государственной политике ИРИ, Специальный бюллетень, № 5, М., 1988, с. 5.

¹⁵⁷ Հովհաննիսյան Ն., Արաքական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր III, էջ 528:

գործակալներն իրարյան դեկավարությանը տրամադրել են Իրանի ռազմական ուժերի վերաբերյալ տվյալներ՝ հավաստիացնելով Սահամ Հուսեյնին, որ Իրանի նկատմամբ Իրաքը ռազմական առավելություն ունի¹⁵⁸. Նման բաղաքականությունը պատմազիտության և բաղաքազիտության մեջ վաղուց որակվել է որպես «ուրիշի ձեռքով կրակի միջից շագանակներ հանելով» բաղաքականություն¹⁵⁹.

ԽՍՀՄ-ը, իր հերթին, ձևական չեզորություն էր պահպանում հակամարտության ողջ ընթացքում, սակայն դա չէր խանգարում վերջինիս գաղտնի գենք վաճառել պատերազմող երկու կողմերին էլ¹⁶⁰.

Այսպիսով՝ Իրան-իրարյան պատերազմն իրենից ներկայացնում էր եռակի սպառնալիք Ծոցի արաբական երկրների համար գերտերությունների ազդեցության գոտիների ընդլայնման վտանգ, իսլամական հեղափոխության արտահանման սպառնալիք և Իրաքի բաասական սոցիալիստական զաղափարախոսության ազդեցության տարածման վտանգ. Հետևաբար, պատերազմում կողմերից ոչ մեկի հայրանակը ձեռնտու չէր արաբական միապետներին: Այդ պատճառով միապետական կարգեր ունեցող արաբական վեց պետությունները որոշեցին միավորվել ատեղծելով Ծոցի համագործակցության խորհուրդը, որը ոչ միայն տևական և բաղաքական, այլև ռազմական կառույց է¹⁶¹:

¹⁵⁸ Сажин В., К вопросу о причинах ирано-иракской войны, Специальный бюллетень, N 5, М., 1988, с. 59.

¹⁵⁹ Հովհաննեսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր III, էջ 529:

¹⁶⁰ Epstein J., Soviet Vulnerabilities in Iran and the RDF Deterrent, International Security, Volume 6, N 2, Fall 1981, pp. 126-158.

¹⁶¹ Предложения Саудовской Аравии о "коллективной безопасности" в районе Персидского залива, ТАСС, БПИ N 4, 07.04.1981, с. 36.

Իրաքի արտգործնախարար Սաադուն Համադին ՇՀՆ-ի ստեղծման զաղափարը հայտարարեց ավելորդություն Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) անդամ երկրների միջև կնքված փոխադարձ պաշտպանության վերաբերյալ պակտի առկայության պայմաններում։ Իրանը և Իրաքը պարզ գիտակցում էին, որ վերոնշյալ քայլով սառույան դեկավարությունն իր ձեռքն է վերցնում նախաձեռնությունը՝ օգտվելով երկու պետությունների միջև սկիզբ առած պատերազմից։ Սակայն Իրաքը ստիպված էր հաշտվել ստեղծված իրադրության հետ ՇՀՆ-ի անդամ երկրներից պատերազմի ընթացքում ֆինանսական աջակցություն ստանալու ակնկալիքով։

Հատկանշական է, որ ՇՀՆ-ի ստեղծման զաղափարն ի հայտ է եկել դեռևս 1975 թ., երբ Քուվեյթի եմիրը 1975 թ. մայիսի 16-ին այցելեց Արու Դարի, որտեղ ԱՍԷ-ի դեկավարության հետ երկարատև բանակցություններից հետո ստորագրեցին կոմյունիկե՛ միասնական արտգործնախարարների հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ։ Արդեն 1976 թ. մայիսին Քուվեյթի եմիրն առաջարկեց ստեղծել միասնական համակարգ։ Ծոցի արաբական երկրների միջև քաղաքական, տեսեսական, կրթական և տեղեկատվական ոլորտներում համագործակցություն հաստատելու նպատակով։ Վերոնշյալ զաղափարն ի կատար ածելու նպատակով 1978 թ. դեկտեմբերին Քուվեյթի վարչապետն այցելեց Սաուդյան Արաբիա, Բահրեյն, Կատար, ԱՍԷ և Օմանի սուլթանություն, որտեղ համաձայնություն ձեռք բերեց հինգ արաբական պետությունների հետ Ծոցում իրենց դիրքերն ամրապնդել ցանկացող գերտերություններին հակազդելու նպատակով միասնական տարածաշրջանային կազմակերպություն ստեղծելու վերաբերյալ¹⁶²։ Արդեն 1981 թ. փետրվարի 4-ին Եր-Ռիյադում կայա-

¹⁶² Մալիկօ Բ., Совет Сотрудничества Арабских Государств Залива, М., 1994, с. 14-15.

ցած խորհրդաժողովի ժամանակ որոշում ընդունվեց տարածաշրջանային կազմակերպություն ստեղծելու վերաբերյալ⁶³ և արդեն 1981 թ. մայիսի 25-ին Արու Դարիում Ծոցի միապետական կարգեր ունեցող արարական վեց պետությունները՝ Սառույան Արարիան, ԱՍԻ-ն, Բահրեյնը, Կատարը, Քուվեյթը և Օմանը, ստորագրեցին պայմանագիր՝ հիմք դնելով ԾՀՆ-ի ստեղծմանը։ Կազմակերպության շտաբ-կայանը տեղակայվեց Էր-Ռիյադում, ինչն ընդգծում է Սառույան Արարիայի գերիշխող դերը կազմակերպությունում։

Խորհրդի շրջանակներում անդամ երկրների անվանգության ապահովման նպատակով Սառույան Արարիայի պաշտպանության նախարար արքայազն Սուլթանը մշակեց ծրագիր, որը բաղկացած է հետևյալ կետերից։

1. Նավթահանքերում և ռազմավարական կարևոր նավահանգիստներում հետաքրքր ռազմական հարձակման դեպքում անդամ երկրների ռազմական գործողությունների համակարգում։

2. Հորմուգի նեղուցը շրջանցող լրացուցիչ նավթխողովակաշարերի կառուցում։ Ըստ այդ նախագծի խողովակաշարերը պետք է անցնեն Իրաքի հարավային մասով, Քուվեյթով, Սառույան Արարիայով, Կատարով, Արու Դարիով հասնելով միևնույն Օմանյան նեղուց և այնտեղից դուրս գան դեպի բաց ծով։

Նախատեսվում էր այդ խողովակաշարերն օգտագործել կամ նավթի առարման, կամ ջրի մատակարարման համար⁶⁴։

Արդեն 1981 թ. նոյեմբերի 11-ին ԾՀՆ-ի անդամ Երկրների միջև կնքվեց միասնական տնտեսական համաձայնագիր, որի նպատակն էր համակարգել և դյուրացնել վեց պետություն-

⁶³ Родригес А., Нефть и эволюция социальных структур аравийских монархий, М., 1989, с. 231.

⁶⁴ "The Observer", London, 22.02.1981; Валькова Л., եշտ. աշխ., էջ 174:

ների միջև իրականացվող առևտրափոխանակությունը, կապիտալի տեղաշարժը, տեխնոլոգիական և ֆինանսական համագործակցությունը¹⁶⁵:

1981 թ. վերջին Սաուդյան Արարիան Կատարի, ԱՄԷ-ի և Բահրեյնի հետ կերեց անվտանգության վերաբերյալ երկկողմանի պայմանագրեր, 1982 թ. մարտին Խմանօրինակ պայմանագիր ստորագրեց նաև Օմանի հետ: Մեծ շակեր պահանջվեցին Սաուդյան Արարիայից Քուվեյթի հետ Խմանատիայ պայմանագիր կերելու համար, քանի որ վերջինս մտավախություն ուներ, որ այդ պայմանագրով ԾՀՆ-ի անդամ երկրներն իրավունք կստանան միջամտելու Քուվեյթի ներքին գործերին¹⁶⁶:

1982 թ. հունվարի 25-ին ԾՀՆ-ի անդամ երկրների պաշտպանության Խախարարները հավաքվեցին Էր-Ռիյադում՝ միասնական պաշտպանական քաղաքականության ձևավորման Խպատակով: Արդյունքում որոշվեց ստեղծել միասնական ուղղմական արդյունաբերություն, ինչպես նաև միասնական ուղղմական գինված ուժեր, որոնք հետազոտում ստացան «Թերակղզու վահան» անվանումը¹⁶⁷: ԾՀՆ-ի անդամ երկրները նաև պայմանավորվեցին վարել համաձայնեցված քաղաքականություն ուղղմական տեխնիկայի զևման հարցում¹⁶⁸: Իսկ արդեն 1982 թ. վերջին ընսարկման դրվեցին հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) ընդհանուր համակարգի ստեղծման,

¹⁶⁵ The Unified Economic Agreement between Countries of Gulf Cooperation Council, Riyad, 11.11.1981, http://www.sagia.gov.sa/Documents/Int%20_agreement/Agreement%20of%20Gulf%20Cooperation%20Council.pdf

¹⁶⁶ Валькова Л., Աշլ. աշխ., էջ 174:

¹⁶⁷ The Joint Arabian Peninsula Shield Forces Established since 1982 to Safeguard Security, Stability of GOC-Member States, "Bahrain News Agency", Bahrain, 22.12.2012, <http://www.bna.bh/portal/en/news/538738>

¹⁶⁸ The Cooperation Council for Arab States of the Gulf, Military Cooperation, <http://www.gcc-sg.org/eng/index8409.html?action=Sec>Show&ID=49>

ուազմական արդյունաբերության վերականգնման, տեղեկատվության փոխանակման, զինծառայողների համատեղ դասընթացների և ուսումնավարժաներների անցկացման հետ կապված հիմնախնդիրները¹⁶⁹: 1984 թ. նոյեմբերին ՇՀՆ-ի հերքական խորհրդաժողովի ժամանակ անդամ երկրների միջև կնքվեց համընդհանուր պաշտպանության վերաբերյալ պայմանագիր¹⁷⁰: Ըստ այդ պայմանագրի՝ ստեղծվեցին կոլեկտիվ պաշտպանության և համատեղ հրամանատարության համակարգեր: Որոշվեց նաև պաշտպանական ուժերը բաժանել երկու խմբի՝ յուրաքանչյուրը 10000 զինվոր, որոնց գլխավորելու էին Սաուդյան Արաբիայի սպաները¹⁷¹: Բացի այդ, Բահրեյնին և Օմանին տրամադրվեց 1,8 մլրդ դոլարի աջակցություն՝ իրենց սեփական ուազմական ուժերը ստեղծելու նպատակով:

1985 թ. Սոցի պետությունները համաձայնության եկան 3,7 մլրդ դոլար արժողությամբ համընդհանուր հակաօդային պաշտպանության համակարգ ստեղծելու հարցի շուրջ, որը պետք է իրականացվեր «Բոնինգ» ("Boeing") և «Ջեներալ Էլեկտրիկ» ("General Electric") ընկերությունների հետ համատեղ: Ավելին՝ համատարածաշրջանային հակաօդային պաշտպանական համակարգեր ստեղծելու նպատակով Սաուդյան Արաբիան Բահրեյնին և Օմանին տրամադրեց 50 մլն դոլար: Արդեն 1994 թ. ստեղծվեց ՇՀՆ-ի միացյալ ուազմական կոմիտեն: Հարկ է նշել, որ Սոցի տարածաշրջանի երկրների ուազմական ծախսերն ամենաբարձրն են աշխարհում: Այսպես Սաուդյան Արաբիան ծախսում է 2400 դոլար բնակչության 1 անձի համար, ԱՄԷ-ն՝ 2100 դոլար, Կատարը՝ 1700 դոլար.

¹⁶⁹ Военная политика стран Персидского зализа, ТАСС, БПИ N 194, 03.10.1984, с. 25.

¹⁷⁰ Валькова Л., Աշվ. աշխ., էջ 174:

¹⁷¹ Gulf Cooperation Council, <http://www.globalsecurity.org/military/world/gulf/gcc.htm>

Քուվեյթը՝ 1200 դոլար, Օմանը՝ 1060 դոլար: Համեմատության համար նշենք, որ Վաշինգտոնը ծախսում է ընդամենը 520 դոլար բնակչի մեկ շնչի համար¹⁷²: Փաստորեն 1980-ականների դրությամբ՝ 1 անձի համար ռազմական նպատակով ծախսվող պետությունների շարքում առաջին տեղը գրադեցնում էր Սաուդյան Արաբիան՝ հինգ անգամ գերազանցելով ԱՄՆ-ին:

Փաստորեն սառը պատերազմի տարիներին գերտերությունների միջև Սերձավոր և Սիօնին Արևելյի տարածաշրջանում իրենց ազդեցության հաստատման ուղղությամբ ծավալված մրցակցությունը, տարածաշրջանային հարթության վրա Ծոցի մի շարք երկրների միջև գերիշխանության հաստատման համար ընթացող պայքարը, իրարամերժ շահերի բախումը, խլամական հեղափոխության տարածման վտանգը դարձան այն հիմնական նախադրյալները, որոնք նպաստեցին, նույնիսկ, կարելի է ասել, խթանեցին միապետական կարգեր ունեցող արաբական վեց պետությունների միավորումը և Ծան-ի ստեղծումը¹⁷³:

2.2 Ծան-ի ԿԱՌՈՒԹՎԱՍՖԸ ԵՎ ԽՈՐՉՐԴԻ ՆԵՐՍՈՒՄ ԱՌԿԱ ՃԻՄԱԿԱՆ ԽԴԻՐՆԵՐԸ

Ծան-ի ունի կառուցվածքային համակարգ, որը բաղկացած է հետեւյալ ստորաբաժանումներից՝ Գերազույն խորհրդից, Լախարարական խորհրդից, Գյուսվոր քարտուղարությունից¹⁷⁴:

¹⁷² Рейган и Персидский Залив, ТАСС, БПИ N 45, 05.03.1981, с. 26.

¹⁷³ "The Middle East", London, January, 1981, p. 17.

¹⁷⁴ Ծան-ի կառուցվածքը մասնամասնորեն ներկայացված է կազմակերպության կառունապրության մեջ, որը բաղկացած է 22 հոդվածներից: Այս մասին տե՛ս The Charter of the Cooperation Council of the Arab States of the Gulf, <http://www.gcc-sg.org/eng/indexfc7a.html?action=Sec>Show&ID=1>

Գերազույթի խորհուրդը ԾՀՆ-ի որոշում ընդունող ամենաբարձր մարմինն է, որի կազմի մեջ մտնում են Խորհրդի անդամ երկրների ղեկավարները: Գերազույթի խորհրդի շրջանակներում հանդիպումները տեղի են ունենում պարբերաբար՝ տարին մեկ անգամ կամ արտահերթ կարգով՝ ըստ անդամ երկրների պահանջի:

Գերազույթի խորհրդին կից գործում է «Վեճերի լուծման հանձնաժողովը», որի գործառույթն է անդամ երկրների միջև ծագած խնդիրների լուծումը:

Գերազույթի խորհրդի նպատակն է իրականացնել ԾՀՆ-ի հետևյալ գործառույթները:

1. Հաշվի առնելով բոլոր անդամ երկրների շահերը՝ տարրոշել ԾՀՆ-ի հիմնական քաղաքականությունը և նպատակները;

2. Տարրոշել այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների հաստատման հիմքերը;

3. Տարրոշել «Վեճերի լուծման հանձնաժողովի» գործընթացային կանոնները;

4. Դիտարկել Նախարարական խորհրդի ներկայացրած առաջարկությունները, գեկույցները և այն վավերականացնել:

5. Վերանայել Գլխավոր քարտուղարության նախապատրաստած գեկույցները և ուսումնասիրությունները;

6. Նշանակել զյւակոր քարտուղարին;

7. Հաստատել Գլխավոր քարտուղարության բյուջեն;

8. Փոփոխություններ կատարել Ծոցի համագործակցության խորհրդի կանոնադրության մեջ;

9. Հաստատել Խորհրդի ներքին ընթացակարգային կանոնները:

Նախարարական խորհուրդ

Այս քաղկացած է ԾՀՆ-ի անդամ երկրների արտգործ-նախարարներից: Պարբերական հանդիպումները տեղի են ունենում յուրաքանչյուր երեք ամիսը մեկ, իսկ արտահերթ հանդիպումները՝ ըստ անդամ երկրների պահանջի: Նախարարական խորհրդի գործառություններն են՝

1. Մշակել ԾՀՆ-ի արտաքին քաղաքականությունը, նախապատրաստել հանձնարարականներ, ուսումնասիրություններ և ծրագրեր, որոնք միատիւ ունեն զարգացնելու գանձան ոլորտներում ԾՀՆ-ի անդամ երկրների միջև համագործակցությունը;

2. Խրախուսել, զարգացնել և համակարգել տարբեր ոլորտներում կազմակերպության անդամ երկրների գործողությունները:

3. Քաղաքականության ձևավորման ժամանակ հաշվի առնել նախարարների ներկայացրած հանձնարարականները;

4. Ներկայացնել առաջարկներ Գերազույն խորհրդին ԾՀՆ-ի կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ:

Նախարարական խորհրդում որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ:

Գլխավոր քարտուղարություն

Գլխավոր քարտուղարությունը կազմվում է Գերազույն խորհրդի կողմից: Գլխավոր քարտուղարության հիմնական գործառույթներն են՝

1. ԾՀՆ-ի անդամ երկրների համագործակցության և համակարգման վերաբերյալ ուսումնասիրությունների, նախագծերի և ծրագրերի պատրաստում;

2. Պարբերաբար ԾՀՆ-ի կատարած աշխատանքների վերաբերյալ գեկուցների պատրաստում;

3. Հետևողական լինել անդամ երկրների կողմից Գերագույն խորհրդի և Նախարարական խորհրդի որոշումների և հանձնարարականների իրականացմանը;

4. Պատրաստել Գերագույն խորհրդին և Նախարարական խորհրդին անհրաժեշտ գեկույցները և ուսումնասիրությունները;

5. Պատրաստել վարչական և ֆինանսական հարցերի կարգավորմանը վերաբերող նախագծեր, որոնք կնպաստեն Ծնն-ի աճին և զարգացմանը;

6. Վերջնական հաշվարկների տեսքով Գերագույն խորհրդի հաստատմանը ներկայացնել Ծնն-ի բյուջեն, որը կազմվում է անդամ երկրների հավասար ներդրումների արդյունքում:

Ըստ անհրաժեշտության՝ Նախարարական խորհրդի նախագահին առաջարկել իրավիրել Խորհրդի արտահերթ նիստ:

Գլխավոր քարտուղարության իրավասության տակ են գտնվում տեղեկատվական կենտրոնը և հինգ վարչությունները՝

➤ ֆինանսական և վարչական հարցերով գրադիռ վարչությունը,

➤ իրավական հարցերի մշտական վարչությունը,

➤ շրջակա միջավայրի և մարդկային ռեսուրսների մշտական վարչությունը,

➤ տնտեսական հարցերի մշտական վարչությունը,

➤ քաղաքական հարցերի մշտական վարչությունը:

Վերոնշյալ վարչությունները վերահսկողություն են սահմանում կազմակերպության 21 քաժինների վրա¹⁷⁵ (տե՛ս Հավելված, Աղյուսակ 1):

¹⁷⁵ Abe H., Regional Integration in the Gulf: the Background to the Formation of the GCC, Working Papers Series, No.9.

Սրընթաց զարգացող և մեծ ներուժ ունեցող ԾՀՆ-ն, որը միտում ունի տարածաշրջանային կազմակերպությունից վերածվելու անկախ միջազգային գործոնի, Խորհրդի ներսում առկա մի շարք խնդիրների պատճառով չի կարողանում այդ նպատակն արագ իրականացնել: ԾՀՆ-ի ներսում առկա խնդիրները պայմանականորեն կարելի է բաժանել երեք կատեգորիաների՝

1. տարածքային վեճեր, որոնք առկա են ԾՀՆ-ի անդամ երկրների միջն;

2. ֆինանսական, առևտրատեխնական և մաքսային հարցերի շուրջ տարածայնություններ;

3. տարածաշրջանային և միջազգային բնույթի առանձին խնդիրների շուրջ Խորհրդի ներսում առկա հակասություններ:

ԾՀՆ-ի անդամ երկրների մեծամասնությունը վերջին տարիների ընթացքում կարողացել է լուծել համարյա բոլոր տարածքային տարածայնությունները, որոնք ի հայտ էին եկել Առաջին համաշխարհային պատերազմից հետո Անտանտի երկրների կողմից Օսմանյան կայսրության լից ազատագրված արարական երկրների տարածքներում մանդատային համակարգի ստեղծման արդյունքում: 1970-ականների կեսերից մինչև 1990-ականների վերջերը ԾՀՆ-ի պետությունների մեծամասնությունն ուներ տարածքային հավակնություններ: Հատկապես մեծ էին Սառույան Արարիայի տարածքային հավակնությունները, որը պայմանավորված էր Արարական թերակղում ամենամեծ տարածք ունենալու և, հետևաբար, տարածաշրջանի բոլոր պետությունների հետ ընդհանուր սահմաններ ունենալու հանգամանքով: 1970-ականների սկզբին Ծոցի մի շարք պետություններ, ազատվելով Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատից և ձեռք բերելով անկախություն, սկսեցին պայքարել Սառույան Արարիայի տարածքային հավակնությունների դեմ:

Այսպես՝ մինչ օրս բացակայում է Քովեյթի և Սաուդյան Արաբիայի միջև ծովային սահմանի վերաբերյալ հստակ որոշումը, քանի որ Սաուդյան Արաբիան իր հավակնություններն են ներկայացնում Կարուխ և Ումմ-ալ-Մարադին կղզիների նկատմամբ, որոնք գտնվում են «Զեզոր գոտու» տարածքում (տե՛ս Հավելված, Քարտեզ 2): Նշենք, որ «Զեզոր գոտին» պաշտոնապես հաստատվել է 1922 թ. դեկտեմբերի 2-ին Քովեյթի և Սաուդյան Արաբիայի միջև կնքված Ուրախի պայմանագրի համաձայն՝ այն հայտարարելով որպես երկու պետությունների իրավասության տակ գտնվող ընդհանուր տարածք¹⁷⁶:

Տարածայնություններ կային նաև Սաուդյան Արաբիայի և Կատարի միջև: Սաուդա-կատարյան 1965 թ. դեկտեմբերի 4-ի սահմանների տարրոշման վերաբերյալ համաձայնագիրը վերջնականացես չեր հաստատել պետությունների միջև պետական սահմանները՝ բողնելով շատ վիճելի հարցեր, որոնք կողմերի համաձայնությամբ պետք է լուծվեին բանակցային գործընթացի հետագա փուլերում¹⁷⁷: Արդեն 1974 թ. եր-Ընդհանր հայտարարեց Ալ-Խաֆուս շրջանի նկատմամբ իր իրավասությունների մասին: Ալ-Խաֆուսը գտնվում է Կատարի հարավարևելյան մասում (տե՛ս Հավելված, Քարտեզ 4): Վերոնշյալ տարածքի ռազմավարական նշանակությունն այն է, որ այն միակ ցամաքային գոտին է, որն ընկած է Կատարի և ԱՍԷ-ի միջև, իսկ վերջինս համարվում է Ծնա-ի երկրների շարքում Դոհայի ամենամեծ առևտրային գործընկերը: Գիտակցելով այդ՝ Սաուդյան Արաբիան կտրականացես հրաժարվեց ընդունել այն, որ Ալ-Խաֆուսը պատկանում է Կա-

¹⁷⁶ Abd al-Hadi Khalaf, The Elusive Quest for Gulf Security, Middle East Report, Volume 17, Washington, September/October 1987, <http://www.merip.org/mer/mer148/elusive-quest-gulf-security>

¹⁷⁷ Gause G., Oil Monarchies: Domestic and Security Challenges in the Arab Gulf States, N.Y., 1994, p. 131.

տարին, ինչն էլ իր հերթին հանգեցրեց նրան, որ վերջինիս ողջ տարածքը հայտնվեց շրջափակման մեջ՝ կորցնելով Էմիրությունների հետ ունեցած անմիջական կապը¹⁷⁸:

1992 թ. սեպտեմբերին տեղի ունեցան սահմանային բախումներ երկու պետությունների միջև: Կատարը մեղադրեց Սաուդյան Արարիային Ալ-Խաֆուսի շրջանը բռնակցելու մեջ: Մինչդեռ Սաուդյան Արարիայի պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ Ալ-Խաֆուսի շրջանը բռնազավթվել է Կատարի կողմից, պարզաբանելով, որ վերջինս, օգտվելով 1990 թ. Քովեյթի նկատմամբ Իրաքի ազրեսիայի կիրառման արդյունքում առաջացած քառորդ, բռնազավթվել է սաուդյան տարածքից 14 կմ՝ այս անվանելով Ալ-Խաֆուս՝ դրանով իսկ ապահովելով իր ելքը դեպի ԱՄԷ-ի սահմանները¹⁷⁹:

Վերջնականապես տարածքային տարածայնությունը երկու պետությունների միջև հնարավոր եղավ հարթել սառուցիների միջնորդությամբ Կատարում հեղաշրջում իրականացնելուց հետո, որի արդյունքում 1995 թ. Կատարի շեյխ Խալիֆա ար-Թամին զահընկեց արվեց և զահին տիրացավ նրա որդին՝ Համադ իրեն Խալիֆա ալ-Թամին: Վերոնշյալ գործողությունների մեջ Կատարը մեղադրեց Սաուդյան Արարիայի ալ-Գուֆրան ցեղի ներկայացուցիչներին: Թեև 1996 թ. Կատարում փորձ ձեռնարկվեց կրկին ետ վերադարձնել իշխանությունը զահազրկված միապետին, սակայն այն ձախողվեց: Արդեն 1999 թ. Սաուդյան Արարիայի և Կատարի միջն կերպեց պայմանագիր, որի շնորհիվ վերջնականապես լուծվեցին երկու երկրների միջև տարածքային տարածայնությունները, և Ալ-Խաֆուսը հայտարարվեց Սաուդյան Արարիայի տարածքային մաս: Պայմանագիրն ուժի մեջ մտավ

¹⁷⁸ Субх М., ССАГПЗ: интеграция на фоне серьезных внутренних противоречий, <http://www.iimes.ru/rus/stat/2012/14-06-12a.htm>

¹⁷⁹ Crystal J., Oil and Politics in the Gulf, Rulers and Merchants in Kuwait and Qatar, Cambridge, 1995, p. 185.

2001թ. մարտի 21-ին՝ վերջ դնելով երկու կողմերի միջև հակամարտությանը¹⁸⁰:

Սառույյան Արաբիան տարածքային հավակնություններ ուներ նաև ԱՄԷ-ի և Օմանի նկատմամբ, որը կապված էր Ալ-Բուրայմի օազիսի հետ (տե՛ս Հավելված, Քարտեզ 5): Վերոնշյալ օազիսը մինչ XIX դարը պաշտոնապես գտնվում էր Մասկատի ու Օմանի սուլթանության և Աբու Դաբի Էմիրության իրավասության տակ, սակայն հաճախ էին տեղի ունենալ բախումներ Սառույյան Արաբիայի բազավորությունում թափակվող ցեղերի հետ: Մինչ ԱՄԷ-ի և Օմանի սուլթանության անկախանալը, վերջիններս, լինելով Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատները, փաստացիորեն Ալ-Բուրայմի օազիսի համար ընթացող պայքարում աջակցություն էին ստանում Անգլիայից, իսկ Սառույյան Արաբիան ԱՄՆ-ից:

Հատկապես Ալ-Բուրայմի համար ծավալվող պայքարն ուժգնացավ այն բանից հետո, եթե հայտնի դարձավ վերոնշյալ օազիսում նավթային խոշոր պաշարների առկայության մասին: 1950 թ. անգլիական «Պետրոլեում կոնսերվը» ("Petroleum Concession") ձեռնարկեց նավթի հետախուզական աշխատանքներ Օմանի ներքին շրջաններում, որի անհանգույաց Սառույյան Արաբիային: Նա անմիջապես դիմեց զինված գործողությունների և 1952 թ. հունիսին զրավեց Բուրայմի օազիսը¹⁸¹: Բուրայմի հետ կապված հակամարտությունը թափակվեց նոր և ավելի վտանգավոր փուլ: 1953 թ. վերջերին Անգլիան, օգտագործելով Աբու Դաբի զորքերը, ռազմական գործողություններ սկսեց Բուրայմի օազիսում ընդդեմ Սառույյան Արաբիայի: Սակայն միջազգային հանրության, մասնավորապես ՄԱԿ-ի բացա-

¹⁸⁰ Qatar, Saudi Arabia Sign Border Agreement, 22.03.2001, http://english.people.com.cn/english/200103/22/eng20010322_65657.html

¹⁸¹ Aldamer S., Saudi-British Relations, 1939-1953, Durham theses, Durham University, 2001, p. 294, <http://etheses.dur.ac.uk/4386/>

սական դիրքորոշումն Անգլիայի գործողությունների հանդեպ, ստիպեցին վերջինիս չափավորել իր «ախորժակը», և 1954 թ. հուլիսին կողմերը համաձայնության եկան պատերազմական գործողությունները դադարեցնելու և հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու շուրջ¹⁸²: Բայց դա ամենին չէր նշանակում, որ Անգլիան մտադիր էր հրաժարվել իր նպատակից: Նա սկսեց ֆինանսավորել Սասկատին՝ հրահրելով ռազմական գործողություններ ընդդեմ Օմանի իմամության, որի արդյունքում բոլոր հարթավայրային տարածքներն անցան Սասկատին: Ավելին Սասկատի գորբերը, համազործակցելով Աբու Դարբի գինված ուժերի հետ, ազատազրեցին նաև Բուրայմիի օազիսի այն մասը, որը 1952 թ. գրավել էր Սաուդյան Արաբիան: Բուրայմիի օազիսը բաժանվեց Սասկատի և Աբու Դարբի միջև: Վերոնշյալ գործողությունների արդյունքում ավելի ամրապնդվեցին Անգլիայի դիրքերը Սասկատում:

1974 թ. Ալ-Բուրայմիի շուրջ կրկին վեճ բռնկվեց այն բանից հետո, եթե սաուդա-ամերիկան ԱՐԱՍԿՈ կոնցենտր սկսեց այդ տարածքում իրականացնել փորման աշխատակրթեր, ինչը բացասաբար ընդունեցին բրիտանացիները: Նույն տարում Սաուդյան Արաբիան և ԱՄԷ-ն կնքեցին պայմանագիր, ըստ որի՝ Եր-Ռիյադն ընդունեց Աբու Դարբի իրավունքը Բուրայմիի օազիսում գտնվող վեց գյուղերի և Օմանի իրավասությունը 3 գյուղերի նկատմամբ: Բացի այդ, «Շայրահ» կոչվող նավթահանքը հայտարարվեց Օմանի և ԱՄԷ-ի ընդհանուր տարածք, որից ստացած եկամուտները պետք է կիսվեն երկու երկրների միջև¹⁸³: Փոխարենը՝ Սաուդյան Արաբիան ձեռք բերեց իրավունք կառուցելու ցամաքային

¹⁸² Հնդկասեփայան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնաշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր III, էջ 688:

¹⁸³ Oman-Regional Relations, http://www.mongabay.com/history/oman/oman-regional_relations.html

միջանցք Սառույան Արաբիայի տարածքից մինչև Ուգեյդ ծոցը, որը տեղակայված է Աբու Դաբիի արևմտյան ափին: Առաջին հայացքից Սառույան Արաբիան մեծ զիջումների գնաց է միրություններին, սակայն այդ քայլի շնորհիվ ստացավ ուղղականացնելու համարական կարևոր ելք դեպի Ծոցի ջրերը:

Ներկայումս Սառույան Արաբիայի և ԱՄԷ-ի սահմանը դեպքական վերահսկվում է 1974 թ. օգոստոսի 21-ին Զիդդա քաղաքում կնքված պայմանագրի համաձայն: Ինչ վերաբերում է Սառույան Արաբիայի և Օմանի միջև տարածքային փոխարաբերությունը, ապա սահմանային քարտեզը նրանց միջև, որը կազմվել է 1990 թ. երկկողմանի համաձայնագրի հիման վրա, վերջնականացնելու հաստատվեց միայն 1992 թ.:

Կատարի, Աբու Դաբիի և Սառույան Արաբիայի միջև կար տարածայնություն նաև Խառը ալ-Ռուդահի ծովային նեղուցից մինչև Կատարի հյուսիսարևելյան մասը ձգվող հատվածի շուրջ, որտեղ Աբու Դաբիում Լիվա կոչվող օազիսը Սառույան Արաբիան 1970 թ. հայտարարել էր իր իրավասության տակ գտնվող տարածք¹⁸⁴: Սակայն Աբու Դաբիի էմիր Համադ իբն Խալիֆային հաջողվեց 2001 թ. լուծել այդ վեճն իր երկու կարևոր հարեւանների՝ Սառույան Արաբիայի և Կատարի հետ¹⁸⁵:

Բավական լարված էին միջամտական հարաբերությունները նաև Բահրեյնի և Կատարի միջև: Բահրեյնը հավակնություններ ուներ Կատարի սահմանից 40 կմ հեռավորության վրա գտնվող Հավար կղզու նկատմամբ, որի վրա 1939 թ. իր վերահսկողությունն էր սահմանել: Հավարը, որն իր չափերով բավական փոքր կղզի է, կարևոր տարածք է ձևավագանական և մարզարտի հավաքման համար: Վերոնշյալ

¹⁸⁴ Day A., Border and Territorial Disputes, Harlow, 1987, p. 229.

¹⁸⁵ Հովհաննեսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր III, էջ 784-785:

տարածքի շուրջ վեճն ավելի թեժացավ, եթե այստեղ նավթի և բնական գազի պաշարներ հայտնաբերվեցին: Բացի այդ, Բահրեյնը հավակնություններ ուներ Զուբարա թերակղզու նկատմամբ, որը գտնվում էր Կատարի իրավասության տակ (տե՛ս Հավելված, Քարտեզ 4): Զուբարա թերակղզին մեծ կարևորություն է ներկայացնում Բահրեյնիների համար, քանի որ այստեղ բնակվել է Բահրեյնի Ալ-Խալիֆ իշխող դինաստիան, հետեւարար, Բահրեյնի հավակնություններն ունեն պատմական հիմնավորում¹⁸⁶: Ավելին՝ շատ կարևոր փաստ է նաև այն, որ վիճելի տարածքները կազմում են Բահրեյնի ընդհանուր տարածքի 1/3 մասը: 1986 թ. Բահրեյնը փորձ ձեռնարկեց Զուբարա թերակղզին միացնել իր տարածքին, սակայն Կատարի գիւղած ուժերը հակազդեցին դրան¹⁸⁷: Կողմերը, թեև կերեցին հաշտության պայմանագիր, սակայն 1991 թ. հուլիսին Կատարը սկիզբ դրեց դատական գործընթացին՝ դիմելով ՄԱԿ-ի միջազգային դատարան: Ակզրեական շրջանում Բահրեյնը հրաժարվեց ընդունել Հաազայի միջազգային դատարանի առաջարկած միջնորդական առաքելությունը, և միայն 2000 թ. Բահրեյնը համաձայնվեց, որ հարցը թնարկվի վերոնշյալ դատարանում: Ըստ Հաազայի միջազգային դատարանի որոշման՝ 2001 թ. մարտին Հավարի կղզին տրվեց Բահրեյնին, իսկ Զուբարա թերակղզին՝ Կատարին¹⁸⁸:

Տարածքային վեճ կար նաև Օմանի և ԱՄԷ-ի միջև, որը կապված էր Ռաս-Մուսանդամ և Ալ-Մադիա տարածքի նկատմամբ երկու կողմերի հավակնությունների հետ (տե՛ս Հավել-

¹⁸⁶ Ramazani R., The Gulf Cooperation Council, Record and Analizes, Virginia, 1988, p. 126.

¹⁸⁷ Исаев В., Филоник А., Королевство Бахрейн. Опыт развития в условиях изменений ресурсной ориентации, М., 2006, с. 74.

¹⁸⁸ Bahrain Risk: Political Stability Risk, The Economist Intelligence Unit, London, 22.04.2004.

ված, Քարտեզ 5): Սահմանային գիծն Էմիրությունների դաշնության և Օմանի սուլթանության միջև որոշվեց 1999 թ., ինչը ստացավ իրավաբանական ամրագրում նոյն տարում կը վաճառ համաձայնագրում: Ըստ այդ համաձայնագրի՝ Ռաս-Մուսանդամը և Ալ-Մահիան հայտարարվեցին Օմանի իրավասության տակ գտնվող տարածքներ: Սակայն տարածքային վեճը վերջնականապես հնարավոր եղավ կարգավորել միայն 2003 թ., երբ երկու պետությունները վավերացրին սահմանների վերաբերյալ համաձայնագիրը¹⁸⁷:

Հատկանշական է, որ տարածքային տարածայնություններ առկա էին նաև ԱՄԷ-ի կազմի մեջ մտնող յոր Էմիրությունների, հատկապես Արու Դարիի, Շուբայի և Ռաս ալ-Խայմայի միջև, որոնք հարթվեցին Կատարի միջնորդական ջանքերի շնորհիվ¹⁸⁸:

Սյուս տարածայնությունը, որն առկա է ԾՃՆ-ի անդամ երկրների միջև, ֆինանսական, առևտրատեսական և մաքսային հարցերի շուրջ է: Այսպես՝ Բահրեյնի և Օմանի կողմից ԱՄՆ-ի հետ միակողմանիորեն ազատ առևտրի գոտի (ԱԱԳ) ստեղծելու վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը լրջորեն ազդեց Սաուդյան Արաբիայի վերաբերմունքի վրա համարելով այն ոչ իրավական, քանի որ ԾՃՆ-ի անդամները 2001 թ. դեկտեմբերի 31-ին Սասկատում ստորագրել էին «Տնտեսական համաձայնագիր», ըստ որի՝ Ծոցի տարածքում հաստատվեց եզակի ներկրման հարկ, նույնականացվեցին մաքսային և զրանցման գործընթացները, մաքսային հարկերից ազատվեցին այն ապրանքները, որոնք

¹⁸⁷ Ռէշազրավ է այն փաստը, որ կը վաճառ պայմանագիրը շիրապարակայնացվեց: Այս մասին տե՛ս՝ United Arab Emirates: Geography, http://www.mongabay.com/reference/new_profiles/170.html

¹⁸⁸ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր III, էջ 769:

արտադրվում են ԾՃ-ի տարածքում¹⁹¹: Սառույան Արարիան կասեցրեց Բահրեյնին տրվող ամենամյա ֆինանսական օգնությունը և խիստ սահմանափակումներ դրեց Բահրեյնից ներկրվող ապրանքների վրա, ինչպես նաև նվազեցրեց «Աբու Սաֆա» միասնական նավթահանքից Բահրեյն առարվող նավթի քանակը: Հարկ է նշել, որ Սառույան Արարիայի դիրքորոշումը բավականին արդարացի է, քանի որ ԱԱԳ-ի ստեղծման վերաբերյալ ԱՄՆ-ի հետ կերպար համաձայնագիրը չի համապատասխանում ԾՃ-ի տևտեսական շահերին, քանի որ ԱՄՆ-ին բաժին է հասնում ընդհանուր ներկրվող ապրանքների 10%-ը: Չնայած Սառույան Արարիայի բացասական դիրքորոշմանը՝ ԱՄՆ-ը շարունակում է քանակցային գործընթացներ վարել նաև ԱՄԷ-ի և Կատարի հետ ԱԱԳ-ին միանալու հարցի շուրջ:

Մեկ այլ փորձություն էր ԾՃ-ի անդամների համար դրամավարկային միության ստեղծման և ընդհանուր դրամային արտարժույթի «խալիջի» ներկրման ուղղությամբ տարվող քայլերը: Բաևակցային գործընթացը, որը 2007 թ. դանդաղ, սակայն հաստատակամորեն առաջ էր գնում, կասեցվեց ԱՄԷ-ի և Սառույան Արարիայի տևտեսական շահերի բախման արդյունքում: Խնդիրն այն է, որ գործընթացի սկզբնական փուլում վերոնշյալ նախագծի բոլոր մասնակիցները համաձայն էին ԾՃ-ի կենտրոնական բանկի շտարկայանը Դուքայում տեղակայելու հարցում հաշվի առնելով վերջինիս համաշխարհային համբավը որպես ֆինանսական և բիզնես կենտրոն: Սակայն որոշ ժամանակ անց Սառույան Արարիան վերանայեց իր դիրքորոշումը՝ առաջարկելով շտարկայանը տեղակայել էր-Ռիյադում՝ ԾՃ-ի այլ պետու-

¹⁹¹ The Economic Agreement between the GCC States, Adopted by the GCC Supreme Council (22nd Session; 31.12.2001) in the City of Muscat, Sultanate of Oman, <http://sites.gcc-sg.org/DLibrary/download.php?B=168>

բյունների համեմատ զարգացած տնտեսություն ունենալու հիմնավորմամբ: Էմիրություններում այդ զաղափարը խիստ բացասական ընդունվեց, ինչը հանգեցրեց նրան, որ ԱՄԷ-ն դուրս եկավ բանակցային գործընթացից:

Եվ վերջապես վերջին տարածայնությունը՝ ԾՃ-ի անդամ երկրների միջև տարածաշրջանային և միջազգային խնդիրների, նավթային բաղաքանության և անվտանգության ապահովման հարցերի շուրջ միասնական դիրքորոշման բացակայության հարցի շուրջ է: Հատկանշական է, որ ԾՃ-ի առջև ծառացած համարյա բոլոր խնդիրների նկատմամբ իր յուրօրինակ դիրքորոշմամբ է առանձնանում Օմանը: Այսպես, երբ Եգիպտոսը 1979 թ. վտարվեց Արաբական պետությունների լիզայի կազմից Իսրայելի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման պատճառով, Օմանը շարունակում էր պահպանել դիվանագիտական հարաբերություններ Կահիրեի հետ: Իրան-իրաքյան պատերազմի ժամանակ Օմանի սուլթանությունը Կատարի և Բահրեյնի հետ միասին շեզոր դիրքորոշում էին դրսնորում, մինչեռ ԾՃ-ի մյուս անդամ երկրները պաշտպանում էին իրաքյան առաջնորդ Սահամ Հուսեյնին¹⁹²: Ավելին՝ 1985 թ. Օմանը դարձավ Ծոցի երկրորդ պետությունը Քուվեյթից հետո, որը հաստատեց դիվանագիտական հարաբերություններ ԽՍՀՄ-ի հետ: Նույնիսկ 1990 թ. Իրաքի կողմից Քուվեյթի բռնազավթումից հետո Օմանը չխցեց իր դիվանագիտական հարաբերությունները Բաղդադի հետ սահմանափակվելով միայն ազրեսիայի դատապարտմամբ: Օմանի դիրքորոշման տարբերությունը հաճախ բացատրվում է նրա կրոնական առանձնահատկությամբ: Նա միակ պետությունն է աշխարհում, որտեղ որպես կրոն համարվում է իբրահիմը: Այն տարբերվում է ինչպես

¹⁹² Мелкумян Е., ССАГПЭ в глобальных и региональных процессах, М., 1999, с. 66.

ուղղափառ սունեիզմից, այնպէս էլ շիզմից: Իրադիական խլամը կապված է նրա հիմնադրի Արդալլահ իրև Իրադի անվան հետ¹⁹³:

Օմանը դրսնորում է նաև անկախ նավթային քաղաքականություն, որի հիմնական պատճառներից մեկն այն է, որ Սասկատը չի մտնում ո՞չ ՕՊԵԿ-ի, ո՞չ է ՕՄՊԵԿ-ի կազմի մեջ՝ դրանով իսկ կարողանալով խուսանավել վերոնշյալ կազմակերպությունների շրջանակներում ԾՃՆ-ի հինգ անդամ երկրների միանական նավթային քաղաքականությունից:

Թեև անվտանգության քաղաքականության իրականացման հիմքում ԾՃՆ-ի անդամ երկրները հայտարարել են չեզոք և օտարերկրյա ուժերի ռազմական աջակցությունից խուսափելու դիրքորոշման մասին, այնուամենայնիվ, միանշանակ չէ ընդհանուր մոտեցումը նաև այս հարցի շուրջ: Այսպէս՝ թէ՝ Քուվեյթը և թէ՝ Բահրեյնը չնայած այն հանգամանքին, որ դեմ էին արտահայտվել ոչ միայն ռազմական քազաների տեղակայմանը ԾՃՆ-ի տարածքում, այլև կայսերապետական պետություններից ռազմական տեխնիկա գնելու հարցի շուրջ, այնուամենայնիվ, 1984 թ. Բահրեյնը կրկին «հատուկ իրավունքներ» շնորհեց ԱԱՆ-ին իր ռազմական քազաներից մեկի նկատմամբ, ինչպէս նաև թույլ տվեց ամերիկյան ռազմական նավերին հարկ եղած դեպքում օգտագործել իր նավահանգիստները¹⁹⁴: Օմանն ու ԱԱԷ-ն նույնապես

¹⁹³ Հարկ է նշել, որ Օմանի քականության 75%-ը դավանում է իրադիական խլամ: Այդ աղածող հիմնվել է Բասրայում 684 թ., երբ դեռևս շատ ակախվ էին խմբումները մուաումանական աշխարհում և Ասուհամմադի կողմից ձևավորված նոր խլամի ներսում: Կրոնաստվածարանական առումով իրադիան հանդես է գալիս հօգուտ խլամի և խլամական պետության այն տեսադրույթի վերականգնման, որը գոյություն է ունեցել Ասուհամմադի օրոք և նրա մահից հետո (632-644 թթ.): Այս մասին տե՛ս Հովհաննեսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Տասոր IV, էջ 678-681:

¹⁹⁴ "The Economist", London, 13.12.1980.

շիրաժարվեցին իրենց տարածքում ամերիկյան ռազմածովային և ռազմաօդային ուժերի ներկայությունից, փոխարենը՝ ԱՄՆ-ից ստանալով ռազմական և տնտեսական օգնություն¹⁹⁵:

Ցանկանալով խուսափել ԱՄՆ-ի ռազմական ոլորտի մենաշնորհման վտանգից՝ Սաուսյան Արաբիան որոշեց սպառազինման հարցում շահմանափակվել Սիացյալ Նահանգներից գլուղ ապրանքանիշերով՝ ներառելով այդ գործընթացին ևաև Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների, մասնավորապես Ֆրանսիային¹⁹⁶. Արդեն 1983-1984 թթ. Ֆրանսիան կարողացավ գրավել Ծոցի երկրների ռազմական շուկայի 50%-ը՝ վաճառելով 9.5 մլրդ դոլարի գենք Իրաքին և ԾՃՆ-ի անդամ երկրներին¹⁹⁷. Այսպես Սաուսյան Արաբիան ռազմաօդային ուժերի ամրապնդման նպատակով Սիացյալ Նահանգներից գենք 62 «F-15» և «F-5E» տիպի կործանիչ ինքնարիոներ, համալրեց հակաօդային պաշտպանությունը «Awacs» (Ավար) ռադիոտեղորոշչից վերահսկող ինքնարիոներով¹⁹⁸, իսկ տանկերը ձեռք բերեց Ֆրանսիայից, Արևմտյան Գերմանիայից, Անգլիայից և Ավստրիայից¹⁹⁹:

¹⁹⁵ 1980 թ. ապրիլի կեսերին լիբանանյան «Ալ-Կիֆար ալ-Արաբի» ամսագրի տեղեկատվության համաձայն՝ դեռ նախքան Իրաքի խաղամական հեղափոխության ավարտելու ամերիկացիներն Իրանում տեղակայված ռազմական ուժերի հետախուզական սարքավորումները տեղափոխել էին Հուրայ և համաձայնության էին եկել տեղի իշխանության հետ կառուցել «Զիրալ Ավի» առաջավագիստը. որուն պետք է տեղակայվեր ամերիկյան 15000 անձնակազմից բաղկացած ռազմաբազան: Այս մասին տե՛ս Բալեկոս Լ., աշխ. աշխ., էջ 172:

¹⁹⁶ Johnson M., Saudi Arabia: Shoring up the Kingdom, "Time" Magazine, New York, 16.03.1981, p. 27.

¹⁹⁷ Сотрудничество США и Франции в районе Персидского залива, ТАСС, БПИ N 89, 8.05.1984, с. 34.

¹⁹⁸ Поставка системы АВАКС Саудовской Аравии-только начало новой стратегии, ТАСС, БПИ N 222, 11.11.1981, с. 4.

¹⁹⁹ Перемены в Саудовской Аравии, ТАСС, БПИ N 108, 03.06.1981, с. 34.

Ավելին՝ Սառույան Արաբիան Ֆրանսիայի հետ կնքեց պայմանագիր 4.4 մլրդ դոլարի հակաօդային պաշտպանության սպառազինություն ձեռք բերելու վերաբերյալ²⁰⁰: 1986 թ. ՇՀԽ-ն համաձայնագիր կնքեց նաև Մեծ Բրիտանիայի հետ, որը ստացավ «Յամա-1» անվանումը: Այն նախատեսում էր 72 «Տորնադր» մակնիշի կործանիչների և անզիջական ռազմական այլ տեխնիկայի գնում՝ ըստհանուր 5 մլրդ ֆունտ ստեղծինց արժողությամբ: ՇՀԽ-ի երկրներին իր ռազմական աջակցությունն է տրամադրում նաև Պակիստանը, որը, չինելով ՇՀԽ-ի անդամ-պետությունն, զինված ուժեր է տրամադրում Սառույան Արաբիային²⁰¹:

ՇՀԽ-ի կարևորագույն խնդիրներից է նաև Խորհրդին անդամակցելու հարցը: Դրան խանգարում է ՇՀԽ-ի կանոնադրության մեջ նոր անդամ երկրների ներզրավման վերաբերյալ համապատասխան հոդվածի բացակայությունը: Այս հարցի շուրջ Աբդուլ Մուհամետ Թարիյ Մուզաֆարը՝ Արաբական պլանավորման ինստիտուտի գլխավոր քարտուղարը, նշել է, որ Իրաքի և Երկու Եմենների բացակայությունը նորաստեղծ խորհրդում ավելի կյանքացնի ճեղքը Ծոցի հարուստ և աղքատ երկրների միջև²⁰²: Իսկ ինչպես նշել է Հյուսիսային Եմենի «Ալ-Հուրիա»՝ «Ազատություն» ամսագիրը, «Արաբական վեց պետությունների միասնական կոալիցիայի ստեղծումը կարող է վեսաել մյուս արաբական երկրների փոխհամագործակցությանը»²⁰³:

Մյուս կարևորագույն խնդիրն է ՇՀԽ-ի անդամ երկրների սահմանադրություն շունենալու հարցը: Սահմանադրության

²⁰⁰ Политика стран Персидского залива, ТАСС, Атлас N 8 (1390), 24.02.1984, с. 43.

²⁰¹ Khalid D., Pakistan's Relations with Iran and the Arab States, Journal of South Asian and Middle Eastern Studies, Volume 5, Spring, 1982, pp. 20-21.

²⁰² The Gulf Cooperation Council, "Kuwait News Agency", May, 1981, p. 67.

²⁰³ Abe H., եղվ. աշխ., էջ 62:

բացակայությունը խոչընդոտում է ժողովրդավարական սկզբունքներով ազատ և ուղղակի ընտրությունների անցկացմանը: Այդ մասին «Ալ-Խալիջ» թերթը գրել է «Ժողովրդի մասնակցությունն ընտրություններում կարող էր դառնալ ամենավճռորոշ գործոնը ներքին անվտանգության ապահովման հարցում»:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ԾՃՆ-ն իր շուտված խնդիրներով, անդամ երկրների միջև առկա հակասություններով հանդերձ իրենից ներկայացնում է կարևոր քաղաքական, տնտեսական, ինչպես նաև ուսմական կառույց, որն իր ներուժով և դերակատարությամբ դուրս է գալիս տարածաշրջանային կազմակերպության շրջանակներից և հանդես է գալիս որպես արդի միջազգային հարաբերությունների նշանակալի գործոն: Դրանով է բացատրվում մի շարք երկրների, այդ թվում նաև Ճապոնիայի շահագրգուվածությունը՝ խորացնել և ամրապնդել իր տնտեսական և քաղաքական հարաբերությունները վերոնշյալ խմբավորման անդամ երկրների հետ:

2.3 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՊՈՆԻԱՅԻ ՈՒ ԾՃՆ-Ի ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ (ԱՄԷ-Ի, ԲԱՇՐԵՑՆԻ, ԿԱՏԱՐԻ, ՍԱՌԻԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ, ՔՈՒՎԵՅԹԻ, ՕՍԱԼԻ) ՄԻՋԵՎ

Ճապոնիան համարվում է ԾՃՆ-ի անդամ երկրների ամենակարևոր քաղաքական ու տնտեսական գործընկերներից մեկը: Ճապոնիայի և ԾՃՆ-ի անդամ երկրների միջև հարաբերությունների սկիզբը դրվել է նախքան տարածաշրջանային խմբավորման ստեղծումը: Այսպես՝ Ճապոնիայի և Սառույյան Արաբիայի միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են դեռևս 1955 թ., որին այնուհետև հաջորդեց տնտեսական հարաբերությունների հաստա-

տումը: Մշն-ի մյուս անդամ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների սկիզբը դրվել է անմիջապես անկախության ձեռքբերումից հետո՝ Քուվեյթի հետ 1961 թ.²⁰⁴. Օմանի, ԱՄԷ-ի²⁰⁵, Բահրեյնի²⁰⁶ ու Կատարի հետ՝ 1972 թ.:

1970-ականների սկզբին Ճապոնիան, դառնալով աշխարհի տնտեսական երկրորդ գերտերությունը և չունենալով բնական հանածոներ, երկրի էներգիայի պահանջարկն ապահովում է էներգակիրների ներկրման միջոցով, որոնք մեծ մասամբ առարկում են Ծոցի տարածաշրջանից: Մշն-ի անդամ երկրների նավթի ապացուցված պաշարները գերազանցում են 800 մլրդ բարելլ, որը կազմում է համաշխարհային ապացուցված նավթային պաշարների 55%-ը²⁰⁷: Ավելին՝ աշխարհի նավթարդյունաբերության 20%-ը և բնական գազի արդյունահանման 36%-ն իրականացվում է Մշն-ի երկրներում²⁰⁸: Սառույան Արաբիայի ապացուցված նավթային պաշարները զետարվում են 260 մլրդ բարել, ԱՄԷ-ինը՝ 98,1 մլրդ բարել, Քուվեյթինը՝ 96.5 մլրդ բարել, Օմանինը՝ 4.8 մլրդ բարել, Կատարինը՝ 3.7 մլրդ բարել, Բահրեյնինը՝ 0.07 մլրդ բարել²⁰⁹:

²⁰⁴ Japan-Kuwait Relations, http://www.mofa.go.jp/region/middle_e/kuwait/index.html

²⁰⁵ Japan-United Arab Emirates Relations, http://www.mofa.go.jp/region/middle_e/uae/data.html

²⁰⁶ 1972 թ. մայիսի 2-ին Ճապոնիայի և Բահրեյնի միջև դրվեց դիվանագիտական հարաբերությունների սկիզբը: 1988 թ. հունվարի 27-ին բացվեց Ճապոնիայի դեսպանատունը Բահրեյնի Սահամա քաղաքում: Այս մասին տե՛ս Embassy of the Kingdom of Bahrain in Japan, Bilateral Relationships, <http://www.bahrain-embassy.or.jp/en/bilateral-relationships/>

²⁰⁷ McNaugher T., Աշվ. աշխ., էջ 88:

²⁰⁸ Gause G., Աշվ. աշխ., էջ 1:

²⁰⁹ Տվյալները վերցված են հետևյալ աղյուրներից՝ Malle V., Economic Situation in the UAE, "Financial times", London, 14.04.1989; Перемены в Саудовской Аравии, ТАСС, БПИ N 79, 22.04.1981, с. 36; The Middle East and North Africa 1996, L., 1996; International Energy Statistics, Washington, <http://www.eia.gov/cfapps/ipdbproject/IEDIndex3.cfm?tid=5&pid=57&aid=6>

Արժնորելով նավթի անխափան հոսքի ընթացքը՝ Տոկիոն իր արտարին բաղադրականության մեջ մեծ տեղ է տալիս Ծոցի երկրների հետ կայուն և բարեկամական հարաբերությունների զարգացմանը:

Դեռև 1957 թ. Ճապոնիան ներգրավվեց նավթի արդյունահանման գործընթացի մեջ: Մագող արևի երկիրն իր մեծ կապիտալի շնորհիվ կարողացավ ստեղծել «Արաբիեն օյլ» ("Arabian Oil") նավթային ընկերությունը²¹⁰, որը մտավ «Յոր բույրեր» միջազգային նավթային կարտելի կազմի մեջ²¹¹ և մերձավորաբենյան տարածաշրջանում առկա ամերիկյան ու անգլիական նավթային մենաշնորհների մրցակցության պայմաններում իրավունք ստացավ հետախուզական աշխատանքներ ծավալել Ծոցի ծովափենյա շրջաններում: «Արաբիեն օյլ»-ը 1957 թ. կոնցեսիոն պայմանագիր ստորագրեց Սաուդյան Արաբիայի, իսկ 1958 թ. հուլիսին՝ Քուվեյթի հետ²¹²: Սաուդյան Արաբիայի ու Քուվեյթի սահմանագծում տեղակայված «Զեզոր գոտում» հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով²¹³: Հետախուզական աշխատանքների արդյունքում 1960 թ. «Արաբիեն օյլ»-ը հայտնաբերեց «Խաֆջի» նավթահանքը²¹⁴ և կոնցեսիոն հիմունքով սկսեց իրականացնել նավթի

²¹⁰ Озокинт В., Экономика Саудовской Аравии, М., 1975, с. 125.

²¹¹ Peterson J., The Politics of Middle Eastern Oil, Washington, 1983, p. 3.

²¹² Քայլ որ Քուվեյթ համարվում էր Մեծ Բրիտանիայի պրոտեկտորանք, Տարյ Թամաչիուսն «Արաբիեն օյլ»-ի հիմնադիր տեօրենը, ստիպված էր զեալ Լուսնի «Զեզոր գոտում» հետախուզական աշխատանքներ ծավալելու համար բռնշուվություն ստանալու նպատակով: Այս մասին տե՛ս Sharikat al-Zayt al-Arabiyyah al-Mahdudah, The 35-year History of the Arabian Oil Company, 1958-1993: A Bridge between the Arabian Gulf and Japan in War and Peace, 1995, p. 45.

²¹³ Venn F., Oil Diplomacy in the Twentieth Century, London, 1986, p 126.

²¹⁴ Longrigg S., Oil in the Middle East, Its Discovery and Development, London, 1968, p. 311.

արդյունահանում, մշակում և վաճառք²¹⁵: «Խաֆջի» նավթահանքը մտնում է աշխարհի 30 ամենախոշոր նավթահանքերի ցանկի մեջ, որի նավթային պաշարները հաշվարկվում են ավելի քան 500 մլն բարել: Այս նավթահանքից արդյունահանված վառելակյութի 90%-ն «Արարիեն օյլ»-ն արտահանում է Ճապոնիա, ինչն ապահովում է Ճապոնիայի նավթային պահաջարկի 40%-ը²¹⁶: 1961 թ. մինչ օրս «Արարիեն օյլ» ընկերությունն արդյունահանել է ընդհանուր առմամբ 3.9 մլրդ բարել նավթ, որից 2.8 մլրդ-ն առարվել է Ճապոնիա: Հետևաբար «Արարիեն օյլ»-ից ստացված ողջ եկամտի 80%-ը բաժին է հանում Ճապոնիային, իսկ մնացած 20%-ը հավասարապես բաժանվում է Սաուդյան Արարիայի և Քուվեյթի միջև²¹⁷:

Հետագա հետախուզական աշխատանքների արդյունքում 1963 թ. «Արարիեն օյլ»-ը հայտնաբերեց «Հոուլ»-ը, որտեղից օրական արդյունահանում էր 2,160 բարել նավթ²¹⁸, իսկ 1967 թ.՝ «Լուլու» նավթահանքը և «Շորա» կոչվող քնական գազի հանքերը²¹⁹:

Ճապոնական «Արարիեն օյլ» ընկերության նավթի արդյունահանման ծավալները տարեցուարի ավելանում եր պահանջելով նոր ներդրումներ: Խնդիրն այն է, որ «Խաֆջի» նավթահանքից արդյունահանված նավթն իր մեջ մեծ քանակությամբ նստվածք է պարունակում, որից մարրագուելու համար Ճապոնիայի նավթամշակման արդյունաբերությունը բավական հզոր չէր և ի վիճակի չէր վերա-

²¹⁵ Sharikat al-Zayt al-Arabiyyah al-Mahdudah, Աշկ. աշխ., էջ 54:

²¹⁶ Օզունց Բ., Աշկ. աշխ., էջ 127:

²¹⁷ Obaid N., The Oil Kingdom at 100, Petroleum, Policymaking in Saudi Arabia, Policy Papers, Washington Institute for Near East Policy, Washington, 2000, p. 58.

²¹⁸ Նավթի արտահանումը «Հոուլ» նավթահանքից սկսեց իրականացվել 1969 թ.: Այս մասին տես՝ ս Sharikat al-Zayt al-Arabiyyah al-Mahdudah, Աշկ. աշխ., էջ 67:

²¹⁹ Arabian Oil Company, <http://www.aoc.co.jp/e/his/history.html>

մըշակման ենթարկել օրեցօր աճող արդյունահանվող նավթի քանակը: Այդ պատճառով որոշվեց 1965 թ. կարել համաձայնագիր «Արարիեն օյլ»-ի և Ճապոնական մի խումբ ընկերությունների միջև՝ «Ֆուջի օյլ» ("Fuji oil") ընկերություն ստեղծելու համար, որը 1969 թ. Տոկիոյում կառուցում է նավթամշակման գործարաններ՝ տարեկան 4 մլն տոննա հզորությամբ:

«Արարիեն օյլ»-ի նավթի արդյունահանման քանակը 1961-1974 թթ.

«Արարիեն օյլ»-ի նավթի արդյունահանման քանակը 1961-1974 թթ. (մլն. բարել)			
1961 թ.	3.5	1968 թ.	51.8
1962 թ.	10.5	1969 թ.	65.61
1963 թ.	22.4	1970 թ.	63.7
1964 թ.	30.1	1971 թ.	92.4
1965 թ.	31.5	1972 թ.	105.7
1966 թ.	45.5	1973 թ.	95.9
1967 թ.	47.6	1974 թ.	99.4

* Ներառում է իր մեջ նաև Սաուդյան Արարիայի չս

Աղյուրներ՝ Middle East Economic Digest, London,
Бюллетень иностранной коммерческой информации
1972-1973.

1966 թ. Ճապոնական «Արարիեն օյլ» ընկերությունը, Քուվեյթի և Սաուդյան Արարիայի կառավարությունների հետ համաձայնեցնելով, կարեց «Նիպպոն գազոլին կոմպանի օֆ Ջապան»-ի ("Nippon Gasoline Company of Japan") հետ պայմանագիր՝ Սաուդյան Արարիայում նավթի վերամշակման գործարան կառուցելու մասին: Նախատեսվում էր նավթի արդյունահանման քանակին զուգընթաց աստիճանաբար

մեծացնել վերամշակման գործարանի հզորությունը²²⁰: Այսպէս՝ 1960 թ. ճապոնիան Սառույան Արարիայի Զիդդա և Էր-Ռիյադ քաղաքներում, իսկ 1980 թ.՝ Յանբույում կառուցեց նավթի վերամշակման գործարաններ: Ավելին՝ Սառույան Արարիան 1976-1985 թթ. ընթացքում նավթի վերամշակման ոլորտի զարգացման համար հատկացրեց 16.2 մլրդ դոլար, որի շնորհիվ 1970-1988 թթ. ընթացքում սառույան նավթի վերամշակման գործարանների հզորությունն աճեց համարյա 3 անգամ՝ հասնելով 483 մլն բարելի: Սառույան Արարիան այս ցուցանիշով զբաղեցնում է Երկրորդ տեղը ողջ Ասիա-աֆրիկյան տարածաշրջանում՝ զիջելով միայն Ճապոնիային (1.5 մլրդ բարել ցուցանիշով)²²¹:

1975 թ. Սառույան Արարիայի և Ճապոնիայի միջև ստորագրվեց տեխնոլոգիական համագործակցության պայմանագիր՝ նավթարիմիական ոլորտի զարգացման նպատակով միասնական ընկերություն ստեղծելու մասին: Արդյունքում ստեղծվեցին երկու միասնական ճապոնա-սառույան ընկերություններ՝ «ԱՐ-ՌԱԶԻ ՄԵՏԱՆ» (ARRAZI METAN) (1979 թ.) և «ՇԱՐՔ»-ը (SHARQ) (1981 թ.)²²²: «ԱՐ-ՌԱԶԻ ՄԵՏԱՆ» ընկերությունը սկսել է մերան արդյունահանել 1983 թվականից, որն այժմ մերանի արդյունահանման ամենամեծ ընկերությունն է աշխարհում: Ինչ վերաբերում է «ՇԱՐՔ» ընկերությանը, ապա այն ստեղծվել է ճապոնական «Միտսիբիշի» (Mitsubishi) և «Սառույի բեյսիր ինդաստրիյս կորպորեյշն» ՍԱԲԻԿ (Saudi Basic Industries

²²⁰ "Middle East Economic Digest", London, 1969, 13, N 50, p. 1536; Օզոլինգ Բ., Աշվ. աշխ., էջ 131:

²²¹ Կյալման Ա., Страны Персидского залива, иммиграция и классовая структура, М., 1990, с. 38.

²²² Yamada M., Gulf-Asia Relations as "Post-Rentier" Diversification? The Case of the Petrochemical Industry in Saudi Arabia, Journal of Arabian Studies, London, 2011, p. 110.

Corporation" (SABIC)) ընկերությունների միասնական ջանքերի արդյունքում²²³: Ընկերությունն անվանվեց «Արևելյան Խավաբարիմիական ընկերություն» ("Eastern Petrochemical Company"), սակայն հակիրճ այն հայտնի է «ՇԱՐՔ» անվամբ: Այն սկսեց առևտրով գրաղվել 1985 թվականից: Վերոնշյալ երկու ընկերությունները «ԱՐ-ՌԱԶԻ ՄԵԹԱՆ»-ը և «ՇԱՐՔ»-ը, աջակցություն են ստանում Ճապոնիայի կառավարությունից, որը տեխնոլոգիաների տրամադրման դիմաց նավք է ստանում:

Բահրեյնը, ինչպես արդեն նշվել է, առաջին արաբական պետությունն էր, որտեղ 1932 թ. առաջին անգամ նավք հայտնաբերվեց: Այդ հանգամանքը նպաստեց 1934 թ. Ճապոնիայի և Բահրեյնի միջև առևտրական հարաբերությունների հաստատմանը: Սակայն այն երկար չունեց Երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելու և Ճապոնիայի ֆաշիստական խմբավորման մեջ ներգրավվելու պատճառով:

1971 թ. օգոստոսի 15-ին Բահրեյնն անկախություն ձեռք բերեց՝ ազատվելով Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատից, և Ճապոնիան առաջին պետությունն էր, որ 1971 թ. օգոստոսի 24-ին ճանաչեց Բահրեյնի անկախությունը:

Բահրեյնը կարևորում է Ճապոնիայի հետ իր հարաբերությունները և մեծ տեղ է տալիս տնտեսական հարաբերությունների ամրապնդմանն ու զարգացմանը²²⁴: Հատկանշվական է, որ Բահրեյնում գործում են ճապոնական մոտ 22 ընկերություններ, որոնք իրենց գործունեությունն են ծավալում ֆինանսական, արդյունաբերական, ինչպես նաև նավթա-

²²³ Mitsubishi Corporation, Sharq. The Saudi Arabian Petrochemical Project: A Testament to Strong Japan-Saudi Ties, Endeavour, Volume 3, www.mitsubishicorp.com/jp/en/mclibrary/projectstory

²²⁴ Embassy of Japan in Bahrain, Bilateral Relations, <http://www.bh.emb-japan.go.jp/bilateralRelations.htm>

թիմիական, զազի, այսումինի և հեռահաղորդակցության ոլորտներում²²⁵:

Ճապոնիայի և Քուվեյթի միջև տնտեսական հարաբերությունների սկիզբը դրվել էր դեռևս 1958 թ.՝ մինչ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, որը տեղի ունեցավ 1961 թ.՝ Քուվեյթի անկախանալուց հետո: Տոկիոյի համար Քուվեյթը առաջին հերթին խոշոր նավթային պաշարներ ունեցող երկիր է²²⁶, որն ապահովում է Ճապոնիայի նավթային պահանջարկի 13-20%-ը²²⁷ և դասվում է Ճապոնիա նավթ առարող երկրների առաջին հեղյակում²²⁸:

Ճապոնիայի և ԱՄԵ-ի դիվանագիտական հարաբերությունների սկիզբը դրվել է վերջինիս անկախանալուց անմիջապես հետո՝ 1972 թ., որին հաջորդեց նաև տնտեսական հարաբերությունների հաստատումը: «Զապան օյլ դիվելումներ կոմպանի»-ն (ԶՈԴԿՕ) (Japan Oil Development

²²⁵ Four Decades of Ties with Japan Continue to Bear Fruit, "The Japan Times", Tokyo, 16.12.2012.

²²⁶ Քուվեյթը՝ շնորհիվ նավթի խոշոր պաշարների հայտնաբերման, 1960-ականների սկզբներից դարձավ նավթի արդյունահանման բանակու երրորդ երկիր աշխարհում՝ զիջելով միայն ԱՄՆ-ին և Վենեսուելային: Քուվեյթը են ստուգայալած համաշխարհային նավթային պաշարների 9.3-13%-ը: Այս միասին տե՛ս Oil Diplomacy: Facts and Myths behind Foreign Oil Dependency, Washington, 2002, p. 54, <http://www.foreignaffairs.house.gov/archives/107/80291.pdf>; Kostiner J., Conflict and Cooperation in the Gulf Region, London, 2009, p. 62.

²²⁷ Исаев В., Филоник А., Кувейт: Контуры экономических перемен (опыт развития в условиях перехода от избытка к относительному дефициту капитала), М., 2003, с. 64-65.

²²⁸ Kuwaiti Foreign Minister Leaves Japan, Headed for Beijing, "Kuwait News", 03.06.2010,

<http://www.kuna.net.kw/NewsAgenciesPublicsite/ArticleDetails.aspx?id=2091426&Language=en&searchtext=japan-kuwait>

Company (JODCO))²²⁹, որն այժմ հայտնի է «ԻՆՓԵՔՍ» ("INPEX") անվամբ, 1973 թ. կոնսեյնոն հիմունքով սկսեց շահագործել ԱՄԷ-ի ծովափեյա շրջաններում տեղակայված «Ումմ Շայֆ» ("Umm Shaif") և «Սոնրին Զարում» ("Lower Zakum") կոչվող նավթահանքերը: 1981 թ. ԶՈՒԿՕ-ն, զնելով «Աբու Դաբի նեյշընալ օյլ կոմպանի-ի» (ADNOC) ("Abu Dhabi National Oil Company (ADNOC)") բաժնետոմսերի 12%-ը, դարձավ միակ ընկերությունը, որին տրվել է «Վերին Զարում» ("Upper Zakum"), «Ումմ Ալ-Դալխ» ("Umm Al-Dalkh") և «Սաթահ» ("Satah") նավթահանքերի շահագործման իրավունքը²³⁰ (տե՛ս Հավելված, Քարտեզ 6):

Ճապոնական ընկերությունների «Նիպպոն օյլ» ("Nippon oil"), «Կոսմո օյլ» ("Cosmo oil"), «Տոկիո էլեկտրիկ» ("Tokyo Electric"), «Չուբու էլեկտրիկ փառուեր կորպորեյշըն» ("Chubu Electric Power Corporation") և «Կանսայ էլեկտրիկ կորպորեյշըն» ("Kansai Electric Corporation") կոնսորցիոն ԱՄԷ-ի և Կատարի ծովափեյա շրջաններում տեղակայված «Մուբարազ» ("Mubarraz"), «Ումմ Ալ-Անբար» ("Umm Al-Anbar") և «Նիվաթ ալ Ղալան» ("Nivat al Khalan") նավթահանքերից արդյունահանվող նավթ ամբողովին առարում է Ճապոնիա:

Ճապոնիան ունի նաև մեծ ներդրում ՄՀՆ-ի երկրներում բնական գազի ոլորտի զարգացման հարցում: Ծագող արևի երկիրն առաջին հերթին շահագործված է բնական գազի հեղուկացման գործընթացով, որը հեարավորություն կտա դուրս հանել բնական գազը Ծոցի տարածաշրջանից: Տոկիոն

²²⁹ Japan Oil Development Cooperation, www.jodco.co.jp

* ԱԴՆՕԿ-ն ԱՄԷ-ի պետական նավթային կազմակերպությունն է, որն իր մեջ ներառում է երեք նավթա- և գազարդյունահանող օպերացիոն, հիեզ ցանցային, երկու տրամադրության ընկերություններ և այլն:

²³⁰ Английские газеты об экономике ОАЭ и Кувейта, ТАСС, БПИ N 63, 31.03.1981, с. 30.

սկսեց քնական զագ ներկրել 1960-ականների վերջերից՝ դառնալով աշխարհի ամենամեծ ներկրողը:

Ծնն-ի երկրները, մեծ մասամբ կենտրոնացած լինելով նավթի, քան քնական զագի արդյունահանման գործընթացի վրա, այդուհաներձ, միջոցներ չեն խնայում քնական զագի արդյունահանման ոլորտը զարգացնելու ուղղությամբ: Հատկապես դրանում հետաքրքրված են Ծնն-ի այն պետությունները, որոնք չունեն մեծ քանակությամբ նավթի պաշարներ (ԱՄԷ-ն, Օմանը և Կատարը)²³¹: Այսպես՝ 1971 թ. Կատարում բրիտանական «Շելլ» ընկերությունը հայտնաբերեց աշխարհի ամենամեծ զագի հանքավայրը՝ «Հյուսիսային զագի հանքավայր»-ը ("North Gas field"), որը բույլ տվեց Կատարին այլընտրանքային եկամտի աղբյուր ստեղծել, քանի որ երկրում առկա նավթի պաշարները զալով նվազում են²³²: «Կատար գեներալ պետրոլեում կորպորեյշն»-ի ("Qatar General Petroleum Corporation") զիսավոր տնօրեն Ալի Զեյյան նշել է: «Մեր հիմնական նպատակն է առաջին հերթին արդյունահանել զագ՝ ներքին սպառման համար, այնուհետև 1-2 տարի հետո հնարավոր է այն արտահանելոք»²³³: 1980-ականներին Կատարի տևականությունը փոփոխման ենթարկվեց և սկսեց զարգանալ ճապոնիայի հետ համագործակցության արդյունքում: 1989 թ. համագործակցություն հաստատվեց «Միցուի» ("Mitsui") ընկերության և Կատարի միջև, որի արդյունքում ճապոնական առևտրային ընկերությունները՝ «Միցուի»-ն և «Մարուբենի կորպորեյշն»-ը ("Marubeni corporation"), միացան «Կատարզագին»: Ճա-

²³¹ Kellner T., The GCC States of the Persian Gulf and Asia Energy Relations, Paris, September, 2012, p.18.

²³² Hashimoto K., Elass J., Eller S., Liquefied Natural Gas from Qatar: The Qatargas project, Natural Gas and Geopolitics, from 1970-2040, Cambridge, 2006, pp. 234-267.

²³³ Экономическое положение Катара, ТАСС, БПИ N 60, 26.03.1981, с. 33.

պոնիան մեծապէս աջակցել է Կատարի Ռաս Լաֆան քաղաքում տեղակայված «Կատարզագ I» հանրավայրից հեղուկացված զազի տեղափոխման համար անհրաժեշտ գնացքների պատրաստման հարցում՝ տրամադրելով «Էքսպորտ-իմպորտ բանկ օֆ Զապան»-ի (ՃԷՔՍԻՄ) (Export-Import Bank of Japan (JEXIM))²⁴ կողմից 1,6 մլրդ դոլար և ճապոնական մյուս բանկերի կողմից 400 մլն դոլարի փոխառություններ: Ճապոնիան ֆինանսավորում է վերոնշյալ նախագծի 70%-ը:

Ճապոնական «Չիյոդա կորպորեյշն»-ն²⁵ ("Chiyoda Corporation") իր գործունեությունն է ծավալում Կատարում 1980-ականներից սկսած և 1994 թ. Ռաս Լաֆանի «Կատարզագ I» հանրավայրից հեղուկացված զազ է առարում Ճապոնիա: Առաջին տանկերը Կատարից Ճապոնիա մեկնեց 1996 թ. դեկտեմբերին: «Չիյոդա կորպորեյշն»-ը զարգացնում է նաև Ծնիդի անդամ Երկրների քիմիական ոլորտը՝ ստեղծելով գործարաններ և նավթարիմիական ընկերություններ, որոնք արոյունահանում են քիմիական պարարտանյութեր:

Ճապոնիայի և Օմանի միջև դիվանագիտական ու տևականական հարաբերությունների սկիզբը դրվեց 1972 թվականից: 1980-ականներից Ճապոնիան դարձավ Օմանի կարևորագույն գործընկերներից մեկը: Օմանի «Սուլթաններ» ընկերության նավթի առաջին վերամշակումն իրականացրեց 1980 թ. Ճապոնական «Միջուկ» ընկերությունը: Ճապոնական «Զապան պետրոլեում էքսպլորեյշն» (ՃԱՊԵՔՍ) ("Japan

* 1999 թ. Ճապոնիայի արտահանման և ներկրման բանկը վերանվանվեց «Զապան բանկ ֆոր ինքներեյշնալ կոռպորեյշն»-ի (ՃԲԻԿ) ("Japan Bank For International Cooperation" (JBIC)):

²⁴ «Չիյոդա կորպորեյշն»-ը ստեղծվել է 1948 թ. Ճապոնիայում՝ նավթի, բնական զազի և այլ ներզայի աղբյուրների հետազոտման և պատակով: Այս մասին տես՝ Chiyoda Corporation, <http://www.chiyoda-corp.com/en/index.html>

Petroleum Exploration" (JAPEX)) ընկերությունը մասնակցում է Օմանում նավթի և բնական գազի հետախուզական աշխատանքներին: 1990-ականների սկզբին ճապոնական «Միջութիշի», «Միջուի» և «Իտոչու» ("Itochu") ընկերությունները մասնակցեցին անզո-հոլանդական «Ռոյալ Դատչ շելլ»-ի, ֆրանսիական «Տոտալ»-ի ("Total") և պրոտուգալական «Փարտեքս»-ի ("Partex") հետ միասին Օմանի գազի հեղուկացման գործընթացին: 1990-ականների սկզբից ի վեր ճապոնիան Օմանի ամենախոշոր առևտրային գործընկերն է²³⁵.

Այսպիսով՝ և՝ Ճապոնիան, և՝ ԾՀՆ-ի անդամ երկրները շահագրգուված են երկկողմանի հարաբերությունների զարգացման հարցում, որը հիմնված է փոխահավետ համագործակցության վրա: ԾՀՆ-ի անդամ երկրներն արտահանում են նավթ և բնական գազ, որի դիմաց Ճապոնիան «Պաշտոնական զարգացման աջակցություն» (Official Development Assistance (ODA)) (ՊԶԱ) նախագծի շրջանակներում արդյունաբերական ոլորտների արդիականացման նպատակով տրամադրում է տեխնոլոգիաներ²³⁶: ՊԶԱ-ն «Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության» (ՏՀԶԿ) ծրագրերից է, որն օգնություն է տրամադրում զարգացող երկրներին: ՏՀԶԿ-ը միջազգային տնտեսական կազմակերպություն է, որը ստեղծվել է 1961 թ. և ներառում է իր մեջ 34 երկրներ: Այն «Եվրոպական տնտեսական համագործակցություն» (ԵՏՀ) կազմակերպության իրավահաջորդն է, որը ստեղծվել էր դեռևս 1948 թ. Մարշալի պլանի համաձայն՝ Երկրորդ աշխարհամարտից տուժած Եվրոպական երկրներին աջակցություն տրամադրելու նպատակով: Սակայն ժամանակի ընթացքում աջակցություն տրամադրվող

²³⁵ Kechichian J., Oman and the World, The Emergence of an Independent Foreign Policy, Santa Monica, 1995, p. 212.

²³⁶ Внешняя политика Японии: История и современность, Учебное пособие, М., 2008, с. 258.

Երկրների ցանկը զնալով ընդլայնվել է՝ ներառելով նաև ոչ-Եվրոպական երկրներ, որի արդյունքում 1961 թ. այդ կազմակերպությունը վերանվանվեց «Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության»²³⁷:

ՊԶԱ-ի նախագիծն իր մեջ ներառում է 3 տեսակի ծրագրեր՝ փոխառություն-աջակցություն, գրանտային օգնություն և տեխնոլոգիական աջակցություն: Աջակցության տեսակը որոշվում է հաշվի առնելով օգնություն ստացող երկրների եկամուտների մակարդակը. այսինքն՝ ըստ 1 մարդու համար հատկացվող համախառն ներքին արտադրանքի մակարդակի²³⁸: Այսպես՝ գրանտային աջակցությունը տրվում է այն պետություններին, որտեղ ՀՆԱ-ն 1 մարդու համար կազմում է 1.395 դոլարից քիչ. Փոխառական աջակցությունները տրվում են 2.895 դոլարից քիչ ՀՆԱ ունեցող պետություններին, իսկ տեխնոլոգիական աջակցություն տրվում է այն պետություններին, որոնց ՀՆԱ-ն բավական քարձը է ԾՃՆ-ի անդամ երկրները, ունենալով ՀՆԱ-ի քարձը ցուցանիշը. սակայն տեխնոլոգիական բույլ զարգացություն, ՊԶԱ-ի ծրագրի շրջանակներում ձապոնիայից ստանում են տեխնոլոգիական աջակցություն՝ ներկրելով նորամուծություններ (know-how), որը նպաստում է ԾՃՆ-ի արդյունաբերության զարգացմանը²³⁹: Հատկանշական է, որ այդ ծրագրը ձապոնիայի «Փափուկ ուժի» բաղարակնության իրականացման հիմնական գործիքներից մեկն է: Այդ է պատճառը, որ հետսառըպատերազմյան շրջանում ձապոնիան դարձավ ՊԶԱ-ի ծրագրի ամենամեծ դրույրը:

²³⁷ Kawai M., Takagi S., Japan's Official Development Assistance: Recent Issues and Future Directions, No. 97, July 2001, p. 2.

²³⁸ Japan's Economic Cooperation in the Middle East, http://www.mofa.go.jp/region/middle_e/relation/coop.html

²³⁹ Call for Early Launch of Negotiations for Japan-GCC Economic Partnership Agreement, <http://www.keidanren.or.jp/english/policy/2005/060.html>

Խորհրդի ստեղծումից հետո Ճապոնիան 1984 թ. կապեր հաստատեց ևան ԾՃ-ի քարտուղարության հետ: Տոկիոն պաշտպանում է համընդհանուր զարգացման, տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը խթանելու, Ծոնի խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու ուղղությամբ ԾՃ-ի քաղաքականությունը: 1986 թ. մարտին Տոկիոյում տեղի ունեցավ խորհրդաժողով Ճապոնիայի կառավարության ներկայացուցիչների և ԾՃ-ի քարտուղարության միջև, որտեղ ըննարկվեցին Ճապոնիայի և ԾՃ-ի անդամ երկրների միջև համագործակցության ոլորտները: Հատ ԾՃ-ի քարտուղարության առաջարկության՝ ճապոնական կողմը համաձայնվեց ձևավորել աշխատանքային թիմ՝ ԾՃ-ի տարածքում առնելու և ներդրումներ իրականացնելու համար:

Ճապոնական ապրանքների արտահանման քանակի տարեցտարի ավելացող աճը խթան հանդիսացավ, որպեսզի կողմերը ստեղծեն բարենաստ պայմաններ՝ երկկողմանի տնտեսական հարաբերությունների խորացման համար: Այսպես՝ 2006 թ. ապրիլին Ճապոնիայի վարչապետ Զունիշիրո Կոհձումիի և Սաուլյան Արաբիայի արքայազն Սուլթան Բին Աբդուլազիզ Ալ-Սաուդի միջև սկիզբ դրվեց Ճապոնիա-ԾՃ ազատ առնելու պայմանագրի ստորագրման վերաբերյալ բանակցություններին և արդեն սեպտեմբերին Ճապոնիայի և ԾՃ-ի միջև կնքվեց Ազատ առնելու գոտի ստեղծելու վերաբերյալ պայմանագիրը: Համաձայն այդ պայմանագրի՝ վերջ դրվեց ԾՃ-ի երկրներում ճապոնական ընկերությունների կրկնակի հարկման քաղաքականությանը²⁴⁰, ինչև ավելի բարենպաստ պայմաններ ստեղծեց երկու կողմերի միջև տնտեսական հարաբերությունների զարգացման համար:

²⁴⁰ Requests for the Japan-GCC Free Trade Agreement, Nippon Keidanren, 20.10.2009, <https://www.keidanren.or.jp/english/policy/2009/085.html>

Այսպիսով՝ Ծոցի տարածաշրջանը ճապոնիայի համար անփոխարինելի է մնում իր ռազմավարական դիրքի, նավթի բարձր որակի, շահագործման ցածր գների և տեղափոխման հարմարավետության առումով և այդ պատճառով է, որ ճապոնիան ԾՃ-ի անդամ երկրների հետ ունեցած քաղաքական և տնտեսական հարաբերություններին տալիս է մեծ կարևորություն:

2.4 ՆԱՎԹԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ՃԳՆԱԺԱՄԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՒ- ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔ: ԾՃ-Ի ԱՆԴԱՄ ԵՐԿՐՄՆԵՐԻ ՈՒ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՐԸ ՆԱՎԹԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԵՎ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՇՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Վերոշարադրվածում անդրադարձ է կատարվել Իրանի բարյան պատերազմի առաջացման պատճառներին, ինչպես նաև ԾՃ-ի ստեղծման համար վերջինիս խթանից զործու լինելու հանգամանքին: Ստորև ցանկանում ենք անդրադառնալ պատերազմի հետևանքով առաջացած նավթային ճգնաժամին, վերջինիս ազդեցությանն ինչպես ԾՃ-ի, այնպես էլ զարգացած կապիտալիստական երկրների տնտեսության վրա, դիտարկել ԾՃ-ի անդամ երկրների դիրքորոշումն Իրան-իրարյան պատերազմի հանդեպ, ինչպես նաև ճապոնիայի ներդրումը հակամարտության լուծման հարցում:

ԾՃ-ի հինգ երկրները՝ ԱՄԷ-ն, Բահրեյնը, Կատարը, Սաուդիան Արաբիան, Քուվեյթը, ինչպես նաև երկու պատերազմող պետությունները Իրանը և Իրաքը, ՕՊԵԿ-ի անդամներն են: 1970-ականների վերջերին ՕՊԵԿ-ն աստիճանաբար կարողացավ վերահսկողություն սահմանել տարածաշրջանում արդյունահանվող նավթի ավելի քան 80%-ի վրա, մինչդեռ 1974 թ. այն կազմում էր ընդամենը

57,7%-ը²⁴¹՝ դառնալով նավթի համաշխարհային շուկայում զերծ ձևավորման գլխավոր կենտրոնը²⁴²:

1980 թ. Իրանի և Իրաքի միջև սկիզբ առած հակամարտությունը բռնպատճեց այդ կազմակերպության միասնականությունը և սահմանափակեց հետագործությունը՝ միահամուտ ուժերով հակազդելու արևմտյան տերությունների փորձերին իրենց պայմաններն ՕՊԵԿ-ին թելադրելու հարցում:

Հատկանշական է, որ ՕՊԵԿ-ի անդամ երկրների և այլ նավթարդյունահանող պետությունների նավթային առաջարկի մեծացման, ինչպես նաև նավթ ներկրող երկրների այլ ընտրաներային էներգիայի օգտագործման և նավթային պաշարների պահուստային ֆոնդի առկայության պայմաններում, նավթային առաջարկը սկսեց գերազանցել պահանջարկից, ինչը, բնականարար, նպաստեց նավթի գների անկմանը²⁴³: Ամենամեծ նվաճումն այլընտրաներային էներգիայի օգտագործման ոլորտում պատկանում է Ճապոնիային: Բացի այդ նա կարողացավ մի շարք արդյունաբերությունների աշխատանքն ամբողջովին վերափոխել քարածուխով աշխատելու, ինչը նույնպես նպաստեց նավթից ունեցած կախվածության թուլացմանը²⁴⁴: Ինչ վերաբերում է նավթային պաշարների պահուստային ֆոնդին, ապա 1984 թ. դրությամբ ԱՄՆ-ի ֆեդերատիվ պահուստը կազմում էր 375 մլն բարել նավթ, իսկ Ճապոնիայինը՝ 82.7 մլն. բարել, որը կրավականացներ համա-

²⁴¹ The Relationship of Oil Companies and Foreign Governments, Washington, 1975, p. 240.

²⁴² Անդրեասյան Բ., Կազոկով Ա., ԽՀՎ. աշխ., էջ 18:

²⁴³ Ինդյուկյան Բ., ԽՀՎ. աշխ., էջ 42; "Middle East Economic Digest", London, 22.01.1981, p. 2.

²⁴⁴ Ինդյուկյան Բ., ԽՀՎ. աշխ., էջ 39:

պատասխանաբար 25 և 19 օր՝ երկրի նավթային պահանջարկն ապահովելու համար²⁴⁵:

Փաստորեն նավթ ներկրող երկրների նավթային պահանջարկի նվազման արդյունքում նավթային շուկայում նավթի ավելցուկ առաջացավ՝ նպաստելով նավթի գնի անկմանը: Ստեղծված իրադրությունը ստիպեց ՕՊԵԿ-ին վերանայել իր քաղաքականությունը՝ փորձելով վերահսկողություն սահմանել թե՝ վառելանյութի արդյունահանման քանակի, թե՝ նավթի գնի վրա: Նավթի արդյունահանման քանակի վերահսկողությունն ՕՊԵԿ-ը փորձեց իրականացնել յուրաքանչյուր անդամ պետության համար չափաբաժիններ սահմանելու միջոցով, որը թույլ կտար հավասարակշուրյուն մտցնել առաջարկի և պահանջարկի միջն՝ պահպանելով նավթի գնի կայունությունը²⁴⁶: Նավթի արդյունահանման քանակը կամ չափաբաժինները որոշվում եր տվյալ երկրում առկա նավթային պահանջարկի և նավթարդյունաբերության հեարագործությունները հաշվի առնելու միջոցով: Այսպես արդեն 1982 թ. մարտի 19-20-ը Վիեննայում անցկացվող ՕՊԵԿ-ի խորհրդաժողովի ժամանակ որոշվեց նավթի արդյունահանման քանակը նվազեցնել մինչև 18 մլն բարել 1 օրում, այսինքն՝ 1979 թ. համեմատ (31 մլն բարել 1 օրում) պակասեցնելով մոտ կիսու չափ²⁴⁷: Բացի այդ, ՕՊԵԿ-ը կրճատեց նավթի պաշտոնական գները 1 բարելի համար սահմանված 34 դոլարից իջեցնելով մինչև 29 դոլարի²⁴⁸: Ըստ սահմանված չափաբաժինների՝ Սաուդյան Արաբիան պարտավորվում էր արդյունահանել 4.77 մլն բարել, Քուվեյթը՝ 1.59 մլն բարել²⁴⁹.

²⁴⁵ Растущая напряженность в районе Персидского залива, ТАСС, БПИ N 51, 13.03.1984, с. 30.

²⁴⁶ Вокруг вопроса о нефти, ТАСС, Атлас N 15 (1292), 09.04.1984, с. 39.

²⁴⁷ "Fortune", N.Y., 21.07.1982.

²⁴⁸ Нефть и энергетика, ТАСС, БПИ N 15, 20.01.1984, с. 40.

²⁴⁹ Об экономическом положении Кувейта, ТАСС, БПИ N 41, 27.02.1984, с. 36.

Իրարք՝ 1.37 մլն բարեկ²⁵⁰, ԱՄԷ-ն՝ 1 մլն բարեկ²⁵¹. Կատարը՝ 300 հազար բարեկ նավք 1 օրում²⁵²: Սակայն ոչ բոլոր պետություններն էին համամիտ ՕՊԵԿ-ի ընդունած շափաբաժինների հետ: «Կատար Զեներալ Մոթորս Կորպորեյշն»-ի ("Qatar General Motors Corporation") տևորեն նշեց, որ իր երկրի համար սահմանած շափաբաժինը բավարար չէ երկրի գոյատևման համար և այդ պատճառով անհրաժեշտ է համարում ՕՊԵԿ-ի անդամներին խորհրդակցության հրավիրել՝ շափաբաժինները բարձրացնելու նպատակով²⁵³: Վենետուելան հայտարարեց, որ չի կարող պահպանել սահմանված 1,5 մլն բարեկ նավք արդյունահանելու իր շափաբաժինը և մտադիր է այն բարձրացնել 300 հազար բարեկով: Միևնույն ժամանակ Նիգերիան առաջարկեց, որպեսզի Սաումյան Արարիան նվազեցնի իր արդյունահանման քանակը՝ պատճառաբանելով, որ շափաբաժինները պետք է սահմանվեն ոչ թե նավթային պաշարների քանակի հիման վրա, այլ ըստ ՕՊԵԿ-ի անդամ երկրների քանակության թվարանակի, որի տվյալներով Սաումյան Արարիան իր 5 մլն քանակությամբ անհամե-

²⁵⁰ Սաումյան Արարիան և Թումեյքը պարտավորվեցին ապահովել Իրաքի շափաբաժինը՝ Իրաք-իրաքան պատերազմի արդյունքում ենարավոր խցընդուների առաջացման դեպքում: Այս մասին տե՛ս Գրիգորյան Վ., Новые тенденции в политике Иракской партии "Басс" в начале 80-х годов, Восток и современность, Научно-информационный бюллетень, 2 (36), М., 1985, с. 87.

²⁵¹ Cockburn P., Internal Situation in the United Arab Emirates, "Financial Times", London, 26.10.1982.

²⁵² Alsalem A., Sharma S., Trout M., Fairness Measures and Importance Weights for Allocating Quotas to OPEC Member Countries, The Energy Journal, Volume 18, No. 2, 1997, p. 4.

²⁵³ Катар: политико-экономический обзор, ТАСС, БПИ N 170, 30.08.1984, с. 46.

մատ զիջում է Նիգերիային և Ինդոնեզիային՝ համապատասխանաբար 80 մլն և 150 մլն բնակչությամբ²⁵⁴:

Հատկանշական է, որ չափաբաժինների սահմանումը չնպաստեց նավթի գների կանոնակարգմանը և չկասեցրեց ճգնաժամի խորացումը: Եվ ինդիրը ոչ միայն պարբերաբար ՕՊԵԿ-ի երկրների սահմանած նավթի արդյունահանման չափաբաժնի խախտման, այլև ՕՊԵԿ-ի անդամ շիանդիսացող նավթարդյունահանող երկրների անպատճախանառու մոլուցումն էր, որոնք լուրջ շրնդումնեցին նավթի գների անկման վտանգը և ՕՊԵԿ-ի նախազգուշացումները: Նրանք, ցանկանալով նվազեցնել համաշխարհային շուկայի կախվածությունն ՕՊԵԿ-ի ազդեցությունից, սկսեցին ակտիվորեն մշակել սեփական հանքավայրերը և բարձրացնել նավթի արդյունահանման քանակը՝ հասցնելով մինչև 4 մլն բարելի 1 օրում: Արդյունքում 1980-ականների կեսերին համաշխարհային շուկայում գոյացավ 1 օրում 10 մլն բարել նավթի ավելցուկ:

Ստեղծված իրավիճակից օգտվեց նաև ՇՀԽ-ի անդամ երկրներից Օմանը, որը, շմտնելով ոչ ՕՊԵԿ-ի և ոչ էլ ՕԱՊԵԿ-ի կազմի մեջ և բարեհաջող գնահատելով շահույթի ու եկամտի ավելացման տեսանկյունից ստեղծված իրավիճակը, նավթի արդյունահանումը հասցրեց մինչև 175 մլն բարելի 1 տարում, ինչպես նաև ավելացրեց հանքերի քանակը՝ 1985 թ. դրությամբ հասցնելով 370-ի, մինչդեռ 1980 թ.՝ ընդամենը 279-ն էր: Նման գործողությունների արդյունքում արդյունահանվող նավթի քանակը 1973 թ. մինչև 1983 թ. աճեց 35%-ով, որը կազմեց մոտ 23 մլն բարել 1 օրում²⁵⁵: Արդյունքում նավթի գնի անկումը դարձավ անկառավարելի, որն իր ազդեցությունն ունեցավ

²⁵⁴ Ibrahim Y., Attack on the Role of Saudi Arabia in OPEC, Wall Street Journal, N.Y., 21.07.1982, p. 35.

²⁵⁵ Нефть и Персидский залив, ТАСС, БПИ N 176, 07.09.1984, с. 24.

բոլոր նավթարդյունահանող երկրների տևատեսության վրա՝ սկիզբ դնելով նավթային երրորդ գնածամի առաջացմանը²⁵⁶:

Ճնածամից դուրս զայր փորձ ձեռնարկեց Սաուսան Արաբիան: 1985 թ. ապրիլին նա իր նավթի արդյունահանման քանակն իշեցրեց մինչև 1 օրում 2.35 մլն բարելի, սակայն Սաուսան Արաբիան չկարողացավ երկար պահել այդ ցուցանիշը և արդեն նույն թվականի աշխանը նավթի արդյունահանման քանակը հասավ մինչև 4.35 մլն բարելի, որը, ինընըստինըրյան, կրկին նպաստեց նավթի զնի անկմանը²⁵⁷:

Արդեն 1986 թ. ձմռանն ՕՊԵԿ-ի սահմանած չափաբաժինների խախտման արդյունքում արձանագրվեց նավթի զնի հերթական անկումը²⁵⁸, որի պատճառով 1986 թ. դեկտեմբերին ժննում հրավիրված ՕՊԵԿ-ի անդամ երկրների խորհրդաժողովի ժամանակ որոշվեց նավթի արդյունահանման քանակը նվազեցնել՝ իշեցնելով մինչև 15.8 մլն բարելի 1 օրում, իսկ նավթի գինը սահմանվեց 18 դոլար 1 բարելի համար²⁵⁹. որը 1987 թ. սկզբին ընկավ մինչև 10 դոլար 1 բարելի համար, ինչը նավթարդյունահանումը դարձնում էր ոչ օգտավետ²⁶⁰ (ընդունված չափաբաժինների և իրականում արդյունահանված քանակի տվյալները տե՛ս Նավթելված, Աղյուսակ 2):

Փաստորեն Սաուսան Արաբիայում նավթի արդյունահանումը (1980-1985 թթ.) կրճատվեց 3 անգամ, Քուվեյթում (1979-1985 թթ.)՝ 2.5 անգամ, ԱՄԷ-ում (1979-1984 թթ.)՝ 90%-ով, Կատարում (1979-1985 թթ.)՝ 66%-ով՝ լուրջ վեսա հասց-

²⁵⁶ "Petroleum Economist", London, 1986, N4, p. 6.

²⁵⁷ The Gulf Crisis: A Kuwaiti Perspective: An Interview with Hassan Al-Ebraheem, Journal of Palestine Studies, Volume 20, No. 2, Winter, 1991, p. 96.

²⁵⁸ "U.S. News and World Report", Washington, 14.04.1986.

²⁵⁹ "Middle East Economic Digest", London, 1986, N12, pp. 5-7.

²⁶⁰ Валькова Л., Աշուակ, աշխան, էջ 27:

նելով վերռնշյալ երկրների տևտեսությանը²⁶¹, բանի որ նավթային ճգնաժամի արդյունքում կրծատվեցին նավթարդյունահանող երկրների եկամուտները²⁶²: Այսպես՝ Սառույան Արարիայում 1981-1986 թթ. եկամուտը կրծատվեց՝ 110 մլրդ դոլարից մինչև 25 մլրդ դոլար՝ առաջացնելով երկրի պետական բյուջեում մեծ պակասուրդ, որի պատճառով սառույան կառավարությունը հարկադրված էր անցնել խնայողական բաղարականության, անզամ դիմեց օտարերկրյա վարկեր վերցնելուն:

Տատկանշական է, որ ի տարբերություն 1973 թ. ճգնաժամի, որի ժամանակ նավթ ներկրող երկրներն էին պայքարում վառելանյութ ձեռք բերելու համար, այժմ իրավիճակը ճիշտ հակառակն էր: 1985-1987 թթ. նավթային ճգնաժամի ընթացքում նավթարդյունահանող երկրները փևտրում էին «գնորդի», իրենց նավթը վաճառելու համար: Եվ խնդիրն իրականում այն չէր, որ նավթի գներն անկում էին ապրում, այլ ողջ մտահոգությունն այն էր, որ գները դուրս էին եկել նավթարդյունահանող երկրների վերահսկողությունից:

Առաջին անզամ զնապոյացման համակարգը չէր աշխատում: Գոյություն չուներ նույնիսկ ՕՊԵԿ-ի պաշտոնական զին նավթի համար: Այժմ նավթի զինը որոշվում էր ոչ թե ՕՊԵԿ-ի երկրների միջև լարված բանակցությունների, այլ բազմաթիվ գործարքների արդյունքում: ՕՊԵԿ-ը պատակուվել էր մի կողմից՝ Իրանի, Ալժիրի և Լիբիայի միջև, որոնք ցանկանում էին, որ ՕՊԵԿ-ն ընդունի նոր և ավելի ցածր չափարաժիններ և այդ ճանապարհով վերադարձնի նավթի զինը 29 դոլարի 1 բարելի համար, իսկ մյուս կողմից՝ Սառույան Արարիայի, Քուվեյթի և ԱՍԷ-ի, որոնք, ունենալով հսկայական

²⁶¹ Георгиев А., Озолинг В., Нефтяные монархии Аравии : Проблема развития, М., 1983, с. 216.

²⁶² Финансовое положение стран – экспортёров нефти, ТАСС, БИИ N 102, 26.05.1982, с. 31-33.

նավթային պաշարներ, ձգուում էին վերադարձնել «կորցրած» շուկան:

Ինչ որ առումով Իրան-իրարյան պատերազմը և նրա հետևանքով առաջացած ճգնաժամը ձեռնտու էր նավթ և բերկրող երկրներին: Չնայած գների հաճախակի տատանողականությունը հանգեցրեց արդյունաբերական զարգացած պետություններում (ԱՄՆ-ում, Արևմտյան Եվրոպայի երկրներում և Ճապոնիայում) անկանոն գնաճի առաջացմանը, սակայն վերջիններս կարողացան հաղթահարել և վերահելսկողություն սահմանել նավթի գների և վագեցման արդյունքում առաջացած գնաճի նկատմամբ²⁶³: Հատկանշական է, որ չնայած նավթային ճգնաժամին՝ 1987 թ. դրույյամբ Ճապոնիայի ՀՆԱ-ի կազմեց 371,1 տրիլիոն իլն (2,9 տրիլիոն դոլար) և զրանցվեց 5% տնտեսական աճ²⁶⁴:

Իրան-իրարյան պատերազմն ակնհայտորեն ձեռնտու էր նաև գերտերություններին ՕՊԵԿ-ի միջազգային դերը նավթային շուկայում խարիսխելու, ինչպես նաև տարածաշրջանում գերիշխանության ձգուող Իրանի և Իրաքի ներուժը քայլայիշ պատերազմական գործողություններում սպառելու տեսանկյունից, սակայն ոչ որ շահագրգուփած չէր պատերազմական գործողությունների ընդլայնման, ինչպես նաև չեզոք պետություններին ուազմական գործողությունների մեջ ներգրավելու հարցում²⁶⁵: Ենելով այդ նկատառումներից և պատերազմական գործողությունները կառավարելու ձգուումից՝ Վաշինգտոնը վարում էր երկակի քաղաքականություն²⁶⁶:

²⁶³ Иностранные печать о борьбе на мировом рынке нефти, ТАСС, БПИ N 249, 21.12.1984, с. 29-30.

²⁶⁴ Лебедева И., Японская экономика в условиях развертывания новой модели роста - 1988 г., Япония 1989г., Ежегодник, М., 1991, с. 3.

²⁶⁵ Война в Персидском заливе и неустойчивость границ, ТАСС, БПИ N 37, 23.02.1981, с. 35.

²⁶⁶ Машин В., Яковлев А., ԵՀԱ. աշխ. աշխ., եջ 99:

Զնայած ԱՄՆ-ի կոնգրեսը հատուկ արգելվ էր դրել Իրանին զենք վաճառելու վրա և խցել էր իր դիվանագիտական հարաբերությունները վերջինիս հետ, այն ամենենին շնանգարեց Պենտագոնին Խորայելի միջոցով Լիբանանում ամերիկյան պատասխների ազատ արձակման դիմաց Իրանին զենք վաճառել՝ զաղտնի գործարքի մեջ մտնելով վերջինիս հետ²⁶⁷: Հարկ է նշել, որ բացի պատասխների ազատազրումից, ԱՄՆ-ը Իրանին կոմունիզմի դեմ իրքն գործընկեր իր կողմը գրավելու և Իրանի զինված ուժերում արևմտամետ կողմնորշմամբ ավագ սպայակազմին արմատականների դեմ պայքարում օգտագործելու նպատակներ էր հետապնդում²⁶⁸:

Զենքի վաճառքը հակուրությանը հայտնի դարձավ արդեն 1986 թ. հոկտեմբերի 5-ին²⁶⁹, որը պատմազրության մեջ հայտնի է «Իրանգեյք» անվամբ: Համաձայն «Ֆայնենչ թրայն»-ի տեղեկատվության՝ ԱՄՆ-ը 1979-1983 թթ. ընթացքում Իրանին վաճառել է 2.4 մլրդ դոլարի զենք²⁷⁰: Գործարքի զաղտնազերծման արդյունքում ԱՄՆ-ի միջազգային հեղինակությունը խաթարվեց նաև Սերձավոր Արևելի դաշնակիցների Սաումյան Արարիայի, Հորդանանի և շափավոր

²⁶⁷ 1985 թ. օգոստոսի 30-ին ԱՄՆ-ը Իրանին վաճառեց BGM-71 TOW տիպի հակառակային հրթիռներ, իսկ 1985 թ. սեպտեմբերի 14-ին՝ նոյն տիպի ևս 408 հրթիռ: Այս մասին տես՝ Փակտ ՚Իրանգեյք՚, ՚Իзвестия՚, № 113 (21920), 23.04.1987.

²⁶⁸ Հարությունյան Ա. ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը Լիբանանի երկորդ քաղաքացիական պատերազմի և ճգնաժամի ընթացքում (1975-1991 թթ.), Երևան, 2008, էջ 188:

²⁶⁹ Sheikh A., Աշխ. աշխ., էջ 121: Միայն 1986 թ. դրույթամբ երրորդ պետությունների (Խորայել, Արևմտյան Եվրոպայի պետություններ, Հարավյային Կորեա) միջոցով Իրան է ներկրվել 60 մլն դոլար արժողությամբ ամերիկյան ռազմական սպառազինություններ: Այս մասին տես՝ ս. Բագդասար Ը. Էկономический аспект военной политики ИРИ, Специальный бюллетень, N 5, M., 1988, с. 63.

²⁷⁰ "Financial Times", London, 15.08.1987.

արարական երկրների շրջանում, որոնց մոտ մինչ այդ հարգանք էր ներշնչել Իրան-իրարյան պատերազմում ԱՄՆ-ի որդեգրած «չեղոք» բաղարականությունը²⁷¹:

Միանշանակ չէր նաև ԾՀՆ-ի անդամ երկրների դիրքորոշումն Իրան-իրարյան հակամարտության նկատմամբ: ԱՄԷ-ի Դուրայ և Շարօս Էմիրությունները, որտեղ մեծամասնությունը շիա բնակչությունն է, պատերազմի ողջ ընթացքում առնտրատնտեսական հարաբերություններ էին պահպանում Իրանի հետ: Մինչդեռ Արու Դարին ռազմական աջակցություն էր տրամադրում Իրաքին: Կատարը, որտեղ կենտրոնացած է իրանական հզոր համայնք, և Օմանը, երախտապարտ լինելով Իրանի աջակցությանը Դուֆարի ապստամբության ճնշման հարցում, աջակցում էին Իրանին հակամարտության ողջ ընթացքում: Բնչ վերաբերում է Սաուդյան Արաբիային, Քուվեյթին և Բահրեյնին, ապա նրանք ռազմական աջակցություն էին տրամադրում Իրաքին²⁷²: Ողջ պատերազմի ընթացքում ԾՀՆ-ի անդամ երկրների կողմից Իրաքին տրամադրվել է 23-30 մլրդ դոլարի օգնություն, որից մեծամասնությունը տրվել է առանց փոխհատուցման պայմանով²⁷³:

Իրանի և Իրաքի միջև պատերազմական գործողությունների երկարատև բնույթը, բարդացնում էր իրավիճակը կարևորագույն ծովային հաղորդակցության գոտում՝ Հորմուզի նեղուցում, որը Սոցի երկրներից նավք արտահանելու հիմնական ճանապարհն էր: Հատկապես խնդիրը սրվեց Իրանի կառավարության հայտարարությունից հետո, համաձայն որի՝ Իրանը սպառնում էր փակել Հորմուզի նեղուցը, եթե իր նավթային արդյունաբերությանը վտանգ սպառնա, որը

²⁷¹ "US News and World Report", Washington, 01.12.1986.

²⁷² Zahlan R., Աշվ. աշխ., էջ 154-155:

²⁷³ Գրիգորյան Յ., Աշվ. աշխ., էջ 88:

լուրջ սպառնալիք էր ինչպես Շոցով նավը արտահանող, այնպես էլ նավը ներկրող երկրների համար: Հորմուզի նեղուցով են առարվում ոչ միայն իրավայան նավթը, այլև Սառւյան Արարիայի, Քուվեյթի, Կատարի և ԱՄԷ-ի նավթային մատակարարումները, որոնք կազմում են ընդհանուր նավթային առարգումների 73%-ը²⁷⁴: օրական արտահանելով մոտ 7.3 մլն բարել նավթ²⁷⁵: Հորմուզի նեղուցով Միացյալ Նահանգներ արտահանվող նավթի քանակը կազմում է 7%, Արևմտյան Եվրոպայի երկրներ՝ 25% և Ճապոնիա՝ 55-60%²⁷⁶: Այսպիսով՝ ցանկացած խոշընդուռ կարող է նավթի արտահանման ընդհատման պատճառ դառնալ՝ մեծ վեաս հասցեներով մի շարք երկրների, մասնավորապես Ճապոնիայի տևականությանը: Թեև ԱՄՆ-ին և ՆԱՏՕ-ի անդամ երկրներին նույնպես անհանգստացնում էր Հորմուզի նեղուցի նավարկության անվտանգության հարցը, սակայն ի տարբերություն Ճապոնիայի՝ նրանք կարող են ներկրել նավը նաև միջերկրածովյան նավահանգիստներով, որոնք կապակցված են Շոջի տարածաշրջանի հետ նավթախողովակներով: Այդ պատճառով Ճապոնիան կապիտալիստական երկրներից ամենից շատն է հետաքրքրված Իրան-իրաքյան հակամարտության շուտափույթ ավարտով, որպեսզի կասեցվի հակամարտության տարածումը Շոջի ամբողջ տարածաշրջանով: Հորմուզի նեղուցի հևարավոր փակման հարցի շուրջ լրագրողներին իր մտավախությունն է արտահայտել Ճապոնիայի արտգործնախարար Շինտարո Աբեն՝ նշելով, որ հակամարտությունն Իրանի և Իրաքի միջև հղի է նավթային նոր ճգնաժամով²⁷⁷:

²⁷⁴ "Kyodo News Service", Tokyo, 18.05.1984.

²⁷⁵ Строительство новых нефтепроводов, ТАСС, Атлас N 27 (1409), 06.07.1984, с. 44.

²⁷⁶ "The Japan Times", Tokyo, 07.06.1987.

²⁷⁷ Багатуров А., նշվ. աշխ., էջ 133:

Շազմական գործողությունների արդյունքում ընդհատվեցին նաև հակամարտող պետություններում զանազան արդյունաբերական օբյեկտների կառուցումը: Առաջին հերթին վեսավեցին ճապոնական «Միջուի» խմբի ֆինանսական շահերը, որոնք Իրանում կառուցում էին Բենդեր-Խոմեյնու նավթարիմիական համալիր: Այդ պատճառով Տոկիոն շահագրրոված էր Սոցում պատերազմը շուտափույթ ավարտին հասցնելու հարցում:

1984 թ. Իրարի կողմից իրանյան նավթային օբյեկտների վրա հարձակման արդյունքում Հորմուզի նեղուցի շրջափակման վտանգ առաջացավ, որը ստիպեց ճապոնիայի կառավարությանը փոփոխություններ մտցնել իր քաղաքականության մեջ և ակտիվացնել իր միջազգային դերն աշխարհում²⁷⁸: առաջարկելով միջնորդական միջամտություն՝ հակամարտությանը շուտափույթ վերջ դնելու նպատակով²⁷⁹: Զարկ է նշել, որ ճապոնիայի միջնորդական առարկելության գաղափարը ծնվել է ոչ թե Տոկիոյում, այլ Բաղդադում ռազմական գործողությունները սկսելուց մի քանի ամիս անց: 1980 թ. հոկտեմբերին Իրարի բարձրագույն և միջնակարգ կրթության նախարարը Դ. Ս. Խալաֆը, ով պաշտոնական այցով գտնվում էր Տոկիոյում, փոխանցեց վարչապետ Սուլաւիկի Դգենկոյին Սահամ Հուսեյնի անձնական ուղերձը, որում իրարյան կողմը դիմում էր ճապոնական կառավարությանը՝ աջակցել կրակի դադարեցմանը և Իրանի հետ համաձայնագրի կերպանը: Այդ առաջարկը կրկնվեց նաև 1980 թ. դեկտեմբերին՝ Իրարի նավթի նախարար Արդու Քարիմի կողմից ճապոնիա կատարած այցի ժամանակ: Այս անգամ Բաղդադի ներկայացուցիչը ներկայացրեց հակամարտության կարգավորման ծրագիրը,

²⁷⁸ Ueki Y., Japan's UN Diplomacy: Sources of Passivism and Activism, Japan's Foreign Policy after Post - Cold War: Coping with Changes, N. Y., 1993, p. 354.

²⁷⁹ "The Japan Times", Tokyo, 02.07.1983.

որի մեջ Տոկիոյին շահագրգուելու համար առաջարկեց վերջինիս ներզրավվել յոթ խոշոր նախագծերի (ևալյարիմիական ընկերությունների, էլեկտրակայանների և ազրոարդյունաբերական համալիրների կառուցում) իրագործման մեջ: Այս հարցերի քննարկմանն էր նվիրված 1981 թ. հունվարին տեղի ունեցած տնտեսական համագործակցության շուրջ ճապոնա-իրարյան հանձնաժողովի խորհրդաժողովը: Արդեն 1981 թ. մարտին Ճապոնիան հայտարարեց իր հետաքոր միջնորդական առաքելության մասին²⁸⁰: Պատերազմը դադարեցնելու միջնորդական առաքելության առաջարկով հանդես եկան նաև մի շարք այլ պետություններ՝ Ամերիկա: Սակայն Իրանի կառավարության ժիտողական մոտեցումը հակամարտության գործընթացին որևիցե երրորդ կողմի մասնակցության վերաբերյալ²⁸¹ Ճապոնիային ստիպեց որոշակիորեն փոխել իր միջնորդական առաքելության գործելառմը՝ հայտնվելով լուսանցքային դերում²⁸²:

Իր միջնորդական առաքելության իրականացման համար Ճապոնիան սկսեց օգտագործել միջազգային կազմակերպությունների, մասնավորապես ՄԱԿ-ի բնմահարթակները՝ դրանով իսկ վստահություն ներշնչելով իր դիվանագիտության հանդեպ և նպաստելով տարածաշրջանում կայունության հաստատմանը²⁸³: Ելույթ ունենալով 1983 թ. սեպտեմբերի 28-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեյում՝ Ճապոնիայի արտգործնախարար Շ. Արեն հայտարարեց. «Մեր

²⁸⁰ 日本經濟(「日本の国際化」、Ճապոնիայի տնտեսություն), Tokyo, 03.02.1981.

²⁸¹ Chiba K., Japan and the Middle East in the 1970s and Early 1980s: A Japanese Diplomat's View, London, 1993, pp. 144-154.

²⁸² Reich B., Cutler C., Japan, The Powers in the Middle East: The Ultimate Strategic Arena, N. Y., 1987, pp. 301-302.

²⁸³ Chubin S., The Middle East Factor in Alliance Politics, Japan and the Middle East in Alliance Politics, Washington D.C., 1986, pp. 22-23.

ջանքեր չենք խնայի գարզացնելու ՍԱԿ-ի հետ մեր համագործակցությունը (Ճապոնիայի սահմանադրությամբ սահմանված շրջանակներում)՝ Իրակի և Իրաքի հակամարտությունը խաղաղ միջոցներով կարգավորելու համար»²⁸⁴:

Նյու Յորքում ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 39-րդ խորհրդաժողովի ժամանակ՝ 1984 թ. սեպտեմբերին, Ճապոնիայի արտգործնախարարը նշեց, որ քիմիական գենքի օգտագործման արգելումը և Սոցում անվտանգ նավազեացությունը շատ կարևոր էն Իրան-իրաքյան հակամարտությունը չարելու համար²⁸⁵: Իսկ արդեն Ճապոնիայի Ազգային ժողովի 104-րդ նստաշրջանի ժամանակ՝ 1986 թ. հունվարի 27-ին, Շ. Աբեն նշեց, «Պետք է կառուցդական մքնուրուտ ստեղծել խաղաղ ճանապարհով խնդրին լուծում տալու նպատակով»²⁸⁶:

1981-1987 թթ. պատերազմական գործողությունների արդյունքում Հորմուզի նեղուցում վնասվեցին ավելի քան 330 բաղարացիական, զիսավորապես երրորդ պետությունների նավթալցունային նավերը: Բացի այդ, իրանյան իշխանությունները վերազնեման նպատակով հաճախակի կանգնեցնում էին արարական երկրներ ուղևորվող «չեզոք» պետությունների նավերը՝ փորձելով խոչընդոտել հնարավոր սպառազինությունների առարումն Իրաք: Միայն 1987 թ. առաջին կեսին զրանցվեց Իրանի ռազմական ներկայացուցիչների կողմից Քուվեյթ ուղևորվող ճապոնական նավերի գենման 5 միջադեպ: Այս ամենը լուրջ անհանգստություն առաջացրեց Տոկիոյում²⁸⁷:

Իրավիճակը տարածաշրջանում ավելի բարդացավ Սոցում ամերիկյան ռազմածովային բազա տեղակայելու վերա-

²⁸⁴ "The Japan Times", Tokyo, 30.09.1983.

²⁸⁵ Japan, The Ministry of Foreign Affairs, The Information Bulletin, 18.10.1984, p. 131.

²⁸⁶ Japan, The Ministry of Foreign Affairs, The Diplomatic Bluebook 1986, Tokyo, 1986, p. 137.

²⁸⁷ Εορατύρος Α., Աշվ. աշխ., էջ 138:

բերյալ ԱՄՆ-ի վարչակարգի հայտարարությունից հետո²⁸⁸: Ավելին՝ Վաշինգտոնը կոչ էր անում իր դաշնակիցներին, այդ բվում ճապոնիային, միանալ ու զամական գործողություններին²⁸⁹: Սակայն Տոկիոն դեմ էր իր երկրի ու զամական ներկայությանը Ծոցում՝ պատճառաբանելով, որ այն հակասում է երկրի «խաղաղ» սահմանադրության դրսյթներին²⁹⁰: Այդ մասին պաշտոնապես հայտարարվեց 1987 թ. մայիսի 30-ին Ճապոնիայի արտաքին գործերի նախարարությունում կազմակերպված ճեպագրույցի ընթացքում, որի ժամանակ նշվեց, որ Ճապոնիայի կառավարությունը մտադիր չէ ուղարկել որևէ նաև Հորմուգի նեղուց, բացառությամբ նավթային տանկերների՝ ընդգծելով, որ ծագող արևի երկիրը կարող է մասնակցություն ունենալ հակամարտության կարգավորման գործընթացին բացառապես խաղաղ միջոցներով²⁹¹: Ճապոնիայի վարչապետ Յ. Նակասոնեն 1987 թ. հունիսին Վենետիկում «Թոք երկրների» հերթական խորհրդակցության ավարտից հետո մամլո ասուլիսի ժամանակ հաստատեց իր երկրի դիրքորոշումը վերոնշյալ հարցի շուրջ՝ հավելելով, որ Տոկիոյի ֆինանսատնտեսական աջակցությունն ավելի մեծ ներդրում կլինի տարածաշրջանում ստեղծված խնդրի լուծման հարցում, քանի որ այն կօգնի երկու երկրներին արագորեն վերականգնել պատերազմական գործողությունների արդյունքում բայրայված տևականությունը²⁹²: Այսպես՝ Ճապոնիան տրամադրեց Իրաքին ավելի քան 2 մլրդ դոլարի օգնություն՝ երկրում

²⁸⁸ Zahlan R., Աշվ. աշխ., էջ 156:

²⁸⁹ 日本經濟(Նիփոն կեհձայի ճապոնիայի տևականություն), Tokyo, 27.05.1987.

²⁹⁰ "The Japan Times", Tokyo, 20.05.1987.

²⁹¹ "The Japan Times", Tokyo, 07.06.1987.

²⁹² Ueki Y., Աշվ. աշխ., էջ 355:

ստեղծված տևտեսական ծանր վիճակը հաղթահարելու համար²⁹³:

Այսպիսով՝ Ճապոնիայի կառավարությունը, առաջնորդվելով «խաղաղ» սահմանադրության սկզբունքներով և ցանկանալով պահպանել իր կապերը նավթարդյունահանող երկրների հետ, նախընտրեց շաջակցել իր դաշնակցին ռազմական միջամտության իրականացման հարցում, որի պատճառով ԱՄՆ-ի նախագահ Ռ. Ռեյգանը 1987 թ. մայիսին մտցրեց 100% տուրք (մոտ 300 միլ դրամ) Միացյալ Նահանգներ ներկրվող ճապոնական էլեկտրական ապրանքների վրա²⁹⁴: Սակայն դա չկանգնեցրեց Ճապոնիային շարունակելու իր գործունեությունը՝ Իրան-իրարյան հակամարտությանը խաղաղ ճանապարհով լուծում տալու ուղղությամբ: Դեռ 1987 թ. հունվարին, դառնալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի (ԱԽ) ոչ մշտական անդամ, Ճապոնիան ունեցավ իր ներդրումը ՄԱԿ-ի շրջանակներում Իրան-իրարյան ռազմական հետախուզական խոսք (ԻԻՌՀՆ) ստեղծելու գործընթացում, որի հիմնական գործառույթն էր երկու երկրների միջև կրակի դադարեցման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը²⁹⁵: Արդեն 1987 թ. հուլիսի 20-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն միաձայն ընդունեց N 598-րդ բանաձեռը՝ երկու պատերազմող պետությունների միջև կրակի դադարեցման վերաբերյալ, իսկ 1988 թ. օգոստոսի 20-ին Իրանի և Իրաքի միջև կերպեց գինադադար:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Իրան-իրարյան պատերազմը, որը իրահրվեց գերտերությունների համաձայնությամբ, նպատակ ուներ բռնացնել ոչ միայն Իրանի և Իրաքի

²⁹³ Шариков У., Персидский залив: обострение политической и военной ситуации и международных отношений в конце XX - начале XXI вв., М., 2010, с. 49.

²⁹⁴ Вербицкий С., Новые тенденции в новой политике Японии: Япония 1987, Ежегодник, М., 1987, с. 55-56.

²⁹⁵ Ueki Y., Աշխ. աշխ., եջ 355:

դիրքերը տարածաշրջանում, այլև խարիսկել ՕՊԵԿ-ի դիրքերը միջազգային նավթային շուկայում, ստեղծեց նախադրյալներ նավթային երրորդ ճգնաժամի առաջացման համար, որն ունեցավ իր բացասական ազդեցությունը նավթարդյունահանող երկրների, մասնավորապես ԾՁՆ-ի անդամ երկրների տընտեսության վրա: Թեև կապիտալիստական երկրների, այդ թվում Ճապոնիայի տնտեսությանը մեծ վնասներ չեր հասցել նավթային երրորդ ճգնաժամի ընթացքում, սակայն Իրանի իրարյան հակամարտության հետագա ընդլայնումը կարող էր լուրջ ճգնաժամերի պատճառ դառնալ, որոնցից հնարավոր եղավ խուսափել միջազգային հանրության, այդ թվում Ճապոնիայի դիվանագիտական ջանքերի շնորհիվ:

2.5 ԾՁՆ-Ի ԱՆԴԱՄ ԵՐԿՐՈՒԵՐԻ ՈՒ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ ԻՐԱԲԻ ԿՈՂՄԻՑ ՔՈՒՎԵՅԹԻ ՀԱՆԴԵՊ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՔՍԻԱՅԻ ՇՈՒՐԶ

1980-1988 թթ. Իրան-իրարյան պատերազմից Իրաքը դուրս եկավ մեծ կորուստներով՝ թուլացած տնտեսությամբ և ֆինանսական մեծ պարտավորություններով: Իրաքի պատերազմական ծախսերը կազմում էին 100 մլրդ. իսկ արտաքին պարտքը՝ 60 մլրդ դոլար: Երկրում ստեղծված տնտեսական ճգնաժամի մեջ Իրաքը մեղադրեց Քուվեյթին, Սաուսան Արաբիային և արաբական մյուս երկրներին:

1989 թ. փետրվարի 16-ին Իրաքը նախաձեռնեց տարածաշրջանում նոր խմբավորման՝ Արաբական համագործակցության խորհրդի (ԱՀԽ) ստեղծումը, որի կազմի մեջ մտան Հորդանանը, Եզիդականը և Եմենի Արաբական Հանրապետությունը²⁶: Այս նորաստեղծ կազմակերպությունը միտում ուներ

²⁶ Хартия о создании Совета Арабского Сотрудничества, <http://www.worldislamlaw.ru/archives/179>

դառնալու հակակշիռ ուժ ԾՃ-ի նկատմամբ, ինչպես նաև թույլ չուար Սիրիայի դիրքերի ուժեղացմանը տարածաշրջանում²⁹⁷: Փաստորեն ակնհայտ էր, որ Իրաքն ամեն կերպ փորձում էր վերականգնել իր դիրքերը Ծոցում: Սակայն կազմակերպությունը չունեցավ երկար կյանք, քանի որ այն փլուզվեց Իրաքի կողմից Քուվեյթի բռնակցումից հետո²⁹⁸:

Իրաքի ազրեսիան Քուվեյթի նկատմամբ ցեցեց արաբական երկրներին և աննախընթաց բացասական արձագանք գուավ ամբողջ աշխարհում: Քուվեյթի բռնակցման նույն օրը՝ օգոստոսի 2-ին, գումարվեց ՄԱԿ-ի ԱԽ-ի արտահերթ նիստ, որն ընդունեց N 660-րդ բանաձեռն, որով խստիվ դատապարտվում էր Իրաքի ազրեսիան և Քուվեյթի բռնակցումը: Անվտանգության խորհուրդը պահանջեց Իրաքից. «Անհապաղ և առանց որևէ պայմանների իր գորքերը հետ քաշել դեպի այն սահմանը, որը նրանք գրադաւում էին մինչ 1990 թ. օգոստոս ամիսը, վերջ տալ Քուվեյթի բռնակցմանը և վերականգնել Քուվեյթի ինքնիշխանությունը, անկախությունը և տարածքային ամբողջականությունը»:

1990 թ. օգոստոսի 3-ին կայացավ ԱՊԼ-ի անդամ երկրների արտգործնախարարների հանդիպումը, որի ժամանակ դատապարտվեց Քուվեյթի բռնակցումը և պահանջվեց վերականգնել վերջինիս ինքնիշխանությունը²⁹⁹: Վերոնշյալ որոշմանը կողմ քվեարկեցին 14-ը, դեմ՝ 1-ը, ձեռնպահ մնացին 5-ը, իսկ մեկն էլ քվեարկության ժամանակ հեռացավ: Ինչպես տեսնում ենք, Իրաքին դատապարտող որոշումը միաձայն չէր ընդունվել: Արաբական մի շարք պետություններ՝ Սիրիան, Եգիպտոսը, Սարոկիոն շահագրգության վերը

²⁹⁷ Щеников В., Совет Арабского Сотрудничества, ТАСС, ВПИ N 139, 19.07.1989, с. 35.

²⁹⁸ Гусаров В., Арабская интеграция: Робкая надежда или твердый путь? Ближний Восток и современность, Выпуск Третий, М., 1997, с. 27.

²⁹⁹ "Ас-Сияса ад-даулия", № 104, апрель, 1991 г., с. 43-51.

դեել այս «Եղբայրասպան» պատերազմին, չնայած գունվեցին որոշ արաբական երկրներ, ինչպես Եւենը, Հորդանանը, Սուդանը, որոնք չդատապարտեցին Իրաքի ազրեսիվ գործողությունները Քուվեյթի նկատմամբ³⁰⁰: Կրկին անգամ ի հայտ եկավ արաբական երկրների ոչ միահամուտ լինելու հանգամանքը, այս էլ մի այնպիսի հարցում, որպիսին արաբական պետության անկախության և տարածքային ամբողջականության պահպանման հարցն էր³⁰¹: Արաբները կանգնել էին նոր փաստի առջև և հարցականի տակ էին դրվել համաարարական բոլոր կարգախոսները, որոնք տասնյակ տարիներ արաբներին միավորում էին: Խըսին Իրաքի հարձակումը Քուվեյթի վրա ցուցադրեց ոչ միայն լուրջ հակասությունների առկայությունն արաբական աշխարհում, այլև համաարաբական իդեալները նյութական շահի համար զոհաբերելու պատրաստակամությունը:

Քուվեյթի բնազավթումից հետո Իրաքը ԾՃ-ի մյուս անդամ երկրներին դիտարկում էր որպես հաջորդ հարձակման թիրախ: Հետևաբար Իրաքի միջազգային և տարածաշրջանային ակտիվությունը չէին կարող անպատճախան մնալ ԾՃ-ի անդամ երկրների կողմից³⁰²: Արդեն 1990 թ. օգոստոսի 7-ին Սաուդյան Արաբիայում տեղի ունեցավ ԾՃ-ի Նախարարական խորհրդի նիստ, որի ժամանակ դատապարտվեց Քուվեյթի բնակցումը և Իրաքից պահանջվեց առանց նախապայմանների դուրս բերել իր զորքերը Քուվեյթի տարածքից: Նույն օրը Սաուդյան Արաբիան փակեց իրաքյան նավթամուղը, որև

³⁰⁰ "New York Times", 26.10.1990.

³⁰¹ Հովհաննեսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և խըսիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր IV, էջ 655:

³⁰² Аль-Амри Саид Салман, Роль Саудовской Аравии в ходе кризиса в Персидском заливе (1990-1991гг.), Востоковедный сборник, М., 2001, с. 202.

անցնում էր իր տարածքով՝ ի կատար ածելով ՄԱԿ-ի ԱԽ-ի տևտեսական շրջափակման վերաբերյալ որոշումը³⁰³:

Իրարին դա ևս չսթափեցրեց, և ևա դիմեց հաջորդ քայլին: Իրաքը պաշտոնապես բռնակցեց Քուվեյթին հայտարարելով նրան իր 19-րդ նահանգը և վերանվանելով «Ալ-Սադամիյա» ի պատիվ Իրարի նախագահ մարշալ Սադամ Հուսեյնի: Ավելին՝ Իրաքը փորձեց իր ազրեսիվ քաղաքականությունն ուղղորդել ևան տարածաշրջանի արաբական մյուս երկրների նկատմամբ՝ այդ նպատակով օգոստոսի 9-ին կենտրոնացնելով իրարյան զորքերը Սաուդյան Արաբիայի սահմանագծում³⁰⁴: Քաղաքայի հետաքոր ուազմական հարձակումը կանխելու նպատակով ձևավորվեց միջազգային կուալիֆիա, որի մեջ մտան 30-ից ավելի երկրներ, այդ թվում Ճապոնիան³⁰⁵: Այն զիսավորեց ԱՄՆ-ը, որն իր զորքերը կենտրոնացրեց Սաուդյան Արաբիայի Արևելյան նահանգում Քուվեյթի և Իրարի սահմանների մոտ³⁰⁶. ՄՃԽ-ի մյուս անդամ երկրները նույնպես պատրաստակամություն հայտնեցին ընդունելու օտարերկրյա ուժերի ներկայությունն իրենց տարածքում և կոչ արեցին արաբական երկրներին միավորվել ընդդեմ իրարյան վտանգի: Այսպէս 1990 թ. օգոստոսի 19-ին Բահրեյնը և ԱՄԷ-ն քույլ տվեցին ԱՄՆ-ին զորքերը տեղակայել իրենց տարածքում³⁰⁷:

Միջազգային հակությունը սեպտեմբերի վերջին զանազան շանքեր կիրառեց խնդրին խաղաղ ճանապարհով լուծում

³⁰³ "Աս-Սայսա ադ-Ճաւլիք", № 104, ապր. 1991 թ., ս. 43-51.

³⁰⁴ The Gulf Crisis and Japan's Foreign Policy, <http://www.mofa.go.jp/policy/other/bluebook/1991/1991-2-1.htm>

³⁰⁵ Cheyland W., A History of the Modern Middle East, p. 161; Khadduri M., Ghareeb E., War in the Gulf (1990-1991), The Iraq-Kuwait Conflict and Its Implications, N. Y., 1997, p. 169-179.

³⁰⁶ Саудовское информационное агентство "ВАС", Каир, 11.08.1990.

³⁰⁷ Hassan Hamad Al-Alkim, The GCC States in an Unstable World, Foreign Policy Dilemma of Small States, L., 1994, p. 131.

տալու համար: Այսպես՝ Ֆրանսիայի նախագահ Ֆ. Միթերանը և ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշ ավագը ՍԱԿ-ում տեղի ունեցած էլույթների ժամանակ կոչ էին անում Իրաքին դուրս բերել զորքերը Քուվեյթի տարածքից: Արաբական պետությունները, մասնավորապես Ալժիրը և Սարոկոն, իրենց սեփական ջանքերն էին գործադրում խնդրին խաղաղ լուծում տալու ուղղությամբ³⁰⁸:

Մերձավոր Արևելքում խաղաղության պահպանման և խնդրի շուտափույթ լուծման ջատագովն էր նաև Ճապոնիան, որը ոչ միայն շահագրգուված էր Տոկիոյի նավթային ներկրումների անխափան հոսքի, այլև Քուվեյթում և Իրաքում օտարերկրացիների հետ միասին պատասխող վերցված ճապոնացի քաղաքացիների կյանքի անվտանգության հարցում³⁰⁹: Ճապոնացի պատասխների թիվը, որոնց մեջ կային նաև դեսպանատան աշխատակիցներ, հասնում էր մոտ 500-ի, որոնցից 245-ը գտնվում էին Քուվեյթում, իսկ 214-ը՝ Իրաքում: Տոկիոն և միջազգային հակըռությունը ջանքեր չէին խնայում հարցին շուտափույթ լուծում տալու համար, որի արդյունքում հաջողվեց 1990 թ. սեպտեմբերին ազատ արձակել պատասխության մեջ գտնվող կանանց և երեխաներին, իսկ մյուս պատասխների ազատ արձակվեցին արդեն 1990 թ. դեկտեմբերի 6-ին³¹⁰.

Իրաքի հետագա ազրեսիան կանխելու և Քուվեյթի անկախությունը վերականգնելու նպատակով Ճապոնիայի արտգործնախարար Տարո Նակայաման և վարչապետ Տոսիկի Կահֆուն օգոստոս և հոկտեմբեր ամիսներին այցելեցին մերձավորարևելյան Երկրներ Սաուդյան Արաբիա, Օման, Հորդանան, Եգիպտոս, Թուրքիա ու Սիրիա, և խորհրդակցեցին տարածաշրջանի երկրների դեկավարության հետ՝ խնդրին լու-

³⁰⁸ Մելկումյան Ե., Խորհրդակցության պատմություն, Մ., 2011, ս. 140.

³⁰⁹ The Hostage Problem, Diplomatic Bluebook, Tokyo, 1991, p. 58.

³¹⁰ Ibrahim L., The Gulf Crisis: Background and Consequences, Center for Contemporary Arab Studies, Washington, 1992, p. 330.

ծում տալու նպատակով³¹¹: Ճապոնիան նաև անմիջական բանակցությունների մեջ մտավ Իրաքի հետ: Ճապոնիայի արտգործնախարարի տեղակալ Հիսասի Օվադան դեկտեմբերին ժննում հանդիպեց Իրաքի նախագահ Սադամ Չուսեյին խորհրդականների հետ, այսուհետև ճապոնիայի վարչապետ Տ. Կահֆուն նամակ ուղարկեց Իրաքի նախագահ Շուսեյին՝ կրկնակի անգամ խնդրելով դուրս բերել զորքերը Քուվեյթի տարածքից և լուծել խնդիրը խաղաղ ճանապարհով: Զնայած բոլոր այս ջանքերին՝ Իրաքը շիամաձայնվեց ընդունել ՍԱԿ-ի ԱԽ-ի բանաձեռքը:

1990 թ. նոյեմբերի 28-ին ՍԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց N 678-րդ բանաձեռք, որը սկզբունքային նշանակություն ունեցավ Իրաքի դեմ պատերազմական գործողություններ սկսելու առումով³¹²: Պատերազմական գործողությունները, որոնք ստացան «Փռքորիկ անապատում» անվանումը, սկսվեցին 1991 թ. հունվարի 16-ին: Ռազմական գործողության զիսավոր հարվածն իրականացվում էր Սաուդյան Արաբիայի տարածքից³¹³: Պատերազմական գործողությունների ընթացքում 1991 թ. հունվարի 29-ին իրարյան գորքերը ոմքակոծեցին Քուվեյթ-սաուդյան սահմանագծում գտնվող «Խաֆջի» նավթահանքը³¹⁴, արդյունահանման ժամանակավոր ընդհատման պատճառ դառնալով, ինչը բավական մեծ վեաս հասցեց ճապոնիայի տեստեսությանը, քանի որ վերոնշյալ նավթահանքը շատ կարևոր էր Քուվեյթից նավթ ներկրելու տեսանկյունից:

³¹¹ The Gulf Crisis and Japan's Foreign Policy, Diplomatic Bluebook, Tokyo, 1991, p. 38.

³¹² Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր IV, էջ 657:

³¹³ Նույն տեղում, էջ 377:

³¹⁴ Clevenger D., Battle of Khafji, Air Power Effectiveness in the Desert, Volume 1, N.Y., 1996, p. 4.

Փետրվարի 24-ին ավարտվեց պատերազմի առաջին՝ օդային գործողությունների փուլը, և սկսվեց երկրորդ՝ ցամաքային գործողությունների փուլը: Այդ օրվանից գործողությունները ստացան «Անապատի պաշտպանություն» ծածկանունը: Ցամաքային պատերազմը տևեց ընդամենը 100 ժամ և ավարտվեց 1991 թ. փետրվարի 28-ին: Իրարի պարտությունը կատարյալ էր, և Սահման Հուսեյնը հայտարարեց, որ պատրաստ է ընդունել ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշմամբ սահմանված հաշտության պայմանները: Արդյունքում իրարյան գորքերը դուրս բերվեցին Քուվեյթից և վերականգնվեց Քուվեյթի ինքնիշխանությունը:

Թեև Ճապոնիայի կառավարությունն աևմիջական մասնակցություն չունեցավ Իրարի դեմ բազմազգ ուժերի կողմից իրականացվող ռազմական գործողություններին, երկրում գործող «խաղաղ» սահմանադրության սկզբունքներից ենելով, այսուամենայնիվ, իր տրամադրած ֆինանսական աջակցության շնորհիվ արդեն 1993 թ. դրությամբ լիովին վերականգնվեց ինչպես «Խաֆջի» նավթահանքը, այնպես էլ նախապատերազմյան շրջանում արձանագրված նավթային ներկարումների քանակը³¹⁵: Ավելին՝ 1991-1993 թթ. ընթացքում Ճապոնիան Քուվեյթին տրամադրեց 468.8 մլն դոլարի փոխառություն և 1.1 մլն դոլարի դրամաշնորհ³¹⁶: Մետեսական հասցված վեասների փոխհատուցման և ևս 13 մլրդ դոլարի օգնություն՝ Ծոցի ականագերծման նպատակով³¹⁷:

³¹⁵ Исаев В., Филоник А., Кувейт: контуры экономических перемен (опыт развития в условиях перехода от избытка к относительному дефициту капиталов), նշվ. աշխ., էջ 60:

³¹⁶ Ozcelik S., The Japanese Foreign Policy of the Middle East between 1904-1998: Resource, Trade and Aid Diplomacy, Humanity and Social Sciences Journal, 2008, p. 140.

³¹⁷ Japan's Response to the Post-Gulf Crisis Problems, Diplomatic Bluebook, Tokyo, 1991, p. 55-56.

Իրարի ազրեսիան և Քուվեյթի բռնակցումն ունեցան նաև շատ ծանր սոցիալ-տնտեսական հետևանքներ: Պատերազմը կուալիֆիայի վրա արժեցավ 82 մլրդ դոլար, որից Քուվեյթի բաժինը կազմեց 22 մլրդ դոլար: Համեմատելու համար նշենք, որ ԱՄՆ-ի բաժինը կազմում էր 18 մլրդ, իսկ Ճապոնիայինը՝ 13 մլրդ դոլար²¹⁸.

Այսայսով՝ Քուվեյթի բռնակցումն Իրարի կողմից մեծ պատուհաս էր ոչ միայն արաբական աշխարհի, այլև ողջ միջազգային հանրության համար: Վտանգի տակ էր դրվել ոչ միայն Քուվեյթի ինքնիշխանության, այլև նավթային ներկայումների անվտանգության հարցը: Ինչ վերաբերում է Ծճնի երկրներին, ապա Ծոցի պատերազմը նախ և առաջ ցույց տվեց տարածաշրջանային խնդիրները միայնակ լուծելու անկարողությունը, և ի հայտ եկավ տարածաշրջանային քաղաքականության վերանայման անհրաժեշտությունը: Վերոնշյալ պատերազմը ստիպեց նաև Ճապոնիային վերանայել իր արտաքին քաղաքականությունը: Թեև առաջին հայացքից թվում էր, թե Ճապոնիայի միջնորդական քաղաքականությունը, ինչպես նաև Ֆինանսական աջակցությունը պատերազմի ընթացքում պետք է արժանանար դրվատանքի և երախտագիտության թե՛ միջազգային հանրության, թե՛ Քուվեյթի կառավարության կողմից, սակայն ինչպես ցույց տվեց հետագա ընթացքը, այն ունեցավ հակառակ արձագանք:

²¹⁸ Հովհաննեսիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր IV, էջ 663:

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՃԱՊՈՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՏՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՁԽ-Ի ԱՌԴԱՄ ԵՐԿՐՈԵՐԻ ՀԵՏ
ՀԵՏՍԱՈԾՊԱՏԵՐԱԶՍՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
(1991-2011թթ.)**

**3.1 ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՑԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԻ
ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ՀԵՏՍԱՈԾՊԱՏԵՐԱԶՍՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
(1991-2011 թթ.)**

Սառը պատերազմի ընթացքում ձապոնիան, առաջնորդվելով պացիֆիզմի գաղափարախոսությամբ, համոզված էր, որ «ինչ էլ պատահի աշխարհում, այն լինելու է հրդեհ գետի դիմացի ափում» և անմիջականորեն չի առնչվելու ձապոնիայի հետ³¹⁹: Սառը պատերազմի տարիներին ձապոնիան վարում էր բավական պասիվ արտաքին քաղաքականություն, քանի որ ձապոնիա - ԱՄՆ անվտանգության համաձայնագիրը երաշխավորում էր ձապոնիայի անվտանգությունը ցանկացած երկրի կողմից միջուկային հարձակումների դեպքում՝ հանդիսանալով «միջուկային անձրևանց»³²⁰: Այդ տարիներին կարևորագույն խնդիրը ձապոնիայի համար հանդիսանում էր դաշնակցային հարաբերությունների պահպանումն ԱՄՆ-ի հետ և նավթարդյունահանող արարական երկրների հետ հարաբերությունների ամրապնդումը, ինչը վերջինս փորձում

³¹⁹ Jameson S., Japan Confronting an Uncertain Future, Asian Perspective, A Journal of Regional and International Affairs, Volume 21, No. 1, Spring-Summer 1997, Seoul, p. 119.

³²⁰ Նույն տեղում, էջ 120:

Եր իրականացնել դրամական փոխհատուցումների և տնտեսական փոխհամագործակցության միջոցով³²¹:

Սառը պատերազմի ավարտմամբ փոխվեց ողջ միջազգային-քաղաքական մքնուրութը, որն իր արտացոլումը գտավ նաև Ճապոնիայի մերձավորարենեյան քաղաքականության նոր մոտեցումների ձևավորման և ռազմաքաղաքական դերի ակտիվացման մեջ³²²: Ճապոնիայի արտարին քաղաքականության փոփոխության համար խթան հանդիսացան հետևյալ գործոնները՝

Առաջին հերթին միարեւո համակարգի ստեղծմանը զուգահեռ սկսեց ձևավորվել բազմարեւո համակարգը, որի ժամանակ մի շարք պետություններ, ինչպես՝ Չինաստանը, Հնդկաստանը, չորս «ասիական վազրերը»՝ Հարավային Կորեան, Թայվանը, Սինգապուրը և Հնդկոնքը, լուրջ մրցակցության հայտ ներկայացրին Ճապոնիային՝ որպես տարածաշրջանային գերտերության³²³: Ավելին՝ 1993 թ. Չինաստանը դարձավ մերձավորարենեյան տարածաշրջանի նավթի կարեւորագույն ներկրողներից մեկը³²⁴, իսկ 2003 թ. գրադեցեց երկրորդ տեղն իր նավթային ներկրումների քանակով՝ հետևում թողնելով Ճապոնիային և զիջելով միայն ԱՄՆ-ին³²⁵: Այդ պատճառով Ճապոնիան հետաքրքրված էր միջազգային հարաբերություններում Չինաստանի ծավալապաշտական քաղաքականության «զսպման», ինչպես նաև արագ տնտեսական աճ ունեցող ասիական երկրների ենթակայիրների ոլորտում

³²¹ Вербнцкай С., Япония: время сложных перемен, նշվ. աշխ., էջ 47:

³²² Japan's Role in the International Community, Current Situation of the World Economy and Japan's position, Diplomatic Bluebook, Tokyo, 1992, p. 303; Japanese Policy in the Middle East, <http://www.passia.org/seminars/99/japan/jpolicy.htm>

³²³ Raquel S., Why Japanese Efforts to Facilitate Middle East Talks have Failed, The Asia-Pacific Journal: Japan Focus, <http://old.japanfocus.org/Raquel-Shaoul/1990>

³²⁴ Handbook of Energy and Economic Statistics in Japan, Tokyo, 2011, p. 248.

³²⁵ International Energy Agency (IEA), Oil Market Report, 11.03.2004, p. 12.

վառելանյութի ձեռքբերման համար ներկայացրած մրցակցության հայտի դեմ պայքարելու հարցում: Չինաստանի ծավալապաշտական քաղաքականության «զայման» մեջ շահագրրգոված են ևան Սինգապուրը, Ավստրալիան, Ֆիլիպինները, Մալայզիան, Բնողնեզիան և ԱՄՆ-ը, որոնք մեծապես աջակցում են Տոկիոյին՝ տարածաշրջանում Չինաստանի ժողովրդավարական Հանրապետությանը (ՉԺՀ) հակազդող ուժ դառնալու հարցում³²⁶:

Երկրորդ գործոնը՝ Ճապոնիայում տեղի ունեցած ներքաղաքական փոփոխություններն են, որոնց հիմնական պատճառներից մեկը երկրում սկսված տնտեսական ճգնաժամն էր: Այն 1989 թ. «պղպջակային տնտեսության» «պայրման» հետևանք էր³²⁷: Փաստորեն Ճապոնիայում ստեղծված ծանր տնտեսական իրավիճակը նպաստեց երկրում քաղաքական ուժերի փոփոխությանը: Այսպես 1993 թ. վերջ դրվեց 1955 թվականից ի վեր իշխանության դեկիլի գտնվող լիբերալ-դեմոկրատական կուսակցության միանձնյա կառավարմանը, և իշխանությունն անցավ կուլիցիոն կառավարությանը, որը համեմատաբար լիբերալ էր և միջազգային հարաբերություններում փորձում էր դրսուրել ավելի ճկուն քաղաքականությունը³²⁸:

Երրորդ գործոնը՝ Ճապոնիայի միջազգային հարաբերություններում ունեցած ձախողություններն են, որոնք վերապրվում

³²⁶ Carpenter T., Japan Takes a Modest Step toward Global Security, 8.01.2002, <http://www.cato.org/publications/commentary/japan-takes-modest-step-toward-global-security>

³²⁷ Ճգնաժամային իրավիճակը շարունակվեց մոտ մեկ տասնամյակ, ինչը ճապոնական պատմագրության մեջ հայտնի է որպես «Ետրցրած տասնամյակ» ("Lost decade") տերմինով՝ ընդունվելով 1989-1999 թթ.: Այս մասին տե՛ս 'u Dobson H., Review Article: Rethinking Japan's "lost decade", Global Society, Volume 19, No. 2, April, 2005, p. 212.

³²⁸ Abo-Kazleh M., Japanese Foreign Policy towards the Middle East: Determinants and Motives, Cairo, October 2008, pp. 18-29.

Են 1990 թ. Ծոցում Իրաքի կողմից Քուվեյթի բռնազավթման արդյունքում ի հայտ եկած ճգնաժամին³²⁹: ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշը ուսեր մեծ սպասումներ ձապոնիայից՝ Իրաքի դեմ կիրառվող պատժամիջոցներին միանալու հարցում: Կաշինգտոնը պնդում էր, որ ձապոնիան ուղարկի իր ինքնապաշտպանական զորքերը՝ բազմազգ ուժերին օգնելու համար: Սակայն ձապոնիայի վարչապետ Տոշիկի Կայֆուն մերժեց այդ առաջարկը՝ փոխարենը տրամադրելով ՄԱԿ-ի բազմազգ ուժերին 11 մլրդ դոլարի ֆինանսական աջակցություն և լրացուցիչ 2 մլրդ դոլար՝ Իրաքի կողմից հարեան երկրներին հասցըրած վեսասները փոխհատուցելու համար: Ավելին՝ Տոկիոն 1991-1993 թթ. ընթացքում Քուվեյթին տրամադրեց 468.8 մլն դոլարի փոխառություն և 1.1 մլն դոլարի դրամաշնորհ՝ տնտեսությանը հասցված վեսասների փոխհատուցման և ևս 13 մլրդ դոլարի օգնություն՝ Ծոցի ականազերծման նպատակով³³⁰: Միջազգային հանրությունը ընսադատեց նրա քաղաքականությունը՝ անվանելով այն «չեկային զրբույկի դիվանազիտություն»³³¹: Ավելին՝ Տոկիոյի կիրառած ջանքերը՝ Քուվեյթի բռնազավթմանը վերջ դնելու և հատկացված ֆինանսական աջակցությամբ երկրի վեսաված տնտեսությունը շուտափույթ վերականգնելու ուղղությամբ, Քուվեյթի կառավարությունը նույնական չգնահատեց ըստ արժանվույն: Վերջինս «բաց երթողել» ձապոնիայի անունն այն երկրների ցանկից, որոնց հայտնում էր իր խորին շնորհակալությունը և երախտագիտությունը՝ պատերազմի ընթացքում աջակցություն ցուցա-

³²⁹ International Energy Agency, Monthly Oil Market Report: April, Paris: IEA, 1991, p. 25, http://stockholm.sgr.eu/uploads/Chakarova_SGIR-Stockholm.pdf

³³⁰ Ozcelik S., Խշ. աշխ., էջ 140; Japan's Response to the Post-Gulf Crisis Problems, Diplomatic Bluebook, Tokyo, 1991, p. 55-56.

³³¹ Tomohito S., Koizumi Diplomacy: Japan's Kantei Approach to Foreign and Defense Affairs, Washington, 2007, p. 5.

բերելու համար³³²: Ըստ շատ քաղաքագետների կարծիքի՝ այս ամենը խթան հանդիսացավ Ճապոնիայի համար վերանայելու իր մերձավորարևելյան քաղաքականությունը և կտրուկ փոփոխման ենթարկելու տարածաշրջանի խնդիրների նկատմամբ ունեցած իր մոտեցումները³³³:

Փաստորեն Տոկիոյի արտարիև քաղաքականության ձախողումը, երկրում սկսված տնտեսական ճգնաժամը և դրա արդյունքում տեղի ունեցած իշխանափոխությունը նպաստեցին Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականության վերանայմանը, որն արտահայտվեց առաջին հերթին միջազգային-քաղաքական գործընթացներում Ճապոնիայի դերի ակտիվացմամբ³³⁴: 1991 թ. Մայդիլյան համաժողովից հետո Ճապոնիան սկսեց քավական ակտիվ քաղաքականություն դրսութել՝ զիսավորելով շրջակա միջավայրի խնդիրների լուծմանը և վիրված բազմակողմանի բանակցությունները, մասնակցելով ջրային ռեսուրսների, տարածաշրջանային տըստեսական զարգացումներին և փախստականների խնդիրներին և վիրված աշխատանքային խմբերին: Ավելին՝ 1992 թ. հունիսին Ճապոնիայի խորհրդարանում ընդունվեց «ՍԱԿ-ի խաղաղության համագործակցություն» օրինագիծը, համաձայն որի՝ Տոկիոն իրավունք էր ստանում մասնակցելու ՍԱԿ-ի խաղաղապահ գործողություններին³³⁵: Վերոնշյալ օրինագիծը հետագա վերակորություն տվեց Տոկիոյին ձեռք բերել նոր դի-

³³² Ikeda A., Seeking a Say for Her Pay, Middle East Dialogue, November, 1994, p. 5.

³³³ Armitage R., U.S.-Japan Relations in the Middle East, Washington, D.C.: The Middle East Institute, 1998, p. 7; Tomohito S., Becoming More Realistic in the Post-Cold War: Japan's Changing Media and Public Opinion on National Security, Japanese Journal of Political Science, No. 8, June, 2007, p. 172-174.

³³⁴ Ito T., Melvin M., Japan's Big Bang and the Transformation of Financial Markets, Cambridge, July, 1999, p.1, <http://www.nber.org/papers/w7247>

³³⁵ Raquel S., Why Japanese Efforts to Facilitate Middle East Talks have Failed, The Asia-Pacific Journal: Japan Focus, <http://old.japanfocus.org/Raquel-Shaoul/1990>

վանագիտական գործիք՝ միջազգային կարևոր գործընթացներին մասնակից լինելու համար: Շնորհիվ այդ օրինագծի ճապոնիան սկսեց ինքնապաշտպանական գործեր ուղարկել զանազան «տար գոտիներ», ինչպիսին է Կամբոջան, Ռուսաստան, Մոզամբիկը, Չափրը միջազգային խաղաղության պահպանման նպատակով³³⁶. 1996 թ. Տոկիոն մոտ 77 դիտորդ ուղարկեց պահեստիեյան ընտրությունները վերահսկելու և 45 զինվոր՝ Գոլասի բարձունքներում ՍԱԿ-ի խաղաղապահ ուժերի կողմից իրականացվող գործողություններին մասնակցելու համար: Դա ճապոնիայի առաջին խաղաղապահ առարելությունն էր մերձավորարևելյան տարածաշրջանում³³⁷:

Արդեն 1997 թվականից Ճապոնիայի ուզմական հայեցակարգում հայտնվեցին նոր միտումներ, որոնք առաջին հերթին ուղղված էին Ճապոնիայի ինքնապաշտպանական ուժերը (ՃԻՈՒ) տարածաշրջանային ուզմական ուժի վերածելու մտադրության հետ: Բացի այդ, ծագող արևի երկիրն աստիճանաբար մեծացրեց իր ուզմաքաղաքական դերն աշխարհում, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության համակարգում, որի վառ օրինակ էր 1999 թ. ԱՄՆ-ի կողմից Գուամում անցկացվող զորավարժություններին մասնակցելը, իսկ 2000 թ. Տոկիոն պայմանագիր ստորագրեց Մինգապուրի հետ՝ վերջինիս ուզմական բազաները հարկ եղած ժամանակ օգտագործելու վերաբերյալ³³⁸:

³³⁶ Shigeru K., Japan and PKO, Japanese Experiences and Its Policy, *The Journal of International Studies* (Osaka Gakuin University), Volume 12, No. 2, December, 2001, pp. 85-109.

³³⁷ Dowty A., Japan and the Middle East: Signs of Change?, *Middle East Review of International Relations*, Volume 4, No. 4, December, 2000, p. 72; Berger M., Japan Debates a New Role: Facing the Mideast Crisis, *The New Leader*, No. 73, 17.09.1990, p. 5.

³³⁸ Will Japan Rearm, 28.05.2001, <http://www.stratfor.com/search/site/Will%20japan%20rearm>

Արդեն 2001 թ. ապրիլին, երբ Ճապոնիայում իշխանության եկավ վարչապետ Զուսիշիրո Կոհօգումին, երկրում բարձրացվեց սահմանադրական դրույթների վերանայման խնդիրը, մասնավորապես կարևոր տեղ տրվեց զենքերի տեխնոլոգիայի և սպառազինությունների արտահանումն արգելող օրինագրծերի վերանայման հարցին³³⁹:

Ճապոնիայի ուղմարադրական դերի ակտիվացումը խթանող սահմանադրական մի շարք բարեփոխումներ հնարավոր դարձավ կյանքի կոչել 2001 թ. սեպտեմբերի 11-ին Նյու Յորքում տեղի ունեցած դեպքերից հետո, երբ միջազգային անվտանգության համակարգին սպառնացող վտանգը ստիպեց Ճապոնիային որոշակի քայլեր ձեռնարկել³⁴⁰: Այսպես՝ 2001 թ. հոկտեմբերին Ճապոնիան ընդունեց հակաահաբեկչական հատուկ օրենք 2 տարի ժամկետով, համաձայն որի՝ Տոկիոն իրավունք ստացավ ինքնապաշտպանական գործեր ուղարկել Աֆղանստան՝ ահաբեկչության դեմ պայքարելու և Միացյալ Նահանգներին աջակցություն ցուցաբերելու նպատակով³⁴¹: 2001 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Ճապոնիան երեք ականակիր նավեր ուղարկեց Հնդկական օվկիանոս³⁴²: Ավելին 2001 թ. նոյեմբերին Ճապոնիան մասնակցեց Գուամում և Սան Դիեգոյում տեղակայված ԱՄՆ-ի նավատորմի կողմից իրականացվող ուղմական գործողություններին:

³³⁹ Raquel S., Japan's Changing Defense Policy: Military Deployment in the Persian Gulf, Japanese Studies, Vol. 27, No. 3, December, 2007, p. 235; Corey W., Japan's New Approach to the Export of Arms, 11.01.2012; <http://asw.newpacificinstitute.org/?p=9885>

³⁴⁰ «Japan Echo», Vol. 32, N 2, April 2004, <http://www.japanecho.com>

³⁴¹ Sekita T., Japan's Defence Policy and Bureaucratic Politics, 1976-2007, N.Y., 2010, p. 1.

³⁴² Raquel S., Japan's Changing Defense Policy: Military Deployment in the Persian Gulf, Խշ., աշխ., էջ 239:

2003 թ. մայիսի 15-ին Ճապոնիայի խորհրդարանն ընդունեց երեք օրինագիծ, որոնք հայտնի են «Հնարավոր պատերազմների օրենք» անվամբ: Այս օրինագծերի շնորհիվ իշխանությունը ստացավ լիազորություններ մորիլիզացնելու ինքնապաշտպանական գործերը ճապոնացիների դեմ հնարավոր ռազմական հարձակում իրականացնելու դեպքում: Օրենքը բույլ էր տալիս երկրի վարչապետին արտակարգ իրավիճակներում հրամաններ արձակել³⁴³, որը բավական մեծ առաջընթաց էր երկրի ռազմարարական դերի ակտիվացման տեսանկյունից:

2003 թ. հուլիսի 26-ին Ճապոնիայի խորհրդարանում ընդունվեց հակահաբեկչության վերաբերյալ օրենք, համաձայն որի կառավարությունը կազմեց 1000 հոգուց բաղկացած խոսք և աշխանն ուղարկեց Իրարի Սամակա քաղաք՝ վերակառուցողական աշխատանքներին աջակցություն ցուցաբերելու նպատակով³⁴⁴: Ավելին՝ 2004 թ. փետրվարին ծագող արևի երկիրը հումանիտար աջակցություն ցուցաբերելու նպատակով Իրար ուղարկեց նաև ցամաքային գործեր: Այսպիսով՝ սահմանվեցին ինքնապաշտպանական գործերի հետևյալ գործառությունները՝ ջրամատակարարում և ջրի մաքրուման աշխատանքներ, տեղի բնակչությանը բժշկական աջակցության տրամադրում, ինչպես նաև դպրոցների և ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացում³⁴⁵: Փաստորեն Ճապոնիան, գործեր տեղակայելով Իրարում, հնարավորություն էր ստանում նախ՝ իր միջազգային ներդրումն ունենալ հակամարտության լուծման հարցում, երկրորդ՝ ամրապնդում էր իր ռազմավարական կապերն ԱՄՆ-ի հետ և ամենակարևորը՝ նպաստում էր հետհուսելին-

³⁴³ Նույն տեղում, էջ 234:

³⁴⁴ Сенаторов А., Япония : от "одинокого пацифизма" к "обычной стране"? , Проблемы Дальнего Востока, N 1, М., с. 79-80.

³⁴⁵ Япония и глобальные вызовы : стратегия борьбы, М., 2008, с. 111.

յան Իրաքի վարչակարգի հետ հարաբերությունների զարգացմանը, ինչը, անկանուն, ևալյային ներկրումների անխափան հոսքի երաշխիք էր³⁴⁶: Այսպիսով՝ Իրաքում ճապոնացի զինվորների ներկայությունն ավետեց որակապես նոր դարաշրջանի սկիզբ Տոկիոյի համար և հաստատեց Ճապոնիայի կենսական կարևոր շահերը Ծոցի տարածաշրջանում³⁴⁷:

Ճապոնիայի ինքնապաշտպանական ուժերը պետք է մնային Իրաքում մինչև 2004 թ. դեկտեմբերի 14-ը³⁴⁸: Սակայն 2004 թ. հոկտեմբերի 29-ին ճապոնացի սպա Կոդա Սյունեն Իրաքի «Զարկավի» ահաբեկչական խմբավորման կողմից պատասխ էր վերցվել և Ճապոնիայի կառավարությանը պահանջ էր ներկայացվել 72 ժամվա ընթացքում դուրս բերել ճապոնական զորքերն Իրաքի տարածքից: Պահանջը չկատարվելու պատճառով սպային կախաղան էին հանել³⁴⁹: Այս իրադարձությունը ստիպեց վարչապետ Զ. Կոհձումիին 2004 թ. դեկտեմբերի 9-ին ընդունել որոշում՝ Իրաքում գտնվող ճապոնական ուսումնական անձնակազմի զործողությունների ժամկետները երկարաձգելու վերաբերյալ³⁵⁰: Եվ միայն 2006 թ. հու-

³⁴⁶ Իրաքի միայն հետազոտված ետքահանդերում առկա է շուրջ 112 մլրդ բարել նավք: Ճապոնիան ներկրում է Իրաքից 120000 բարել նավք 1 օրում, որը կազմում է իր ետքային ներկրումների 3.2%-ը: Այս մասին տե՛ս Masaki H., Japan in Iraq: Goodbye Troops, Hello Aid, Asia Times, Hong Kong, 26.07.2006, <http://www.atimes.com/atimes/Japan/HG26Dh01.html>

³⁴⁷ Political Handbook of the Middle East 2008, Washington, 2008, p. 12; Raquel S., Japan's Changing Defense Policy: Military Deployment in the Persian Gulf, Խշկ. աշխ., էջ 240:

³⁴⁸ Statement by Prime Minister Junichiro Koizumi Concerning the Establishment of the Law Concerning the Special Measures on Humanitarian and Reconstruction Assistance in Iraq, 26.07.2003, http://www.kantei.go.jp/foreign/koizumispeech/2003/07/26danwa_e.html

³⁴⁹ "The Weekly Post", North Carolina, 08.11.2004.

³⁵⁰ Япония и глобальные вызовы : стратегия борьбы, Խշկ. աշխ., էջ 129:

Նիսին Ճապոնիայի կառավարությունը դուրս բերեց իր գործերն Իրաքի տարածքից:

Երկրի ռազմաքաղաքական դերի ակտիվացումը շարունակվեց նաև հետագա տարիներին: 2007 թ. հունվարի 9-ին Տոկիոն որոշում ընդունեց Ճապոնիայի պաշտպանության գործակալությունը պաշտպանության նախարարության վերածելու վերաբերյալ, ինչև իրավասություն տվեց երկրի իշխանությանն արտակարգ իրավիճակներում գործելու ավելի կտրուկ՝ մեծացնելով վերջինիս դերն արտաքին քաղաքականության որոշումների վրա ազդելու, ինչպես նաև Ճապոնիայի տարածքի վրա հնարավոր ռազմական գործողությունների իրականացումը կանխելու հարցում³⁵¹: Դրա վառ օրինակ կարող է ծառայել Ծոցի տարածաշրջանից Ճապոնիա առարվող նավթի և բնական զագի ծովային ուղիների հնարավոր վնասումը, ինչը պատճառ կիանդիսանա ներկրվող վառելանյութի ընդհատման համար³⁵²: «Ծովային ուղիների» հայեցակարգը որպես զաղափար ի հայտ է եկել դեռևս 1981 թ. ԱՄՆ-ի նախազահ Ռուսալը Ռեյզանի և Վարչապետ Սուլանկի Զենկովի միջև ռազմական համագործակցության շուրջ խորհրդակցության ժամանակ: Սակայն այդ հայեցակարգը հնարավոր եղավ կյանքի կոչել միայն 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո:

Ճապոնիայի տևատեսության համար կենսական կարևորություն ներկայացնող էներգակիրների առարումը Ծոցի տարածաշրջանից մինչև Ճապոնիայի մարքազուման գործարաններն անցկան են հետևյալ ծովային ուղիներով՝ Հորմուզի

³⁵¹ Exclusive Interview: Shinzo Abe, 31.10.2006, <http://www.ft.com/cms/s/0/ba65e892-68f6-11db-b4c2-0000779e2340.html#axzz2HNxcl8XE>.

³⁵² Raquel S., Japan's Changing Defense Policy: Military Deployment in the Persian Gulf, Աշխ. աշխ., էջ 238:

նեղուցով³⁵³, Հնդկական օվկիանոսով, Մալակկա, Լոմբոկ, Սունդա և Մակասարյան նեղուցներով, Հարավ-Չինական և Արևելաշխնական ծովերով: Հետսառըպատերազմյան շրջանում բազմաքիչ համակարգի ձևավորման և բազմազան շահերի բախումների հավանականության մեծացման պայմաններում վերոնշյալ տարածքներով անցնող ծովային ուղիները դարձել են ավելի խոցելի, և վերջիններին անվտանգության ապահովումը բավական բարդացել է: Ծովային ուղիների անվտանգության ապահովման հարցում ճապոնիայի մտավախությունը լիովին հիմնավորված է, քանի որ ամեն վայրկյան թե՝ մերձավորարենցյան, թե՝ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում առկա տարածքային ցանկացած խնդրի սրման արդյունքում կարող են վտանգի տակ դրվել ճապոնիա առարվող նավթի և բնական գազի ներփառը, որը լուրջ վնաս կհասցնի երկրի տնտեսությանը: Նամանավանդ, որ վերոնշյալ ծովային ուղիներն անցնում են այնպիսի տարածքներով, որտեղ բավական մեծ են տարածքային խնդիրների շուրջ առկա տարածայնությունները:

Մյուս կարևոր գործոնը, որը մեծ վտանգ է ներկայացնում ճապոնիայի նավթի ծովային ուղիներին՝ ծովահենների և ահաբեկչների խնդիրն է: Ծովահենների թիվը վերջին տասնամյակների ընթացքում բավական մեծացել է, որը պայմանավորված է մի շարք գործոնների առկայությամբ: Նախ մեծացել է ծովի դերը՝ որպես ապրանքատեղափոխման միջոց³⁵⁴: Ավելին՝ ծովային ուղիներով են առարվում հերզա-

³⁵³ Հորմուգի նեղուցով են առարվում Սառւյան Արարիայի, Թուվեյի, Կատարի և ԱՄԷ-ի նավթային մատակարարությունները: Այս մասին տե՛ս Строительство новых нефтепроводов, ТАСС, Атлас N 27 (1409), 06.07.1984, стр. 44.

³⁵⁴ International Maritime organization, <http://www.imo.org/About/Pages/Default.aspx?SouthChinaSea/SpratlyIslands>, <http://www.globalsecurity.org/military/world/war/spratly.htm>

կիրները, որոնք, բնականաբար, զայթակղիչ են ծովահենների համար: Ծովահենների հարձակումների վտանգը ձապոնիայի նավթի ծովային ուղիներին սպառնում էն ինչպես Ծոցի, այնպես էլ խաղաղօվկիանոսյան տարածաշրջաններում, որը, անշուշտ, ստիպում է ձապոնիային ուժեղացնել իր ռազմաքաղաքան դերը՝ երկրի տնտեսական շահերից ելնելով: Հստ «Միջազգային ծովային վարչության» ("International Maritime Bureau") տվյալների՝ ծովահենների կողմից իրականացվող հանցագործությունների թիվը գնալով աճում է³⁵⁵: Բարձր ռիսկային գոտիների շարքում են Հորմուզի նեղուցը, Սոմալիի և Ադենի ծոցերը, Պերուի, Բանզայդշի և Սալայդիայի ծովային տարածքները, որտեղ գրանցվել են տարեկան հարձակումների մոտ կեսը³⁵⁶: Միայն Հորմուզի նեղուցով օրական առարկում է 15.5 մլն բարել նավթ, որը կազմում է ընդհանուր նավթային արտահանումների 73%-ը³⁵⁷, իսկ Սալայդի նեղուցով՝ 10.3 մլն բարել նավթը³⁵⁸: Հորմուզի նեղուցով առարկող նավթի 7%-ն արտահանվում է Միացյալ Նահանգներ, 25%-ը՝ Արևմտյան Եվրոպայի երկրներ և 55-60%-ը՝ ձապոնիա³⁵⁹: Հետեւաբար նավթի արտահանումը խոշնդրությ ցանկացած միջադեպ կարող է մեծ վեաս հասցնել վերոնշյալ երկրների տնտեսություններին:

Ծոցի տարածաշրջանում նավթի ծովային ուղիների անվտանգությանը հատկապես մեծ վտանգ էն ներկայացնում Սոմալիի ծովահենները³⁶⁰, որոնց ռազմաքանները տեղակայված են Աֆրիկայի մոտ գտնվող Սոմալի պետության

³⁵⁵ Halloran R., A Maritime Nightmare in the Making, The Japan Times, 06.03.2004, <http://www.japantimes.co.jp/text/eo20040306a2.html>

³⁵⁶ International Maritime Bureau, 2007, p. 5, <http://www.icc-ccs.org>

³⁵⁷ «Kyodo News Service», 18.05.1984.

³⁵⁸ Lehr P., Violence at Sea: Piracy in the Age of Global Terrorism, N.Y., 2006, p.23.

³⁵⁹ «The Japan Times», 07.06.1987.

³⁶⁰ Lehr P., Աշխ. աշխ., էջ 2:

ափամերձ շրջաններում, որն իր դիրքով շատ հարմար է Կարմիր և Արարական ծովերի, ինչպես նաև Հորմուզի նեղուցով և Ադենի ծոցով նավարկող նավերի վրա վերահսկողություն սահմանելու տեսանկյունից: Ըստ տվյալների՝ Ճապոնիայի ներկրությունների 92%-ն անցում էն Ադենի ծոցով, և ծովահենների կողմից հարձակումների պատճառով մեծ վնաս է հասցվել երկրի տնտեսությանը³⁶¹: Այդ պատճառով 2009 թ. մարտին Ճապոնիան Ադենի ծոց ուղարկեց ծովային ինքնապաշտպանական գորբեր՝ Սումայիի ծովահեններին հակահարված տալու նպատակով: Սակայն դա չկանգնեցրեց ծովահեններին, որոնք շարունակում են մինչ օրս ընդլայնել իրենց ազդեցության գոտիները: Միայն 2011 թ. ճապոնական նավերը կողոպտվել էն ծովահենների կողմից ավելի քան 10 անգամ, ինչը մեծ սպառնալիք է Ճապոնիայի տնտեսության համար:

Ճապոնիայի եներգետիկ անվտանգությանը, բացի ծովահեններից, մեծ վտանգ է սպառնում նաև ահարեկշական կազմակերպությունների, հատկապես իսլամական «Ալ-Շաբաաբ» ("Al-Shabaab") խմբավորման³⁶² և «Աբդուլ Ազզամ բրիգադ»-ի ("Abdullah Azzam Brigades") կողմից³⁶³: Ըստ

³⁶¹ Japan to Build Navy Base in Gulf of Aden, 11.05.2010, http://www.upi.com/Business_News/Security-Industry/2010/05/11/Japan-to-build-navy-base-in-Gulf-of-Aden/UPI-60511273596816/

³⁶² Այս ծայրահեղական ահարեկշական խմբավորումն առաջացել է Սումայիում տիրող անկայութ քաղաքական և սոցիալական իրավիճակների արդյունքում: Այս մասին տես AU Says Al-Shaab Is Driven By Global Terrorist Agenda, <http://www.terrorismwatch.org/2012/02/au-says-al-shaab-is-driven-by-global.html>

³⁶³ «Աբդուլ Ազզամ բրիգադ»-ն անվանվել է հայտնի իսլամական քարոզիչ, շեյխ Աբդուլ Ազզամի անունից, ով 1980-ականներին ոգեշնչել է «Աֆղանարաբների»: «Աբդուլ Ազզամ բրիգադ»-ը ստեղծվել է 2009 թ. Սական Ալ-Քարաւալիի կողմից: Այս խմբավորումն ունի զանազան ճյուղեր մի շարք երկներում, ինչպիսին են Լիբանանը, Պակիստանը, Սիրիան, Հորդանանը:

պաշտոնական տվյալների՝ վերոնշյալ խմբավորումները կապված են «Ալ-Կահիդա» ահարեկչական կազմակերպության հետ³⁶⁴: 2010 թ. օգոստոսի 3-ին «Աքդուլ Ազզամ բրիգադ»-ի ահարեկչական գործողությունների զոհ դարձավ Հորմուզի նեղուցով Կատարից Ճապոնիա ուղևորվող նավայակին տանըները՝ «Մ.Սթար» (*«M.Star»*)³⁶⁵, ինչը լուրջ մտահոգություն առաջացրեց Ճապոնիայի կառավարության և նրա բիզնես հասարակության շրջանակներում: Այդ է պատճառը, որ Ճապոնիան, ենթավար իր տնտեսական շահերից, որոշեց 2011 թ. հունիսին Ադենի ծոցում գտնվող Զիբուրի նավահանգստում տեղակայել ռազմածովային բազա, որը Ճապոնիայի առաջին ծովային ռազմական բազան է Երկրորդ աշխարհամարտից հետո (տե՛ս՝ Հավելված, Քարտեզ 7)³⁶⁶:

Այսպիսով՝ աշխարհարարական փոփոխությունները, որոնք տեղի ունեցան հետսառըատերազմյան շրջանում, նպաստեցին Ճապոնիայի մերձավորարենյան քաղաքականության նոր մոտեցումների ձևավորմանը և ռազմարարական դերի ակտիվացմանը:

3.2 ՀԱՊՈՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՏՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՀՆ-Ի ԱՆԴԱՍ ԵՐԿՐՈՒԹԻ ՀԵՏ (1991-2011 թթ.)

Հետսառըատերազմյան շրջանում Ճապոնիա-ԾՀՆ քաղաքական հարաբերությունները բնութագրելիս նոյնպես

³⁶⁴ Lehr P., և այլ. աշխ., էջ 19; Bruton B., Somalia: A New Approach, N.Y., 2014, p.3.

³⁶⁵ Տաճելով Կատարից Ճապոնիա էր առարում 2 մի բարեկ նավը: Այս մասին տե՛ս Worth R., Tanker Damage Caused by Attack, Inquiry Finds, 06.08.2010, http://www.nytimes.com/2010/08/07/world/middleeast/07tanker.html?_r=0

³⁶⁶ Eight Somali Pirates Killed as South Korea Rescues Freighter Crew, 21.01.2011, <http://www.guardian.co.uk/world/2011/jan/21/south-korea-rescue-somali-pirates>

կարելի է կիրառել «կորցրած տասնամյակ» տերմինը, քանի որ վերջին անգամ Հապոնիայի արտգործնախարարը՝ Տարո Նակայաման, այցելել էր ՇՀՆ-ի երկրներ 1990 թ. օգոստոսին: Եվ միայն 10 տարվա ընդմիջումից հետո 2000 թ. հունվարի 8-14-ը Հապոնիայի արտգործնախարար Յոհեյի Կոնոն առաջին անգամ այցելեց Շոջի տարածաշրջան: Հապոնիայի արտգործնախարարի առաջին այցելությունը եղավ Կատար, որի ժամանակ Յ. Կոնոն նշեց Հապոնիայի համար ՇՀՆ-ի երկրների հետ հարաբերությունների ամրապնդման կարևորության, ինչպես նաև բազմակողմանի հարաբերությունների հաստատման անհրաժեշտության մասին³⁶⁷:

2006 թ. Հապոնիան ընդունեց «Ազգային Էներգետիկ նոր ուղղակարություն»³⁶⁸: Ըստ այդ ուղղակարության՝ կոչ է արվում ամրապնդել հարաբերությունները նավթ և գազ արդյունահանող երկրների հետ օգտագործելով ՊՉԱ-ի ծրագրը և ազատ առևտության պայմանագիրը, որն արդեն 2006 թ. սեպտեմբերին կը բարեւ Տոկիոյում Հապոնիայի և ՇՀՆ-ի երկըների միջև³⁶⁹:

Հապոնիա-ՇՀՆ հարաբերություններում հատկապես կարևորվում է առևտանատեսական հարաբերությունների ոլորտը, որը տարեցտարի ավելի է զարգանում:

Հապոնիան, ունենալով նավթային մեծ պահանջարկ, ՇՀՆ-ի անդամ երկրներից ներկրում է արդյունահանված նավթի 73,7%-ը, որից 27.8%-ը Սաումյան Արարիայից:

³⁶⁷ The Visit to the Gulf Countries by Minister for Foreign Affairs Yohei Kono (Overview and Evaluation), <http://www.mofa.go.jp/region/europe/russia/fmv0101/overview.html>

³⁶⁸ Masaki H., Japan's New Energy Strategy, 13.01.2006, <http://www.atimes.com/atimes/Japan/HA13Dh01.html>

³⁶⁹ Mohamed Abdel Raouf, GCC – Japan Environment Relations and Its Growing Significance, 10.14.2011, <http://jime.ieej.or.jp/htm/english/2011/1014.htm>

23.8%-ը՝ ԱՄԷ-ից, 10.8%-ը՝ Կատարից, 7.6%-ը՝ Քուվեյթից, 2.1%-ը՝ Օմանից, 1.6%-ը՝ սաուդա-քուվեյթյան «Չեզոր գոտուց» («Խաֆջի» ևավթահանքից): Ճապոնիան համագործակցում է ԾՃՆ-ի անդամ երկրների հետ նաև ատոմային էներգիայի զարգացման ոլորտում: Մինչ 1990 թ. ճապոնական ատոմային արդյունաբերությունն ուներ ներքին ուղղվածություն, սակայն 1990 թ. հետո ճապոնիան սկսեց կառուցել ատոմակայաններ (աէկներ) նաև արտերկրում: Ատոմային համագործակցության սկիզբը ճապոնիայի և ԾՃՆ-ի երկրների միջև դրվեց 2007 թ. մայիսին, երբ Ճապոնիայի վարչապետ Շինձու Արեն այցելեց Կատար: Հետագայում 2008 թ. դեկտեմբերին, ԱՄԷ-ի ներկայացուցիչները հանդիպեցին «Միցուրիշի հնի ինդաստրի» ("Mitsubishi Heavy Industries") ընկերության ներկայացուցիչների հետ, որտեղ ըննարկվեց ԱՄԷ-ում աէկներ կառուցելու հարցը:

Թե՛ Ճապոնիան, թե՛ ԾՃՆ-ի երկրներն ունեն ընդհանուր շահեր և համագործակցում են միմյանց հետ տարաբնույթ ոլորտուներում: Դիտարկենք ճապոնիայի և ԾՃՆ-ի անդամ երկրների միջև քաղաքատնտեսական հարաբերություններն առանձին-առանձին:

3.2.1. ՃԱՊՈՆԻԱ - ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄԷ-ի ամենահարուստ էմիրությունն Արու Շաբին է, որին հաջորդում են Դուբայը և Շարջան: ԱՄԷ-ն երկրորդ ամենախոշոր նավա արդյունահանող պետությունն է Ծոցում: Նավթի պաշարները հաշվվում են 200 մլրդ բարել, իսկ զագինը՝ 6 տրիլիոն խորանարդ մետր³⁷⁰: Գազի պաշարների

³⁷⁰ Александров И., Монархии Персидского залива: Этап модернизации, М., 2000, с. 23.

քանակով ԱՄԷ-ն զբաղեցնում է չորրորդ տեղը՝ Ռուսաստանից, Իրանից և Կատարից հետո:

ԱՄԷ-ն ձապոնիա է արտահանում իր արդյունահանված նավթի 62%-ը՝ զբաղեցնելով երկրորդ տեղը Սաումյան Արաբիայից հետո ձապոնիա արտահանած նավթի քանակով և ապահովելով ձապոնիա ներկրվող նավթի 25%-ը³⁷¹. որի դիմաց Տոկիոն տրամադրում է տեխնիկական սարքավորումներ, էլեկտրոնիկա, տրանսպորտային միջոցներ, կոռուսկներ, բեռնատարներ, պոլիէտեր և այլն³⁷²: Այսպես՝ 2008 թ. դրույթամբ ապրանքաշրջանառությունը ձապոնիայի հետ կազմել է 15,38 մլրդ դոլար, որից 80,8%-ը գոյացել է նավթի, իսկ մնացած 11,5%-ը՝ նավթային այլ ապրանքների և այլումնի վաճառքի արդյունքում³⁷³: «Զապան էքստերնալ տրեյդ օրգանիզյոն»-ի (ԶԵՏՐՕ) («Japan External Trade Organization» (JETRO)) տվյալների համաձայն՝ 2006 թ. դրույթամբ նաև աճել է ձապոնական ընկերությունների թիվն ԱՄԷ-ում՝ 216-ից հասնելով 294-ի, իսկ 2007 թ. դրույթամբ զրանցվել է ներդրումների 34%-ի աճ³⁷⁴:

Արդեւ 2007 թ. ապրիլի 17-ին Տոկիոյում տեղի ունեցավ «Ճապոնիա – ԱՄԷ տնտեսական հանձնաժողովի» առաջին հանդիպումը, որն ազդարարեց տնտեսական հարաբերությունների նոր փուլ երկու երկների միջև, ինչն իր ազդեցու-

³⁷¹ Япония создает запас нефти из ОАЭ на случай мирового кризиса поставок, 20.12.2009, <http://ria.ru/crisis/20091220/200340640.html>

³⁷² The Value of Emirati Exports to Japan Surged by 25% in 2006, Newsletter No. 636, News-Analysis, 06.06.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/june2007/june2007n636.htm>

³⁷³ Non-Petroleum Sectors of Japan-UAE Trade Come into View, Newsletter No. 832, News-Analysis, 01.12.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/december2007/december2007n832.htm>

³⁷⁴ Meti Minister Masayuki Naoshima Makes Quiet Visit to the Emirates, Newsletter No. 1498, News-Analysis, 26.10.2009, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/october2009/october2009n1498.html>

թյուն ունեցավ ևաս երկու երկրների քաղաքական հարաբերությունների վրա: 2007 թ. մայիսին վարչապետ Շ. Աբեն առաջին անգամ այցելեց ԱՄԷ՝ դատեալով առաջին վարչապետը Տակեն Ֆուկուդայից հետո (1978 թ.), ով այցելեց Էմիրություններ: Այցելության ժամանակ հանդիպեց ԱՄԷ-ի նախագահ Շեյխ Խալիֆա բին Զաիդ ալ Խահյանի հետ, որի ժամանակ վերջինս նշեց, որ մեծապես կարևորում է ճապոնական ընկերությունների ներկայությունները:

Արու Դարիի կառավարության ներդրումային գործիքը՝ «Ինքնենտյշընալ պետրոլեում ինվեստմենտ կոմպանի»-ն (*“International Petroleum Investment Company”*) 2007 թ. ձեռք բերեց ճապոնական «Կոսմո օյլ» (*“Cosmo Oil”*) ընկերության բաժնետոմսերի 20.8%-ը՝ վճարելով 776 մլն դոլար³⁷⁵: «Կոսմո օյլ»-ը ներկայում ճապոնիայի չորրորդ ամենախոշոր նավային ընկերությունն է: Ըստ «Ինքնենտյշընալ պետրոլեում ինվեստմենտ կոմպանի»-ի գործադիր տնօրինի՝ Խալիֆ ալ-Քուրախի խոսքերի՝ «Կոսմո օյլ»-ի ներդրումներն Ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջանում շատ կարևոր են ԱՄԷ-ի համար: «Կոսմո օյլ»-ն էլ իր հերթին հայտարարեց, որ ԱՄԷ-ն շատ կարևոր պետություն է Ճապոնիայի տեսլության համար՝ լինելով Մոնդի Սոցի խոշորագույն եավթարտահանող երկրներից մեկը, որն իր արդյունահանած նավթի մեծ մասն արտահանում է Ճապոնիայից³⁷⁶: Հատկանշական է, որ մինչ այդ

³⁷⁵ Prime Minister Abe's Visit to the United Arab Emirates, Newsletter No. 597, News-Analysis, 01.05.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/may2007/may2007n597.htm>

³⁷⁶ A Banner Year for Japan-UAE Relations, Newsletter No. 857, News-Analysis, 24.12.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/december2007/december2007n857.htm>

³⁷⁷ Abu Dhabi Government Becomes Largest Shareholder in Cosmo Oil, Newsletter No. 744, News-Analysis, 19.09.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/september2007/september2007n744.htm>

(2007 թ. ապրիլի 29-ին) «Աբու Դաբի նեյշընալ օլ կոմպանի»-ն արդեն ձեռք էր բերել համաձայնություն «Զապան բանկ ֆոր խեթերնեյշընալ կոռպերեյշըն»-ի (ՃԲԻԿ) ("Japan Bank for International Cooperation" (JBIC)) հետ ընդլայնելու իր երկրին տրամադրվող փոխառությունների չափը հասցելով այն 1 մլրդ դոլարի: Իր հերթին ԱԴՕԿ-ը համաձայնվեց երկարաժամկետ պայմանագիր կարել ճապոնական ընկերությունների հետ՝ նավթ մատուկարարելու վերաբերյալ³⁷⁸:

Ճապոնական «Աբու Դաբի օլ» ("Abu Dhabi Oil") ընկերությունը, որի բաժնետոմսերի 63%-ը պատկանում է «Կոսմ օլ»-ին, երկարաձգեց կոնցեսիոն պայմանագրերն ԱՄԷ-ի կառավարության հետ «Սուբարազ», «Ումմ ալ Ասրար» և «Նիվաթ ալ Ղալան» նավթահանքերում արդյունահանման աշխատակրների իրականացնելու նպատակով³⁷⁹: Այս նաև 2012 թ. դեկտեմբերի 6-ին 30 տարի ժամկետով ճապոնական ընկերության տևորինությանը հանձնեց չմշակված «Հեյլ» նավթահանքը, որը տեղակայված է Սուբարազ կղզուց 10 կմ հեռավորության վրա: «Աբու Դաբի օլ» ընկերությունը նախատեսում է այս չորս նավթահանքերից օրական արդյունահանել 40000 բարել նավթ³⁸⁰:

Ճապոնիայի հարաբերություններն ԱՄԷ-ի հետ շատ բազմարուվասիստ և խորն են, որոնք բացի առևտրատնտեսական հարաբերություններից ներառում են նաև տարբեր ծրագրերի իրականացում: Արարական Միացյալ Էմիրությունները ստեղծել են նպատակոր պայմաններ ներդրում-

³⁷⁸ Prime Minister Abe's Visit to the United Arab Emirates, Newsletter No. 597, News-Analysis, 01.05.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/may2007/may2007n597.htm>

³⁷⁹ Japan's Cosmo Oil Wins UAE Stake and Stake Extension, 04.02.2011, http://www.gasandoil.com/news/middle_east/cc92c6382c787dae676e869bdf5d238d

³⁸⁰ Japan-UAE Nuclear Energy Cooperation Launches a New Era, 02.02.2009, <http://brainhash.wordpress.com/2009/02/02/shingetsu-institute/>

Ների համար, որը հնարավորինս նպաստում է տնտեսության բազմազանեցմանը (դիվերսիֆիկացմանը): Այսպես, ըստ ԶԵՏՌՕ-ի տվյալների՝ Ճապոնիան ԾՃՆ-ի երկրներից ամենաշատ ներդրումները կատարում է ԱՄԷ-ում, որից 78%-ը մերենաներն են և տեխնիկական սարքավորումները: Ճապոնիայի ներդրումներն ԱՄԷ-ում 2005 թ. կազմել են 4.9 մլրդ դոլար, 2006 թ.՝ 6 մլրդ դոլար, 2007 թ.՝ 8.1 մլրդ դոլար³⁸¹: Այդ մասին 2008 թ. փետրվարին հայտարարել է եաւ ԱՄԷ-ի արտարին առևտրի նախարարը Շեյխ Լուքս ալ-Քասիմին, ԶԲԻԿ-ի գործադիր տնօրենի հետ հանդիպման ընթացքում, որի ժամանակ խրախուսվեց երկու երկրների միջև առևտրի և ներդրումների հետագա ընդլայնումը: ԱՄԷ-ի արտարին առևտրի նախարարը խրախուսեց եաւ Ճապոնիայի մասնակցությունը ոչ նավթային ոլորտում նշելով, որ թեև նավթն ապահովում է երկրի ՀՆԱ-ի 65%-ը³⁸², այևուամենայնիվ, ԱՄԷ-ն շահագրգոված է տնտեսության բազմազանեցման՝ նավթային տնտեսությունն արդյունաբերական տնտեսության փոփոխելու միջոցով՝ հնարավորինս բուլացնել նավթային ոլորտից ունեցած կախվածությունը³⁸³: Այդ նպատակի իրականացման համար ԱՄԷ-ն սահմանեց 0% հարկեր բոլոր օտարերկրյա ներդրողներին³⁸⁴, ինչպես նաև հանեց կրկնակի հարկավճարը, ինչը լրացնուիչ խթանիչ

³⁸¹ Japan Cooperation Forum for the Middle East in Dubai, Newsletter No. 1123, News-Analysis, 29.08.2008, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/august2008/august2008n1123.htm>

³⁸² Broadening and Deepening Japanese-Emirati Relations, Newsletter No. 922, News-Analysis, 24.02.2008, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/February2008/january2008n922.htm>

³⁸³ Stott D., Japan and the United Arab Emirates – A Nuclear Family? The Asia-Pacific Journal, Vol. 33-5-09, 17.08.2009, http://www.japanfocus.org/-David_Adam-Stott/3207

³⁸⁴ Janardhan N., UAE's Development Strategy, UAE-Based Political Analyst, 05.27.2011, <http://jime.ieej.or.jp/htm/english/2011/0527.htm>

գործուն է Ճապոնիա-ԱՄԷ տնտեսական հարաբերությունների ամրապնդման հարցում³⁸⁵:

Ճապոնիայի ներդրումային ծրագրերը զնալով ընդայնվում են՝ դառնալով բազմաբնույթ: Այսպես ճապոնական «Սիցուրիշի հեխ ինդաստրի» ընկերությունների ցանցը, ներառյալ «Օբայաշի կորպորեյշն»-ը ("Obayashi Corporation"), «Կաջիմա կորպորեյշն»-ը ("Kajima Corporation") և «Միտսուբիշի կորպորեյշն»-ը ("Mitsubishi Corporation") պայմանավորվածություններ ձեռք բերեցին ԱՄԷ-ի հետ բազմաբնակարան շենք կառուցելու վերաբերյալ: Մյուս ընկերությունը՝ «Տահսեի կորպորեյշն»-ը ("Taisei Corporation"), պայմանագիր է կերել անդրծովյան բունել, իսկ «Տակենակա կորպորեյշն»-ը ("Takenaka Corporation") Դուբայում միջազգային օդանավակայան կառուցելու վերաբերյալ: Ավելին՝ ճապոնական «Մարուբենի կորպորեյշն», «Հիթաչի» ("Hitachi"), «Օբայաշի կորպորեյշն» ընկերությունները պայմանագիր են ստորագրել ԱՄԷ-ի հետ՝ Պալմ կղզուց մինչև Դուբայ մոնորելլ կառուցելու վերաբերյալ, որը երկարգծով կմիացնի կղզին Դուբայ քաղաքի հետ: Այս նախագծի մասին «Հիթաչի»-ի տեսքն Կազմու Ֆուրուկավան նշել է, որ դա ԱՄԷ-ում իրականացվող ամենախոշոր նախագծերից մեկն է:

Ճապոնական «Նիպպոն օլի կորպորեյշն»-ը և «Ալ Քուդրա հոլիդինգ»-ը ("Al Qudra Holding") Արու Դաբիի առաջին ներդրումային ընկերությունը, միավորվեցին Արու Դաբիում ցեմենտ-սուլֆատի գործարան կառուցելու համար: «Նիպպոն օլի»-ը պետք է գրաղվի տէխնիկական մասով, իսկ «Ալ-Քուդրա»-ն մարքեթինգի մասով: «Նիպպոն օլի»-ի դեկավար Մատոկ Սատանի խոսքերով՝ այս գործարանը պետք է դառնա առաջինը մերձավորարենելյան տարածաշրջանում:

³⁸⁵ Joint Statement between Japan and the United Arab Emirates, http://www.mofa.go.jp/region/middle_e/pmv0704/joint_uae.html

Ճապոնիան ԱՄԷ-ում ներդրումներ է կատարում նաև այլընտրանքային էներգիայի զարգացման ոլորտում: ԱՄԷ-ն ցանկանում է դառնալ առաջին արաբական պետությունը, որը կզարգացնի ասումային էներգիան իր երկրում, և Ճապոնիան պատրաստ է աջակցել վերջինիս այդ հարցում: Տոկիոն առաջին հերթին հետարրրված է զարգացնելու «քաղաքացիական ատոմ»-ը, որը չի հետապնդելու ռազմական նպատակներ: Արդեև 2008 թ. հունվարի 19-ին Ճապոնիայի տնտեսության, առևտուրի և արդյունաբերության փոխնախարար Տակամորի Յոսիհիկավան պայմանագիր կնքեց ԱՄԷ-ի արտգործնախարար Սահի Սուլյան ալ-Արյանիի հետ ԱՄԷ-ում «խաղաղ ատոմ»-ի զարգացման վերաբերյալ: Ճապոնիան նշեց, որ պատրաստ է ԱՄԷ-ին տրամադրել տեխնոլոգիա, որը կնպաստի «խաղաղ ատոմի» զարգացման գործընթացին³⁸⁶: Առաջին ատոմակայանը Ճապոնիան նախատեսում է ավարտին հասցեել 2017 թ.³⁸⁷, երկրորդը և երրորդը՝ համապատասխանաբար 2018 թ. և 2019 թ.: Այս երեք աէկները կունենան 1650 մեգավատտ հզորություն: Ավելին՝ վերահսկման նպատակով ԱՄԷ-ն համաձայնվեց, որ աէկի աշխատացման համար ներկրված հումքը վերամշակվելուց հետո հետ կլերադավի այս պետությանը, որտեղից ներկրվել է, որպեսզի միջազգային հանրությունը կարողանա վերահսկել և համոզվել, որ ուրանը չի հարստացվում և ԱՄԷ-ն օգտագործում է ատոմային էներգիան գուտ քաղաքացիական նպատակներով:

Ճապոնիան և ԱՄԷ-ն խորացնում են իրենց համագործակցությունը նաև բժշկության, կրթության և մշակույթի

³⁸⁶ Japan-Emirates Talks on Nuclear Cooperation, Newsletter No. 1215, News-Analysis, 06.12.2008, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/December2008/December2008n1215.htm>

³⁸⁷ The Deepening of Japan-UAE Energy Cooperation, Newsletter No. 1271, News-Analysis, 02.02.2009, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/February2009/February2009n1271.htm>

ոլորտներում: Այսպես՝ բժշկության ոլորտում կնքվել են պայմանագրեր Աբու Դարիի առողջապահության նախարարության և Ճապոնիայի բժշկական հաստատությունների միջև՝ հիվանդներին ԱՍԷ-ից Ճապոնիա տեղափոխելու վերաբերյալ, սոորազրվել են պայմանագրեր երկու երկրների բժշկական համալսարանների միջև՝ ուսանողների շրջանակներում փոխանակման ծրագրեր իրականացնելու, ինչպես նաև ԱՍԷ-ի «Թավամ» հիվանդանոցում ճապոնական ոճի կլինիկա բացելու վերաբերյալ:

Ճապոնական դեսպանատան նախաձեռնությամբ ԱՍԷ-ում կազմակերպվում են ճապոներեն դասընթացներ, ինչպես նաև իրականացվում են զանազան կրթական փոխանակման ծրագրեր, արարերենից ճապոներեն բարգմանվում և հրատարակվում են զանազան գրքեր³⁸⁸:

Փաստորեն ճապոնիա - ԱՍԷ բաղարատնեսական հարաբերությունները, որոնք ունեն ավելի քան բառասուն տարվա պատմություն, չեն սահմանափակվում միայն առևտրատնտեսական հարաբերություններով, այլ ընդգրկում են համագործակցության զանազան և բազմաթիվ ոլորտներ:

3.2.2. ՃԱՊՈՆԻԱ - ԲԱՀՐԵՅՆ

Բահրեյնը ԾՃՆ-ի ամենափոքր պետությունն է, ինչպես ֆիզիկական չափանիշներով (պարամետրերով), այնպես էլ տնտեսական մասշտարով: Երկրի տարածքը 715.5 քառ. կմ է, բաղկացած է 35 կղզիներից: Նավթի պաշարների քանակով Բահրեյնը զիջում է ԾՃՆ-ի մյուս երկրներին: Բահրեյնի

³⁸⁸ Fact Sheet: List of Memoranda of Japan-UAE Cooperation, <http://www.mofa.go.jp/files/000004142.pdf>

Նավթից ստացված եկամուտը կազմում է բյուջեի 55%-ը, որը, համեմատած Ծոցի մյուս երկրների հետ, անհամեմատ քիչ է³⁹.

Բահրեյնը, չնայած փոքր պետություն լինելուն, նշանակալի գործուն է Ծոցի տարածաշրջանում միջազգային հարաբերությունների ձևավորման հարցում, յուրահատուկ դեր է խաղում ուժերի հավասարակշռություն հաստատելու և պահպանելու գործում: Նա սերտ քաղաքական և տնտեսական հարաբերություններ է հաստատել հարևան արաբական երկրների, մասնավորապես Սաուդյան Արաբիայի հետ: Նավթի պաշարների սահմանափակ լինելը Բահրեյնին դեռևս պրոտեկտորատի շրջանում հարկադրել էր նավթ ներկրել նաև Սաուդյան Արաբիայից և այդ նպատակով կառուցվել էր նաև վամփամուտ³⁹⁰: Բահրեյնը բարեկամական հարաբերություններ է պահպանում նաև իր նախկին պրոտեկտոր Մեծ Բրիտանիայի հետ և սերտ հարաբերություններ է հաստատել ԱՄՆ-ի հետ³⁹¹: Կղզում տեղակայված է ամերիկյան 5-րդ նավատորմը³⁹²:

Բահրեյնի առջև ծառացած էն մի շարք բարդ խնդիրներ՝ կապված երկու կարևոր հանգամակրների հետ.

Առաջինը՝ նավթի արդյունահանման և նավթարդյունաբերության խնդիրն է: Նավթի արդյունահանումը երկար ժամանակ հանդիսացել է Բահրեյնի տնտեսության զիսավոր ճյուղը: Սակայն Բահրեյնի նավթի պաշարները մեծ չեն, և

³⁴⁹ Аль-Хайдан Тарик Ахмед, Проблемы безопасности в районе Арабского залива и будущие вызовы. Диссертация. М., 2002, с. 162.

³⁹⁰ Социально-экономическое развитие Бахрейна (1930-1990), Ближний Восток и современность. Сборник статей. Выпуск третий. М., 1997, с. 29.

³⁹¹ Հովհաննեսիսյան Ն., Արարական երկրաբերի պատմություն, Անկախության և ինքնաշխանականության դաստիարակության, 1918-2005 թ., Հաստիք III, էջ 175:

³⁹² Хасянов А., Бахрейн: Путь к либерализации и национальному примирению, Ближний Восток и современность, Сборник статей, Выпуск Шестнадцатый, М., 2002, с. 219.

նրանք մոտենում են սպառման գծին: Բահրեյնի նավթարդյունաբերության զործընթացն իրականացնում է «Բահրեյն պետրոլեում կոմպանի» (ԲԱՊԿՕ) ("Bahrain Petroleum Company"(BAPCO)) ընկերությունը, որը ստեղծվել էր 1929 թ. Կանադայում «Ստանդարտ օլ կոմպանի օֆ Կալիֆոռնիա» ("Standard Oil Company of California") ընկերության կողմից: Բահրեյնում հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով: Արդեն 1932 թ. Բահրեյնի տարածքում ԲԱՊԿՕ-ն հայտնաբերեց «Ավալի» նավթահանքը, որտեղից սկսեց նավթարդյունահանքը³⁹³, իսկ 1948 թ.՝ նաև բնական գազի պաշարները: 2001 թ. դրույթամբ Բահրեյնում նավթի պաշարները հաշվվում են 130 մլն բարել: Օրական արդյունահանվում է 187 հազար բարել նավթը՝ ներքին հանրավայրերից, իսկ 145 հազար բարելը՝ նավթը՝ ներքին հանրավայրերից, իսկ 145 հազար բարելը՝ Սաուդյան Արաբիայի «Արու Սաֆա» նավթահանքից, որը 1996 թվականից հանձնվել էր Բահրեյնին անժամկետ օգտագործման պայմանով: 1999 թ. ԲԱՊԿՕ ընկերությունն ազգայնացվեց, որը բույլ տվեց Բահրեյնին ինքնուրույն տնօրինել նավթից ստացած եկամուտները³⁹⁴:

Երկրորդ նավթարդյունահանման բնագավառում ստեղծված անբարենպաստ իրադրությունը ստիպեց Բահրեյնի իշխանություններին 80-ականներից որդեգրել նոր քաղաքականություն՝ տնտեսության բազմազանեցման քաղաքականությունը, որը նպատակ ուներ արդիականացնել տնտեսությունը՝ ձևավորելով ու զարգացնելով նոր ճյուղերը³⁹⁵: Այսպիսով՝ հիմնվեցին նավթարդյունաբերության հետ առնչություն չունեցող գործարաններ: Դրանց մեջ առաջինը պետք է

³⁹³ The Bahrain Petroleum Company, <http://www.bapco.net/default.asp?action=category&id=28>

³⁹⁴ "The Middle East and North Africa", Routledge, 2002, p. 225.

³⁹⁵ Հովհաննիսիան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր III, էջ 176:

նշել այսումինի գործարանի հիմունը, որն աշխատում է Ավստրալիայից ներկրվող հումքով: Այստեղ ձևվում է այսումին, արտադրվում այսումինի փոշի և արտադրանքի այլ տեսակներ, որոնք օգտագործվում են ոչ միայն ներքին սպառման, այլև արտահանման համար: Փաստորեն ստեղծվել է Բահրեյնի արդյունաբերության այսումինի սեկտոր, որը վերահսկում և տնօրինում է «Այսումինիում Բահրեյն» (ALBA) ("Aluminium Bahrain" (ALBA)) ընկերությունը: Նրա բաժնետոմսերի 77%-ը պատկանում է Բահրեյնի կառավարությանը, իսկ մնացածը՝ Սաուդյան Արաբիայի «Փարլիկ ինվեստմենտ» ֆոնդին ("Public Investment" Fund) և գերմանական «Բրետոնուն ինվեստմենտ» ("Bretton Investment") ընկերությանը:

Անկախության շրջանում տնտեսության մեջ կատարված բազմազանեցման կարևոր ցուցիչներից մեկն էր նաև նոր բանկային համակարգի ստեղծումը: Բահրեյնը շատ կարճ ժամանակահատվածում վերածվեց բանկային միջազգային կենտրոնի Մերձավոր և Միջին Արևելյում³⁹⁶: Դրան նպաստեցին երեք հանգամանք.

Առաջին՝ Լիբանանում 1975-1982 թթ. տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի հետևանքով Բեյրութը դադարեց այդ տարածաշրջանի բանկային կենտրոն լինելուց:

Երկրորդ՝ 1970-ականներին և հետագա տարիներին նավթի համաշխարհային գների բարձրացման հետևանքով շեշտակի աճեցին դրամական հասույթները, որոնք կիրառման նոր ոլորտ էին փնտրում, և նրանք հոսեցին դեպի բանկային համակարգ:

Երրորդ՝ Բահրեյնում ստեղծվեցին առավել նպաստավոր իրավական – օրենսդրական, պետական-քաղաքական և տնտեսական պայմաններ բանկային գործունեության համար:

³⁹⁶ Исаев В., Филоник А., Королевство Бахрейн. Опыт развития в условиях изменения ресурсной ориентации, №2, аշխ., էջ 195:

լիբերալ օրենսդրություն, զանազան արտոնություններ, այդ քվում՝ ստացված շահույթների ազատ արտահանում, հուսալի երաշխիքներ բանկային գործունեության ծավալման համար, անվտանգության և ապահովագրության վերին աստիճանի հուսալի համակարգի ստեղծում, որոնք առաջնային նշանակություն ունեն բանկային համակարգի զարգացման գործում:

Այժմ Բահրեյնը համարվում է համարաբական ֆինանսարանակային կենտրոն: Ֆինանսարանակային համակարգի ստեղծումը մեծապես նպաստեց Բահրեյնի տնտեսության զարգացմանը և նոր հեռանկարներ բացեց երա առջև³⁹⁷:

Բահրեյնի զիսավոր առնուրային գործընկերներն են Ավստրալիան, Ճապոնիան, Սաուտյան Արաբիան, Չինաստանը, ԱՄՆ-ը, ԱՄԷ-ն, Գերմանիան և Մեծ Բրիտանիան³⁹⁸: Ճապոնիայի և Բահրեյնի միջև ապրանքաշրջանառությունը 2008 թ. կազմել է 1 մլրդ 348 մլն դոլար, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 20%-ով, իսկ 2011 թ. դրույթամբ այդ ցուցանիշը հասավ 3,7 մլրդ դոլարի³⁹⁹: Ըստ ԶԵՏՇՕ-ի տվյալների՝ 2008 թ. Բահրեյնում Ճապոնիայից ներկրվող ապրանքների բանակն աճել է 37,8 %-ով՝ հասելով 932.2 մլն դոլարի: Նոյն ժամանակահատվածում Բահրեյնի արտահանումները Ճապոնիա, որոնք ներառել են մեծ մասամբ հում նավը, այսումին, հասել են 415,7 մլն դոլարի: Բացի այդ, 2008 թ. Բահրեյնը սկսեց Ճապոնիա արտահանել նաև հեղուկացված պրոպան (5,5 մլն դոլարի), իսկ Ճապոնիայից ներկրում են մերենաներ և տրանսպորտային սարքավորումներ⁴⁰⁰:

³⁹⁷ Հովհաննիսյան Ն., Արարական երկրների պատմություն, Անկախության և ինքիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Հատոր III, էջ 178-179:

³⁹⁸ Bahrain Imports, <http://www.tradingeconomics.com/bahrain/imports>

³⁹⁹ Historic Bahrain-Japan Ties in Spotlight, Manama, 24.09.2013, http://www.tradeasia.com/news/LAW_241467.html

⁴⁰⁰ Strengthening the Bahraini-Japanese Partnership, 05.02.2014, <http://gulf-insider.com/strengthening-the-bahraini-japanese-partnership/>

Բահրեյնը բավական բարձր է գնահատում ճապոնիայի հետ հարաբերությունները և ցանկանում է այս ամրապնդել Ծնն-Ճապոնիա ազատ առևտորի պայմանագրի միջոցով։ Այդ մասին նշել է արդյունաբերության և առևտորի նախարար Հասան Ֆակիրովն «Ճապոնիա-Բահրեյն բիզնես ֆորում»-ի բացման ժամանակ։ Այսօր Բահրեյնը ճապոնիայի երկրորդ ամենախոշոր առևտորային գործընկերն է։ Բահրեյնում գործող մոտ 25 ճապոնական ընկերությունները («Նոմուրա Սերյուրիթիթս», «Տոյոտա», «Յոկոզավա», «Դահիվա Սերյուրիթիթս» և այլն) ⁴⁰¹ բավական ակտիվ են Բահրեյնի ֆինանսական, առևտորային և արդյունաբերական ոլորտներում, նաև ներգրավված են նավթի, գազի, հեռահաղորդակցության և այլ նախագծերում ⁴⁰²։

Ճապոնիայի և Բահրեյնի համագործակցությունը չի սահմանափակվում միայն առևտորով։ Ճապոնիան իրականացնում է նաև մի շարք այլ ծրագրեր։ Այսպես՝ կառուցում է 1,2 մլրդ դոլար արժողությամբ պողպատի գործարան, որը կստեղծի 800 աշխատատեղ տեղի բնակչության համար։ Այս հարցի շուրջ Ճապոնիայի դեսպանը Բահրեյնում՝ Տակեշի Կոնոյոն, «Գալֆ Շեյխ Լյուսում» տվյալ հարցազրույցում նշել է, որ այդ նախագիծը կդառնա Բահրեյնի արդյունաբերության ոլորտում կատարած ճապոնիայի գլխավոր ներդրումներից մեկը ⁴⁰³։ Բացի այդ, Ճապոնիան պատրաստակամություն հայտնեց աջակցել Բահրեյնին առոմակայան կառուցելու և աստոմային ներգիայի զարգացման հարցում, որը կտա էլեկտրականություն ստանալու հնարավորություն։ Ճապոնա-

⁴⁰¹ EDB Push to Promote Investment with Japan, 13.02.2014, <http://www.gulf-daily-news.com/NewsDetails.aspx?storyid=370551>

⁴⁰² Free Trade Pact to Spur Bahraini-Japanese Ties, 03.02.2011, <http://www.gulf-daily-news.com/NewsDetails.aspx?storyid=298237>

⁴⁰³ Gulf Daily News, 11.10.2007, <http://www.gulf-daily-news.com/NewsDetails.aspx?storyid=196393>

կան ընկերությունները ևան հետաքրքրված են Բահրեյնում արևային էներգիայի զարգացման հարցում:

2008 թ. փետրվարի 5-10-ը Բահրեյնի արտգործնախարար Շեյխ Խալիդ բին Ահմեդ բին Սոհամեդ ալ Խալիֆան այցելեց Տուկոն Հապոնիայի արտգործնախարար Սասահիկո Կոումուրայի հետ հանդիպելու նպատակով: Կողմերը նշեցին, որ անհրաժեշտ է խորացնել երկու կողմերի միջև համագործակցությունը ՁԵՏՐՕ-ի և ՃՄՀԿ-ի շրջանակներում՝ կարողելով մերձավորաբերյալ խնդիրների լուծման հարցերի շուրջ միասնական մոտեցման ձևավորումը: Վերոնշյալ կենտրոնի կազմակերպած հանդիպման ժամանակ Բահրեյնն արտահայտեց իր երախտազիտությունը Հապոնիային՝ Իրարի վերականգնողական աշխատանքներին տրամադրած աջակցության համար: Երկու կողմերը նշեցին իրանյան միջուկային խնդրի խաղաղ լուծման անհրաժեշտության մասին: Ավելին՝ Բահրեյնն իր պատրաստակամությունն արտահայտեց աջակցելու Հապոնիային ՄԱԿ-ի ԱԽ-ում մշտական անդամ դառնալու հարցում⁴⁰⁴: Հապոնիան խրախուսում է նաև Բահրեյնում 2002 թ. նոր սահմանադրության ընդունման և մի շարք բարեփոխումների իրականացման գործընթացը, ինչը կարող է ամուր և կայուն հարաբերությունների զարգացման երաշխիք դառնալ⁴⁰⁵:

Երկողմանի հարաբերություններն ընդգրկում են նաև կրթության և մշակույթի ոլորտները: Յուրաքանչյուր տարի Բահրեյնի և Հապոնիայի ուսանողների միջև տեղի են ունենում փոխանակումներ, Բահրեյնում անց են կացվում ծաղկի արվեստի (իկերանա), Հապոնական ֆիլմերի

⁴⁰⁴ Joint Statement between Japan and the Kingdom of Bahrain, http://www.mofa.go.jp/region/middle_e/bahrain/joint0802.html

⁴⁰⁵ Amendment to the Constitution of Bahrain, 20.02.2002, <http://www.mofa.go.jp/announce/announce/2002/2/0220-2.html>

պարբերաբար ցուցադրություններ, կազմակերպվում են ձապոներենի դասընթացներ⁴⁰⁶:

Փաստորեն Բահրեյնը, լինելով տարածքային առումով փոքր և համեմատաբար զիշ ուսուրասներ ունեցող պետություն, այնուամենայնիվ, մեծ դերակատարություն ունի Ծոցի տարածաշրջանում, և ձապոնիայի հարաբերությունները վերջինիս հետ ընդգրկում են ոչ միայն առևտրատնտեսական, այլև զանազան այլ ոլորտներ:

3.2.3. ՃԱՊՈՆԻԱ - ԿԱՏԱՐ

Ճապոնիա – Կատար քաղաքատնտեսական հարաբերությունները տարեցտարի ավելի խորանում և զարգանում են: Առանձնացնենք մի շարք պատճառներ, որոնք նպաստում են Ճապոնիայի տնտեսական և քաղաքական հարաբերությունների զարգացմանը Կատարի հետ:

Առաջին հերթին Տոկիոն ցանկանում է ձեռք բերել «ընկերներ» Ծոցում, այն ժամանակ, եթե Իրաքը զտևկում է մեկուսացման մեջ, իսկ ԱՄՆ-ի լարված հարաբերություններն Իրաքի հետ բռով չեն տալիս Ճապոնիային խորացնել իր հարաբերությունները Թեհրանի հետ: Ելնելով ստեղծված աշխարհաքաղաքական իրադրությունից՝ Կատարը լիովին համապատասխանում է Ծոցի տարածաշրջանում Ճապոնիայի գործընկերը լինելու պահանջներին:

Երկրորդ Կատարում է տեղակայված աշխարհի ապացուցված զագի պաշարների 1/3-ը Ռուսաստանից և Իրանից հետո մոտ 25,78 տրիլիոն խորանարդ մետր զագ, ինչպես նաև Կատարը ամենամեծ հեղուկացված զագ արդյունահանող պետությունն է, ինչը նույնականացնում է Կատարի հարաբերությունները խորացնելու համար: Կատարը Ճա-

⁴⁰⁶ Embassy of Japan in Bahrain, http://www.bh.emb-japan.go.jp/culture_Education.htm

պոնիայի չորրորդ ամենախոշոր քնական զագ ներկրողն է՝ Խոդոնեզիայից, Մալայզիայից և Ավստրալիայից հետո:

Երրորդ Ճապոնիայի տևականության համար մեծ կարեւորություն է ներկայացնում Կատարից ներկրվող նավթը: Կատարը գրադեցնում է 3-րդ տեղը (օրական 3,84 մլն բարել նավթ) Ճապոնիա նավթ արտահանող երկների շարքում՝ զիջելով միայն Սաումայան Արաբիային և ԱՄԷ-ին:

Չորրորդ հանգամանքը պայմանավորված է Կատարի հետ ԱՄՆ-ի սերտ ռազմաքաղաքական հարաբերությունների առկայությամբ: Կաշինգտոնը, ունենալով որոշակի քաղաքական քնույթի հակասություններ Սաումայան Արաբիայի հետ, փորձում է ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում Կատարի միջոցով՝ տեղակայելով վերջինիս տարածքում իր երկու ռազմաքաղաքները⁴⁰⁷: Դրանք են «Ալ-Ռիյադ» ռազմաօդային բազան և «Ալ-Սահլիյա» ճամբարը:

Կատարի եկամտի 70%-ը ստացվում է ածխաջրածնի արտահանումից: Երկրի նավթի և զագի արդյունաբերությունը զտնվում է «Կատար պետրոլեում»-ի ("Qatar Petroleum") պատասխանատվության տակ, որը ստեղծվել է 1974 թ. և հանդիսանում է պետական սեփականությունը⁴⁰⁸: «Կատար պետրոլեում»-ի իրավասության տակ են զտնվում մերձափեյա զագի և նավթի հանքերը, որոնք տեղակայված են մասնավորապես Դոհա, Դուկիան, Մեսահի և Ռաս Լաֆֆան քաղաքներում, ինչպես նաև ծովային տարածքներում, ներառյալ Հալու կղզին և «Հյուսիսային հանքավայրը»:

Որոշ հանքավայրերում արդյունահանման գործընթացը «Կատար պետրոլեում»-ն իրականացնում է ինքնուրույն:

⁴⁰⁷ The Reasons Why Japan and Qatar have Become so Friendly, News-Analysis, Newsletter No. 516, 12.02.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/February2007/february2007n516.htm>

⁴⁰⁸ Qatar Petroleum: Committed to Excellence, <http://www.qp.com.qa/en/Homepage/AboutUs.aspx>

Այսպէս՝ «Կատար պետրոլեում»-ին են պատկանում «Դուկիան» մերձափնյա հանքավայրը, որտեղ տեղակայված են երեք նավթահանք և մեկ գազի հանք, ծովափնյա «Մայդան Մահզամ» և «Բուլ Հանինե» նավթահանքերը։ Վերոնշյալ հանքավայրերում առկա են ընդհանուր առմամբ 579,6 մլն բարել նավթ և 3,94 տրիլիոն խորանարդ ֆութ բևական գազ։ Մեացած հանքավայրերի «Ալ Շահսեն»-ի, «Ալ Ռայյան»-ի, «Ալ Խալեջ»-ի, «Իդդ Ալ Շարքի»-ի և «Ալ Կարկարա»-ի արդյունահանման գործընթացն իրականացվում է «Կատար պետրոլեում»-ի և միջազգային նավթային ընկերությունների միջև «Շահագործման և արդյունահանման վերաբերյալ համաձայնագրի» կամ «Զարգացման ու արդյունահանման վերաբերյալ համաձայնագրի» միջոցով (տե՛ս Հավելված, Քարտեզ 9)։ Ըստ այդ համաձայնագրերի՝ օտարերկրյա ընկերությունները ներդրումներ են կատարում վերոնշյալ հանքավայրերի զարգացման ու արդյունահանման նպատակով և վաճառքից ստացված եկամուտը կիսում են Կատարի կառավարության հետ։

Ճապոնիան, ուսենալով ածխաջրածնի մեծ պահանջարկ, համագործակցում է Կատարի հետ ինչպէս նավթարդյունահանման, այնպէս էլ գազի արդյունահանման, զագի հեղուկացման ոլորտներում։ Այսպէս ճապոնական մի շարք ընկերություններ կըրել են համաձայնագրեր «Կատար պետրոլեում»-ի հետ նավթահանքերի հետախուզման, զարգացման, արդյունահանման նպատակով։

1997 թ. հուլիսին ճապոնական «Նիշո իվայի կորպորեյշն»-ը ("Nissho Iwai Corporation") (ներկայիս «Սոյչիթս կորպորեյշն»-ը ("Sojitz Corporation")) 14.17% բաժնետոմսերով) և «Կոսմո օյլ»-ը (ներկայիս «Կոսմո էներգի էքսպլորեյշն» ընդ դիվելոփմենտ կորպորեյշն»-ը ("Cosmo Energy Exploration and Development Corporation")) 85.83% բաժնետոմսերով) ստորագրեցին պայմանագիր «Կատար

պետրոլեում»-ի հետ՝ Կատարի «Բլոկ 1» հանքավայրում տեղակայված «Ալ-Կարկարա» (Al-Karkara) և «Ա-Նորթ» (A-North) նավթահանքերում՝ նավթի արդյունահանում իրականացնելու վերաբերյալ (տե՛ս Հավելված, Քարտեզ 8)⁴⁰⁹:

Ըստհանուր շահերից ելեկով՝ «Սոխիթս կորպորեյշն»-ը և «Կոսմո օյլ»-ը միավորվեցին ստեղծելով «Կատար պետրոլեում դիվելովմենտ» ("Qatar Petroleum Development") ընկերությունը⁴¹⁰, որը հանդիսանում է վերոնշյալ երկու ընկերությունների ներկայացուցիչը՝ «Բլոկ 1» հանքավայրից արդյունահանում իրականացնելու հարցում: 2006 թ. մարտից ի վեր վերոնշյալ նավթահանքերից արդյունահանվում է օրական 6000 բարել նավթ, և այն ամբողջովին առարկում է Ճապոնիա⁴¹¹:

Ճապոնական «Կոսմո օյլ» ընկերությունը ներգրավված է նաև Կատարի «Բլոկ 3» հանքավայրի մշակման, զարգացման և արդյունահանման գործընթացներում: Այս նախագծի իրագործման համար «Կոսմո օյլ»-ը ներդրել է 19.3 մլն դոլար: Վերոնշյալ նախագծում բաժնետոմսերի 40%-ը պատկանում է գերմանական «Վինտերշալ» ("Wintershall") ընկերությանը, 35%-ը՝ «Կոսմո օյլ»-ին, իսկ 25%-ը՝ ինդոնեզիական «Պերտամինա» ("Pertamina") ընկերությանը⁴¹²: 2010 թ. «Բլոկ 3» հանքավայրից Ճապոնիա է առարկում օրական 13000 բարել նավթ:

⁴⁰⁹ Qatar Petroleum Development to Manage Al-Karkara Oil Field, 22.09.2003, <http://www.albawaba.com/business/qatar-petroleum-development-manage-al-karkara-oil-field>

⁴¹⁰ Qatar Petroleum Development Co., <http://www.qpd-jp.com/>

⁴¹¹ Sojitz to Develop New Oil Field in Offshore Block 1 in Southeastern Qatar, 01.02.2008, <http://www.sojitz.com/jp/news/docs/080201e.pdf>

⁴¹² The Cosmo Oil Company Widens Its Stake in Qatar, News-Analysis, Newsletter No. 781, 26.10.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/october2007/october2007n781.htm>

Ճապոնիան Կատարի ամենամեծ առևտրային գործընկերն է, քանի որ ներկրում է Կատարի արտահանվող նավթի 70%-ը⁴¹³: Ըստ 2006 թ. ԶԵՏՐՕ-ի տվյալների՝ Ճապոնիայի և Կատարի միջև առևտրաշրջանառությունն աճել է 39.3%-ով: Եվ այդ ցուցանիշը տարեցտարի աճում է: Այսպէս 2008 թ. գրանցվեց 50.4% -ի աճ՝ հասնելով 28.2 մլրդ դոլարի, իսկ 2012 թ. հասավ 37 մլրդ դոլարի⁴¹⁴:

Ճապոնիայի «ԶԻ-ԻՔՍ Նիպպոն օլ ընդ զազ Էրնֆիլդեյշըն» ("JX Nippon Oil & Gas Exploration") ընկերությունը «Կատար պետրոլենում»-ի հետ 30 տարի ժամկետով կնքեց պայմանագիր՝ Ռաս Լաֆան քաղաքում տեղակայված «Բլոկ Ա»-ում հետախուզական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ: Ըստ պայմանագրի՝ ընկերությունն ինքը պետք է որոշի, թե ում վաճառել արդյունահանված նավթը⁴¹⁵:

Ճապոնական չորս ընկերությունները՝ «Կոսան օլ»-ը, «Իդեմիտս կոսան»-ը ("Idemitsu Kosan"), «Միցուի»-ն ("Mitsui") և «Մարուբենի կորպորեյշըն»-ը ("Marubeni Corporation") մասնակցում են Ռաս Լաֆան քաղաքում նավթի վերամբշակման գործարանի կառուցման գործընթացին: Բաժնետոմսերի 51%-ը՝ պատկանում է «Կատար պետրոլենում» (Կատար), 10%-ը՝ «Կոսան օլ» (Ճապոնիա), 10%-ը՝ «Էքսոն մոբիլ» (ԱՄՆ) ("Exxon Mobil"), մյուս 10%-ը՝ «Իդեմիտս կոսան» (Ճապոնիա), 4.5%-ը՝ «Մարուբենի» (Ճապոնիա) և 4.5%-ը՝ «Մի-

⁴¹³ Masaki H., Qatar, Japan's Energy White Knight, 04.12.2006, <http://www.worldsecuritynetwork.com/Japan/hisane-masaki/Qatar-Japans-energy-white-knight>

⁴¹⁴ Qatar-Japan Trade Reaches \$37bn: Minister, 29.08.2013, <http://thepeninsulaqatar.com/business/qatar-business/250719/qatar-japan-trade-reaches-37bn-minister>

⁴¹⁵ JX May Sell Stake in Qatar Gas Project, 02.12.2011, <http://www.lngworldnews.com/jx-may-sell-stake-in-qatar-gas-project/>; Japan Firm Signs \$100 mln Gas Exploration Deal, 09 May 2011, <http://news.chinaoilweb.com/World/QP-Japan-firm-signs-100mn-gas-exploration-deal.7280.htm>

ցուի» (Ճապոնիա) ընկերություններին: Փաստորեն Ճապոնիային բաժին է հասնում վերոնշյալ նախագծի բաժնետոմսերի 29%-ը⁴¹⁶: Գործարանի կառուցումն արժեցավ 800 մլն դոլար: Նավթի վերամշակման գործարանը 2009 թ. սկսած վերամշակում է օրական 146000 բարել նավթ⁴¹⁷:

Ճապոնիայի ներգրավումը Կատարի հեղուկացված գազի արդյունաբերության ոլորտում երկկողմանի հարաբերություններին նոր շունչ տվեց: Այսպես, թեև Կատարում բնական գազի պաշարներ հայտնաբերվել են դեռևս 1970-ականների սկզբին, սակայն Կատարը կարողանում էր արտահանել այն միայն հարեւան պետություններ ԱՄԷ, Օման, Բահրեյն և Քուվեյթ «Դոլֆին» կոչվող անդրծովյա խողովակաշարի միջոցով, քանի որ ավելի հեռու տարածք առաքելու համար անհրաժեշտ էր բնական գազը փոխակերպել հեղուկացված գազի, որպեսզի տանկերների միջոցով այն հեարավոր լինի արտահանել⁴¹⁸: Բնական գազը հեղուկացված գազի վերածելու համար անհրաժեշտ էն մեծ ներդրումներ, որոնք Կատարն ի վիճակի չեր անել, այդ պատճառով գազի արդյունահանման ոլորտը միևնույն 1990-ականների սկիզբը գտնվում էր ոչ զարգացած վիճակում:

Գազի հեղուկացման ոլորտի զարգացման առաքելությունն իրենց վրա վերցրին ճապոնական ընկերությունները, որոնց հաջողվեց «արթնացնել» Կատարի գազի արդյունաբերության ոլորտը՝ սկիզբ դնելով երկկողմ հարաբերությունների նոր փուլին: Այսպես ճապոնական «Միցուի» և «Մարոբենի» ընկերությունները սկսեցին համագործակցել Կատարի

⁴¹⁶ Idemitsu, 3 Other Japan Firms to Acquire 29% Stake in Qatar Refinery, <http://kayouko.net/Idemitsu-3-other-Japan-firms-to-acquire.html>

⁴¹⁷ Laffan Refinery in Qatar Begins Production, 27.09.2009, <http://www.ameinfo.com/blog/news/laffan-refinery-in-qatar-begins-production/>

⁴¹⁸ Qatar Says Its Mega Gas Projects are Completed, 01.11.2010, http://www.gasandoil.com/news/middle_east/d2cc6782361bc867caabdd4ce931433c

Կառավարության հետ: Նրանք ներգրավեցին նաև «Չուրու էլեքտրիք» ընկերությանը, որը 1992 թ. պայմանագիր կսրբ Կատարի կառավարության հետ՝ աջակցելով հեղուկացված զագի արդյունաբերության զարգացման գործընթացին: 1997 թ. հեղուկացված զագն առաջին անգամ արտահանվեց Ճապոնիա⁴¹⁹, և մինչև 2000 թ. ճապոնիան եղել է Կատարի միակ հեղուկացված զագի ներկրողը: Այժմ ներկրողների թիվը շատացել է, սակայն Ճապոնիան դասվում է ամենակարևոր գործընկերների շարքին: Այդ մասին նշել է փոխվարչապետ շեյխ Աբդալա բին Համադ ալ-Աքիյահը, որը նաև «Կատար-զագ» ընկերության նախագահն է և էներգետիկայի նախարարը ասելով. «Կատարը բնական զագի ոլորտի զարգացման համար երախտապարտ է Ճապոնիային»՝ հավելելով, որ ճապոնիան միշտ կմնա Կատարի ամենակարևոր ռազմավարական գործընկերը թե՝ զագի ու նավթի արտահանման, թե՝ առևտուրի ոլորտներում⁴²⁰: 2006 թ. Տոկիոյում եղած ժամանակ Կատարի էներգետիկ և արդյունաբերության նախարար Աբդուլա բին Համադ ալ-Աքիյահը նույնիսկ հայտարարեց, որ իր երկիրը մտադիր է Ճապոնիա արտահանվող հեղուկացված զագի բանակի ավելացնել 6 մլն տոննայից հասցելով 11 մլն տոննայի⁴²¹: 2010 թ. Կատարն ավարտեց նաև 15 տարի տևած հեղուկացված զագի գործարակի կառուցումը, որի շնորհիվ նա դարձավ աշխարհի ամենաշատ հեղուկացված զագ

⁴¹⁹ The Miracle of Doha, Asahi Shinbun, 20.02.2006.

⁴²⁰ The Reasons Why Japan and Qatar have Become So Friendly, News-Analysis, Newsletter No. 516, 12.02.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/february2007/february2007n516.htm>

⁴²¹ Masaki H., Qatar, Japan's Energy White Knight, 04.12.2006, <http://www.worldsecuritynetwork.com/Japan/hisane-masaki/Qatar-Japans-energy-white-knight>

արտահանող պետությունը (տարեկան 77 մլն տոննա հեղուկացված գազ)՝²²:

Ճապոնիան մեծ տեղ է տալիս Կատարի հետ զազային ոլորտում ունեցած հարաբերություններին, հատկապես այս քանից հետո, եթե Ինդոնեզիան հայտարարեց, որ Ճապոնիայի հետ երկարաժամկետ հիմունքներով կըքած էներգետիկ անվտանգության պայմանագիրը 2010 թ. ավարտվելուն պես, կըքած էներգետիկ ճապոնիա արտահանվող հեղուկացված գազի քանակը, քանի որ նպատակ ունի իր երկրում արդյունահանվող գազն օգտագործել ներքին պահանջարկի ապահովման նպատակով՝²³:

Կատարի զազից ունեցած մեծ կախվածության պայմաներում Ճապոնիան մտավախությամբ ընդունեց Իրանի դեկավար այաթողահ Ալի Խամենեի և Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հայտարարությունը «Գազ արդյունահանող երկրների կարտել» ստեղծելու վերաբերյալ, որը նպատակ ունի դառնալու ՕՊԵԿ-ի նավային կարտելի նմանօրինակը: Կատարի հավանական միացումը վերոնշյալ կարտելին մեծ անհանգստություն է առաջացրել Ճապոնիայում, որը ցանկանում է ամեն կերպ խոչընդոտել այդ նախագծի մեջ Կատարի ներգրավումը՝²⁴: ԱՄՆ-ը նույնպես մեծ դժգոհությամբ ընդունեց վերոնշյալ կարտելի ստեղծման գաղափարը՝ հաշ-

²² Kawach N., Qatar Says Its Mega Gas Projects are Completed, 01.11.2010, <http://www.emirates247.com/news/qatar-says-its-mega-gas-projects-are-completed-2010-11-01-1.311802>

²³ Masaki H., Qatar, Japan's Energy White Knight, 04.12.2006, <http://www.worldsecuritynetwork.com/Japan/hisane-masaki/Qatar-Japans-energy-white-knight>

²⁴ Japan Lobbies Qatar not to Join Natural Gas Export Cartel, News-Analysis, Newsletter No. 578, 09.04.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/april2007/april2007n578.htm>

խորացման վառ ապացույց է 2006 թ. ապրիլին Ճապոնիայի և Կատարի միջև տնտեսական հարաբերությունների զարգացման վերաբերյալ պայմանագրի ստորագրումը, որով հիմք դրվեց «Ճապոնիա-Կատար միասնական տնտեսական հանձնաժողով»-ի ստեղծմանը: Եվ արդեն 2006 թ. նոյեմբերի 13-ին Տոկիոյում տեղի ունեցավ «Ճապոնիա-Կատար միասնական տնտեսական հանձնաժողով»-ի առաջին հանդիպումը⁴⁷: Յուրաքանչյուր տարի վերոնշյալ հանձնաժողովը հանդիպում է, որի ժամանակ քննարկվում են երկու կողմերի միջև տնտեսական և քաղաքական համագործակցության խորացմանը նպաստող մի շարք հարցեր, ինչպես նաև վերանայվում են միջազգային քաղաքական հարցերում կողմերի մոտեցումները:

Ճապոնիան մասնակցում է Կատարում իրականացվող մի շարք շինարարական աշխատանքներին: Այսպէս՝ 2011 թ. կատարական կողմը ողջունեց ճապոնական կազմակերպության կողմից «Նոր Դոհա» միջազգային օդանավակայանի կառուցման նախաձեռնությունները⁴⁸: Ավելին Կատարի վարչապետը նշեց, որ Կատարը շահագրգուված է նաև ատոմակայակի կառուցման հարցում և հույս հայտնեց, որ Ճապոնիան կաջակցի նաև այդ հարցում:

2011 թ. մարտի 11-ին Ճապոնիայում տեղի ունեցած ողբերգական դեպքերից հետո, եթե Ֆուկուսիմա քաղաքը ցունամիի և երկրաշարժի արդյունքում վերածվեց ավերակների.

⁴⁷ Joint Statement, http://www.mofa.go.jp/region/middle_e/qatar/joint0611.html

⁴⁸ Joint Statement on Strengthening the Bilateral Economic Relations between Japan and Qatar, 4.10.2011, http://www.mofa.go.jp/region/middle_e/qatar/joint1110.html

Կատարն օգնություն տրամադրելու նպատակով հիմնեց «Կատարական բարեկամական ֆոնդ»-ը²²⁹:

Ճապոնիա - Կատար երկկողմանի հարաբերություններն ընդգրկում են նաև կրթության, մշակույթի ոլորտները: Կատարում իրականացվում են ճապոներենի արագացված կուրսեր, ցուցադրվում են ճապոնական ֆիլմեր, տեղի են ունենալում երկկողմանի փոխանակումներ երկու երկրների ուսանողների միջև: Ճապոնիան մեծարանակ զրբեր է նվիրաբերում Կատարի ազգային գրադարանին, որը խթանում է ճապոներենի ուսուցման և տարածման գործընթացը²³⁰:

Այսպես՝ 40 տարվա ընթացքում կողմերի միջև համագործակցությունն իրականացվում է ոչ միայն առևտրատնտեսական ոլորտում, ինչը, անշուշտ, շատ կարևոր տեղ է զբաղեցնում երկու երկրների հարաբերություններում, այլև կրթության, տեխնոլոգիայի, մշակույթի, ինչպես նաև շինարարական նախագծերի իրականացման ոլորտներում:

3.2.4. ՃԱՊՈՆԻԱ - ՍԱՈՒԴԻՅԱՆ ԱՐԱԲԻԱ

Սաուդյան Արաբիան և Ճապոնիան ռազմավարական գործընկերներ են²³¹: Երկկողմանի հարաբերությունները, որոնք ունեն մոտ 60 տարվա պատմություն, հիմնված են փոխշահավետության, երկու երկրների միջև բարեկամության և սերտ համագործակցության վրա: Ինչպես, առաջին հերթին Ճապոնիային հետաքրքրում է Սաուդյան Արաբիան իր

²²⁹ Qatar's Bilateral Relations with Japan, <http://www.qatarfriendshipfund.org/en/about-qatar/bilateral-relations-with-japan>

²³⁰ Embassy of Japan in the State of Qatar, http://www.qa.emb-japan.go.jp/en/culture/culture_e.html

²³¹ Joint Statement towards the Building of Strategic and Multi-layered Partnership between Japan and the Kingdom of Saudi Arabia, http://www.mofa.go.jp/region/middle_e/saudi/joint0604.html

Նավթային մեծ պաշարներով: Երկու կողմերը մեծ տեղ են տալիս համաշխարհային նավթային շուկայի կայունությանը, որտեղ Սաուդյան Արաբիան խաղում է կարևոր դեր՝ լինելով աշխարհի ամենամեծ նավթային պաշարներ ունեցող պետությունը և ՕՊԵԿ-ի կարևոր պետություններից մեկը: Ճապոնիան Սաուդյան Արաբիայի երկրորդ ամենամեծ առևտրային գործընկերն է ԱՄՆ-ից հետո⁴², որից ստանում է իր նավթային ներկրումների 1/3 մասը և ներդրումների տեսքով աջակցում է Սաուդյան Արաբիայի տնտեսության զարգացմանը⁴³: 2011 թ. դրությամբ Ճապոնիան Սաուդյան Արաբիայից ներկրել է օրական 1,2 մլն բարել նավթ: Բացի այդ, Սաուդյան Արաբիան ստեղծել է երկրում այնպիսի բարենպաստ պայմաններ, որը շահագրգում է ճապոնիային ներդրումներ կատարել: Այսպես Սաուդյան Արաբիան հանել է մասնավոր եկամտահարկը, իսկ կորպորատիվ հարկը չի գերազանցում 20%-ը: Ավելին սաուդյան արտարժույթը ոդյալը, աշխարհի ամենակայուն արտարժույթներից մեկն է, որը նույնապես խթանիչ գործոն է ներդրում կատարող երկրների համար: Հատկապես Սաուդյան Արաբիան ներդրումների համար բարենպաստ պայմաններ է ստեղծել տնտեսության բազմազանեցման նպատակով՝ զարգանելով առողջապահության, հեռուստահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտները, որտեղ իր «խոսքը», անշուշտ, կարող է ասել Ճապոնիան՝ լինելով տեխնոլոգիապես զարգացած պետություն: Սաուդյան Արաբիան իր հերթին մեծապես զնահատում է ճապոնական բարձրորակ ապրանքատեսակները և շահագր-

⁴² Saudi Arabian-Japanese Economic Relations, <http://www.saudiembassy.or.jp/50years/En/4.htm>

⁴³ Saudi Arabia-Japan: Together in the 21st Century, http://www.saudiembassy.or.jp/50years/En/1.htm#Japan-Saudi_Arabia_ties_unshakeable

գրոված է Ճապոնիայի հետ փոխհամագործակցության հարցում⁴³⁴:

2007 թ. Ճապոնիայի վարչապետ Շ. Աբեն Սառույան Արարիա կատարած իր այցելության ժամանակ հայտարարեց, որ Ճապոնիայի ներդրումների քանակը Սառույան Արարիայում գնալով աճում է և նախատեսվում է ներդրումները 2 մլրդ դոլարից հասցել մինչև 20 մլրդ դոլարի: Հատկանշական է, որ 2006 թ. դրույթամբ 3.5 մլրդ դոլարի ներդրումով Ճապոնիան դարձավ Սառույան Արարիայի ամենամեծ ներդրողը⁴³⁵. Այդ մասին հայտարարել է նաև «Նիհոն կեիձահի սինբուն»-ը հայտնելով, որ 2000-2005 թթ. ընթացքում Ճապոնիան Սառույան Արարիայի ամենախոշոր ներդրումներ կատարող պետությունն է (5 տարվա ընթացքում կատարել է 15 մլրդ դոլարի ներդրում): հետևում բռնելով նովիսիսկ ԱՄՆ-ին՝ 6 մլրդ դոլար ներդրումով:

Ճապոնական ընկերություններն ակտիվ ներդրումներ են կատարում Սառույան Արարիայի տնտեսության զանազան ոլորտներում, իսկ ԶԲԻԿ-ը հանդիսանում է մի շարք նախագրծերի զիսավոր ֆինանսավորողը: Ծագող արևի երկիրն ակտիվորեն մասնակցում է նաև Սառույան Արարիայի Ռազիդ քաղաքում նավթարիմիական գործարանի կառուցմանը, որի իրականացնում են ճապոնական «Sumimoto Chemical Corporation» և «Սառույան Արարիա օլի կոմպանի»-ն ("Saudi Arabia Oil Company")⁴³⁶: Այս

⁴³⁴ Saudi Aramco and Japan: An Enduring Relationship, <http://www.saudiaramco.com/en/home/news/speeches/saudi-aramco-and-japan--an-enduring-relationship.html#news%2527C%252Fen%252Fhome%252Fnews%252Fspeeches%252Fsaudi-aramco-and-japan--an-enduring-relationship.basesjax.html>

⁴³⁵ Joint Statement between the Kingdom of Saudi Arabia and Japan, 28-29.04.2007, http://www.mofa.go.jp/region/middle_e/pmv0704/joint_saudi.html

⁴³⁶ Saudi Aramco and Japan: An Enduring Relationship, <http://www.saudiaramco.com/en/home/news/speeches/saudi-aramco-and-japan--an-enduring-relationship.html#news%2527C%252Fen%252Fhome%252Fnews%252Fspeeches%252Fsaudi-aramco-and-japan--an-enduring-relationship.basesjax.html>

Նախագիծը ֆինանսավորում էն «Միջուրիշի կորպորեյշըն»-ը և ՍԲԻԿ բանկը: Նախագծին աջակցում էն նաև «Մարութենի կորպորեյշըն», «Խոռչու» և «Զափան զազոյին կորպորեյշըն» ("Japan Gasoline Corporation") ընկերությունները, որոնք կառուցում են ջուր մատակարարող մեծ գործարան Ռաբիդ նավթարհիմական գործարանին ջրով ապահովելու նպատակով:

Ճապոնիան Սաուդիան Արաբիայում իրականացնում է նաև մի շարք շինարարական նախագծեր: Այսպես՝ ճապոնական «Սոհջիտս կորպորացիա»-ն 2004 թ. մայիսի 25-ին պայմանագիր կնքեց «Սաուդի էլեկտրիք» ("Saudi Electric") ընկերության հետ՝ ջիղդա քաղաքում էլեկտրակայան կառուցելու վերաբերյալ: Նախագիծը ստացավ «Շոահիքա 2» անվանումը: Հատկանշական է, որ «Շոահիքա 1» էլեկտրակայանը կառուցվել էր դեռևս 1999 թ.³⁷: Վերոնշյալ էլեկտրակայանները պետք է ապահովեն էլեկտրաէներգիայով երկրի արևմտյան շրջաններին:

Ճապոնիան ներգրավված է նաև էրիլին-զիլցերինի գործարանի կառուցման գործընթացում: «Նիհոն կեհձափ սին-բուս»-ի հաղորդմամբ՝ ճապոնական «Տոյո էնջինիերինգ կորպորեյշըն» ("Toyo Engineering Corporation") ընկերությունը 402 մլն դոլար արժողությամբ պայմանագիր է կնքել ՍԱԲԻԿ-ի հետ՝ էրիլին-զիլցերինի գործարան կառուցելու համար: ՍԱԲԻԿ-ի բաժնետոսմանը 70%-ը պատկանում է Սաուդյան Արաբիային: Գործարանը կառուցվում է Սաուդյան Արաբիայի արևմտյան մասում՝ Յանբու քաղաքում: Հատկանշական է, որ «Տոյո էնջինիերինգ կորպորեյշըն»-ն արդեն փորձ ունի

252Fspeeches%252Fsaudi-aramco-and-japan--an-enduring-relationship.baseajax.html

³⁷ Sojitz Receives Consecutive Order for Large Transformer Facility Construction Work in Saudi Arabia, <http://www.sojitz.com/jp/news/docs/040525e.pdf>

* Էրիլին զիլցոյն օգուազործվում է պոլիէստր մատերիալի պատրաստման համար, որից հետագայում պատրաստում են հազորս և պլաստիկ շերք:

Սառույան Արաբիայում էթիլիս-զլիցերինի գործարան կառուցելու հարցում: Նախկինում Սառույան Արաբիայում կառուցվել են ևս չորս նմանատիպ գործարաններ:

Ճապոնական «Սումիտոտո կորպորեյշն»-ը կառուցում է Ռաս Ազուրում 6 մլրդ դոլար արժողությամբ ջրի մաքրագերձման գործարան, որն ունենալու է 850-1100 մեգավատու հզորություն: Գործարանի բաժնետոմսերի 40%-ը պատկանում է Սառույան Արաբիայի կառավարությանը, 20%-ը՝ ճապոնական «Սումիտոտո» ընկերությանը, մնացածը՝ երկու մալայզիական ընկերություններին⁴³⁸:

2005 թ. օգոստոսի 22-ին «Զափան զազոլին կորպորեյշն»-ը հայտարարեց, որ ճապոնական «Մարուբենի կորպորեյշն»-ի և սառույան «Ալջումայ հոլդինգ»-ի ("Aljomaih Holding") հետ կերել է պայմանագիր՝ Սառույան Արաբիայի նավթի և գազի համալիրներին էլեկտրաէներգիա մատակարարելու վերաբերյալ: Համալիրները տեղակայված են Սառույան Արաբիայի արևելյան մասում՝ Աբրահի, Հավիյայ և Ռաս Տանուրա շրջաններում, և պատկանում են «Սառույի Արամկո»-ին: Կառույցը, որը գնահատվում է 650 մլն դոլար, նախատեսվում է ավարտին հասցել 2016 թ.⁴³⁹:

Ճապոնիան մասնակցում է նաև Սառույան Արաբիայի «Հյուսիս-հարավ» երկարգծի կառուցման գործընթացին: Երկարգիծն ունենալու է 1418 կմ երկարություն (ձգվում է Եր-Ռիյադից մինչև Հադжիբա քաղաքը): Այն նախատեսվում է դառնալ տարածաշրջանի ամենաերկար երկարգիծը: Վերջինս կունենա տնտեսական մեծ նշանակություն, քանի որ գրադարձու է ոչ միայն ուղևորափոխադրմամբ, այլև

⁴³⁸ Sumitomo Wins Contract for Saudi Water and Power Project, Newsletter No. 1067, News-Analysis, 03.07.2008, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/july2008/july2008n1067.htm>

⁴³⁹ GC Joins Power and Steam Supply Business in Saudi Arabia, <http://www.jgc.co.jp/en/01newsinfo/2013/release/20130829.html>

ապրանքափոխադրմամբ: Երկարգծի կառուցման մեջ ներգրավված են ևս մի շարք օտարերկրյա ընկերություններ: Այսպէս Ազ Զարիրայից դեպի Ռաս ալ-Խաֆիր ձգվող մասը, որը կազմում է 576 կմ, կառուցում են «Սաուդի թին Լայեն» խումբը երկու գերմանական ընկերությունների հետ միասին: Մյուս մասը, որը ձգվում է Ազ Զարիրայից մինչև Ալ-Նաֆուդ անապատը 440 կմ երկարությամբ, կառուցում են «Չայեա ույլվեյ էիրինք բյուրոու» ("China Railway 18th Bureau") և «Ալ սուվահկեթ կորպորեյշն» ("Al Suwaiket Corporation") ընկերությունները: Ճապոնական «Միցուի» ընկերությունն ավստրիական «Բարբեյ մոուլեու» ("Berkeley Mouleu") և սաուդյան «Ալ Ռաշիդ թրեյդինգ ընդ բուրաբինն կորպորեյշն»-ի ("Al Rashid Trading and Contracting Corporation") հետ միասին կառուցում են երկարգծի 818 կմ հատվածը, որը ձգվում է հյուսիսից Հայիքա և Զալամիդ զյուղաքաղաքներից դեպի հարավ⁴⁴⁰: Այս երկու զյուղաքաղաքներից դուրս եկող երկարգծերը միանալու են միմյանց Բուայադայում և շարունակվելու են դեպի Նաֆուդ: Բուայադայից ձգվող երկարգծերից մեկը կհասնի Էր-Ռիյադ, իսկ մյուսը Ռաս ալ Զուր, որը գտնվում է Ծոցի ափին⁴⁴¹ (տե՛ս՝ ս Հավելված, Քարտեզ 10):

1998 թ. հոկտեմբերին արքայազն Աբդուլ թին Աբդուլ Ազիզն այցելեց Ճապոնիա, որի արդյունքում ստորագրվեց Ճապոնիա-Սաուդյան Արարիա համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը: Ըստ այդ համաձայնագրի՝ նախատեսվում էր 2003 թ. Զինդա քաղաքում կառուցել «Ավտոմեքենաների տեխնիկական վերապատրաստման» ինստիտուտ,

⁴⁴⁰ Saudi Mitsui and Company Wins Major Contract for Saudi Railway Construction, Newsletter No. 571, News-Analysis, 04.04.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/april2007/april2007n571.htm>

⁴⁴¹ Arabia is Constructing the World's Largest Railways, but Where do These Projects Stand? 23.10.2013, <http://www.albawaba.com/business/saudi-transportation-metro-railway-528544>

որտեղ երիտասարդ սառւղցիները կարող են սպառել մեքենայի վերանորոգման հիմնական հմտությունները:

2007 թ. ապրիլին Ճապոնիայի վարչապետ Շ. Արեն Սառւյան Արարիա կատարած այցի ժամանակ հայտարարեց, որ Ճապոնիա - Սառւյան Արարիա հարաբերությունները շպետը է հիմնվեն միայն տնտեսական հարաբերությունների վրա, այլ պետք է դառնան բազմակողմանի՝ նշելով ռազմավարական հարաբերություններ կառուցելու անհրաժեշտության մասին⁴²:

Երկու կողմերը ողջունեցին ԾՃ-Ճապոնիա ազատ առևտրի պայմանագրի կնքումը, որտեղ մեծ տեղ է տրվում տնտեսության, ներդրումների, ավխացիայի, շրջակա միջավայրի, տեխնոլոգիայի, մշակույթի, կրթության և գիտության, սպորտի և երիտասարդության հարցերի շուրջ համագործակցությանը: Վարչապետը կարևորեց երկու կողմերի միասնական շանքերը մերձավորարելյան խնդիրներին խաղաղ ճանապարհով լրացն տալու հարցում: Այսպիսով՝ թե՝ Ճապոնիան, թե՝ Սառւյան Արարիան շահագրգության, որպեսզի մերձավորարելյան պետությունները միանան «Միջուկային գենրի շտարածման վերաբերյալ» պայմանագրին, ինչը տարածաշրջանի անվտանգության պահպանման երաշխիք կիանողական: Կողմերը համագործակցում են միմյանց հետ նաև անվտանգության, ծովային ուղիների հաղորդակցության, ծովահենների դեմ պայքարում: Բացի այդ, Ճապոնիան և Սառւյան Արարիան համագործակցում են միմյանց հետ ռազմական ոլորտում, որը տեղի է ունենալ Սառւյան Արարիայի գորքերի և Ճապոնիայի ինքնապաշտպանական ուժերի միջև պարբերաբար փոխանակման ծրագրերի իրականացման միջոցով: Երկու կողմերը կարևորում են ՍԱԿ-ի դերը Մերձա-

⁴² Shinzo in SaudiLand, Newsletter No. 595, News-Analysis, 30.04.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/april2007/april2007n595.htm>

վոր Արևելքում խաղաղություն և կայունություն հաստատելու, մասնավորապես պահեստինյան խնդրի շուտափույթ լուծման հարցում: Սառույան Արաբիան երախտապարու է ՄԱԿ-ի ԱԽ-ում Պաղեստինին դիտորդի կարգավիճակ տալու հարցում Ճապոնիայի դրական դիրքորոշման համար: Այդ պատճառով Սառույան Արաբիան հետարրըրված է և ամեն կերպ աջակցում է Ճապոնիային ՄԱԿ-ի ԱԽ-ում մշտական անդամ դառնալու հարցում⁴³:

Հատկանշական է, որ թեև 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո ԱՄՆ-Սառույան Արաբիա հարաբերությունները զգալի վատքարացել են, այսուամենայնիվ, եռակողմ հանդիպումները մերձավորարևելյան խնդիրներին վերաբերող հարցերի շուրջ շարունակվում են: Այսպէս՝ 2001 թ. նոյեմբերին Սառույան Արաբիան, Ճապոնիան և ԱՄՆ-ը հանդիպեցին ընեարկելու Աֆղանստանին տրամադրվող օգնության վերաբերյալ: 2002 թ. հունվարին Տոկիոյում տեղի ունեցավ խորհրդաժողով, որտեղ Ճապոնիան պատրաստակամություն հայտնեց 5 տարի անընդմեջ 4.5 մլրդ դոլար տրամադրել Աֆղանստանին՝ վերականգնելու նպատակով⁴⁴:

Սագող արևի երկիրն աջակցում է Սառույան Արաբիային նաև այլքնտրանքային էներգիայի զարգացման հարցում, որը հնարավորություն կտա Էր-Ռիյադին մեծացնել արտահանվող նավահի բանակը Ճապոնիա: Այսպէս՝ Ճապոնական «Շովա Շելլ Սոլար Փաուեր» ("Showa Shell Solar Power") ընկերությունը համաձայնություն է ձեռ բերել «Սառույի Արամկո»-ի հետ

⁴³ Joint Statement towards the Building of Strategic and Multi-layered Partnership between Japan and the Kingdom of Saudi Arabia, http://www.mofa.go.jp/region/middle_e/saudi/joint0604.html

⁴⁴ Joint Press Statement on Road Construction in Afghanistan by the President of the United States and the Prime Minister of Japan and the Foreign Minister of Saudi Arabia, 12.09.2002, <http://www.mofa.go.jp/region/n-america/us/pfmv0209/joint.html>

Սառույան Արաբիայում արևային էներգիայի զարգացման հարցի շուրջ⁴⁵: Ճապոնիայի տնտեսության համար նավթի քանակի ավելացումը հատկապես կարևորվեց Ֆուկուսիմայի ատոմակայանի վթարից հետո, երբ Ճապոնիան ստիպված էր կանգնեցնել երկրում գործող բոլոր աէկները: Սառույան Արաբիան պատրաստակամություն հայտնեց աջակցել Ճապոնիային այդ հարցում: Արդեն 2012 թ. Սառույան Արաբիայից ներկրվող նավթը կազմեց Ճապոնիայի ներկրումների 31%-ը, որը 5%-ով ավելի էր նախորդ տարվա համեմատ, ինչը մեծ օգնություն էր Ճապոնիայի տնտեսության համար:

Բացի այդ, Սառույան Արաբիան շահագրգուված է նաև Ճապոնիայի աջակցությամբ իր երկրում ատոմակայաններ կառուցելու հարցում, որոնց միջոցով կկարողանա ապահովել էներգիայի ներքին պահանջարկը⁴⁶:

Այսպիսով՝ կեսդարյա պատմություն ունեցող ճապոնասառույան հարաբերությունները զերծով ամրապնդվում և խորանում են: Երկիրումանի հարաբերությունները, որոնք ունեն ուազմավարական նշանակություն, ըսդգրկում են համագործակցության զանազան ոլորտները: Թե՛՛ Ճապոնիան, թե՛՛ Սառույան Արաբիան, յինելով միջազգային հարաբերությունների կարևոր գործոններ, համագործակցում են միմյանց հետ ոչ միայն առևտրատնտեսական ոլորտում, այլև տարածաշրջանային խնդիրներին խաղաղ լուծում տալու հարցերի շուրջ:

⁴⁵ New Japanese Business Deals Struck with Saudi Arabia, Newsletter No. 1398, News-Analysis, 02.07.2009, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/july2009/july2009n1398.htm>

⁴⁶ Япония предложила Саудовской Аравии помошь в строительстве АЭС, 10.02.2013, <http://forum.polismi.org/index.php?/topic/4469-япония-предложила-саудовской-аравии-помощь-в-с/>

3.2.5. ՃԱՊՈՆԻԱ - ՔՈԽՎԵՅԹ

Ճապոնա-քովեյթան քաղաքատնտեսական հարաբերություններն ունեն ավելի քան կեսդարյա պատմություն: 2011 թ. լրացավ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 50 տարին: Երկկողմանի հարաբերությունների զարգացման ընթացքը գոհացնում է երկու կողմերին է: Այդ հարաբերություններն ընդգրկում են զանազան ոլորտներ: Այսպես ճապոնիայի և Քովեյթի միջև ակտիվորեն զարգանում են առևտրատնտեսական հարաբերությունները: 2009 թ. դրույթամբ՝ առևտրաշրջանառությունը երկու երկրների միջև կազմեց 10.53 մլրդ դոլար⁴⁴⁷: Հատկանշական է, որ 2009 թ. դրույթամբ Քովեյթի արտահանման 20.5%-ը բաժին է հասել Ճապոնիային, 13.7%-ը՝ Ճարավային, 12.4%-ը՝ ԱՄՆ-ին, 11.3%-ը՝ Սինգապուրին, 6.1%-ը՝ Չինաստանին⁴⁴⁸: Իսկ Քովեյթ ներկրվող ապրանքների 11.9%-ը՝ ներկրվել է Միացյալ Նահանգներից, 9.2%-ը՝ Ճապոնիայից, 8.1%-ը՝ Գերմանիայից և 7.6%-ը՝ Չինաստանից⁴⁴⁹:

Ճապոնիան Քովեյթ է արտահանում հիմնականում էլեկտրական սարքավորումներ, ավտոմեքենաներ, իսկ Քովեյթից Ճապոնիա է ներկրվում մեծ մասամբ նավը: Թեև 1991-1993 թթ. որոշակիորեն նվազեց նավթի ներկրման քանակը Ճապոնիա, սակայն հետագա տարիներին այն լիովին

⁴⁴⁷ Kuwaiti Foreign Minister Leaves Japan, Headed for Beijing, 03.06.2010, <http://www.kuna.net.kw/NewsAgenciesPublicsite/ArticleDetails.aspx?id=2092152&Language=en&searchtext=japan-kuwait>

⁴⁴⁸ Կասաչ Է., Инвестиционный режим и деятельность иностранных компаний в энергетическом комплексе Кувейта, Ближний Восток и современность, Сборник статей, Выпуск сороковой, М., 2009, с. 95.

⁴⁴⁹ U.S. Relations with Kuwait, Bureau of Near Eastern Affairs, Fact Sheet, 24.10.2012, <http://www.state.gov/r/pa/ei/bgn/35876.htm>

Վերականգնվեց: Արդեն 2002 թ. դրությամբ Քուվեյթին ապահովում էր Ճապոնիային նավթային պահանջարկի 13%-ը, իսկ 2009 թ. դրությամբ՝ 9.5%-ը զբաղեցնելով հինգերորդ տեղն իր նավթային ներկրումների քանակով⁴⁵⁰:

Երկկողմանի առևտրատևեսական հարաբերություններին հատկապես նոր շունչ հաղորդեց 2006 թ. սեպտեմբերին Ճապոնիայի և Շչին-ի անդամ-երկրների միջև կերած ազատ առևտրի գոտու վերաբերյալ համաձայնագիրը⁴⁵¹, ինչպես նաև 2009 թ. հունվարին Ճապոնիայի և Քուվեյթի միջև կերած կրկնակի հարկումից հրաժարվելու վերաբերյալ պայմանագիրը⁴⁵², որի շուրջ քանակցությունները սկսվել են դեռևս 2006 թ. նոյեմբերին⁴⁵³: Այս պայմանագրի շնորհիվ մեծացավ երկկողմանի ներդրումների քանակը: Ավելին տևատարական քազավառում երկկողմանի հարաբերությունների առավել ամրապնդման նպատակով դեռևս 2008 թ. ստեղծվեց Ճապոնա-քուվեյթյան միացյալ հանձնաժողովը⁴⁵⁴:

⁴⁵⁰ Kuwait's Crude Oil Exports to Japan Hit 2-Year Low, "Al Watan Business", Saudi Arabia, 31.07.2010.

⁴⁵¹ Masaki H., New Energy to Japan's Diplomacy, 04.05.2007, <http://www.atimes.com/atimes/Japan/IE04Dh01.html>

⁴⁵² Joint Statement on Strengthening the Bilateral Economic Relations between Japan and Qatar, November, 2009, http://www.mofa.go.jp/region/middle_e/qatar/joint0911.html

⁴⁵³ Japan and Kuwait Agree on Terms for New Tax Treaty, Newsletter No. 1251, News-Analysis, 14.01.2009, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/January2009/january2009n1251.htm>

⁴⁵⁴ Միացյալ կոմիտեն ստեղծվել է Քուվեյթի վարչապետ Շեխս Նասեր Ալ-Սիամադ Ալ-Ռամադ Ալ-Ռամադ 2008 թ. հունիսին Ճապոնիա կատարած այցի ժամանեակ: Հարկ է եղել, որ այս հանձնաժողովն առաջին երարական երկրներում: Այս մասին տես՝ Kuwaiti Foreign Minister Leaves Japan, Headed for Beijing, 03.06.2010, <http://www.kuna.net.kw/News Agencies Publicsite/ArticleDetails.aspx?id=2092152&Language=en&searchtext=japan-kuwait>

Ներկայումս Քուվեյթը նավթարդյունահանման քանակով գրադելում է երրորդ տեղն ՕՊԵԿ-ի կազմում: Նավթի պաշարները հաշվվում են մոտ 101.5 մլրդ բարել, որը կազմում է համաշխարհային նավթային պաշարների 8%-ը: Երկրում գործում են մոտ 1600 նավթահանքեր՝ չհաշված «Զեզոր գոտու» գոտովող նավթահանքերը:

Ամենաշատ նավթային պաշարները կենտրոնացած են «Մեծ Բուրգան» կողմող գոտում (70 մլրդ բարել նավթ)⁴⁵⁵, որի մեջ մտնում են հետևյալ նավթահանքերը՝ «Բուրգան»-ը, «Մազվա»-ն և «Ահմադի»-ն, որտեղից օրական արդյունահանվում է 1 մլրդ 35 մլն բարել նավթ⁴⁶: «Մեծ Բուրգան» նավթահանքը երկրորդ ամենախոշոր նավթահանքն է աշխարհում՝ զիջելով միայն Սաուդյան Արաբիայի «Ղավար» նավթահանքին⁴⁷:

Քուվեյթի այլ խոշոր նավթահանքերում, ինչպիսին են՝ «Շաուդիատիան»-ը, «Սաբրիյա»-ն և «Մինազիշ»-ը, պաշարների քանակը հաշվվում են մոտ 5.1; 4.3; 3.3 մլրդ բարել նավթ համապատասխանորեն (տե՛ս նշանված Քարտեզ 11):

Այսպիսով՝ Քուվեյթի նավթարդյունահանման 2/3-ը կենտրոնացած է երկրի հարավարևելյան մասում, 1/5 մասն արդյունահանվում է հյուսիսից և 1/10 մասը՝ արևելյաց: Ինչ վերաբերում է ծովափենա նավթահանքերին, ապա մինչ 2000 թ. դրանք վերամշակվում էին ճապոնական «Արարիեն օլ» ընկերության կողմից, որի բաժնետոմսերի 80%-ը պատկանում էր Ճապոնիային, իսկ մնացած 20%-ը՝ հավասարապես

⁴⁵⁵ Independent Statistics and Analysis, U.S. Energy Information Administration, <http://www.eia.gov/countries/cab.cfm?fips=KU>

⁴⁶ Կասաս Յ., Աշխ. աշխ., էջ 88:

⁴⁷ Kuwait Adds 12 bn Barrels to Oil Reserves, 21.10.2010, http://www.gasandoil.com/news/middle_east/dd88bb6ce48de3dd78641a819646ef7b

Սառույան Արաբիային և Քուվեյթին⁴⁵⁸: Սառույան Արաբիայի հետ կոնցեսիոն պայմանագրի ժամկետը սպառվեց 2000 թ. փետրվարին, իսկ Քուվեյթի հետ՝ 2003 թ. հունվարին: Քուվեյթն իր ծովափեյա նավթի արդյունահանումը հանձնեց պետական ընկերությանը «Քուվեյթ Գալֆ օյլ»-ին ("Kuwait Gulf Oil"), որը «Քուվեյթ պետրոլեում»-ի ("Kuwait Petroleum") մասնաճյուղն է⁴⁵⁹: Բացի «Քուվեյթ Գալֆ օյլ»-ից, «Քուվեյթ պետրոլեում»-ի կազմի մեջ մտնում են նաև «Քուվեյթ Նեյշնալ պետրոլեում»-ը ("Kuwait National Petroleum") (որը գրաղվում է նավթի հետախուզական, արդյունահանման և մշակման գործընթացներով), «Պետրոքեմիքալ ինդաստրիա»-ը ("Petrochemical Industries"), «Քուվեյթ Ֆորին պետրոլեում էքսպլորեյշն»-ը ("Kuwait Foreign Exploration") (արդյունահանում է նավթ մի շարք զարգացող երկրներում), «Քուվեյթ օյլ տանկեր»-ը ("Kuwait Oil Tanker") (տրանսպորտային ընկերություն է 35 նավթային տանկերների առկայությամբ) և այլ ընկերություններ⁴⁶⁰:

Բնական զագի պաշարների քանակով Քուվեյթը Սոցի երկրների շարքում գրադեցնում է վերջին տեղերից մեկը: Գազի պաշարները կազմում են 13.5 մլրդ խորանարդ մետր, որը համաձայն «Բրիտիշ պետրոլեում ստատիստիկալ ռեյնի» տվյալների՝ կազմում է համաշխարհային պաշարների մոտ 1%-ը⁴⁶¹: Արդյունահանված բնական զագը Քուվեյթն օգտագործում է ներքին պահանջարկն ապահովելու համար, մինչդեռ արդյունահանվող նավթի ավելի քան 90%-ն արտահանվում է:

⁴⁵⁸ Սահրաման ճապոնական «Արաբիեն օյլ» ընկերության անդրադառների գործի երկրորդ զիստը, էջ 67-69:

⁴⁵⁹ Kacaeas Յ., Խշկ. աշխ., էջ 89:

⁴⁶⁰ Նույն տեղում, էջ 91:

⁴⁶¹ BP Statistical Review of World Energy, June, 2013, p. 20, bp.com/statisticalreview

Ճապոնիայի և Քուվեյթի միջև երկկողմանի համագործակցությունը չի սահմանափակվում միայն առևտրատեսական հարաբերություններով, Ճապոնիան նաև համագործակցում է «Քուվեյթ օյլ» նավթային ընկերության հետ Ալ-Զուրում նավթամշակման գործարան կառուցելու հարցում: 12 մլրդ դոլար արժողությամբ այս գործարանը նախատեսվում է օրական 615000 բարել նավթ վերամշակել: Ըստ պայմանավորվածության՝ վերոնշյալ նախագիծն ավարտին կհասցվի 2017 թ.⁴⁶²:

Քուվեյթն իր տևականության զարգացման նպատակով արտերկրում խոշոր ներդրումներ է կատարում: Ներկայումս արտերկրում Քուվեյթի պետական ակտիվների թիվը հասնում է 60-70 մլրդ դոլարի, իսկ մասնավոր ներդրումների ոլորտում՝ 40 մլրդ դոլարի: Քուվեյթը մեծ տեղ է տալիս ճապոնական էլեկտրական արդյունաբերության մեջ կատարած ներդրումներին: Այսպիսով՝ քուվեյթյան կառավարությունը ձեռք է բերել բաժնետոմսեր «Հիթաշի» և «Միցուրիշի» ընկերություններից վճարելով 35 մլն դինար, նաև համարվում է «Սոնի» ընկերության 0.3%-ի բաժնետոմսը⁴⁶³: Ավելին՝ 2006 թ. Ճապոնիայի «Միցուրիշի» ընկերությունն իր ներկայացուցությունը բացեց Քուվեյթում⁴⁶⁴:

Ճապոնիայի և Քուվեյթի միջև համագործակցությունը տարածվում է նաև զյուլատևականության ոլորտում: Ճապոնական ընկերությունների աջակցությամբ Քուվեյթում ստեղծվել են պետական ֆերմաներ, որոնցում հիդրոպոնիկ մեթոդով աճեցնում են բանջարեղեն և մրգեր: Շնայած նրան, որ ողջ

⁴⁶² Kuwait Awards \$ 12 bn Clean Fuels Project – JGC Corp., Flour and Petrofec Bids Approved, Kuwait Times, 10.02.2014, <http://news.kuwaittimes.net/kuwait-awards-12bn-clean-fuels-project-jgc-corp-flour-petrofec-bids-approved/>

⁴⁶³ Իսայ Յ., Փյունիկ Ա., Կյանք. կուրսային աշխատանք, Եղանակ, Եղանակ, էջ 186:

⁴⁶⁴ Նույն տեղում, էջ 184-185:

պարարտանյութը ներկրվում է Ճապոնիայից, այս ֆերմաները թույլ են տալիս Քուվեյթին արտահանել ստացված բանջարեղենը և մրգերը Սաուդյան Արաբիա, Լիբանան, Սիրիա և Բահրեյն: Իսկ Ճապոնիան իր հերթին Քուվեյթից ներկրում է տարեկան մոտ 10 հազար տոննա սառեցված խխունջ և խեցքետին⁴⁶⁵:

Ճապոնիան և Քուվեյթը հետաքրքրված են մերձավորարևելյան խնդիրների շուտափույթ լուծման հարցում, ինչը տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման երաշխիք կհանդիսանա: Ճապոնիան հույս հայտնեց, որ իրաքան հարցի շուրջ երկու հարևան պետությունների միջև հարաբերությունները շուտափույթ կվերականգնվեն: Քուվեյթը դրական գնահատեց Ճապոնիայի՝ Իրարում կայունություն հաստատելու քայլերը: Ճապոնական կողմն իր հերթին խորին երախտագիտությունն արտահայտեց Քուվեյթին՝ Իրարում գտնվող ճապոնական ինքնապաշտպանական ուժերին աջակցություն տրամադրելու համար⁴⁶⁶: Իրանի հարցի շուրջ երկու կողմերը համոզված են, որ տարածաշրջանում խաղաղության և անվտանգության պահպանման նկատառումներից ելնելով՝ Իրանը պետք է միանա «Միջուկային գենքի չուարածման վերաբերյալ» պայմանագրին⁴⁶⁷:

Ճապոնիայի և Քուվեյթի հարաբերություններն ընդգրկում են նաև կրթության, մշակույթի և գրոսաշրջության ոլորտները: Պարբերաբար տեղի են ունենում փոխանակումներ ուսանողության, գիտաշխատողների շրջանակներում,

⁴⁶⁵ Նոյն տեղում, էջ 103:

⁴⁶⁶ Kuwait, Japan Agree to Strengthen Partnership, 27.08.2013, <http://news.kuwaittimes.net/kuwait-japan-agree-strengthen-partnership/>

⁴⁶⁷ Shinzo Abe Becomes the First Japanese Prime Minister to Visit Kuwait, Newsletter No. 599, News-Analysis, 3.05.2007, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/may2007n599.htm>

կազմակերպվում են ֆիլմերի ցուցադրություններ, իրականացվում են ճապոներենի ուսուցման ծրագրեր և այլ միջոցառումներ:

2011 թ. Ֆուկուսիմայում տեղի ունեցած աղետի հետևանքների արագ հայրահարման նպատակով Քուվեյթի կառավարությունն աջակցեց Ճապոնիային՝ վեսաված «Սանրիկու» երկարօնական կառուցելու հարցում, որն ունի մեծ նշանակություն գրուաշրջության զարգացման համար⁴⁶⁸:

Երկու կողմերը համագործակցում են միմյանց հետ առողջապահության ոլորտում, կազմակերպվում են փոխանակումներ և փոխայցելություններ, գիտաժողովներ, սեմինարներ և այլ միջոցառումներ, որոնք խթանում են երկու երկրներում բժշկության ոլորտի զարգացմանը: Ավելին՝ բժշկության զարգացման նպատակով Ճապոնիան Քուվեյթին տրամադրում է բժշկական և տեղեկատվական տեխնոլոգիաներ⁴⁶⁹:

Երկու երկրների միջև կերպել են բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների ոլորտներում փոխանակութակցության վերաբերյալ պայմանագրեր: Բացի այդ, թե՝ Ճապոնիան, թե՝ Քուվեյթը համագործակցում են միմյանց հետ շրջակա միջավայրի պահպանման, էկոլոգիապես մարուր ջրի և ուտելիքի օգտագործման ոլորտներում⁴⁷⁰:

Փաստորեն երկու երկրների միջև համագործակցությունը չի սահմանափակվում միայն քաղաքական և տնտեսական հարաբերություններով, այլև ընդգրկում է կրթական,

⁴⁶⁸ Kuwait Helps Japan's Tsunami-hit Railway Full Return, 04.06.2014, http://www.kuwait-embassy.or.jp/E_index.html

⁴⁶⁹ Japan's Diplomacy with Leadership toward the New Century, Diplomatic Bluebook, Tokyo, 1999, p. 150.

⁴⁷⁰ Kuwait, Japan Issue Joint Statement on Bilateral Partnership Cooperation, 26.08.2013, <http://www.kuna.net.kw/ArticleDetails.aspx?id=2330119&language=en>

բարձր տեխնոլոգիաների զարգացման, շրջակա միջավայրի պահպանման, բժշկության, գիտության և այլ ոլորտներ:

3.2.6. ՀԱՊՈՆԻԱ - ՕՍԱՆ

Օմանում նավթի քանակը Ծոցի մյուս երկրների համեմատ ավելի քիչ է, և այն կենտրոնացված չէ մեկ տեղում, այլ սփոյլած է երկրի ողջ տարածքով մեկ, ինչը դժվարացնում է նրա արդյունահանումը և արտահանումը, հետևաբար վառելանյութը համեմատաբար ավելի քանի է, քան այլ երկրներում: Հենց այդ է պատճառը, որ Օմանը, թեև ունի բոլոր հիմքերը դառնալու ՕՊԵԿ-ի և ՕԱՊԵԿ-ի անդամ, սակայն չի ցանկանում միանալ այդ կազմակերպություններին, քանզի շահագորգոված է հետարաբորինս քանի վաճառել արդյունահանված նավթը և գազը, որոնց քանակի օրեցօր պակասում է:

Օմանի նավթի պաշարները հաշվվում են 5 մլրդ 572 մլն բարել, որի 93%-ը պատկանում է «Պետրոլեում դիվելոփմենտ Օման» ("Petroleum Development Oman") ընկերությանը: Օրական արտահանում է 780-890 հազար բարել նավթ, ինչը երկրին բերում է տարեկան 3,2-ից մինչև 5,8 մլրդ դոլարի եկամուտ⁴⁷¹: Հատկանշական է, որ ածխաջրածնի արտահանման արդյունքում Օմանն ապահովում է իր երկրի եկամտի

⁴⁷¹ Եկամուտի տատանողականությունը պայմանավորված է նավթի գիք հետ, որը 1997 թ. 18,97 դոլար էր, 1998 թ. 20,46 դոլար, իսկ 2008 թ. դրությամբ՝ 91,48 դոլար: Այս մասին տե՛ս նաև Վ. Փիլոնիկ Ա., Սүլтанաթ Օման (очерк общественно-политического и социально-экономического развития), М., 2001, с. 161; History of Illinois Basin Posted Crude Oil Prices, History & Analysis of Crude Oil Prices from WTRG Economics, http://www.Ioga.com/special/crudeoil_hist.htm; Oil Price History and Analysis, <http://www.wtrg.com/prices.htm>

80%-ը⁴⁷²: Оմանի նավթահանքերի մշակումն իրականացվում է «Պետրոլեում դիվելովիմենս Օման» ընկերության միջոցով, որի կապիտալի 60%-ը պատկանում է պետությանը, 34%-ը՝ անգլիական «Շել» ընկերությանը, 4%-ը՝ ֆրանսիական «Կոմպանի ֆրանսիզ դու պետրոլ»-ին (Company Francaise du Petrole), 2%-ը՝ անգլիական «Պարտեքս» ("Partex") ընկերությանը: Оմանն ածխաջրածնի արդյունաբերությունը հեշտացնելու համար իր ողջ տարածքը բաժանել է բյուկների (հողակտորների), որոնք կոնցենտրով հիմունքով տրամադրվում են օտարերկրյա ընկերություններին՝ հետախուզական աշխատանքներ իրականացնելու համար⁴⁷³ (տե՛ս Հավելված, Քարտեզ 12):

Այսպես՝ 1996 թ. Оմանը կնքեց 120 մլն դոլար արժողությամբ համաձայնագիր 4 ընկերությունների հետ 22-րդ, 32-րդ, 35-րդ և 36-րդ բյուկներում հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով⁴⁷⁴: 1997 թ. կնքեց համաձայնագիր սառույյան «Նիմր պետրոլեում կորպորեյշն»-ի հետ, համաձայն որի՝ վերջինս իր վրա վերցրեց պարտականություն բյուկ 3-ում 8 տարվա ընթացքում ներդնել 50,5 մլն դոլար՝ նավթի և զազի հետախուզական աշխատանքներ իրականացնելու համար: Նոյն թվականի հուլիսին կանադական «Գալֆստրիմ ռեսուրսներ» ՍՊԸ-ն համաձայնվեց նմանատիպ աշխատանքներ իրականացնել Օմանի հարավում՝ բյուկ 30-ում, իսկ սեպտեմբերին «Օրինիենտալ Օման ինկորպորեյշն»-ը (Occidental of Oman Incorporation) բյուկ 31-ում, «Տրիտոն Էներջի կորպորեյշն»-ը (Triton Energy Corporation) բյուկ

⁴⁷² Денисов Н., Некоторые Особенности Социально-Экономического Развития Султаната Омана, Арабские Страны Западной Азии и Северной Африки, Новейшая история, экономика и политика, М., 1997, с. 24.

⁴⁷³ Նոյն տեղում, էջ 25:

⁴⁷⁴ Исаев В., Филоник А., Султанат Оман (очерк общественно-политического и социально-экономического развития), Աշխ., աշխ., էջ 159:

40-ում, իսկ «Ամոկո կորպորեյշն»-ը (Amoco Corporation)՝ 15 և 44-րդ բլոկներում: 1999 թ. «Շելլ ոլիա վոտեր Օման» ընկերությունը կնքեց համաձայնագիր 18-րդ բլոկում, «Ֆիլիպ աթետրոլեռում Օման» ՍՊԸ-ն՝ 38-րդ բլոկում, «Նովուս աթետրոլեռում»՝ 17-րդ բլոկում, ճապոնական «Միցուի»-ն՝ 9 և 27-րդ բլոկներում՝ նավթի և զազի հետախուզական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ⁴⁷⁵:

Օմանում 1995-1998 թթ. ընթացքում ծավալված հետախուզական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեցին նավթի և զազի մի քանի նոր հանքավայրեր: Սակայն Օմանի ամենախոշոր նավթահանքը մնում է «Իհիբալը», որը հայտնաբերվել էր 1962 թ.: 1994 թ. «Իհիբալ Շուսիքա ֆազ 2» նախագծի իրականացման արդյունքում նավթի արդյունահանման քանակը վերոնշյալ հանքավայրում հասակ օրական 180 հազար բարեկի: Երկրորդ խոշոր նավթահանքը 1980 թ. հայտնաբերված «Նիմրե» է, որտեղից օրական արդյունահանվում է 178 հազար բարեկ նավթ:

Օմանի խոշոր գործընկերների շարքում են Անգլիան, Ճապոնիան, ԱՄՆ-ը, ԱՄԷ-ն, Քուվեյթը և Սաուդյան Արաբիան⁴⁷⁶, իսկ Օմանի նավթի զլիավոր գնորդներն են Ճապոնիան, Թաիլանդը, Հարավային Կորեան և ՉԺՀ-ն⁴⁷⁷, որտեղ արտահանվում է արդյունահանված նավթի 84%-ը⁴⁷⁸:

Մինչ 1980-ականների սկիզբն Օմանում չկային նավթամշակման գործարաններ, և ողջ արդյունահանված նավթը «Մինա Էլ-Ֆախալ» տերմինալով արտահանվում էր այլ երկրներ, իսկ երկիրը ստիպված էր ներկրել նավթ՝ իր ներքին

⁴⁷⁵ Исаев В., Филоник А., Султанат Оман (очерк общественно-политического и социально-экономического развития), ԽՀՎ. աշխ., էջ 160:

⁴⁷⁶ Денисов Н., Աշվ. աշխ., էջ 27:

⁴⁷⁷ Исаев В., Филоник А., Султанат Оман (очерк общественно-политического и социально-экономического развития), ԽՀՎ. աշխ., էջ 159:

⁴⁷⁸ Oman 2004-2005, Doha, 2005, p. 86.

պահանջարկը բավարարելու համար: 1982 թ. իրավիճակը երկրում փոխվեց «Մինա Էլ-Ֆախավ» նավթամշակման գործարանի (օրական 50 հազար բարել հզորությամբ) կառուցումից հետո: 1987 թ. գործարանի հզորությունը հասավ 80 հազար բարելի 1 օրում, որը թույլ տվեց բավարարել երկրի ներքին պահանջարկը: 2006 թ. բացվեց նաև «Սոհար» նավթամշակման գործարանը՝ մշակելով օրական 116400 բարել նավթ, որը նախատեսված է արտահանման համար: Մեկ այլ նախագիծ, որը կարգվել էր դեռևս 1996 թ. օգոստոսին Օմանի և «Բրիտիշ պետրոլեում»-ի միջև, «Մինա Էլ-Ֆախավ» արդյունաբերական գոտուց միևնույն «Սոհար» նավթամշակման գործարան խողովաշար կառուցելու վերաբերյալ է, որն ավարտին հասցվեց 2007 թ.⁴⁷⁹: 2011 թվականին Օմանի նավթի արդյունահանումը կազմեց օրական 900000 բարել, մինչդեռ 2010 թ. նոյեմբերի դրությամբ այն կազմում էր ընդամենը 875000 բարել: Նավթի արդյունահանման քանակի աճին զուգընթաց աճեց նաև արտահանվող նավթի քանակը Մինքապուր 117.7%-ով, Զինաստան՝ 40.1%-ով և Ճապոնիա՝ 11.7%-ով⁴⁸⁰:

Բնական զազի ոլորտն Օմանի տնտեսության ամենախոսումնայից ոլորտներից է: Օմանի բնական զազի պաշարները հաշվվում են 24,92 տրիլիոն խորանարդ ֆուր⁴⁸¹:

Բնական զազի ոլորտում Ճապոնիան Օմանի զազի արդյունաբերության հիմնաղիքներից է՝ 1994 թ. ստեղծվեց «Օմանի զազամշակման» ընկերությունը, որի բաժնետերերն են՝ պետությունը (51%), անզլիական «Շելլ» ընկերությունը (30%), ֆրանսիական «Տուալ»-ը (5.54%), հարավկորեական «ԼՍԳ»-ն (5%), անզլիական «Պարտերս»-ը (2%), ճապոնական «Միցուբիշի» (2.77%), «Միցուի» (2.77%) և «Իտոչու» (0.92%)

⁴⁷⁹ Նոյեմբերում, էջ 88:

⁴⁸⁰ Oil Output in Oman to Hit 900,000 Bpd by 2011-end, 19.12.2010, http://www.gasandoil.com/news/middle_east/36c8d1d904dd5d96866db9a14785f849

⁴⁸¹ Oman 2004-2005, էջ 21, աշխ., էջ 88:

ընկերությունները, որոնք աջակցում են Օմանի՝ զագի հեղուկացման գործընթացը զարգացնելու հարցում:

Օմանում 4.75 մլրդ դրամ արժողությամբ ամենախոշոր նախազիծը սկսեց իրականացվել 1996 թ.: Նախազիծը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից, առաջինը իրականացնում են ճապոնական «Շիոդա» ("Shioda") և անգլիական «Ֆորտեր Վիլեր» ("Foster Wheeler") ընկերությունները, որոնք մասնակցում են Սուր քաղաքում զագի հեղուկացման երկու գործարաններ (յուրաքանչյուրը՝ 3,3 մլն տոննա հզորությամբ) կառուցելու գործընթացներում: Ըստ համաձայնագրի՝ վերոնքշյալ գործարանների արտադրության գլխավոր գնորդներն են Կորեայի Հանրապետությունը (տարեկան 4,1 մլն տոննա զագ) և Ճապոնիան (տարեկան 0,6 մլն տոննա նավթ) ⁴⁸²: Իսկ նախազիծի մյուս մասը նախատեսում է տերմինայի կառուցում, որտեղ զագը պոմպերի միջոցով լցվելու է տանկերների մեջ: Տերմինալը կառուցում է ճապոնական «Տայ սեյ» ընկերությունը: Այդ նախազիծի բաժնետերերն են ևս ճապոնական «Միցուիշի», «Միցուի», «Խոռշու» ընկերությունները ⁴⁸³:

Օմանը կարել է ևս պայմանագիր ճապոնական «Օսակա զագ» ("Osaka Gas") ընկերության հետ՝ 2000 թ. նոյեմբերից տարեկան 0,7 մլն տոննա հեղուկացված զագ ճապոնիա առաքելու վերաբերյալ: 2004 թ. հուլիսին ճապոնական «Միցուիշի» ընկերության և Օմանի ներկայացուցիչ «Բալհատ ԼՆԳ»-ի ("Qalhat LNG") միջև կարվեց պայմանագիր 15 տարի ժամկետով՝ տարեկան 800000 տոննա հեղուկացված զագ ճապոնիա մատակարարելու մասին: Բացի այդ, «Միցուի» և «Միցուի օլ էրսֆիլորեյշըն» կորպորեյշըն-ը ("Mitsui Oil Exploration Corporation") ձեռք բերեցին բաժնետոմսերի 15%-ը՝ Օմանի

⁴⁸² Исаев В., Филоник А., Султанат Оман (очерк общественно-политического и социально-экономического развития), №2, аշխ., էջ 163:

⁴⁸³ Նույն տեղում, էջ 215:

54-րդ բլոկում հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով⁴⁸⁴:

2004 թ. հունվարին շահագործման հանձնվեցին երկու զազախողովակաշարեր: Առաջինը ձգվում է «Ֆահուր» նավահանգիստից մինչև «Սոհար» նավահանգիստը, որի արդյունքում «Սոհար» և «Ռայյուր» նավահանգիստները մատակարարվեցին բնական գազով: Իսկ երկրորդ զազախողովակաշարը սկիզբ է առնում «Ալ Մադհա» հանրավայրից և հասնում է մինչև Աբու Դարիի «Ալ Ահն» հանրավայրը⁴⁸⁵: «Սոհար» արդյունաբերական նավահանգստի կառուցումն իրականացվել է ԶԲԻԿ-ի կողմից Օմանին 150 մլն դոլարի փոխառություն տրամադրած գումարով: Օմանի ազգային տնտեսության նախարար Ահմադ Բին Աբդուլաբի Սակին նշեց, որ ԶԲԻԿ-ի համագործակցում է Օմանի հետ 1989 թվականից և աջակցում է երկրի արդյունաբերության զարգացման հարցում: ԶԲԻԿ-ի ներկայացուցիչը՝ Կոյի Տանամին, նշեց, որ Ճապոնիայի համար Օմանը ոչ միայն կենսական կարևոր վառելայութիւն մատակարար է, այլև ռազմավարական գործընկեր⁴⁸⁶:

Ճապոնիան, բացի նավահի և բնական գազի ոլորտներից, համագործակցում է նաև Օմանի հետ նավթարիմիական, այլընտրանային էներգիայի ստեղծման, ռազմավարական կարևոր օբյեկտների կառուցման, կրթական, գիտատեխնիկա-

⁴⁸⁴ 54-րդ բլոկի բաժնետոմսերի 70%-ը պատկանում է «Ամերիկան արսիդենտալ պետրոլյում» ("America's Occidental Petroleum") ընկերությանը, իսկ մյուս 15%-ը՝ Աբու Դարիի «Լիվա էներգի» ("Liwa Energy") ընկերությանը: Այս մասին առ.՝ «Occidental awarded Block 54 PSC in Oman, Oil and Gas Journal, 04.07.2006, <http://www.ogj.com/articles/2006/04/occidental-awarded-block-54-psc-in-oman.html>

⁴⁸⁵ Oman 2004-2005, եշտ. աշխ., էջ 89-90:

⁴⁸⁶ Omani Minister Visits Nagasaki for the Launch of a Transport Ship, Newsletter No. 315, News-Analysis, 24.06.2006, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/june2006/june2006n315.htm>

կան և այլ հարցերում: Այսպէս՝ 1997 թ. կերպեց համաձայնագիր սուվթան Կարուսի անվան համալսարանի և ճապոնական «Նյու Էներգի Էնդ Ինդուստրիալ Տեխնոլոջի դիվլենփիմենտ օրգանիզեյշն» (ՆԵԴՕ) ("New Energy and Industrial Technology Development Organization"(NEDO)) ընկերության միջն միասնական ինստիտուտի ստեղծման վերաբերյալ, որը պետք է ուսումնասիրի արևի էներգիան Օմանի տարածքում՝ այլընտրանքային էներգիա ստանալու նպատակով: Ճապոնիան մասնակցում է նաև Օմանի «Սայայա» նավահանգստում խոշոր տրանսպորտային հանգույցի կառուցման գործընթացում:

Օմանի և Ճապոնիայի դեսպանատները պարբերաբար կազմակերպում են մշակութային օրեր թե՝ Ճապոնիայում, թե՝ Օմանում, որտեղ ներկայացվում են երկու երկրների մշակութային առանձնահատկությունները: Ստեղծվել են նաև մի շարք կազմակերպություններ, որոնք նպաստում են երկու երկրների միջն մշակույթի, տնտեսության, գիտության և արվեստի ոլորտներում հարաբերությունների զարգացմանը: Այսպէս՝ 1974 թ. ստեղծվել է Օման-Ճապոնիա բարեկամական ասոցիացիան, 1986 թ. Ճապոնիա-Օման ասոցիացիան, 2001 թ. Ճապոնիա-Օման խորհրդարանական բարեկամական լիգան: Ավելին՝ «Միջազգային համագործակցության ճապոնական գործակալությունը» (ՍՀՃԳ) ("Japan International Cooperation Agency" (JICA)) Օմանի խնդրանքով ուղարկում է իր մասնագետներին՝ Օմանի արդյունաբերության զարգացմանն աջակցելու նպատակով: Ճապոնիան ֆինանսավորում է Օմանի որոշ կրթական և գիտական ծրագրեր, ինչպէս նաև մի քանի երկրների հետ մասնակցում է Մերձավորաբերյան կենտրոնի կողմից խմելու ջուր ստանալու հետագություններում: Օմանում պարբերաբար անց են կացվում սեմինարներ ճապոնական անհատ ձեռնարկատերերի կողմից, որոնք ցանկանում են մասնավոր ոլորտի ճապոնական փորձը փո-

իսանցել Օմանին: ՄՀՃԳ-ի համագործակցում է Օմանի հետ նաև տնտեսության զարգացման մասնագետների պատրաստելու հարցում: Գործակալության նախագետների շարքին են դասվում այլընտրանքային էներգիայի աղբյուրների զարգացումը, արդյունաբերության ոլորտում արտադրանքի ինքնարժեքի նվազումը և արդյունավետության բարձրացումը:

Օմանի ազգային տնտեսության և ֆինանսների նախարար Ահմադ բին Աբդ ալ-Նաբի Մակկին 2008 թ. մայիսի 25-ին այցելեց Արեեյան Ասիայի երկրներ Վիետնամ, Հարավային Կորեա և Ճապոնիա: Ճապոնիայի ֆինանսների նախարար Ֆուկուսիյո Նուկազայի հետ հանդիպման ժամանակ նա շեշտեց, որ պետք է վերացնել ճապոնիայի և Օմանի միջև կրկնակի հարկումը, ինչը կնպաստի ներդրումների բանակի ավելացմանը⁴⁷: Ավելին Մամկին հանդիպեց «Սիցուի», «Սիցուրիշի» և «Էտոչու» ընկերությունների ղեկավարության հետ, որի ժամանակ հայտնեց, որ Օմանի կառավարությունն ամեն կերպ կաջակցի վերոնշյալ ընկերություններին, եթե վերջիններս ընդլայնեն իրենց ներդրումներին Օմանի նավթարիմական, նավթի և զաղի փոխադրման ոլորտներում:

Փաստորեն Ճապոնիա-Օման հարաբերությունները բավական խորն են և ունեն ռազմավարական նշանակություն չսահմանափակվելով միայն ածխաջրածնի առաքումներով և ընդգրկելով համագործակցության զանազան ոլորտներ:

⁴⁷ Oman Minister Talks Business on Latest Tokyo Tour, Newsletter No. 997, News-Analysis, 28.04.2008, <http://www.shingetsuinstitute.com/newsletter/april2008/april2008n997.htm>

* * * * *

Ամփոփելով Ճապոնիայի քաղաքատնտեսական հարաբերությունները ԾՃ-ի անդամ Երկրների հետ, հանգում ենք այն եզրակացության, որ Երկկողմանի հարաբերությունները բավական սերտ են և բազմազան:

Ճապոնիա արտահանվող նավթի բանակով ԾՃ-ի անդամ Երկրներից առաջին տեղում է Սաույան Արարիան, նրան հաջորդում է ԱԱԷ-ն, այնուհետև՝ Կատարը, Օմանը, Քուվեյթը և Բահրեյնը:

Ճապոնիայի հարաբերությունները Սաույան Արարիայի, Օմանի և Կատարի հետ ունեն ուազմավարական նշանակություն: Ավելին՝ Սաույան Արարիան սերտորեն համագործակցում է Ճապոնիայի հետ մերձավորարելյան խնդիրների կարգավորման հարցում՝ ԱԱՆ - Ճապոնիա-Սաույան Արարիա եռակողմ բանակցությունների շրջանակում:

ԾՃ-ի անդամ Երկրները Ճապոնիայի հետ հարաբերություններում բավական մեծ տեղ են տալիս ներդրումներին, որոնք նպաստում են Ծոցի Երկրների տնտեսության դիվերսիֆիկացման քաղաքականության իրականացմանը: Հատկանըշական է, որ թեև Սաույան Արարիայում Ճապոնիան իր ներդրումների բանակով գրադեցնում է առաջին տեղը՝ ետևում թողնելով նույնիսկ Միացյալ Նահանգներին, սակայն ներդրումների բանակով ամենաշատը կատարում է ԱԱԷ-ում:

ԾՃ-ի անդամ Երկրներից Քուվեյթը միակ պետությունն է, որ ինքն է ներդրումներ կատարում Ճապոնիայում ձեռք բերելով մի շարք ճապոնական հայտնի ընկերությունների բաժնետոսմութեան:

ԾՃ-ի Երկրներից Ճապոնիայի ամենամեծ առևտրային գործընկերը համարվում է Կատարը, որը պայմանավորված է Կատարի նավթի 70%-ից ավելին Ճապոնիա արտահանելու հանգամանքով:

Բավական մեծ է Ճապոնիայի դերը նաև Օմանում՝ լինելով երկրի նավթի զիսավոր գնորդը, Տոկիոն նաև Օմանի զազի արդյունաբերության հիմնադիրն է և վերջինիս կարեւորագույն գնորդը:

Այսափիսով, Ճապոնիա – ԾՃԽ անդամ երկրների միջև քաղաքատնտեսական հարաբերությունները փոխշահավետ են և կարևոր երկու կողմերի համար:

ՎԵՐՋԱԲԱՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հապոնիան կարողացավ վերականգնել իր քայրայված տնտեսությունը և արդեն 1970-ականներին դարձավ զարգացած տնտեսություն ունեցող երկրորդ տերությունն աշխարհում: Երկրի տնտեսության զարգացումը նպաստեց Էներգակիրսերի պահանջարկի մեծացմանը: Եվ բանի որ Հապոնիան չուներ բնական ռեսուրսներ և նավթի գները ցածր էին, ևս քարածխի հիմքի վրա աշխատող իր արդյունաբերությունը տեղափոխեց նավթի ռելսերի վրա, որը վերջինս ներկրում էր մեծ մասամբ մերձավորարենյան տարածաշրջանից՝ սկիզբ դնելով ճապոնիայի մերձավորարենյան քաղաքականության ձևավորմանը:

Մինչ 1973 թ., այսինքն՝ մինչև առաջին նավթային ճգնաժամը, Հապոնիան պահպանում էր մերձավորարենյան նավթարդյունահանող երկրների հետ գույտ տնտեսական հարաբերություններ՝ չմիջամտելով քաղաքական գործընթացներին: Սակայն 1973 թ. հերթական արարիստրայելական պատերազմի ավարտից հետո, Մերձավոր Արևելյի նավթարդյունահանող երկրները սկսեցին նավթն օգտագործել որպես քաղաքական գենք և մբարգո դնելով արտահանվող նավթի վրա և նման ձևով ճնշում գործադրելով ԱՄՆ-ի ու Կրադաշնական կիցների վրա: Փաստորեն Հապոնիան նույնպես դասվեց «ոչ բարեկամական» երկրների շարքին: Երկրի տնտեսական շահերը ստիպեցին Հապոնիային, հակառակ իր դաշնակցի՝ ԱՄՆ-ի դիրքորոշման, գնալ մի շարք քաղաքական գիշումների և ավթարդյունահանող երկրների նկատմամբ՝ ապահովելով իր երկիրը կենսական կարևոր վառելակյուրով:

1979թ. իրանա-ամերիկյան հարաբերությունների վատթարացումը և Իրանում խալամական հեղափոխության հաղթանակը պատճառ դարձան երկրորդ նավթային ճգնաժամի ի

հայտ գալուն: Ճապոնիան ԱՄՆ-ի բոլոր հորդորները հակա-իրանական ճնշամիջոցներին միանալու վերաբերյալ բողնում էր անպատճախան և խուսանավման քաղաքականության շնորհիվ շարունակում էր պահպանել տնտեսական և քաղաքական հարաբերություններ Իրանի Խորամական Հանրապետության հետ: Փաստորեն հակառակ ձևավորված այն թյուր կարծիքին, որ Ճապոնիան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դարձել էր ԱՄՆ-ի կամակատարն արտաքին քաղաքականության հարցերում, ծագող արևի երկիրը ճգնաժամային իրավիճակներում միշտ առաջնորդվում էր իր երկրի տնտեսական շահերից ելենը:

Արդեն 1980 թ.-ի Իրան-իրաքյան պատերազմը, որը հրահըրված էր գերտերությունների «լուր» համաձայնությամբ, միտում ունենալով թուլացնելու Իրանի և Իրաքի դիրքերը տարածաշրջանում, ինչպես նաև ինքիլինությամբ ՕՊԵԿ-ի դիրքերը և ավագային շուկայում, դարձավ երրորդ նավթային ճգնաժամի պատճառ: Թեև նավթային ճգնաժամը չունեցավ բացասական ազդեցություն Ճապոնիայի տնտեսության վրա, այնուամենայնիվ՝ Իրան-իրաքյան հակամարտության երկարատև բնույթը բարդացնում էր իրավիճակը կարևորագույն ծովային հաղորդակցության գոտում՝ Հորմուզի նեղուցում, որը Ծոցի երկրներից նավք արտահանելու հիմնական ճանապարհն էր: Բացի այդ պատերազմող երկրներում ընդհատվել էր ճապոնական մի շարք արդյունաբերական օբյեկտների կառուցումը, ինչը, անշուշտ, մեծ վնաս էր հասցնում Ճապոնիայի տնտեսական շահերին: Ելենը տնտեսական շահերից՝ Ճապոնիայի կառավարությունը փոփոխություններ մտցրեց իր արտաքին քաղաքականության մեջ և ակտիվացրեց իր միջազգային դերն աշխարհում՝ առաջարկելով միջնորդական միջամտություն հակամարտությանը շուտափույթ վերջ դնելու նպատակով: Ճապոնիան իր միջնորդական առաքելության իրականացման համար օգտագործում էր

միջազգային կազմակերպությունների, մասնավորապես ՍԱԿ-ի բնմահարթակները՝ դրանով իսկ վստահություն ներշնչելով իր դիվանագիտության հանդեպ և նպաստելով տարածաշրջանում կայունության հաստատմանը:

Իրավիճակը տարածաշրջանում ավելի բարդացավ Ծոցում ամերիկյան ռազմածովային բազա տեղակայելու վերաբերյալ ԱՄՆ-ի վարչակարգի հայտարարությունից հետո: Ավելին Վաշինգտոնում կոչ էր անում իր դաշնակիցներին, այդ թվում Ճապոնիային, միանալ ռազմական գործողություններին: Սակայն Տոկիոն դեմ էր իր երկրի ռազմական ներկայությանը Ծոցում՝ պատճառաբանելով, որ այն հակասում է երկրի «խաղաղ» սահմանադրության դրույթներին: Այսպիսով՝ Ճապոնիայի կառավարությունը, առաջնորդվելով «խաղաղ» սահմանադրության սկզբունքներով և ցանկանալով պահպանել իր կապերը ևավարոյւնահանող երկրների հետ, նախընտրեց շաջակցել իր դաշնակցին ռազմական միջամբության իրականացման հարցում, որի պատճառով ԱՄՆ-ի նախագահ Ռ. Ռեյգանը 1987 թ. մայիսին մտցրեց 100% տուրք (մոտ 300 մլն դոլար) Միացյալ Նահանգներ ներկրվող ճապոնական էլեկտրական ապրանքների վրա: Սակայն դա չկանգնեցրեց Ճապոնիային շարունակելու իր գործունեությունը՝ Իրան-իրաքյան հակամարտությանը խաղաղ ճանապարհով լուծում տալու հարցում, որն արտահայտվեց ոչ միայն Իրաքին տնտեսական օգնություն տրամադրելու, այլև 1987 թ. հունվարին, դառնալով ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի (ԱԽ) ոչ մշտական անդամ, ունեցավ իր ներդրումը ՍԱԿ-ի շրջանակներում Իրան-իրաքյան ռազմական հետախուզական խումբ (ԻԻՇՀԽ) ստեղծելու գործընթացում, որի հիմնական գործառույթն էր երկու երկրների միջև կրակի դադարեցման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը: Արդեն 1987 թ. հուլիսի 20-ին ՍԱԿ-ի ԱԽ-ն միաձայն ընդունեց N 598-րդ բանաձևը՝ երկու պատերազմող պետությունների միջև կրակի դադարեց-

ման վերաբերյալ, իսկ 1988 թ. օգոստոսի 20-ին Իրանի և Իրաքի միջև կնքվեց զինադադար:

Աշխատության մեջ առանձնակի տեղ է տրվել ճապոնիայի և ԾՃՆ-ի անդամ-երկրների միջև քաղաքատնտեսական հարաբերությունների ուսումնաժողությանը: ԾՃՆ-ի երկրները ոչ միայն ապահովում են ճապոնիային ածխաջրածնի պահանջարկի կեսից ավելին, այլև հանդիսանում են սպառման մեծ շուկա ճապոնական ապրանքատեսակների համար: Ծագող արևի երկրի հարաբերությունները ԾՃՆ-ի անդամ երկրների հետ իրականացվում է ինչպես կազմակերպության շրջանակներում, այնպես էլ առանձին-առանձին և չի սահմանափակվում գուտ քաղաքատնտեսական հարաբերություններով՝ ընդգրկելով նաև տնտեսության քաջմազանեցման, այլ ընտրանքային էներգիայի, մասնավորապես ատոմային էներգիայի զարգացման, մշակույթի և կրթության ոլորտները, ինչև ավելի է խորացնում երկկողմանի հարաբերությունները՝ տալով դրանց ռազմավարական նշանակություն:

Ճապոնիան նաև «Պաշտոնական զարգացման աջակցության» (ՊԶԱ) ծրագրի միջոցով ներդրումներ է կատարում ԾՃՆ-ի անդամ երկրներում՝ մասնավորապես տրամադրելով տեխնոլոգիական աջակցություն՝ վերոնշյալ երկրների արդյունաբերության զարգացման նպատակով: Հատկանշական է, որ սառը պատերազմի ավարտից հետո ճապոնիան մեծ տեղ է տալիս ՊԶԱ-ի ծրագրի շրջանակներում ԾՃՆ-ի անդամ երկրներին տրամադրվող ներդրումներին՝ օգտագործելով այն որպես քաղաքական գենը իր առավելությունը մի շարք երկրներին՝ Չինաստանին, Հնդկաստանին և չորս «ասիական վազրերին», ցոյց տալու համար: Բացի այդ, վերոնշյալ ծրագրի միջոցով ճապոնիան իրականացնում է իր «Փափուկ ուժի» քաղաքականությունը, որը հատկապես ակնառու դարձավ, եթե հետառոպատերազման շրջանում ճապոնիան դարձավ ՊԶԱ-ի ծրագրի ամենամեծ դոկորը:

Ճապոնիան շահագրգոված է մերձավորարևելյան տարածաշրջանում խաղաղություն հաստատելու հարցում և ֆինանսական աջակցությամբ փորձում է օգնել տարածաշրջանի երկրներին խնդիրները հեշտությամբ հաղթահարելու համար: ԾՃ-ի երկրները նույնական շահագրգոված են տարածաշրջանում խաղաղություն հաստատելու հարցում: Թեև ԾՃ-ի անդամ երկրների միջև կան շահերի բախում որոշ հարցերի շուրջ, այնուամենայնիվ, Մերձավոր Արևելքում առկա խնդիրների լուծման հարցում անդամ երկրների մոտեցումները մեծ մասամբ համընկնում են:

Ճապոնիան և ԾՃ-ի երկրները համագործակցում են միմյանց հետ նաև միջազգային խնդիրների լուծման հարցերում: Նման համագործակցությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով Ծոցի համագործակցության խորհրդի երկրները մեծապես աջակցում են Ճապոնիային ՍԱԿ-ի Անվտանգության Խորհրդի մշտական անդամ դառնալու հարցում:

Հետսառըապատերազմյան շրջանում ի հայտ եկած միշարք և ախաղաղալներ, ստիպեցին ճապոնիային վերանայել իր արտաքին քաղաքականությունն ինչպես մերձավորարևելյան տարածաշրջանում, այնպես էլ ամբողջ աշխարհում:

Այսպես խթանիչ գործոնների շարքին են դասվում առաջին հերթին միարեւո համակարգի ստեղծմանը զուգահեռ ձևավորված բազմաթիվ համակարգը, որի ժամանակ միշարք պետություններ, ինչպիսին են՝ Չինաստանը, Ճապոնիանը և չորս «ասիական վազրերը»՝ Ճարավային Կորեան, Թայվանը, Մինչապուրը և Հոնկոնգը. լուրջ մրցակցության հայտ ներկայացրին ճապոնիային՝ որպես տարածաշրջանային գերտերության:

Երկրորդ գործոնը՝ ճապոնիայում տեղի ունեցած ներքաղաքական փոփոխություններ, որի հիմնական պատճառներից մեկը երկրում սկսված տնտեսական ճգնաժամն էր:

Վերջինս 1989 թ. «պղպջակային տևտեսության» «պայթման» հետևանք էր: Փաստորեն Ճապոնիայում ստեղծված ծանր տևտեսական իրավիճակը նպաստեց երկրում քաղաքական ուժերի փոփոխությանը: Այսպէս՝ 1993 թ. վերջ դրվեց 1955 թվականից ի վեր իշխանության դեկին գունվող լիբերալ-դեմոկրատական կուսակցության միանձնյա կառավարմանը, և իշխանությունն անցավ կոալիցիոն կառավարությանը, որը համեմատաբար լիբերալ էր և միջազգային հարաբերություններում փորձում էր դրսնորել ավելի ճկուս քաղաքականություն:

Եվ երրորդ գործոնը՝ Ճապոնիայի միջազգային հարաբերություններում ունեցած ձախողություններն էին, որոնք վերագրվում են 1990 թ. Ծոցում Իրարի կողմից Քուվեյթի բռնազավթման արդյունքում ի հայտ եկած ճգնաժամին, եթե Ճապոնիան, ելենելով իր «իսաղաղ» սահմանադրության դրույթներից, նախընտրեց չմիանալ ԱԱՆ-ի կողմից Իրարի դեմ կիրառվող պատժամիջոցներին, այլ փորձեց ֆինանսական օգնությամբ աջակցել Քուվեյթին: Սակայն Ճապոնիայի քաղաքականությունը ընսադատվեց միջազգային հանրության կողմից՝ անվանելով այն «չեկային գործովկի դիվանագիտություն»:

Փաստորեն այս բոլոր նախադրյալները խթան հանդիսացան Ճապոնիայի համար վերանայելու իր մերձավորարելյան քաղաքականությունը և կտրուկ փոփոխման ենթարկելու տարածաշրջանի խնդիրների նկատմամբ ունեցած իր մոտեցումները: Ճապոնիան հասկացավ, որ միջազգային-քաղաքական գործընթացներին անմիջական չմիջամտելու քաղաքականությունը վնասում է իր երկրի շահերին և սկսեց մտածել այդ ոլորտում ավելի մեծ ակտիվություն ցուցաբերելու ուղղությամբ:

Ճապոնիան, արտաքին քաղաքականության ակտիվացմանը գուգահեռ, մեծացրեց նաև իր ուգմարադարական դերը

Ծոցում, որի հիմնական պատճառները կապված էին Ճապոնիայի ծովային ուղիների անվտանգության հետ, որին առաջին հերթին մեծ վտանգ էին սպառնում Մերձավոր Արևելյում առկա հակամարտությունները, երկրորդ հերթին՝ Չինաստանի ծավալապաշտական քաղաքականությունը, և երրորդը՝ ծովահենների և ահաբեկիչների գործողությունները:

Ըստրիկվ մի շարք բարեփոխումների՝ ճապոնիայի ինքնապաշտպանական ուժերը սկսեցին ակտիվորեն հոսմակիտար մասնակցություն ցուցաբերել Մերձավորարևելյան մի շարք հակամարտություններում, և ռազմաքաղաքական դերի ակտիվացման գագաթնակետը դարձավ 2011 թ. Աղենի ծոցում գտնվող Զիբութի և ավահանգատում ճապոնիայի առաջին ռազմաքաղայի տեղակայումը:

Summary

After World War II, Japan had managed to revive its devastated economy and already by the 1970s it became the second country in the world with its developed economy. The development of the country's economy contributed to the increasing demand for energy carriers, laying the foundation for the formation of Japan's Middle Eastern policy.

Until 1973, that is before the first oil crisis, Japan retained pure economic relations with the Middle Eastern oil-producing countries, without interfering in the political process. But in 1973, after the end of the successive Arab-Israeli war, these oil-producing countries began to use oil as a political weapon, putting an embargo on oil exports and thus putting pressure on the USA and its allies.

Actually Japan was ranked on the list of the "unfriendly" countries. Unlike its ally, the United States' approach, the country's economic interests forced Japan to make some political concessions towards the oil-producers, providing the country with vital fuel.

The deterioration of US-Iranian relations in 1979 and the victory of the Islamic revolution in Iran caused a second oil crisis. Japan left all the USA calls to join the anti-Iranian repressions unanswered and with the help of its committal policy continued to maintain economic and political ties with the Islamic Republic of Iran. In fact, contrary to the false belief that post World War II Japan became a US coefficient in foreign policy issues, in critical situations the Land of the Rising Sun has always been guided by its country's economic interests.

Already in 1980, the Iran-Iraq war, which was provoked by the "silent" agreement of the super powers, became the reason for the third oil crisis, which tended to weaken Iran's and Iraq's positions in the region, as well as to undermine OPEC's oil market. Although the oil crisis did not have a negative impact on Japan's

economy, however, the long-term nature of the Iran-Iraq conflict complicated the situation in the most important area of maritime communications, the Strait of Hormuz, which was the main route for exporting oil from the Gulf countries. In addition, in a number of warring countries, building of Japanese industrial objects was stopped, which, of course, caused great damage to Japan's economy. Based on economic interests, the Japanese government has made changes in its foreign policy and activated its international role in the world suggesting a mediatory intervention to end the conflict as soon as possible. For the implementation of its mediation mission Japan used international organizations, particularly the UN platform. So in January 1987, Japan became a non-permanent member of the UN Security Council, within the framework of the United Nations and its contribution in the establishing process of the Iran Iraq Military Group (IIMOG), the main function of which was to sign a ceasefire agreement between the two countries. Already in 1987, on July 20, the UN Security Council unanimously adopted Resolution N 598 concerning the ceasefire between the two warring states, and in 1988, August 20, a ceasefire agreement was signed between Iran and Iraq.

In this work, political and economic relations between Japan and the GCC member states, which are implemented both within the organization and individually, are particularly highlighted. Bilateral relations are not limited by only political relations, they include economic diversification as well as alternative energy, particularly nuclear energy development, culture and education.

Japan and the GCC countries cooperate with each other on solving international issues. To make such cooperation more effective GCC countries strongly supports Japan on the issue of becoming a permanent member of the UN Security Council.

Japan also invests in GCC member states by the "Official Development Assistance" (ODA) program particularly by providing

technical assistance to develop the industry of the above mentioned countries. It is notable that after the end of the Cold War, Japan gave a great place to the investment in GCC member states by ODA's program, using it as a political weapon to show its advantage to a number of countries, China, India and the four "Asian tigers". In addition, Japan implements its "soft power" policy through this project, which became especially obvious in the post-Cold War period, when Japan became the greatest donor of the ODA program.

It is remarkable that a number of preconditions that appeared in the post Cold War period forced Japan to reconsider its foreign policy in the Middle Eastern region and around the world. Japan has not only intensified its foreign policy, but also increased its military role in the Gulf, the main reasons of this being connected with the security of maritime routes.

Due to a series of reforms, the Japanese self-defense forces were actively involved in humanitarian assistance in a number of conflicts in Middle East, and the culmination of the intensification of its military role was in 2011, when Japan's first military base was deployed in the port of Djibouti, which is located in the Gulf of Aden.

概要 (Ամփոփում ճապոներենով)

第二次世界大戦後、日本は荒廃した経済から復興し、1970年代には既に世界で二番目の経済先進国となっていた。国の経済発展は燃料輸送の需要増につながり、日本の中東政策の基礎を形成した。1973年の第1次オイルショック（石油危機）まで、日本は中東の石油生産国とは純粋な経済関係を保持しており、政治的プロセスが介入することはなかった。

しかし1973年に、かねてからの中東戦争が終結し、これらの石油生産国は石油を政治的武器として使用し始め、対外石油輸出制限により米国とその他の同盟国にプレッシャーをかけ始めた。実際に日本は「非友好国」のリストに載せられた。他の同盟国であるアメリカとは異なり、日本は経済的利益のために石油生産国への政治的譲歩を強制されつつ、国内に重要な燃料を供給したのでだった。

1979年、米イラン関係の悪化とイランのイスラム革命の成功により、第二次オイルショックが起きた。

日本は米国からの反イラン鎮圧の呼びかけに応じず、積極政策によって、経済的、政治的にイランとの関係を継続した。

実際に、第二次世界大戦後日本は米国と外交において協力関係にあるという誤解に反して、危機的状況における「日の出する国」は、常に経済的利益によって導かれてきた。

1980年には既にイラン・イラク戦争が超大国間の「沈黙」の合意によって勃発したのだが、それはその後の第三次オイルショックを引き起こし、イランおよびイラクのその地域における地位を弱めたのだが、同時にOPECの石油市場への影響をも弱めることとなった。

日本経済にとってオイルショックはさほど悪影響がなかつたものの、長期化するイラン・イラク紛争によって、最も重要な海域であり、湾岸諸国にとって主要な石油輸出ルートであるホルムズ海峡の状況は複雑化した。

さらに多くの紛争国では日本の工場の建設が中止されたが、それは当然日本経済には痛手であった。

経済的利益に基づき、日本政府は外交政策を転換し、国際的役割を果たして、紛争解決に向けて可能な限り仲介を行うことを提案してきた。調停の実行のために、日本は国連組織、特に国連の場を用いた。そして1987年1月に、日本は国連安理会の非常任理事国になり、国連の枠組みの中でイラン・イラク軍事監視団（IIMOG）を設立する過程に貢献したが、その主な機能というのは、両国間の停戦合意に調印するという事であった。1987年7月20日に国連安理会は満場一致で戦争状態の両国の停戦に関する598号決議を採択し、1988年8月20日イラン・イラク間の停戦合意がサインされた。

本稿では日本と湾岸協力会議諸国（GCC）間の政治的経済的関係が組織的かつ個別的に行われたことについて、特記している。両者の関係は単に政治的な事柄だけでなく、経済的な多様化、代替エネルギー（特に原子力エネルギーの開発）や文化と教育をも含んでいる。

日本と湾岸協力会議諸国（GCC）は互いに国際問題の解決に協力的だ。協力をより有効にするために、湾岸協力会議諸国（GCC）は日本が国連安理会の常任理事国になるよう強く支持している。

日本はまた湾岸協力会議諸国（GCC）に投資もしているが、それは特に政府開発援助（ODA）を通じたGCC各国の産業開発に向けた技術援助である。

特筆されるのは冷戦後、日本が中国、インド、四つの"アジアの虎"各国より優位に立つよう政治的武器としてGCC各国へのODAを行ったことである。更に日本は「ソフトパワー」政策によりプロジェクトを実行し、冷戦後ODAの最大援助国となつた。

明らかなことは、冷戦後に現れた様々な状況によって日本はやむなく中東、また世界的外交を再考せざるを得なかつた。日本は外交のみを強化するのではなく、湾岸における軍事的役

割をも増加させたのだが、それは主に海洋ルートの保安に関する理由からである。

度重なる改革の末、日本の自衛隊は中東の紛争にたいする人道的支援に積極的に投入された。自衛隊の軍事的役割が最も活発だったのは2011年であるが、この年初の日本の軍事基地がアデン湾にあるジブチ港に配置されたのである。

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ՝

աշխարհական փաստաթղթեր

1. Атлас-Еженедельный вестник иностранной информации ТАСС, М., 1965, 1974, 1978, 1984.
2. Бюллетень почтовой информации, ТАСС, М., 1979, 1981, 1982, 1984, 1989.
3. Международный ежегодник, М., 1965.
4. Хартия о создании Совета Арабского Сотрудничества, <http://www.worldislamlaw.ru/archives/179>
5. Amendment to the Constitution of Bahrain, 20.02.2002, <http://www.mofa.go.jp/announce/announce/2002/2/0220-2.html>
6. An Argument for Japan's Becoming Permanent Member of the United Nations Security Council, http://www.mofa.go.jp/policy/q_a/faq5.html
7. Bahrain Imports, <http://www.tradingeconomics.com/bahrain/imports>
8. Call for Early Launch of Negotiations for Japan-GCC Economic Partnership Agreement, <http://www.keidanren.or.jp/english/policy/2005/060.html>
